27-2-1910.

1/w2-byw.

Կ.Բ.

ԸՆՏԻՐ
ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ԽՈՐԵՆԱՑԻ

Ա. Զաքար.
1827

Dieselbe Schlange ist ein Sinnbild
Gesundheit des Ursprung:
Epis.

Rizzi. dis. Bozza inc.

Լեզուի.
Լեհաց,

ԴԱՍԱԳՐՔԵՐ

ԻՕՐԻՆԱՑԻՈՅ

Դասագրքեր Հայոց

4/242
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ

1827

Երեսուներորդ Օրագրի

Վերջ Բազմապատկեալ գոնապարտելոյ
Հրամանաց զգալ զբաղելոյ
Զանազան ճանապարհս ելանելոյ
Որ արդարոյն Աստուծոյ
Հաստատելոյ եւ գոյացուցեալ
Զաստիրդ յաւիտենական
Սիրոց Պրոգրեսոյ,
Զերդրեալս արարչագործ
Ելից անենդ Սրբոյն։

ԱԶԳ

ԳՈՅԶՆ նշխար աւանդից նախ-
նեաց յայս գանձ մատեանի ամփո-
փեալ 'ի բազմերախտ ալեւոր ծե-
րոյն Խորենոյ, և 'ի հրոյ և 'ի հինէ
հաղիւ զերծեալ, այս ջորիր տեսա-
նէ զլոյս գրաւորական, ոչ 'ի միոյ
անատոյգ օրինակէ՝ որպէս հինքն,
այլ 'ի ջորից. մին ՁԾՐ ամի, մեւսն
ՌՃԻ, մեւս եւս ՌՃԼԲ, և այլ
անյայտ :

Ի ջորից կալաք միշտ զբազմացն.
տակաւ ուրեք, ուր խանգարանաց
կարծիք էին կամ երկպառակ գրը-
ջագիրք, զմիոյն եւեթ կամ զեր-
կուցն մեծաթեալ ընտրով, զայլոց

զկարեւորսն և զպիտոյս 'ի վերջէ դրոշմեցաք։ Եւ որ յայտնի ինչ ուրեք վրիպակ միաբան օրինակացն ուղղեալ լիցէ, արժանիքն յիշատակի ասասեղանիշ կան 'ի կարգին։

Այլում՝ տեղւոյ և պատեհի գործ եղիցի զբնաւ այլ և այլ ընթերցուածսն նշանակել, զմերոյ ընտրելոյն տալ զհաւասասիս կամ՝ ուղղել զսխալն, որում՝ 'ի հմտագոյն սիրաբանիցն փութոյ ակն ունիմք։

ՅԱՆԿՔ ԱՌԱՋԻՆ ԳՐՈՑ

Ա. Յաղագս մերոյս յիսկզբանն յայսմ բանիցս Սահակայ բագրատունւոյ խնդալ:

Բ. Թէ ընդէր, վասն զի 'ի քաղդէացւոց և յասորեստանեաց մատենից ցանկագոյն են մեր իրք, 'ի յուշնականէն կամեցաք մեք ցուցանել:

Գ. Յաղագս անիմաստասէր բարուց առաջնոցն մերոց Թադաւորաց և իշխանաց:

Դ. Յաղագս զի ոչ սակս Ադամայ և այլոց նահապետացն միաբանեցան այլք 'ի պատմագրաց:

Ե. Յաղագս հաւասար գալոյ աղդաբանութեան երից որդւոցն Նոյի ցԱբրահամ և ցՆինոս և ցԱրամ. և եթէ

Նինոս ոչ Բէլ և ոչ որդի Բէլայ :

Զ. Յաղագս թէ է ինչ որ հաւասար, և է որ օտար 'ի Մովսիսէ պատմեն այլքն հնախօսք. և յաղագս Ղլոմ պիոդորայ փիլիսոփայի անդիր զրուցացն :

Է. Յայտարարութիւն սակաւուք, թէ ըստ արտաքնոցն ասացեալ է Բէլդ. ըստ աստուածային բանից Ճշմարտութեամբ Նաբրութ է :

Ը. Թէ ո՞վ կամ ուստի զայսպիսի եգիտ զրուցաբանութիւնս :

Թ. Թուղթ Վաղարշակայ արքայի Հայոց առ մեծն Արշակ արքայ Պարսից :

Ժ. Յաղագս ապստամբութեանն Հայկայ :

ԺԱ. Յաղագս պատերազմին և մահուն Բէլայ :

ԺԲ. Յաղագս որ 'ի Հայկայ ազգք և ծնունդք. և թէ զինչ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ գործէաց :

ԺԳ. Յաղագս ընդ արեւելեայս պատերազմին և յաղթութեանն, և մահուանն Նիւքարն Ցադեսայ:

ԺԴ. Յաղագս ընդ ասորեստանեայս կռուոյն և յաղթութեանն, և Պայազայն Քաղեայն, և Կեսարու, և առաջին և այլոց անուանեալ Հայոց:

ԺԵ. Յաղագս Արայի, և մահուան նորա պատերազմաւ 'ի Շամիրամայ:

ԺԶ. Թէ ո՞րպէս յետ մահուանն Արայի Շամիրամ շինէ զքաղաքն և զամբարտակ գետոյն և զիւր տունն:

ԺԷ. Յաղագս Շամիրամայ, Թէ էր աղագաւ կոտորեաց զորդիս իւր. և Թէ ո՞րպէս փախստական լինի 'ի Զրադաշտէ մոգէ 'ի Հայս, և մեռանի 'ի Նինուեասայ որդւոյ իւրոյ:

ԺԸ. Յաղագս Թէ հաւատոյ նախ լեալ պատերազմն Շամիրա-

մայ 'ի Հնդիկս, և զկնի մա-
հուան նորա 'ի Հայս :

ԺԹ. Որ զկնի ինչ մահուանն Շա-
միրամայ :

Ի. Վասն արայեան Արայի, է-
թէ սորա որդի Անուշաւանն,
որ Սօս անուանիւր :

ԻԱ. Որ 'ի Սկայորդւոյն Պարոյր՝
առաջին 'ի Հայս թագաւո-
ր է. օգնական լինի Վարբա-
կայ Մարի՝ բառնալով զթա-
գաւորութիւնն 'ի Սարդա-
նապալ՚ղայ :

ԻԲ. Կարդ թագաւորաց մերոց և
համար նոցունց որդի 'ի հօ-
ր է առնլով :

ԻԳ. Յաղագս որդւոցն Սենեքա-
ղիմայ, և թէ արծրունիք և
գնունիք և բդեշխն անուա-
նեալ Աղձնեաց՝ 'ի նոցանէ
սերեալք. և 'ի նոյն ճառի՝
եթէ Անգեղտունն 'ի Պաս-
քամայ :

ԻԴ. Յաղագս Տիգրանայ, թէ որ-
պիսի ամենայնիւ :

ԻԵ. Վասն երկիւղի կասկածա-

նացն Աշդահակայ 'ի միա-
բանութենէ սիրոյ Կիւրոսի
և Տիգրանայ :

ԻԶ. Թէ որպէս 'ի խիթի լինելով
Աշդահակայ , զառաջակայ
իւր դիպուածն տեսանէ
պանչելի երազով :

ԻԷ. Յաղագս խորհրդակցացն բան.
զկնի ասպա և իւր մոսածու-
թիւն , և 'ի նոյն հետայն
գործն :

ԻԸ. Թուղթ Աշդահակայ , յետ
որոյ և յօժարութիւն Տիգ-
րանայ , և յուղարկումն Տիգ-
րանուհեայ 'ի Մարս :

ԻԹ. Եթէ որպէս յայտնեաց գբը-
գռութիւն նենգութեան ,
և մարան , յորում և մահն
Աշդահակայ :

Լ. Յաղագս թէ էր աղագաւ
յղարկեաց զքոյր իւր Տիգ-
րանուհի 'ի Տիգրանակերտ ,
և վասն Անուշայ առաջին
կնոջն Աշդահակայ , և բնա-
կութեան գերեզմն :

ԼԱ. Թէ այք ոմանք սորա զարմք ,

և ոչք 'ի սմանել որոշեալ
ցեղք :

ԼԲ. Թէ եղիսական պատերազմն
առ Տեւոսամեաւ. և մեր
Զարմայր ընդ եթովպացի
զօրուն լինել սակաւուք, և
'ի նոյն մահ :

Կոպարէոյան ցանկ առաջին գրոց ծնընդեանն Հայոց ռեծաց :

Ի Պարսից առասպելեաց, յաղագս
Բիւրասպի Աժդահակայ :
Սորագրութիւն, որ ինչ սակս
Բիւրասպեայ հաւատոն :

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ

Ա. Մովսէսի խորէնացւոյ յաղագս մեր-
ոյս յիսկզբանն յայսմ բանից Սահակայ
Բագրատունւոյ խնդրալ։

Զ ԱՆՍՊԱՌ խաղացմունս աստուածայնոցն 'ի քեզ շնորհացն և զանգուլ հոգւոյն 'ի վերայ քո իմացուածոցդ շարժմունս ծանեայ 'ի ձեռն գեղեցիկ խնդրոյս, յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զծանօթութիւն. որ և սիրելի իմոց իսկ ախորժակացս է, առաւել եւս սովորութեանցս։ Վասն որոյ և ոչ միայն դովել արժան է

զքեզ, այլ և 'ի վերայ քո աղօթել՝ առ 'ի լինելքեզ միշտ այսպիսի։

Զի եթէ վասն բանին մեք, որպէս ասի, պատկեր Աստուծոյ, և դարձեալ՝ առաքինութիւն բանականին է խոհականութիւն, և քո յայսոսիկ անհատ ցանկութիւն, ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ զխոհականութեանդ քո վառ և բորբոք պահելով զկայծակն, զարդարեա զբանն. որով մնաս առ 'ի լինելն պատկեր։ Ի ձեռն որոյ և զայսորիկ զսկզբնատիպն ասիս ուրախացուցանել, գեղեցիկ և չափաւոր մտքութեամբ յայսոսիկ մտքեալ և զակատեալ։

Առ որով տեսանեմ և զայս, զի եթէ ոչք յառաջքան զմեզ և կամ առ մեք եղեն հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իւրեանց արդեաք գտելոց խմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարդել զիշատակս բանից, և ոչ արտաքուստ ուստեք այսոցիկ 'ի նեղքս ածել խորհեցան օժանդակութիւնս խմաստից, և զքեզ այս-

պիսի այժմ էղեալ ծանեաք, ապա յայտ է ուրեմն, թէ ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն, և բարձրագունից արժանաւոր գովութեանց, և յայսպիսիս պատկանաւոր դնիլ յարձանագրութիւնս բանից:

Յաղագս որոյ հեշտաբար ընկալեալ զքո խնդիրդ, աշխատասիրեցայց ածել 'ի կատարումն. անմահ 'ի յիշատակ թողուլ զայս քեզ, և որ զկնի քոյինքն են գալոց ազգք: Զի և ազգի եւս նախնականի, և քաջ և արգասաւոր՝ ոչ միայն 'ի բանս և 'ի պիտանաւոր խոհականութիւնս, այլ և 'ի մեծամեծ և 'ի բազում գործս արժանափառս, զոր յիշատակեսցուք 'ի կարգի պատմութեանս, յորժամ զորդի 'ի հօրէ ծննդաբանելով ազգաբանիցեմք ըզբովանդակն: Իսկ զՀայաստանեացս նախարարութիւնս, զամենեցուն զուսան և զգիտարդն յայտնելով համառօտ, որպէս հաւաստի 'ի յունականս ոմանս կայ պատմութիւնս:

Բ. Թէ ընդէր, վասն զի 'ի գաղղիա-
ցւոց և յասորիսպանիացոյ մարդիկդ ցան-
կացեալն են մեր իրտ, 'ի յառնականէն
կամիցաք մեզ ցուցանել։

Եւ ընդ այս մի ոք զարմացի, եթէ բազում ազգաց լեալ մատենագիրք, որպէս ամենեցուն է յայտնի, մանաւանդ Պարսից և քաղդէացւոց, յորս առաւել անգիս մերոյ դասանին բազում ինչ իրաց յիշատակք, մեք զՅունացն միայն յիշեցաք զպատմագիրս, և անուսաց զյայտարարութիւն մերոյ ազգաբանութեանս խոստացաք յանդիման կացուցանել։ Քանզի ոչ թագաւորքն Յունաց՝ միայն որպէս աշխարհակալութեամբ, այլ և որ ինչ խմաստութեան են ջանք՝ փոյթ յանձին կալան աւանդել Յունաց, յեւ զառանին իւրեանց յարմարեալ իրս. որպէս և Պաղոմէոսն, որ և Եղբայրասէրն, պէտ արարեալ զամենայն ազգաց զմատեանս և զվէպս 'ի յոյն լեզու փոխարկել։

Բայց մի ոք աստանօր անուսումն

զմեզ համարեալ բամբասիցէ իբր զանվարժս ոմանս և զոգէաս, որ-
պէս թէ Եգիպտացւոցն լեալ թա-
գաւոր, մեք այժմ զնա Յունաց
գրեցաք։ Քանզի նուաճեալ նորա
և զՅոյնս ընդ իւրով ձեռամբ, ա-
նուանեցաւ Ալէքսանդրի և Յու-
նաց թագաւոր, որպէս և ոչ մի զոք
'ի Պտղոմեանցն կամ յայլոցն սի-
րելոյ Եգիպտացւոցն անուանեցաւ
ոք երբէք. որ և վասն առաւել յու-
նասէր բարս ունելոյ՝ 'ի յոյն լեզու
գիւր աշխատութիւնն ժողովեաց։
Եւ և այլ բազում այսպիսի ինչ պատ-
ճառ վասն ասելոյն մեր զնա Յու-
նաց թագաւոր, այլ վասն համա-
ռօտելոյ մեզ զճառս՝ բաւական լի-
ցի ասացեալս վասն նորա։

Այլ և բազում ալք անուանիք
և իմաստութեան պարապեալք 'ի
Յունաց աշխարհէն հոգացան՝ ոչ
միայն զգիր գիւանաց այլոց ազգաց
թագաւորաց և զմեհենից յեղուլ
'ի յոյն բան, որպէս գտանեմք զայն,
որ և զԲիւռիոս ոմն յայս յորդո-
րեաց այր քաղդէացի և վարժ ամե-

ԱԿԱԴԵՄԻԱ

նայն խմաստութեամբ, այլ և զմեծամեծս և զզարմանալոյ արժանաւորս յարուեստից, և ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ, հաւաքեալ փոխեցին 'ի յոյն լեզու. որպէս զայբ առ քէ, և զզայ և զթոյ առ փիւր, և զկենն առ եչ, և զշայ առ սէ: Եւ ժողովեալ զայսոսիկ արանց, զորոց և մեք զանուանս հաւաստի գիտեմք, նուիրեցին 'ի փառս հելլենացւոց աշխարհին: Եւ գովելիք են, որպէս խմաստասիրեցեալքն՝ յաղագս Ջանին և խմաստութեանն առ 'ի յայլոցն լինելոյ գտակք, առաւել եւս որք ընկալան և պատուեցին զայսպիսի գիւտս խմաստից: Վասն որոյ և զբոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մայր կամ դայեակ ասել խմաստից:

Եւ վասն Յունացն զբուցաբանս զանկարկուութիւն մերոց պիտոյիցս առնելոյ՝ բաւական է այսչափ:

Գ. Յաղագս անիմաստասէր բարուոյ առաջնոցն մերոց Ներգաւորաց և իշխանաց։

ԿԱՄԻՄ և ոչ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեաց առանց յիշատակի բամբասանաց թողուլ. այլ և աստէն իսկ յիսկզբան մերոյ գործառնութեանս զվասն նոցա կշտամբութեան յարմարել ըզբանս։ Զի թէ արդարեւ գովութեան արժանի այնք 'ի թագաւորաց էին, որք գրով և պատմութեամբ զիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս և զգործս իմաստութեան, և զքաջութիւն իւրաքանչիւր արձանացուցին 'ի վէպս և 'ի պատմութիւնս, ըստ նոցանէ և պարապեալք այսպիսում ճշգնութեանց դիւանագիրք մատենից՝ ներբողականաց 'ի մէնջ արժանի եղեն ասից։ 'Ի ձեռն որոց և մեր ընթեռնուլն զսա 'ի նոցանէ շարածս բանից, ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասեմք, և .քաղաքական ուսանել կարդս,

յորժամ այսպիսիս ընթերցասիրի-
ցեմք խմաստութեան ճառս և զրու-
ցատրութիւնս, որք են քաղդէ-
ացւոց և ասորեստանեաց, եգիպ-
տացւոց և հելլենացւոց: Ա՛ռ այսո-
քիւք և փափագիցեմք եւս ար-
դեւք խմաստութեան արանցն այ-
նոցիկ, որ զայսպիսի փոյթ յան-
ձին կալան:

Ապա ուրեմն ամենեցուն մեզ
յայտնի է թագաւորացն մերոց և
այլոց առաջնոց առ 'ի յիմաստն
ազամարութիւն, և անկատարու-
թիւն ոգւոյն բանականի: Զի թէ-
պէտ և եմք ածու փոքր և թուով
յոյժ ընդ փոքրու սահմանեալ և
զօրութեամբ տկար և ընդ այլով
յոլով անգամ նուաճեալ թագա-
ւորութեամբ, սակայն բազում
գործք արութեան գտանին գոր-
ծեալ և 'ի մերում աշխարհիս, և
արժանի գրոց յիշատակի, զորոց և
ոչ մի ոք 'ի նոցանէ պէտք յանձին
կալաւ մատենագրել: Արդ այնո-
քիկ, որք և ոչ անձանց խորհե-
ցան բարի առնել, և անուն յիշա-

տակի յաշխարհի թողուլ, զի արդեւք և մեղադրութիւն մեր այնպիսեացն 'ի ճահ պատահիցէ, զեւ մեծագոյնս 'ի նոցանէ պահանջել և որ ինչ հնագոյն քան զնոսա։

Այլ ասիցէ ոք արդեւք. վասն ոչ լինելոյ գիր և գպրութիւն 'ի ժամանակին, կամ վասն սէս սէս պատերազմացն, որ կուռ զմիմեանց զկնի անհետ 'ի վերայ գային։

Այլ ոչ արդարեւ այսոքիկ կարծեցեալ լինի. քանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց եւս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք, մանաւանդ որ 'ի սեփհական ազատութեանն պայազատութիւն։ Այլ լինձ թուի, որպէս այժմ՝ և առ հինան հայասատանեաց լեալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց։ Վասն որոյ աւելորդ է մեզ և այլ

յաղագս անբանից արանց Թուլամտաց վայրենեաց Ճառել։

Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն, որ յիսկզբանցն մերոց ազգաց մինչեւ ցայժմուս միայն գոսար զայսպիսւոյ մեծ իրէ բուռն հարկանել, և մեզ խոյզ խնդրոյս առաջի արկանել՝ երկար և շահաւոր գործով զաղգիս մերոյ կարգել զպատմութիւն. Ճշդիւ զԹագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից, Թէ ո՞վ յումմէ, և զինչ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ գործեաց, և ո՞վ ոք 'ի ցեղիցս որոշելոց ընտանի և մերազնեայ, և ո՞յք ոմանք եկք ընտանացեալք և մերազնացեալք, և զգործս և զժամանակս իւրաքանչիւր գրով գրոշմել՝ 'ի ժամանակէ անկարդ ամբարտակին շինուածոյ մինչեւ ցայժմ. գեղեցիկ զայս քեզ հարեալ 'ի փառս և անջան հեշտութիւն։

Ա՛ռ որ այսչափ միայն ասացից. միթէ մատեան մերձ կայցէ ինձ, որպէս ասէ Յոբ, կամ գպրութիւնք

քոց հայրենեաց, որովք նմանագոյն արդեւք եբրայեցւոցն պատմագրաց՝ 'ի վերուստ 'ի քեզ ինչուցանեմ անսխալ, կամ 'ի քէն և յայլոց սկըսեալ՝ անդր 'ի վեր հանիցեմ 'ի սկիզբն։ Բայց սակայն սկսայց, թէ պէտ և ջանիւ. միայն թէ և շնորհակալ ոք մերոցս գտանիցի լեալ աշխատութեանց։ Եւ սկսայց յորոց և այլքն, ոչք յեկեղեցւոջ և ոչք ըստ Քրիստոսի, աւետարդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս իսկզբանն առաստելս, բայց եթէ զինիան՝ ժամանակ ինչ արդեւք. և զարս յայտնիս, որում և աստուածայինքն 'ի Հահ գայցեն պատմութիւնք բանից. մինչեւ 'ի հարկէ երթեալ հասանիցեմք 'ի հեթանոսականն զրուցակարգութիւնս. սակայն և 'ի նոցանէ, զոր ինչ հաւաստին կարծեմք, առնուլ։

Դ. Յաղագս զի ոչ սակս Աբրամայ և այլոց նահապետացն միաբանեցան այլք 'ի պատմագրաց։

ՅԱՂԱԳՍ արմատոյն հանուրց մարդկութեանս, կամ թէ հաճոյ ումեք թուեսցի ասել ծայրին, պարտ էր մեզ սակաւ ինչ անցանել բանիւ, թէ ընդէր հակառակ Հոգւոյն խորհել անմիաբանեցան այլքն 'ի պատմագրաց, զԲիւռոս ասեմ, զԲազմավիպէն և զԱբիւդենայ. կամ զնոյն ինքն զնաւակառուցէն և զայլոց նահապետացն. ոչ միայն վասն անուանց և ժամանակաց, այլ վասն ոչ սկիզբն զառ 'ի մէնջն հաւացն կարդելոյ ազգի մարդկան։

Քանզի ասէ վասն նորա Աբիւդենոս հանգոյն այլոցն այսպէս. Եւ զնա ամենախնամն Աստուած եցոյց հովիւ և առաջնորդ ժողովրդեանն։ Յետ որոյ ասէ. Թագաւորեաց Աղովրոս շարս տասն. որ լինին ամք երեսուն և վեց հազար։ Նոյնպէս և յաղագս Նոյի այլով անուամբ վարին և ժամանակաք

անբաւիւք. թէպէտ և վասն ջրոյն սատակութեան և սպանութեան երկրի՝ զոյդ հոգեւորացն բարբառին բանից. նոյնգունակ և զթիւ նահապետաց տասն Քսխութրեաւ հանդերձ թուեն: Որ ոչ միայն ըստ բոլորման առ 'ի յարեգակնէ ջորեք ժամանակեան ըստ մեզ լինելոյ տարւոյն՝ հեռանայ յամաց մերայնոցն, մանաւանդ թէ և յաստուածայնոցն, այլ և ոչ որպէս եգիպտացիքն զլուսնականն հաշուին ծագմունս. նա և ոչ զառ 'ի դիցն ումանս ասացեալս, եթէ տարիս ոք վարկցի, զուգեալ համեմատեն հուն թուոց առարկութեանցս առ 'ի հաւաստել ճշմարտութեանն, երբեմն նուազ և երբեմն սատիկ զհաւաքումն գումարելով: Արդ օրէն է մեզ ստանօր զկարծիս նոցա յայտնել, թէ զինչ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ խորհեցան այսպէս զայսոսիկ գրել. այլ վասն երկարութեան առաջնիկայ գործոյս՝ այլումտեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողեալ, հատուցուք ստանօր զբանս, սկը-

անելով յաղագս այսորիկ որպէս և հաւատացեալ եմք։

Ադամ նախաստեղծն. սա կեցեալ ամս երկերիւր և երեսուն, ծնանի զՍէթ. Սէթ կեցեալ ամս երկերիւր և հինգ, ծնանի զԵնովս։ Սորա երկուքն յարձանագրութեանցն ընդդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովսեպոս Թէպէտ և ուրն անյայտ։ Ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած։

Եւ ընդէր արդեաք այս, և կամ վասն որոյ պատճառանաց նախնիս ասացեալ կոչելոյն զԱստուած, և կամ որպէս կոչէին իմանի։ Քանզի է Ադամ ճշմարտապէս աստուածասաեղծ. և սա՝ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր, այլ և յանցուցեալ և թագաւեան եղեալ, զՈւր էան յԱստուծոյ և ոչ յայլմէ ումեքէ հարցանի. սապէս և զվճիռ վարկին՝ի նորին բերանոյ ասէ։ Իսկ յետոյ և Աբէլ մերձաւոր և ծանօթ Աստուծոյ լեալ, պատարագ մատուցանէ, և ընկալեալ լի-

նի։ Արդ, ասցա այսպէս յընդունելութիւն և 'ի ծանօթութիւն Աստուծոյ լինել, էր աղագաւ սա առաջին ասի կոչել զԱստուած, և այս՝ յուսով։ Արդ զայլն վասն սորա 'ի տեսութեանց 'ի Հրաւիրեալն մեր յուղարկեացուք տեղի. իսկ որ 'ի ձեռն պատրաստն է՝ ասացուք։

Քանզի 'ի պատուիրանազանցութեան գտեալ առաջինն 'ի մարդկանէ, 'ի դրախտէն և յԱստուծոյ, զարութեան աղագաւ, որպէս ասացեալ է, գոան արտասահմանեալ։ Զկնի և ընտանեգոյնն Աստուծոյ յորդւոցն Ադամայ 'ի հաղատէն իւրմէ ապանանի յեղբօրէ։ Յետ որոյ ոչ բանի ինչ աստուածայնոյ և ոչ յայտնութեան ինչ իւրեք եղելոյ, 'ի տարակուսանս և յանյուսութիւն ազգ մարդկան հասեալ լինի, այլ և ինքնահաճոյ արդարեւ գործս. յորոց միջի սաքաջայոյս եղեալ ուղղութեամբ հանդերձ, կոչէ զԱստուած։ Իսկ կոչէլդ կրկնակի իմանի. կամ անուանել որպէս զմուացեալ, կամ յօգ-

նականութիւն կարդալ։ Արդ ա-
նուանելն իբրեւ զմուռացեալ՝ ոչ է 'ի
դէպ. զի ոչ բազմութիւն ամաց
ընդ մէջ անցեալ, որ 'ի մուռացումն
նոցա զԱստուածդ ածէր անուն, և
կամ զնոցն ինքն՝ որոյ անունն, և
ոչ դարձեալ մահու և թաղման դեռ
եւս ստեղծեալն յԱստուծոյ հա-
սեալ։ Ապա ուրեմն յօգնականու-
թիւն կոչէ սա զԱստուած։

Սա կեցեալ ամն հարեւր և ինն-
սուն, ծնանի զԿայնան. Կայնան
կեցեալ ամն հարեւր և եւթանա-
սուն, ծնանի զՄաղաղիէլ. Մաղա-
ղիէլ կեցեալ ամն հարեւր վաթ-
սուն և հինգ, ծնանի զՅարեդ.
Յարեդ կեցեալ ամն հարեւր վաթ-
սուն և երկու, ծնանի զԵնովք.
Ենովք կեցեալ ամն հարեւր վաթ-
սուն և հինգ, ծնանի զՄաթուսա-
ղայ։ Սա յետ ծնանելոյն զՄաթու-
սաղայ՝ ամն երկերիւր արժանի և
հաճոյ վարս ստացեալ, որպէս գի-
տէ որ հաճեցաւն, փոխեալ ասի
'ի միջոյ ամբարշտաց. զորոյ զպատ-
ճառն յետոյ հատուցուք։ Մաթու-

սաղայ կեցեալ ամն հարեւր վեթ-
սուն և եւթն, ծնանի զՂամեք.
Ղամեք կեցեալ ամն հարեւր ուեթ-
սուն և ուեթ, ծնանի որդի, և ա-
նուանեաց զանուն նորա Նոյ։

Յաղագս Նոյի։

ԵՒ ընդէր արդեւք զսա միայն
որդւոյ անուամբ յորջորջեաց, իսկ
վասն այլոցն ամենեցուն պարզա-
բար ասէ, թէ ծնաւ. զոր ընդդէմ
նմին մարգարէանայ հայրն. Սա,
ասէ, հանգուցցէ զմեզ 'ի գործոյ
և 'ի տրամութենէ ձեռաց, և յերկ-
րէ՝ զոր անէծ Տէր Աստուած։ Որ
եղեւ ոչ հանգիստ, այլ ընչուն որ
ինչ միանգամ 'ի վերայ երկրի։ Ինձ
թուի՝ հանգուցանելն դադարեցու-
ցանելն է. իսկ դադարեցուցանելն՝
զամբարշտութիւն և զչարիս, սա-
տակմամբ մարդկան զաղբատգործաց
դարուն երկրորդի։ Քանզի գեղեց-
կաբար ասաց, թէ 'ի գործոյ մերոյ,
որ է յանօրէնութեանց, և 'ի տրտ-
մութենէ ձեռաց, որովք կատա-

բեմք զպղծութիւնս։ Բայց և հանգ-
ջին արդարեւ ըստ այս մարգարէու-
թեան ոչ ամենեքին, այլ կատա-
բեալքն յառաքինութեան ոգիք,
յորժամ ջարիք որպէս հեղեղաւ
ջնջեալ մաքրին, իբրեւ առ Նոյիւ
մոլեալքն 'ի ջրիս։ Իսկ որդւոյ
անուամբ մեծարեաց զնա գիր, իբր
զյայտնի և զնշանաւոր և զարժա-
նաւոր ժառանգ հայրենականացն
առաքինութեանց։

Ե. Յաղագս հաստատ գալոյ աւգտա-
նութեան երդոց որդոցն Նոյի զԱբրահամ
և զՆինոս և զԱրամ. և թէ Նինոս ուչ
Բէլ և ուչ որդի Բէլայ։

Եւ այս յայտնի է ամենեցուն,
զի գժուարահաւաք և տաժանե-
լի է, որպէս գիւտ ժամանակացն
իսկզբանէ մինչեւ առ մեզ, առա-
ւելեւս գիւտ որդէծնութեան նա-
խարարականացն ծննդոց յերկնից ան-
ակ որդւոցն Նոյի, ցորքան կամք ի-
ցեն խուզել ումեք ըստ իւրաքան-
չիւր դարուց։ Մանաւանդ զի առ-

ուսածայնոյն գրոյ զիւրան 'ի բաց հատեալ՝ յինքն սեփհական ազգ, ելնք զայլոցն իբր զարհամարհելեացն և իւրոցն անարժան կարգելոց բանից։ Զորոց մեք սկսեալ Հաւատացուք ոչքան է կարողութիւն, որպէս գտաք զհաւատին 'ի հնոց պատմութեանց, մերով մատամբ ամենեքին անսուա։

Իսկ գու, ո՛վ ուշիմ ընթերցաստրդ, հայեաց ատանօր ընդ հաստատութիւն կարգի երից ազգացդ մինչեւ ցԱբրահամ, ցՆինոս և ցԱրամ, և զարմացիր։

Սեմ կեցեալ ամս հարեւր, յետ երկուց ամաց ջրհեղեղին, ըստ ասուածային բանից, ծնանի զԱրփաքսաթ։

ՍԵՄ

Սեմ ամս հարեւր, ծնանի զԱրփաքսաթ.

Արփաքսաթ ամս հարեւր երեսուն և հինգ, ծնանի զԿայնան.

Կայնան ամս հարեւր և քսան, ծնանի զՍաղայ.

Սաղայ ամս հարեւր և երեսուն, ծնանի զԵբեր.
Եբեր ամս հարեւր երեսուն և չորս, ծնանի զՓաղեկ.
Փաղեկ ամս հարեւր երեսուն և երիս, ծնանի զՌագաւ.
Ռագաւ ամս հարեւր և երեսուն, ծնանի զՍերուք.
Սերուք ամս հարեւր և երեսուն, ծնանի զՆաքովր.
Նաքովր ամս եւթանասուն և ինն, ծնանի զԹարայ.
Թարայ ամս եւթանասուն, ծնանի զԱբրահամ:

ԿԱՄ

Կամ ծնանի զԿուշ.
Կուշ ծնանի զՄեսարիմ.
Մեսարիմ ծնանի զՆեբրովթ.
Նեբրովթ ծնանի զԲաբ.
Բաբ ծնանի զԱնեբիս.
Անեբիս ծնանի զԱրբեել.
Արբեել ծնանի զԲայաղ.
Բայաղ ծնանի զմեւս Արբեել.
Արբեել ծնանի զՆինոս.
Նինոս ծնանի զՆինուաս:

ՅԱՖԵԹ

Յաֆեթ ծնանի զԳամեր.
Գամեր ծնանի զԹիրաս.
Թիրաս ծնանի զԹորգոմ.
Թորգոմ ծնանի զՀայկ.
Հայկ ծնանի զԱրմենակ.
Արմենակ ծնանի զԱրմայիս.
Արմայիս ծնանի զԱմասիայ.
Ամասիայ ծնանի զԳեղամ.
Գեղամ ծնանի զՀարմայ.
Հարմայ ծնանի զԱրամ.
Արամ ծնանի զԱրայն գեղեցիկ։

Արդ զԿայնան չորրորդ 'ի Նոյէ ամենայնք 'ի ժամանակագրացն գըրեն, և 'ի Սեմայ երրորդ։ Նոյնպէս և զԹիրաս չորրորդ 'ի Նոյէ, իսկ Յաֆեթայ երրորդ. թէպէտ ըստ մերում թարգմանութեան ոչ ուրեք 'ի բնագրի գտանի։ Իսկ զՄեսրայիմ չորրորդ 'ի Նոյէ և երրորդ 'ի Քամայ՝ ոչ 'ի մերում թարգմանութեանս և ոչ 'ի ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանեմք։ Այլ այսպէս զսա կարգեալ գտաք 'ի յուշմագունէ ումեմնէ և յըն-

թերցասիրէ Աստուծոյ. և հաւա-
տարիմ թուեցաւ մեզ ասացեալն։
Քանզի Մեսորայիմ է Մեծրայիմ,
որ իմանի Եգիպտոս. և բազումք
'ի ժամանակագրաց զՆեբրովթ, որ
է Բէլ, եթովպացի գոլ ասելով՝
հաւանեցուցին զմեզ այսպէս հա-
ւատի լինել, յաղագս բնակու-
թեան սահմանացն ընդ Եգիպտոս։

Յետ որոյ ասասցուք և զայս. զի
թէպէտ և ամք ժամանակաց ծնն-
դոցն Քամայ մինչեւ ցՆինոս ոչ ու-
րեք գտանին թուեալ, և կամ թէ
առ մեզ ոչ հասեալ, այլ հաւաս-
տեաւ և ոչ նորին ինքեան Նինոսի.
իսկ մերոյն Յաբեթի ամենեւին ոչ։
Սակայն ասացեալ ազգաբանու-
թիւնդ հաւատի է. երեցունց ցե-
ղիցն մեռասան գոլով ցԱբրահամ
և ցՆինոս և ցմերն Արամ. զի Ա-
բրայն երկոտասաներորդ է յետ Նի-
նոսի, մանուկ տիոմք վախճանեալ։
Եւ է ճշմարիտ, և մի ոք յերկուսա-
ցի. քանզի պատմէ մեզ զայսոսիկ
յոլով իրս հաւատալիսն Աբիւդե-
նոս, և ասէ այսպէս. Նինոս Ար-

բէեղայ, Քայաղայ, Արբէեղայ՝ Ընէերայ, Բաբեայ, Բէլայ։ Նոյն-պէս և զմերն 'ի Հայկայ մինչեւ զԱ-բրայն գեղեցիկ, զոր ապանեալ կա-թոան Շամիրամ, թուէ այսպէս. Արբայն գեղեցիկ՝ Արամեայ, Հար-մեայ, Գեղամեայ, Ամասեայ, Ա-բրամախսեայ, Արամենակայ, որեղեւ Հակառակ Բէլայ միանգամայն և կենախուզ։ Եւ զայս մեզ Աբիւդե-նոս յիւրում առաջնում արձանա-կանի 'ի մանր ազգաբանութեան ա-ռէ. զոր ասա ուրեմն յեռոյ ոմանք բարձին։

Այսոցիկ վկայէ և Կեփալիոն. քանզի ասէ 'ի միում գլխոյն այս-պէս. Մանր զամենայնսն յիսկզբան մերոյ աշխատութեանս սկսաք գրել զազգաբանութիւնսն 'ի գիւանացն արքունի. այլ առաք հրաման 'ի թագաւորաց՝ թողուլ զանշանից և զվասաց արանց 'ի հնոցն զյիշա-տակն, և գրել միայն զքաջս և զի-մաստունս և զաշխարհակալս նախ-նիս. և մի յանդէտս զժամանակս մեր ծախել. և զայլն։

Ա յլ այս մեզ ամենեւին օտար և արտաքոյ ճշմարտութեանն, որք զնինոս Բէլայ ասեն որդի, կամ թէ նոյն ինքն Բէլ. զի ոչ ազգաբանութիւնն և ոչ ամացն ժողովումն այսոցիկ վկայէ։ Բայց թէ ըստ նշանաւոր և անուանի լինելոյ՝ որք պատեհ համարեալ այսպէս կարգիցէ զՀեւին մնտաւոր։ Եւ գտաք զայսոսիկ արդարեւ Յունաց դրպրութեամբ. զի թէպէտ և Յոյնք ինքեանք 'ի քաղդէացւոցն փոխեցին յիւրեանց լեզուն, և թէպէտ և քաղդէացի որք ինքնակամ յօժարութեամբ և կամ թէ 'ի հրամանէ թագաւորաց հարկեալ զայս իրագործել, որպէս Աւիոս ոմն և այլք բազումք, սակայն մեք Յունաց համարիմք, որպէս 'ի նոցանէ ուսեալք։

Զ. Յաղագս Ի՞նչ է ինչ որ հաստատ, և է որ օրէն 'ի Մովսէսէ պատմեն այլոն հնախօսք. և յաղագս Ուսմանէ որոյ Թէոփիլոսի անգիր ղրոցացն։

ԶՀԱՒԱՏԻՆ որչափ կարա-
ցեալ 'ի բազմացն ընտրեալ բանից, կարգեցաք զծնունդս երից որդւոցն Նոյի, ցԱբրահամ և ցՆինոս և ցԱրայն. որում ոչ զոք ընդդիմանալ կարծեմ 'ի միտս ունողացն, բայց թէ զճշմարտութեանն զք խորհելով քակել զոճ, յառաստելս զճըշմարիտ բանս ախորժելով փոփոխել փութայցէ. և յայսոսիկ իւրաքանչիւր միտք որպէս կամին՝ ուրախասցին։

Այլ թէ շնորհակալ և մերոյս տքնութեանց և ջանից լինիցիս, ո՛վ ուսումնասէր դու և զմեզ յայսմ աշխատեցուցող, անցից սակաւ բանիւք յիշատակաց յաղագս որոյ վերագոյնդ կարգեցաք, թէ որպէս առաջինքն 'ի վիպագրացն յաղագս այսորիկ հաճեցան շարադրել. թէպէտ և ոչ ունիմ այժմ ասել, յամ-

քարայնոցս մատենից Թագաւորացն այսպէս արդեւք գտեալ, եթէ ըստ ախորժելոյ որպէս կամեցան իւրաքանչիւրքն փոփոխել զանուանսն և զզրոյցս և զժամանակս, և կամ այլ զինչ և ինչ պատճառ: Բայց որպէս իսկզբանն երբեմն 'ի Ճշմարտէն, և երբեմն 'ի ստէն. որպէս յաղագս նախաստեղծին, ոչ առաջին մարդ ասելով զնա, այլ Թագաւոր. սոյնպէս անուն խժական նմա և անհնչանակ կոչելով, և ամս տալով նմա երեսուն և վեց հազար: Իսկ Թուով նահապետացս և 'ի ջրհեղեղին յիշատակաւ, զոյգ և հաւասար Մովսիսի. նոյնպէս և յետ ջրհեղեղին երիս կարգելով արս անուանիս յառաջ քան զաշտարակաշինութիւնն, զկնի նաւարկութեանն ՔսիսուԹրեայ 'ի Հայս, Ճշմարտեն. իսկ անուանցն փոփոխմամբ և բազմօք այլովք ստեն:

Բայց ես այժմ ուրախացայց հաւառնելով առաջիկայիցս իմոց բանից 'ի սիրելոյն իմմէ և քան զշատս յարդարախօսողէ, 'ի բիւրատեանն

Սիբիլլէայ։ Յառաջքան զբուրդն, ասէ, և զբազմաբարբառն լինելոյ ձայնի ազգի մարդկան, և զկնի նաւարկութեանն Քսխուութիւեայ 'ի Հայս, Զրուանն և Տիտանն և Յապետոսթէ լինէին իշխանք երկրի։ Որ ինձ թուին Սեմ, Քամ և Յաբեթ։

Եւ 'ի բաժանել սոցա, ասէ, զամենայն տիեզերս ընդ իւրեանց իշխանութեամբ, հարստացեալ տիրէ 'ի վերայ երկոցունցն էւս Զրուանն։ Զոր ասա ուրեմն Զրադաշտ մոգ տրքայ բակտրիացւոց, որ է Մեդացի, սկիզբն և հայր աստուածոցն ասաց լինել. և բազում այլ ինչ զնմանէ առասպելեաց, զոր անաւղի է մեզ այժմ երկրորդել։

Արդ'ի բռնանալն, ասէ, Զրուանայ, ընդդիմացան նմա Տիտանն և Յապետոսթէ, 'ի մարտ պատերազմի ընդ նմա գրգռելով. վասն զի թագաւորեցուցանել զորդիս իւր 'ի վերայ ամենեցուն խորհէր։ Եւ յայսպիսում խռան յափշտակեաց, ասէ, Տիտանն զմասն ինչ 'ի ժառան-

գուԹեան սահմանացն Զրուանայ։ Ասա 'ի մէջ անցեալ քոյր նոցա Ասողիկ, համոզեալ դադարեցուցանէ զսղմուկն. և յանձն առնուն Թագաւորել Զրուանայ. բայց դաշինս ուխտից և երդմանց 'ի միջի հաստատեն, ապանանել զամենայն արու՝ որ ծնանիցի Զրուանայ, զի մի ազգաւ 'ի վերայ նոցա Թագաւորեսցէ։ Ուստի և արս հզօրս 'ի Տիտանացն 'ի վերայ ծննդոց կանանց նորա կարգէին։ Եւ ապանեալ զերկուս ոմանս վասն երդման ուխտին հաստատուն կալոյ, խորհի այնուհետեւ քոյրն նոցա Ասողիկ հանդերձ կանամբք Զրուանայ, հաւանեցուցանել զոմանս 'ի Տիտանացն՝ ապրեցուցանել զայլ մանկունս, և յարեւմուտս կոյս յուզարկել 'ի լեառն՝ որ անուանեալ կարգային Դիւցընկէց, իսկ այժմ կոչի Ոլիմպոս։

Արդ զայսոսիկ Թէպէտ առասպելս ոք, Թէպէտ Ճշմարտութիւն հաշուել համարեսցի, բայց ես որպէս հաւանեալ եմ, բազում ինչ

ճշմարիտ է։ Քանզի և որ 'ի կիպ-
բացւոց Կոստանդեայ եպիսկոպոս
Եպիփանոս 'ի հերձուածոցն յան-
դիմանութեան, յորժամ ճշմարիտ
և արդարադատ զԱստուած ձեռ-
նարկէ ցուցանել, և վասն ջնջելոյ
որդւոցն Իսրայէլի զեւթն ազգսն,
ասէ այսպէս, եթէ արդարադա-
տապէս Աստուած զազգսն զայնո-
սիկ ջնջեաց յերեսաց որդւոցն Ի-
սրայէլի. զի 'ի բաժնի որդւոցն Սե-
մայ հասեալ էր երկիր կալուածոցս
այսոցիկ, բռնութեամբ Քամ'ի վե-
բայ եկեալ յափշտակեաց։ Իսկ Ա-
ստուծոյ իրաւունս պահեալ զերդ-
ման ուխտին, վրէժ հատուցանէ
ազգին Քամայ, 'ի բաց դարձուցա-
նելով զժառանգութիւնն Սեմայ։

ԱՅԼ ԶՏիտանան և ԶՌափայիմ
յիշեն աստուածային գիրք։

Բայց պարտ է մեզ զոմանց ան-
գիր հին զրոյցս, որ պատմեալ է-
լեն վաղ ուրեմն 'ի մէջ իմաստնոցն
Յունաց, և հասին մինչեւ 'ի մեզ
այս զրոյցք 'ի Գորգի և 'ի Բանան
անուն կոչեցեալոց, եւս երրորդ ոմն

Դաւիթ, Թէպէտ և յոյժ սակաւուք՝ Երկրորդել։ Յորոց մի ոմն 'ի նոցանէ վարժեալ փիլիսոփայութեամբ, ասէր այսպէս. Թէ Ո՞վ ծերք, յորժամ էի 'ի մէջ Յունաց զիմաստութիւն վարժելով, դէպ է չեւ 'ի միում աւուրց՝ զի վասն աշխարհագրութեանց և բաժանմանց ազգաց 'ի մէջ արանց իմաստանոց և հմտագունից բան Ճառիւր. ոմանք այլազգաբար և ոմանք այլաբանաբար զրոյցս մատեանից տային։ Իսկ որ կատարելագոյնն էր 'ի նոսա, Ալոմպիոդորոս անուն, այսպէս ասաց. Պատմեցից ձեզ, ասէ, զրոյցս անգիրս յաւանդութենէ 'ի մեզ հասեալ, զոր և բազումք 'ի գեղջկաց զրուցեն մինչեւ ցայժմ։ Մատեան լեալ զՔսիսուԹրեայ և զորդւոց նորա, որ այժմ աչ ուրեք երեւի. յորում, ասեն, կարգ լեալ բանից այսպիսի։

Յետ նաւելոյ ՔսիսուԹրեայ 'ի Հայս և գիպելոյ ցամաքի, գնայ, ասէ, մի յորդւոց նորա կոչեցեալն Սիմ՛ընդ արեւմուտս հիւսիսոյ դի-

տեալ զերկիրն , և դիպեալ դաշտի
ծիւռմ փոքրու առ երկայնանասիւ
միով լերամբ , գետոց ընդ մէջ նո-
րա անցանելով , 'ի կողմանս սատ-
րեստանի , դադարէ առ գետոնքն
երկլուանեայ աւուրս , և անուանէ
յանուն իւր զլեառն Սիմ. և դառ-
նայ անդրէն յարեւելս հարաւոյ ,
ուստի եկն : Իսկ 'ի կրասերագունից
որդւոցն նորա Տարբան անուն , ե-
րեսուն ուստերք և հնգեսասան
դստերք և նոցին արամբք մեկնեալ
'ի հօրէն , բնակէ անդրէն 'ի նոյն գե-
տեզերքն , յորոյ անուն և զգաւառն
անուանէ Տարօն , և զանուն ան-
զլոյն ուր բնակեցաւն կոչէ Ցրօնս •
զի անդ զառաջինն սկիզբն եղեւ բա-
ժանելոյ որդւոց նորա 'ի նմանէ :
Նորին դարձեալ և առ եզերբ սահ-
մանացն բակտրիացւոց ասէին բնա-
կել սակաւ աւուրս • մնացեալ և
մի ոմն անդ յորդւոցն նորա : Քանզի
կողմանք արեւելից Զրուան զՍիմ
կոչեն , և Զարուանդ զգաւառն ա-
նուանեալ ասեն մինչեւ ցայժմ :
Բայց առաւել յաճախագոյն հինքն

արամազնեաց 'ի նուագս բամբռան և յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակաց: Եւ այսոքիկ զբ-ոյցք սուտ և կամ թէ արդարեւ լեալք, մեզ չէ ինչ փոյթ: Այլ վասն գիտելոյ քեզ զամենայն, որ ինչ 'ի լրոյ և որ ինչ 'ի գրոց, ան-ցանեմ ընդ բնաւն 'ի գիրս յայս, զի իմացիս զառ-քեզ պարզամուս-թիւն իմոց խորհրդոցս:

Ի. Յայսպարարութիւն սակաւուք, թէ ըստ արփանոցն սասոյեալ է Բելէր, ըստ սպասաւորին Բանից ճշմարտութեամբ նաբերուն է:

ԶԲԷԼԱՅ, առ որով նախնին մեր Հայկ, բազումք բազում ինչ այլ ընդ այլոյ պատմեն, բայց ես ասեմ զԿռոնոսդ անուն և զԲէլ՝ Նեբրովթ լեալ. որպէս եգիպտա-ցիք թուեն հաւասար Մովսիսի, Եփեսոս, արեգակն, Կռոնոս, որ է Քամ, Քուշ, Նեբրովթ, Թոզեալ զՄեսրայիմ: Զի առաջին ասեն

իւրեանց մարդ լեալ զԵփեսոս և գտակ հրոյ։

Եւ ընդէր սա գտակ հրոյ և կամ Պռոմիթէոս գողացեալ զառ՝ի յաստուածոցն հուր և շնորհեալ մարդկան. որ է այլաբանութիւն, և ոչ բերէ ասել կարգ բանիս։

Որում և հարստութեանցն է գիսլոտացւոց կարգ, և ամենայն ժողովումն՝ի Հովուացն հարստութենէ մինչեւ ցՀեփեսոս, վկայէ հաւասար էբրայեցւոցն լեալ, որ է Յովսեփայ ժամանակացն մինչեւ ցՍեմ, Քամ և ցՅաբեթ։

Եւ այսոքիկ բաւական լիցին ասել այսչափ։ Զի եթէ զամենայն եղեալս յաշտարակագործութենէն մինչեւ առ մեզ՝ ՝ի հասողութիւն քեզ՝ի մէջ ածել ջանայցեմք պատմութիւն, էրբ ապա յրղձալին քո հասանիցեմք զբուցաց պատմութիւնն. մանաւանդ զի առաջիկայս մեր երկար է գործ, և ժամանակ մահկանացուաց սուղ և անյայտ։ Այլ սկսեալ ցուցից քեզ զմերն, թէ ուստի և որպէս։

Ը. ԹԷ ՈՎ ԿԱՄ ՈՍՈՓԻ ՊԱՅՍՊԻՈՅ ԷԳԻՊ
ՂԸՈՅՈՒԲԱՆՈՍԻՆԱՆ։

ԱՐՇԱԿ մեծ արքայ Պարսից և Պարթեւաց, որ և ազգաւ իսկ Պարթեւ, ապստամբեալ, ասէն, 'ի մակեդոնացւոցն, և թագաւորեալ 'ի վերայ ամենայն արեւելից և ասորեստանեաց, և սպանեալ զԱնտիոքոս թագաւոր 'ի Նինուէ, հնազանդեցուցեալ զամենայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ, սա թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ 'ի վերայ աշխարհիս Հայոց, պատեհ իմն համարեալ այսպէս անշարժ իւրոյ թագաւորութեանն լինել։ Եւ քաղաք թագաւորութեան տայ նմա զՄծբին, և սահմանս հաստանէ նմա զման ինչ յարեւմտեայ Ասորւոց և զՊաղեստին և զԱսիայ և զամենայն միջերկրեայս և զթիտալիայ, 'ի ծովէն Պոնտոսի մինչեւ 'ի տեղին՝ ուր Կաւկաս յարեւմտեանն յանգի ծով, և զԱտրպատական, և այլ որչափ միտք քո և քաջութիւն հատանէն. զի սահ-

մանք քաջաց, ասէ, զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի։

Սորա կարգեալ զիշխանութիւն իւր մեծապէս, և հաստատեալ ըզթագաւորութիւն իւր, կամ եղեւ գիտեալ սորա, թէ ոչք և որպիսի աչք ակրեալ են 'ի վերայ աշխարհիս Հայոց մինչեւ ցնա. զքաջաց արդեւք եթէ զվատաց անցեալ ունիցի զտեղի։ Եւ գտեալ զոմն Ասորի Մար Աբաս Կատինայ, այր ուշիմ և վարժ քաղդէացի և յոյն գրով, զոր յղէ առ մեծ եղբայրն իւր Արշակ արժանի ընծայիւք, բանալ նմա զդիւանն ալքունի։ Եւ գրէ առ նա ձեւ բանից օրինակ զայս։

Թ. Թուղթ Վաղարշակայ արքայի Հայոց առ մեծն Արշակ արքայ Պարսից։

ԱՐՇԱԿ թագաւոր երկրի և ծովու, որոյ անձն և պատկեր որպէս և է իսկ մեր աստուածոց, իսկ բախտ և պատահումն 'ի վերս քան զամենայն թագաւորաց, և մտաց լայնութիւն՝ որչափ երկնի 'ի վերայ

երկրի։ Վաղարշակ կրտսեր եղբայրքո և նիզակակից, որ 'ի քէն կարդեալ արքայ Հայոց։ ողջ լեր ամենայն յաղթութեամբ։

Քանզի պատուէր ընկալայ 'ի քէն՝ քաջութեան և իմաստութեան հոգ տանել, ոչ երբէք անփոյթ արարեալ զքոյսն խրատու, այլ խնամ տարեալ հոգացայ ամենայնի, որչափ միտք և հասողութիւն բաւեցին։ Եւ այժմ 'ի քումմէ խնամակալութենէ զեռեղեալ թագաւորութիւնս, խորհուրդ 'ի մտի եդի գիտել, թէ ո՞յք ոմանք յառաջքան զիս ելցեն տիրեալ աշխարհիս Հայոց, և ուստի՞ նախարարութիւնքս՝ որ ասա կան։ Զի ոչ կարդք ինչ լեալ ասա յայտնի, և ոչ մեհենից պաշտամունք։ և ոչ գլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է և ոչ վերջինն, և ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն 'ի խուռն ամենայն և վայրենի։

Վասն որոյ աղաչեմ զքո տէրութիւնդ, հրամայեա բանալ զդիւանդ արքունի ընդդէմ առնդ է-

կելոյ առաջի քոյոյ հզօր տէրութեանդ. զի գտեալ զըղձալին էղբօր քո և որդւոյ, բերցէ զատոյգն փութապէս. և զմեր հեշտութիւն, որ 'ի կամակատարութենէ լեալ, քաջ գիտեմ ինդութիւն քեզ լեալ: Ողջ լեր երեւելիդ բնակութեամբ 'ի մէջ դից:

Եւ ընկալեալ Արշակայ մեծի զգիրն 'ի ձեռաց Մար Աբայ Կատինայ, մեծաւ ըջմտութեամբ հրամայէ առաջի առնել նմա զդիւանն արքունի՝ որ 'ի Նինուէ, միանգամայն և ուրախացեալ այսպիսի միտս ունել էղբօր իւրոյ, որում զկէս թագաւորութեան իւրոյ հաւատացեալ էր: Եւ խուզեալ սորա զամենայն մատեանսն, գտանէ մատեան մի հելլէն գրով, յորոյ վերայ էր, ասէ, վերնագիրն այսպիսի:

ՍԻԼԷԻՆ ՄՈՊԷՆԻՆ:

Այս մատեան հրամանաւ Անղէքսանդրի 'ի քաղդէացւոց բարբառոյ փոխեալ 'ի յոյնն, որ ունի զբուն հնոց և զնախնեացն բանս:

Որոյ սկիզբն լեալ ասէ զՀրուանն և զՏիտանն և զՅապետոսթէ, յորում և զիւրաքանչիւր ոք 'ի ծննդոց երից նախարարականացս այսոցիկ արանցս՝ զարս անուանիս կարգաւ շարադասել յիւրաքանչիւր տեղիս մինչեւ ցբաղումս ամս։

Յայսմ մատենէ Մար Աբաս Կատինայ զմերոյ ազգիս միայն հանեալ զպատմութիւն հաւատոյ, բերէ առաքայ Վաղարշակ 'ի Մծբին յոյն և ասորի գրով։ Զոր առեալ անձնագրեղոյն և քաջալերեան արին Վաղարշակ, կորովաբանոյն և հանճարեղի, առաջին իւրոյ գանձուն համարելով գնէր յարքունիսն 'ի պահեստի մեծաւ զգուշութեամբ. և զման ինչ 'ի յարձանի հրամայէ դրոշմել։ Յորմէ մեր հաւատոյ 'ի վերայ հասեալ կարգի զրուցացս, երկրորդեմք այժմ քոյ հարցասիրութեանդ, ձգելով զմեր ընիկ նախարարութիւնս մինչև ցքաղքէացւոց Սարդանապալիայ, և եւս մօտագոյն. յորում էր սկիզբն բանից այսպիսի։

Ահեղք և երեւելիք առաջինքն 'ի դէպն, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութեան։ Եւ 'ի սոցանէ հատեալ գտան ազգ ըստ կայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք, որք յաղագեալ ամբարտաւանութեամբ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն, և 'ի նոյն լինէին 'ի գործ անկեալք. յոր հողմահագին ինն և աստուածային շնչեցեալ 'ի դէպն ցասմանէ, ցրէ զամբարտակն. և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի 'ի մէջ արկանէին։ Յորոց մի էր և Յապետոսթեանն Հայկ, անուանի և քաջ նախարարն, կորովաձիգ և հաստաղեղն։

Եւ այս կարգ զրուցաբանութեան դադարումն առցէ. զի հանդէս է մեր, ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինան մեր և զբուն հին նախնիս։ Արդ 'ի նոյն մատենէ սկսեալ ասացից. Յապետոսթէ,

Մերոդ, Սիրաթ, Թակլատ. որ է Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ։ Յետ որոյ նոյն ժամանակագիր յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արմենակ, և զայլսն 'ի կարգի, զորոյ յառաջագոյն ասացաք։

Ժ. Յաղագս ապստամբութեանն Հայկայ։

ԱՅՍ, ասէ, Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանդուր, խայտակն և հաստաբազուկ. սա 'ի մէջ սկայիցն քաջ և երեւելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն, ոչք ամբառնային զձեռն՝ միապետել 'ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց։ Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բէլայ, 'ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի 'ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլաց և ուժաւորաց։ Քանզի անդ մոլեգնեալ այր խրաքանչիւր տուր 'ի կոզ ընկենուլի իւրոյ ձգելով, ջանային տիրել 'ի վերայ միմեանց.

ուր պատահմունք 'ի դէպ Եւանէին Բէլայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր։ Որում ոչ կամեցեալ Հայկայ՝ հնազանդ լինել Բէլայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ 'ի Բաբելոնի, չու արարեալ գնայ յերկիրն Արարատայ, որ է 'ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք՝ թռուցեալ իբրև երեքհարեւր, և այլովք ընդոծնօք, և էկօք յարեցելովք 'ի նա, և բոլոր աղխիւ։ Երթեալ բնակէ 'ի լեռնոտին միում 'ի դաշտավայրի, յորում սակաւք 'ի մարդկանէ յառաջագոյն ցրուեալոցն դադարեալ բնակէին, զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ տուն բնակութեան կալուածոց, և տայ 'ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արմենեկայ։ Այս որդապրացուցանէ զանդիր հին ասացեալ զոյցս։

Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արեւմուտս հիւսիսոյ, դայ բնակէ 'ի բարձրաւանդակ դաշ-

ոի միում. և անուանէ զանուն լեռ-
նագաշտակին Հարք. այս ինքն, ասէն բնակեալքս՝ ազգի տանն Թորգոմայ։ Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն։ Յիշի և ասասանօր պատմութիւնս։ Հարաւոյ կողմանէ գաշտիս այսորիկ առ երկայնանատիւ միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք՝ ինքնակամ հնազանդել գիւցազնին։ Արդարացուցանէ և այս զատացեալ զրոյցս անգիրս։

ԺԱ. Յաղագս պոպէրազին և մահուանն Բէլայ։

Եւ յառաջ մատուցեալ զբանս իւր ասէ, թէ Ի հաստատել տիտանեանն Բէլայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան, առաքէ 'ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, գալ նմա 'ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ։ Բնակեցեր, ասէ, 'ի մէջ ցրտութեան ատնտամանեաց, այլ ջերուցեալ մեղկեա

զգրաուԹիւն սաւուցեալ քո հպարտացեալ բարուցդ, և հնազանդեալ լինէ՞ կեաց 'ի հանդարտուԹեան, ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակուԹեան։ Եւ 'ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բէլայ, խստուԹեամբ պատասխանեաց։ Դառնայ առաքեալն անդրէն 'ի Բաբելոն։

Ապա զօրաժողով լինի 'ի վերայ նորա տիտանեանն Բէլ ամբոխիւ հեռաւոր զօրաց, գայ հասանէ 'ի հիւսիսի յերկիրն Արարատայ մերձ 'ի տունն Կադմեայ. փախստական լինի Կադմոս առ Հայկ, քաջ ընԹացիկս առաջի իւր առաքէ. Գիտեա, ասէ, ով մեծդ դիւցազանց, զի դիմեալ գայ 'ի վերայ քո Բէլ յաւէրժիւք քաջօք, և երկայնադիզք հասակօք սկայիւք մրցողօք։ Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա 'ի տուն իմ, փախեայ, և գամ աւասիկ տագնապաւ։ Արդ աճապարեա խորհել որ՝ ինչ գործելոց ես։

Իսկ Բէլն, յանդուգն և անձոռնի, զօրուԹեամբ ամբոխին՝ որպէս

յորձան ինչ սատիկ ընդ զառ 'ի վայր հեղեալ, փութայր հասանել 'ի սահմանս բնակութեան Հայկին, 'ի սիրտ և 'ի մարմին վտահացեալ արանց զօրաւորաց։ Ասա ուշիմ և խոհեմ սկայն, քաջադանգուրն և խայտակն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զայլ ևս որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ յերկիր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանուանս ունելով ձկունս յինքեան։ Եւ կոչեցեալ զզօրս իւր, ասէ ցնոսա. Յելանեալն մեր հանդէպ ամբոխին Բէլայ, դիպեալ ջանասցուք տեղւոյն՝ ուր անցեալ կայ 'ի մէջ խուան քաջացն Բէլ։ Զի կամ մեռցուք, և աղխ մեր 'ի ծառայութիւն Բէլայ կացցէ. կամ զաջողութիւն մատանց մերոց 'ի նա ցուցեալ, ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն սատակեալք։

Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ սապարէզս, հասանէն 'ի միջոց ինչ դաշտաձեւ լերանց բարձ-

բագունից. և յաջմէ ջուրցն հոսա-
նաց 'ի բարձրաւանդակումն կուռ
կալով 'ի տեղւոջ: Ի վերջ զերեսս
ամբարձեալ, երեւեցաւ նոցա բազ-
մութիւն անկարգ հոսակի ամբո-
խոյն Բէլայ ցան և ցիր յանդուգն
յարձակմամբ ընդ երեսս երկրին
սուրալով. իսկ Բէլ յեց և հան-
դարտ ամբոխիւ մեծաւ 'ի ձախմէ
ջուրցն 'ի վերայ ոստոյ միոյ խրամ 'ի
դիտանոցի: Ծանեաւ Հայկ զխումբ
վառելոյ ջոկատին, յորում Բէլ
առաջի ամբոխին էկեալ հասեալ
ընտրիւք և վառելովք ոմամբք. և
երկար միջոց ճանապարհին ընդ նա
և ընդ ամբոխն. և ինքն գլխանոց
ագուցեալ երկաթի, նշանաւորօք
վերջօք, և տախտակս պղնձիս թի-
կանց և լանջաց, և պահպանակս
բարձից և բազկաց. գօտեւորեալ
զմէջն, և յահեկէ զսաղնն երկայ-
րի. և նիզակն արի 'ի ձեռին իւ-
րում աջոյ, և յահեկումն վահան,
և ընտրիւք յաջմէ և 'ի ձախմէ: Եւ
տեսեալ Հայկին զսխտանեանն կուռ
վառեալ, և զարս ընտրս ընդ նմա

աջինս և ահեկինս, կարգէ զԱ-
մենակ երկու եղբարքք ընդ աջմէ,
և զԿագմոս և զայլս երկուս յոր-
դւոց իւրոց 'ի ձախմէ, զի արք կո-
րովիք էին յաղեղն և 'ի սուսեր. և
ինքն առաջի, և զայլս հրոսակին
զկնի իւր կարգեաց. երեքանգիւնի
ի՞ն կարգեաց ձեւով, հանդարտ
յառաջ մատուցանելով:

Եւ հասեալ երկոցունց կողմանց
սկայիցն 'ի միմեանս, ահագին դղրդ-
իւն 'ի վերայ երկրի առնէին շա-
հատակելո

դակ զօրն, զի միւսանդամ Ճակատ յօրինեսցէ։ Զայս խմացեալ աղեղնաւորին Հայկայ, յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յալքայն, լի քարշէ պինդ զլայնալիճն, դիպուցանէ զերեքթեւեանն կրծից տախտակին, և շէշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն. և այսպէս Ճոխացեալն տիտանեան կործանի՝ յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին։ Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեանն, փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց։ Եւ վասն այսորիկ այսչափ բովանդակ լեցի ասել։

Բայց զսեղի Ճակատուն չինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հայոց ձոր։ Իսկ բլուրն, ուր քաջամարտիքն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին Գերեզմանք։ Բայց ըստ դիակին Բէլայ պաՃուՃեալ իմն գերեզմանք, ասէ, հրամայէ Հայկ սա-

նել 'ի Հայք, և թաղել 'ի բարձրաւանդակ տեղւոջ, 'ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց։ Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք։

ԺԲ. Յաղագս որ 'ի Հայկայ ազգս և ծնունդս. և ով զինչ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ գործեաց։

ԲԱԶՈՒՄ ինչ զկնի այսորիկ պատմի 'ի մատենին. այլ մեք, որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է, շարեսցուք։

Զկնի այսորիկ գառնալ ասէ Հայկին 'ի նոյն տեղի բնակութեան. և Կադմեայ թոռին իւրում բաղում ինչ յանկածէ պատերազմին պարսիւեաց, և յիւրոց ընդոծնացն արս անուանիս։ Հրամայէ զնոյն տեղի բնակութեան ունել նմա զառաջնոյ իւրոյ տանն, և ինքն երթեալ դադարէ յանուանեալ տեղին Հայք։ Սա կեցեալ ամս, ծնաւ զԱրմենեակ 'ի Բաբելոնի, որպէս վերագոյն ասացաք։ Յետ որոյ կենցեալ

և այլ ևս ամս ոչ սակաւս՝ մեռա-
նի, յանձն առնելով զբովանդակ
ազգն Արմենակայ որդւոյ իւրոյ։

Իսկ նորա թողեալ երկուս յեղ-
բարց իւրոց զԽոռ և զՄանաւազ ամե-
նայն աղխիւն իւրեանց 'ի կոչեցեալն
Հալք, և զորդի Մանաւազայ զԲազ-
յորոց Մանաւազ ժառանգէ զՀալք,
իսկ որդի նորա Բազ՝ յարեւմտից
հիւսիսոյ զեղը ծովուն աղւոյ, և
զգաւառն և զծովն անուանէ իւ-
րով անուամբն։ Եւ 'ի սոցանէ ա-
սեն լեալ զնահապետութիւնս մա-
նաւազեան և զբզնունեաց, և որ-
դունին անուանեալ, որք ասա ու-
րեմն յետ սրբոյն Տրդատայ բար-
ձեալ ասին 'ի միմեանց պատերազ-
մաւ։ Իսկ Խոռն 'ի կողմանս հիւ-
սիսոյ բազմանայ, կարգէ զչէնս իւր.
և 'ի նմանէ ձգեալ ասի մեծ նա-
խարարութիւն ազգին խոռխոռու-
նեաց, որք քաջք և անուանիք, որ-
պէս և որք առ մեզ են այժմ երե-
ւելիք։

Իսկ Արմենակայ առեալ զամե-
նայն բազմութիւնն, խաղայ յա-

րեւելս հիւսիսոյ, և երթեալ իջա-
նէ 'ի խորին դաշտավայրի մի 'ի
բարձրագագաթանց պարսպեալլե-
րանց, զեռս կարկաջասահ 'ի յա-
րեւմից ընդ մէջ անցանելով, և
զդաշտն արեւելից ամն գոգցես իբր
ոլասյսեալ, ձիգ յարեգակն կոյս
զերկայնութիւն պարզեալ, և սոռ-
ոոտով լերանցն բազում ականա-
կիս բղխեալ աղբեւրք, որ գեռոց
հաւաքումն եղեալ հեզաբար առ
սահմանաք նոցա, ծնիւք լերամբք և
եզերաք դաշտին՝ պատանիք ոմանք
իբր երիտասարդուհիք ճեմիցին։
Այլ հարաւայինն արեգակնաճեմ
լեառն, սպիտակափառ ունելով
գագաթն, ուղղորդ 'ի յերկրէ բուս-
եալ, երեքօրէիս, որպէս ասաց
ոմն 'ի մերոց, քաջագործաց առնն
շրջապատեալ ճանապարհաւ, և
առ փոքր փոքր 'ի շեշտումն ան-
կեալ, ծեր ոմն արդարեւ լեառն 'ի
մէջ երիտասարդացեալ լերանց։
Յայսմ խորութեան դաշտի բնա-
կեալ Արամենակայ, շինէ զմատն
ինչ 'ի հիւսիսոյ կողմանէ դաշտին,

և զոան լերինն 'ի նոյն կողմանէ, և զլեառն անուանէ յանդագոյն յիւր անուն Արագած, և զկալուածն՝ ոան Արագածու։

Բայց պքանչելի ինն ասէ պատմագիրն, թէ 'ի յոլով տեղիս գոան բնակեալ 'ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր սակաւք յառաջքան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ։

Այս Արմենակ կեցեալ ամս, ծնաւ զԱրմայիս. և յետոյ կեցեալ ամս շատ, մեռաւ։ Իսկ որդի նորա Արմայիս շինէ իւր տուն բնակութեան 'ի վերայ ոստոյ միոյ առեզերք գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր. և զանուն գետոյն յանուն Թոռին իւրոյ Արասասայ՝ Երասխ։ Եւ զորդին իւր զՀարայ, զյոլովածին և զչատակեր, առաքէ ամենայն աղխիւ իւրով 'ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ և բարի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, 'ի Թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած. յորոյ անուն և զգաւառն ասէն ա-

նուանել Շիրակ։ Վասն որոյ արդարանալ թուի առասպելին, որ ասի 'ի մէջ գեղջկաց. թէ քո Շարայի որկորն է, ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն։ Այս Արմայիս կեցեալ ամն, ծնանի զորդի իւր զԱմասիայ. 'ի վերայ որոյ կեցեալ և այլ եւս ամն, մեռաւ։

Ամասիայ բնակեալ յԱրմաւիր, յետ ամաց ծնանի զԳեղամ, և յետ Գեղամայ զՓառոիս արի և զՅոլակ։ Եւ յետ ծնանելոյ զսոսա՝ անցանէ զգեառոին մերձ 'ի լեառնն հարաւոյ, և շինէ անդ առ խորշիւք լեառնոյնն մեծապէս ծախիւք երկուս տունս. զմին յարեւելս կոյս մօտ յակունս աղբերցն՝ որ առ ստորոտով լերինն եկանեն. իսկ զմիւսն յարեւմուտս կոյսնորին տանն, բացագոյն իբր մեծօր հասարակօրոյ միոյ հեռեւակացնացի տունն ճանապարհի։ Եւ եա զնոսա 'ի ժառանգութիւն երկուց որդւոց իւրոց, արւոյն Փառոիսի և կայսառին Յոլակայ. յորս բնակեալ՝ յիւրեանց անուն զտեղիսն կոչեցին, 'ի Փառո-

խայ՝ Փառախառ, և 'ի Ցոլակայ՝ Ցոլակերտ։ Բայց զլեառն՝ Ամասիայ անուանէ իւր անուամբ Մասիս, և ինքն դարձեալ յԱրմաւիր, էկաց ամս սակաւս, և մեռաւ։

Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւիր. և Թողեալ զՀարմայ յԱրմաւիր՝ հանդերձ որովք բնակէրն, և ինքն գնաց զմեւս լերամբն արեւելեան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ։ Էր ինչ զեզր ծովակին, և Թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զլեառնն անուանէ Գեղ, և զչէնսն՝ Գեղաքուն, որով կոչի և ծովն։ Սոյն ծնաւ զորդի իւր զՍիսակ, զայր սէգ և անձնեայ, բարեգեղ, կորովաբան և գեղեցկաղեղն։ Սմա զմեծ մասն յընչից իւրոց տուեալ. և ծառայս՝ անձինս բազումս, սահմանս հատուցանէ նմա ժառանգութեան 'ի ծովէն ընդ արեւելս մինչեւ ցդաշտ մի, որ գեան Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմաձիգս և նեղս, ահագին գընդընչմամբ իջանէ 'ի դաշտն։ Սոյն բնա-

կեալ Սիսակ, ընու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք. այլ Պարսք յատակագոյն իսկ Սիսական կոչեն։ Ի սորա ծնեալ դոց սատ ուրեմն Վաղարշակ, որ առաջին 'ի Պարթեւաց արքայ Հայոց, զտեալ արս անուանիս, տեարս աշխարհին կարգէ, որ է սիսականդ ազգ. և զայս առնէ Վաղարշակ 'ի պատմութենէն ատուգեալ։ Այլ այս թէ ո՞ր ազգս է, յիւրում ժամու պատմեացուք։

Բայց ինքն Գեղամ գառնայ անդրէն 'ի դաշտ անդր, և առ ոստամբ նորին լերինն 'ի Ձորակի մի ամրոյ շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ 'ի Գառնկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի։ Ի սորա ծնեալ դոց, սատ ուրեմն առ Արտաշիսիւ թոռամբ Վաղարշակայ, ոմն Վարժ անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուաց և այծեմանց և վարազուց, դիպաձգութեամբ նետից կորովի, զսա 'ի վերայ որսոց արքունեաց

կարդէ, և չէնս պարդեւէ նմա առ
եղերբ գեաոյն, որ անուանեալ կո-
չի Հրազդան։ Եւ 'ի սմանէ ասեն
լինել զտուն վարաժնուն։ Այս
Գեղամ, որպէս ասացաք, յետ ա-
մաց կենաց իւրոց ծնաւ զՀարմայ.
յետ որոյ և այլս եւս, և մեռաւ։
Եւ հրամայեաց որդւոյ իւրում
Հարմայ բնակել յԱրմաւիր։

Այս Հայկ որդի Թորգոմայ, որ-
դւոյ Թիրասայ, որդւոյ Գամերայ,
որդւոյ Յաբեթի, նախնի հայաս-
տանեայց. և այս ազգք նորա և
ծնունդք և աշխարհ բնակութեան.
և յայսմ հետէ սկսան, ասէ, բազ-
մանալ և լնուլ զերկիրն։

Իսկ Հարմայ կեցեալ ամս, ծնաւ
զԱրամ։ Արամայ բազում գործք
քաջութեան պատմին մարտիւք նա-
հատակութեան, և ընդարձակեալ
զսահմանս Հայոց յամենայն կող-
մանց. յորոյ անուն և ամենայն ազգք
զաշխարհս մեր անուանեն, որպէս
Յոյնք Արմէն, և պարսիկք և Ասո-
ւրիք՝ Արմենիք։ Բայց զընդարձակու-
թիւն պատմութեան սորա և զզ-

դործս քաջութեան, թէ զնարդ կամ որով ժամանակաւ, թէ կամ ինչպէս՝ արտաքոյ այսորիկ գրոցս կարդեսցուք, և կամ թողցուք. ապա թէ ոչ՝ 'ի ամին :

ԺԳ. Յաղագս ընդ արևելեայս պատերազմին և յաղթութեանն, և մահուան Նիւսարն Մոգեսայ :

ԵՒ վասն զի հաճոյ թուեցաւ մեզ զաշխատութիւնն, որ 'ի վերայ քո հրամանիդ, համարել հեշտութիւն, քան զառ 'ի յայլոցն՝ որ 'ի կերակրոց և յըմպելեաց լինին խրախճանութիւնք, հաւանեցաք անցանել սակաւուք և ընդ կարգ բանից պատերազմաց որ 'ի հայկեանն Արամայ : Սա այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր, լաւ համարէր զմեռանելն 'ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զահմանս հայրենիս, և հարազատից ա-

լեան նորա տիրել արանց օտարա-
ծնաց :

Ա յս Արամ, սակաւուք ամՕք
յառաջքան զտիրելն Նինոսի սար-
բեատանեաց և Նինուէի, նեղեալ
յազգացն՝ որ շուրջ զնովաւ, և
ժողովէ զբազմութիւն ընդանի ա-
րանց քաջաց և աղեղնաւորաց, և
որ 'ի տէգ նիզակի կամակարողք,
նորատնք և հարուստք յոյժ և յա-
ջողաձեռնութիւն խակ և երեսա-
ւորք, որ 'ի սիրա և 'ի պատրաստու-
թիւն իբր թէ բեւրս հինգ : Պա-
տահէ մեդացւոցն երիտասարդաց,
որոց առաջնորդէր Նիւքար ոմն ա-
սացեալ Մադէս, այր հպարտ և
պատերազմասէր, որպէս ցուցանէ
նոյն ինքն պատմագիրն, յեղերս
սահմանացն Հայոց : Որոց միանգամ
քուշանաբար հինիւ ամբակակոխ ա-
ղարեալ զսահմանս Հայոց, ծա-
ռայեցոյց ամս երկուս : Որում յան-
կարծօրէն 'ի վերայ հասեալ Արամ
յառաջքան զծագել արեգականն
սատակեաց զբազմութիւն ամբո-
խիցն . և զնոյն ինքն զՆիւքարն կո-

չեցեալ Մադէս ձերբակալ արա-
բեալ ածէ յԱրմաւիր, և անդ ու-
բեմն 'ի ծայրս աշտարակի պարսպին
ցից վարեալ երկաթի ընդ ճակատն,
յորմէ վարսել հրամայէ, 'ի տեսիլ
անցաւորաց և ամենայն էկեղոց
անդր. և զաշխարհն նորա մինչեւ
ցլեառն անուանեալ Զարասպ՝ 'ի
ծառայութիւն հարկի կալաւ մին-
չեւ ցԹագաւորութիւնն Նինոսի 'ի
վերայ ասորեստանի և Նինուէի։

Իսկ Նինոս Թագաւորեալ 'ի Նի-
նուէ, յիշատակ քինու զնախնւոյն
իւրոյ զԲելայ ունէր 'ի մտի, 'ի զրու-
ցաց ուսեալ. և զայս խորհէր հա-
տուցանել յամս ձիգս, նկատել որ-
սալ զյաջողութիւն աւուրց, բառ-
նալ ընչել զամենայն ճեռ սերմա-
նեալ յարանց քաջին Հայկայ։ Այլ
երկեւղ կասկածանաց խարդաւա-
նակ լինելոյ իւրոյ Թագաւորու-
թեանն՝ զայսպիսիս համարեալ ի-
րագործութիւն, ծածկէ զչարու-
թիւնն. և հրամայէ նմա զայն ի-
խանութիւն անկասկածաբար ու-
նել. և համարձակութիւն տայ նմա

վարատկալ ածել մարգարտէ, և երկրորդ նորա կոչել։ Այլ այս շատացի ասել այսչափ, քանզի չթողացուցանէ զմեզ որ առաջնիկայս է իր՝ յեղերումն յամել այսր պատմութեան։

ԺԴ. Յաղագս ընդ ասորէսպանէայս կռոոյն և յաղթութեանն, և Պայպայն Քաղէայն, և Կէսարու, և առաջին և այլոց անուանէալ Հայոց։

ԿԱՐԳԵՍՑՈՒՔ գոյղն յիշատակօք բանից և որ ինչ զկնի այսորիկ սորա գործք քաջութեան պատմի յարեւմուտս 'ի նոյն մատենի, և որ ընդ ասորեստանեայս կռիւն. զպատճառս և զզօրութիւն իրացն միայն յայտնելով, և զերկարութիւն գործոյն համառօտ բանիւ յանդիման կացուցանել։

Նոյն այս Արամ, յետ վճարելոյ ճակատոյն՝ որ ընդ արեւելեայս, խաղայ նոյն զօրութեամբ զկողմամբք ասորեստանի. գտանէ և անդ զոմն ապականիչ երկրին իւրոյ՝ չորիւք

բիւրուք վառելուք հետեւակք, և հինգ հազար հեծելազօրու, Բարշամ անուն՝ յազգէ սկայիցն. որոյ սաստկագոյն նեղեալ հարկաց խըստութեամբ՝ անասպատ զբովանդակ շրջակայն իւր առնէր։ Սմա Ճակատու պատերազմի 'ի գիմի հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորդուաց 'ի դաշտն ասորեստանի արկանէ, զբազումս 'ի նոցանէ սատակելով. իսկ Բարշամ առաջի զինակրացն նորա պատահեալ՝ մեռաւ։ Եւ զայս Բարշամվան արութեան իւրոյ բազում գործոց՝ աստուածացուցեալ պաշտեցին Ասորիք ժամանակս յոլովս։ Իսկ զմեծ մասն դաշտացն ասորեստանի կալաւ 'ի ծառայութեան հարկի Արամ բազում ժամանակս։

Այլ որ ինչ յարեւմուտս կոյս ընդ տիտանեանցն է սորա գործ քաջութեան՝ ասել կայ մեզ առաջի։ Ասա յարեւմուտս շարժեալ 'ի վերայ առաջնոյն ջորիւք բիւրու հետեւակաւ զօրու, և երկու հազար հեծելով հասանէ 'ի կողմանս կա-

պադովկացւոց, 'ի տեղն մի՝ որ այժմ
ասի Կեսարիա։ Եւ քանզի զարեւելեայսն և զհարաւայինն նուաճեալ,
'ի ձեռն յանձնեալ էր երկուց ցեղից այսոցիկ, սիսակեանցն զարեւելս, և որք 'ի Կադմեայ տանէն՝
զասորեստանին, ոչ ինչ այնուհետեւ կասկած շփոթից ուստեք ունէր։

Վասն որոյ յերկարեալ ժամանակս լինել յարեւմուտս՝ պատահէ նմա Պայապիս Քաղեայ տիտանեան՝ պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնդոսն և զՈվկիանոս։ Որում 'ի դիմի հարեալ վանէ, փախստական արկանելով 'ի կղզի ինչ ասիական ծովուն։ Եւ ինքն Թողեալ զոմն Մշակ անուն յաղգէ իւրմէ, և բեւր մի 'ի զօրաց իւրոց 'ի վերայ աշխարհին, և ինքն դառնայ 'ի Հայս։

Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զնոսա և զլեզուս հայկական. վասն որոյ մինչեւ ցայսօր ժամանակի անուանեն զկոլն-

մայն զայն Պուտին Արմենիան, որ Ժարգմանի առաջին Հայք։ Եւ զդաստակերտն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ՝ փոքրագունիւք պարսպեալ ոսմովք, անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել, մինչեւ յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա։ Ըստ նմին օրինակի 'ի տեղեացն այնոցիկ մինչեւ ցքուն իւր սահմանսն, զբազում անքնակ երկիր էլից բնակչօք, ոչք երկրորդ և երրորդ անուանեցան Հայք, այլ և չորրորդ։ Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարեւմտեան մեր կողմն առաջին և երկրորդ, այլ և երրորդ և չորրորդ Հայք։ Իսկ որ այլ 'ի յոմանց ասի 'ի յունական կողմանն, մեզ ոչ է հաճոյ. այլոց որչափ կամք լցեն։

Արդ այսպէս հզօր և անուանի եղեալ, անուն սորա մինչեւ ցայս օր, որպէս ամենեցուն յայտնի է, որ շուրջ զմեզ աղդ զաշխարհս մեր

անուանեն : Բազում և այլ գործ քաջութեան 'ի սմանէ գտանին կատարեալ , այլ մեզ բաւական լիցի ասացեալս :

Բայց թէ ընդէր այսոքիկ 'ի բուն մատեանս Թագաւորացն կամ մեհենիցն ոչ յիշատակեցան , մի՞ ոք ընդ այս երկբայացեալ տարակուսեսցի : Մի , զի յառաջ քան զՆինոսի ժամանակս Թագաւորութեանն է , յորում ոչ ոք այսպիսի երաց փոյթ յանձին ունէր . երկրորդ , զի ոչ հարկ ինչ և ոչ պէտք կարեւորք էին նոցա՝ զազգաց օտարաց և զաշխարհաց 'ի բացեայ , և զհամբաւս հինս և զզրոյցս նախնականս յիւրեանց Թագաւորաց կամ մեհենից մատեանս գրել . մանաւանդ զի և ոչ պարծանք ինչ նոցա և ոչ բարգաւաճանք՝ օտար ազգաց քաջութիւն և գործք արութեան : Բայց թէպէտ և ոչ 'ի բուն մատեանսն , սակայն որպէս Մար Աբաս Կատինայ պատմէ , 'ի փոքրունց ոմանց և յանհնչանից արանց 'ի գուսանականէն այս գտանի ժողովեալ 'ի դի-

ւանի ալքունեաց։ Ասէ և այլ իմն պատճառս նոյն այր, թէ որպէս ուսայ՝ հպարտ և անձնասէր գոլ Նինոս, կամելով զինքն միայն աշխարհակալութեան և ամենայն քաջութեան և լաւութեան ցուցանել սկիզբն, հրամայէ զբազում մատեանս և զզրոյցս առաջնոցն՝ ըստ տեղեաց տեղեաց և որ ուրուք գործոց քաջութեան՝ այրել. իսկ որ առ իւրովք ժամանակօք՝ դադարեցուցանել, և որ ինչ վասն իւր միայնոյ՝ գրել։ Այլ զայս աւելորդ է. զեւ մեզ երկրորդել։

Բայց Արամ յետ ամի կենաց իւրոց ծնաւ զԱրայն. զկնի որոց և այլս բազումս կեցեալ ամաց, մեռաւ։

ԺԵ. Յաղագս Արայի, և մահուան նորա պատերազմաւ 'ի Շամիրամայ։

ԱՐԱՅ սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի ինամակալեաց իւրոց հայրենեացն, նոյնպիսում շնորհի արժանաւորեալ 'ի Նինոսէ՝ որպէս և հայրն իւր Արամ։

Բայց վաւաշն այն և բորբորիսն Շա-
միրամ 'ի բազում ամաց լուեալ
զգեղեցկութենէ նորա , ցանկայր
հասանել. այլ ոչ ինչ յայտնապէս
զայսպիսիս իշխէր գործել: Իսկ յետ
վախճանելոյն կամ փախստական
լինելոյ Նինոս 'ի Կրիտէ՝ որպէս հա-
ւանեալ էր, համարձակ պատուե-
լով Շամիրամայ զախան , առաքէ
հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ըն-
ծայիւք և պատարագօք , բազում ա-
ղաչանօք և խոստմամբ պարգեւաց ,
գալ առ նա 'ի Նինուէ , կամ առ-
նուլ կնութեան և թագաւորել 'ի
վերայ ամենայնի՝ որոց տիրէր և Նի-
նոս , և կամ կատարել զկամս ցան-
կութեան նորա և դառնալ մեծաւ
պարգեւօք և խաղաղութեամբ 'ի
տեղի իւր :

Եւ բազում անգամ երթեւեկու-
թիւն հրեշտակագնացութեանն լի-
նելոյ՝ և ոչ հաւանել Արային , 'ի
սատիկ ցասման լեալ Շամիրա-
մայ , 'ի վախճանի պատգամաւորու-
թեանն առնու զբազմութիւն զո-
ւրաց իւրոց , և փութայ երթալ հա-

սանել յերկիրն Հայոց 'ի վերայ Ա-
րայի : Բայց որչափ գիմաց էր նշա-
նակել, ոչ այնչափ ինչ 'ի սպանա-
նել զնա և 'ի հալածել փուրթայը,
քան թէ 'ի նուաճել կամ զբռամբ
ածել, զի լցցէ զկամս ցանկութեան
իւրոյ. զի առ 'ի յոյժ ցանկականի
մոլեգնութեան, 'ի բանսն որ զնմա
նէ՝ որպէս 'ի տեսութիւն շամշու-
թեամբ վառեալ էր : Գայ հասանէ
տագնապաւ 'ի դաշտն Արայի, որ
և յանուն նորա անուանեալ Այ-
րարատ : Եւ 'ի լինել ճակատուն՝
պատուէր տայր զօրապետաց իւրոց,
թէ դէպ լինիցի, հնարել ապրեցու-
ցանել զԱրայն : Իսկ 'ի լինել մար-
տին՝ հարկանի զօրն Արայի, մեռա-
նի Արայ 'ի պատերազմին 'ի ման-
կանցն Շամիրամայ : Դիակապուտս
առաքէ տիկինն յետ յաղթութեանն
'ի տեղի ճակատուն, խնդրել 'ի մէջ
դիականցն անկելոց զըղձալին իւր և
զտարփածուն : Գտանեն զԱրայն
մեռեալ 'ի մէջ քաջամարտիկացն՝ և
հրամայէ դնել զնա 'ի վերատանն
ապարանից :

Իսկ 'ի գրգռել միւսանգամ զոր-
ացն Հայոց 'ի մարտ պատերազմի
ընդ տիկնոջն Շամիրամայ՝ քինա-
խնդիր լինել մահուանն Արայի,
ասէ. Հրամայեցի աստուածոցն ի-
մոց լեզուալ զվէրս նորա, և կենդա-
նացի։ Միանգամայն և ակն ու-
նէր դիւթութեամբ վհկութեան
իւրոյ կենդանացուցանել զԱրայ,
ցնորեալ 'ի տուփական ցանկութե-
նէն։ Իսկ իբրեւ նեխեցաւ դի նո-
րա, հրամայեաց ընկենուլ 'ի վիհ
մեծ և ծածկել. զմի ոմն 'ի հոմա-
նեաց իւրոց զարդարեալ ունելով
'ի ծածուկ, համբաւէ զնմանէ այս-
պէս. Լիզեալ աստուածոցն զԱրայ
և կենդանացուցեալ, լցին զփա-
փաղ մեր և զհեշտութիւն. վասն
որոյ առաւել յայսմ հետէ պաշ-
տելիք են 'ի մէնջ և փառաւորեալք,
իբրեւ հեշտացուցիչք և կամակա-
տարք։ Կանգնէ և նոր խմն պատ-
կեր յանուն դիւաց, և մեծապէս
զոհիւք պատուէ. ցուցանելով ա-
մենեցուն, իբր թէ այս զօրութիւն
աստուածոցն կենդանացուցին զԱ-

րայ. և այսպէս համբաւեալ զնոմանէ 'ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան, զա դարեցուցանէ զնոսազմն։

Եւ որ ինչ յաղագս Արայի՝ կարՀառօսիւ և այսչափ շատ լեցի յիշատակել։ Սա կեցեալ ամս, ծնաւ զԿարդոս։

ԺԶ. Թէ ո՞րպէս յետ մահուանն Արայի Շամիրամ զինէ զաղաւոն և զամբարդակ գէպոյն և զիւր գուն։

ԻՍԿ զկնի այսպիսի իրաց աջողութեանց դադարեալ Շամիրամայ աւուրս ինչ սակաւս 'ի դաշտին, որ անուանեալ կոչի յանուն Արայի Այրարատ, ելանէ 'ի լեառնակողմանս երկրի Հարաւակողմանն, քանզի ժամանակ ամառնային էր, զբօսնուլ կամելով 'ի հովիտս և 'ի դաշտս ծաղկաւէտս։ Եւ տեսեալ զգեղեցկութիւն երկրին և զօդոցն մաքրութիւն և զաղբերացն յրատակագոյն բղխմունս և զկարկաջատահանութիւն գետոց բարեգնա-

ցից, Պարտ է մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան օդոց և մաքրութեան ջուրց և երկրի, քաղաք և աւանս չինել բնակութեան, որպէս զի զչորրորդ մասն 'ի բոլորմանէ տարւոյն, որ է ամառնային եղանակ, ըստ ամենայն բարեվայելչութեան անցուցանեմք 'ի Հայս. և զայլն եւս երիս որոշմունս օդոցն զովութեան տածիցեմք 'ի Նինուէ:

Եւ անցեալ ընդ բաղումս 'ի տեղեաց, գայ հասանէ յարեւելից կողմանէ յեզր ծովակին աղւոյ. և տեսեալ առ եզերբ ծովուն երկայնաձեւ բլուր մի, որոյ նիստ երկայնութեանն 'ի մուտս կոյս արեգականդ՝ սակաւ ինչ առ 'ի կողեալ 'ի հիւսիսոյ, իսկ 'ի միջօրէ կողմանէ՝ դէպ ուղիղ առ երկին հայելով. քարանձաւ կանգուն անչեղ. և 'ի սմանէ զհարաւոյ բացագոյն հովիտ ինն դաշտաձեւ երկայնաձիգ յարեւելից կողմանէ լերինն, իջանելով յեզր ծովուն՝ ընդարձակ և գեղեցիկ ձորաձեւ. որոց ընդ մէջն հո-

սանք ջուրց բարեհամայ՝ 'ի լեռնէն
իջանելով, 'ի ծործորոց և 'ի հով-
տաց ծորեալք, և 'ի հիմանց փեղ-
կից լերանց միաւորեալք՝ 'ի ծաւա-
լումն գետոց պերճանային. և շէնք
ոչ սակաւք 'ի հովտաձեւ ձորակին՝
յաջմէ և յահեկէ ջուրցն յօրի-
նեալք. 'ի յարեւելից կողմանէ հա-
ճեցեալ բլրոյն՝ լեառն մի փոքրա-
գոյն:

Ասա հին ակնակառոյց լեալ այ-
րասիրան այն և կաթոան Շամիրամ,
հրաման տայ բիւրուց և երկու հա-
զար արանց անարուեստից գործա-
ւորաց յասորեստանեաց և յայլոց
իշխեցելոց, և վեց հազար իւրոց
ընտրելոց յամենայն արուեստաւոր
գործաւորաց փայտի և քարի, պղնձ-
ոյ և երկաթոյ, որք ամենեքին կա-
տարեալք եղեն 'ի յարուեստագի-
տութեան, ածել անխափան 'ի փա-
փագեալ տեղին. և գործն հաւա-
սար հրամանին առնոյր զկատա-
րումն: Եւ վաղվաղակի ածեալ լի-
նէին բազմութիւն խառնիճաղանճ
գործաւորացն և բազմարուեստից

հանձարեղաց խմաստնոցն։ Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մածուցեալս, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ. որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչեւ ցայսօր ժամանակի։ Եւ 'ի պատառուածս նոյն ամբարտակի գետոյն՝ այժմ, որպէս լսեմք, մարդիկ աշխարհին 'ի հէն և 'ի գաղթականս փախստեամբ ամրանան, իբր 'ի ծայրս քարանձաւաց լերանց ամրացեալք։ Եւ թէ զփորձ առնուլ դէպ ումեք լինիցի, և ոչ իբր պարսատակաց քար մի արժանաւոր 'ի շինուածոյ ամբարտակին խլել ոք զօրեսցէ, թէ և մեծաւ աշխատութեամբ ջանայցէ։ Եւ 'ի հեղուածս արուեստին՝ որ զքարամբք՝ հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երեւեցուցանէ կարծիս։ Եւ այսպէս ընդ բազում տապարէզս անցուցեալ զամբարտակն, հասուցանէ 'ի նկատեալ տեղի քաղաքին։

Ընդ հրամայէ զամբոխն 'ի բա-

զուտ դասս որոշել. և 'ի վերայ իւ-
րաքանչիւրոց դասուց զընտիրս 'ի
Ճարտարացն վարդապետս կարգել.
և այնպէս 'ի սաստիկ Ճգնութեան
պահեալ, յետ սակաւ ամաց կա-
սարէ զհրաշալին ամրագունիւք
պարսպօք, հանդերձ դրամբք պղն-
ձակերտիւք: Շինէ և ընտիր ըն-
տիրս և բազումս 'ի մէջ քաղաքին
տպարանս 'ի պէս պէս քարանց և
'ի գունից զարդարեալս, կրկնա-
յարկս և եռայարկս. և ըստ պա-
տեհի իւրաքանչիւր՝ արեգակնակս.
և գեղեցիկ գունիւք և ընդարձակ
փողոցիւք զկողմանս քաղաքին որո-
շելով: Շինէ զչքնաղս ոմանս և
զզարմանալոյ արժանաւորս ըստ պի-
տոյից 'ի միջոցաց քաղաքին լուսա-
լիս: Եւ զմանն ինչ գեղոյն ընդ
մէջ քաղաքին բաշխեալ գնացուցա-
նէ 'ի պէս ամենայն պիտոյից, և
յարբուցմունս բուրաստանաց և
ծաղկոցաց. և զայլն զեղեալ ծովա-
կին յաջմէ և յահեկէ, քաղաքին
և բովանդակ շրջակային յարբու-
ցումն: Եւ զամենայն արուեստս

և զՀիւսիսային և զՀարաւային կողմունս քաղաքին զարդարէ դասասակերաւոք, և սաղարթիւք ծառոց վարսաւորաց՝ զանազանեալք 'ի պտուղս և 'ի տերեւս. և բազումս բազմաբերս և գինէբերս 'ի նմա անկեաց ովիսս։ Եւ ամենայնիւ հոյակապ և հռչակաւոր զպարսպեալն յօրինէր. և անթիւ բազմութիւն մարդկան 'ի նեղբս բնակեցուցանէ։

Իսկ զծայր քաղաքին և որ ինչ 'ի նմանէ գործոյ հրաշակերտութիւնք, բազմաց 'ի մարդկանէ ոչ հասու լեալ, և ոչ պատմել է կարողութիւն։ Զորոյ զպարսպեալ զդագաթն՝ դժուարամուտս ոմանս և դժոխելանելիս 'ի նմա՝ յօրինէ շինուածս ալեքայանիսաս, և ծածուկ ելմն ահագին։ Որոյ որպիսութիւն գրութեանն յօրինուածոյ ոչ 'ի լսելիս մեր հասեալ ճշմարտութեամբ յուսիքէ, և ոչ մեք 'ի պատմութիւնս հիւսել հաւանիմք. այլ ասեմք միայն, թէ ամենայն թագաւորական գործոց, որպէս լուաք, առաջին և վերջադոյն համարեալ։

Իսկ զընդդէմ արեգական կողմն անձաւին, որ և ոչ գիծ մի երկաթոյ այժմ վերադրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ՝ պէս պէս սաձարս և սենեակս օթից և տունս գանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ ոք՝ թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց: Իսկ զամենայն երեսս քարին իբր գրչաւ զմոմ հարթել, բազում գիրս 'ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք 'ի զարմանս ածէ: Եւ ոչ միայն այս, այլ և 'ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ հրամայէ գրել. և 'ի բազում տեղիս ահմանս նովին գրով հաստատէր:

Արդ, որ ինչ յաղագս Շամիրամայ գործոց՝ որ 'ի Հայս, ասացեալ է:

ԺԷ. Յաղագս Շամիրամայ, թէ էր աղաքաւոր կորուսեալոց ազգին Հայոց. և թէ արքէս քրիստոնեան էին 'ի Զրադաշտէ մոգէ 'ի Հայս, և մեռանի 'ի Նէնուադայ ազգայոյ։

ԱՆ հանապազ յամառնայինն 'ի խաղալն իւր 'ի կողմանս հիւսիսոյ 'ի քաղաքն ամարասանի, զոր շինեաց 'ի Հայս, կողմնապէս ասորեստանի և Նինուէի թագու զԶրադաշտ մոգ և նահապետ Մարաց։ Եւ 'ի բազում ժամանակս զայս այսպէս կարգեալ Շամիրամայ, ամենեւիմբ հաւատայ նմա արդարեւ զիւր իշխանութիւնն։

Եւ բազում անգամ յանդիմանեալ յորդւոց իւրոց վասն սաստիկ և վաւաշ պոռնկական բարուց իւրոց, կոտորէ զամենեսեան, և ապրի կրսերագոյնն միայն, որ է Նինուսս։ Բարեկամացաւ հոմանեաց իւրոց՝ պարգեւելով զամենայն իշխանութիւնս և զգանձս, ոչ ինչ վասն որդւոց իւրոց ունելով փոյթ յանձին։ Քանզի և այրն նո-

ցա Նինոս՝ ոչ որպէս ասի մեռեալ թաղեցաւ 'ի նմանէ 'ի Նինուէ յաբ-քունիս, այլ իմացեալ զախտասէր բարս նորա և զչարասէր, թողեալ զթագաւորութիւնն՝ փախստական անկանէր 'ի Կրիտէ։ Իսկ 'ի հասակ և 'ի տիս հասեալ որդւոց նորա, յի-շեցուցանեն նմա զայս ամենայն, կարծելով ցածուցանել զնա 'ի դի-ւական մրցական տուփանացն, և ա-ւանդել զիշխանութիւն և զգանձս որդւոց իւրոց։ Ընդ որ առաւել զայրագնեալ, սատակէ զամենե-սեան. և մնաց Նինուսաս միայն, որպէս վերագոյն ասացաք։

Իսկ 'ի լինել ինչ սխալանաց Զրա-դաշտի առ տիկինն, և հակառա-կութեան 'ի նեղքս անկանելոյ, պա-տերազմի 'ի վերայ նորա Շամիրամ. քանզի բռնանալ 'ի վերայ ամենայ-նի խորհէր այրն։ Եւ 'ի սատակա-նալ պատերազմին փախստական լի-նի Շամիրամ յերեսաց Զրադաշ-տի 'ի Հայս։ Ապա ժամանակ վրէժ-խնդրութեան պատահի գալ Նի-նուսաս, սպանանել զմայրն. և ինքն

թագաւորէ 'ի վերայ ասորեստանի և Նինուէի : Ահա ասացաք յաղագս մահուանն Շամիրամայ՝ թէ ուստի և որպէս :

ԺԸ. Յաղագս Ինչ հաւասարի նախ լինել պարբերապետն Շամիրամայ 'ի հնդիկս, և պէնի մահուան նորա որ 'ի Հայս :

ՈՒՆԻՄ 'ի մտի և զկենդանիսն, վասն ոչ տալ զմեզ բազմաց ծաղրել. զի ասէ 'ի բանից այլոց նախ յաղագս ծննդեանն Շամիրամայ, և ապա ուրեմն զպատերազմն հնդկաց : Այլ հաւաստի մեզ թուեցաւ որ 'ի Մար Աբայն Կատինայէ քննութիւն քաղդէական մատենից քան զայսոսիկ. քանզի ոճով իմն ասէ, և զպատճառս պատերազմին յայտնէ : Իսկ առ այսոքիւք՝ և աշխարհիս մերոյ առասպելք զբազմահմուտ Ասորին արդարացուցանեն. ասա ուրեմն զմահն ասել Շամիրամայ, և զհետեւակ փախուստն, և զպարքու�և զիղձս ջրոյն և զարբուն, այլ և 'ի մօտ հասանել

սուսերաւորաց, և զյոռուութեան 'ի ծով, և բան 'ի նմանէ՝ Ուլունք Շամիրամայ 'ի ծով։ Այլ թէ ա-խորժեաս առասպել, և Շամիրամ քար առաջին քան զՆինոբէ։ Արդ այս շատ է. բայց մեք որ ինչ զկնի այսորիկ։

ԺԹ. Որ ինչ գնդի մահուանն Շամ-իրամայ։

ՅԱՐՄԱՐԵԱԼ զամենայն կար-գեցեալ քեզ'ի գիրս յայսոսիկ զազ-գիս մերոյ զաւագագոյն զարս և զնախնիս, և որ ինչ վասն սոցա զրոյցք և իրակութիւնք իւրաքան-չիւր, ոչ ինչ կամամտածական և ոչ ինչ անպատշաճ 'ի սմա յար-մարելով բան, այլ որ ինչ 'ի գրոց. իսկ ըստ նմանեաց ապա և որ ինչ 'ի բանից արանց իմաստնոց և յայ-սոսիկ քաջախոհակաց, յորոց մեք արդարապէս ջանացաք հաւաքել զհնագրութիւնս։ Եւ ասեմք լի-նել արդարաբան 'ի պատմութեան յայսմիկ ըստ մերոյ յօժարութեան

և ուղղամտութեան . իսկ ըստ որոց հաւաքումն, Աստուծոյ լինել յայտնիս, և մարդկան գովելիս կամ բասրելիս, և մեք այնոցիկ օտար և բացակացեալ : Բայց զուգութիւն բարբառոյ և հաւասարութիւն թուոյ կարգի պատանեաց՝ զՀմարտութիւն աշխատասիրութեանս մերոյ ակնարկէ : Եւ այսոցիկ այսպէս կարգելոց, կամ հաւատոի կամ դոյզն ինչ կասեալ յարդարոյն, սկսայց քեզ և որ ինչ զկնի այսոցիկ 'ի հիւսման պատմութենէ պիտոյից :

Արդ յետ մահուանն Շամիրամայ 'ի Զամասեայ որդւոյ իւրմէ, որ է Նինուաս, որ եղեւ յետ սպանանելոյն զԱրայն, այսպէս հաւաստեաւ գիտացուք զկարգ բանից : Թագաւորէ Նինուաս սպանեալ զմայրն հեշտասէր, և խաղաղական կեցեալ . և առ սովաւ Աբրահամու աւուրք բաւեալք :

Հոմեմապու�՝ ինքնաբանութեան ապ-
գիւ մերոյ ընդ Եբրայեցւոցն և ընդ փաղ-
դեայոցն մինչեւ ցՍարդանապաղոս,
որ կոչէր Թագաւոր Կոնկղեանս։

ԵԲՐԱՅԵՑԻՈՑ

Իսահակ.
Յակոբ.
Ղեւի.
Կահաթ.
Ամրամ.
Մովսէս.
Յեսու.

Ի սմանէ յառաջ՝ ոչ ըստ աղ-
գի, այլ ըստ յառաջադիմութեան
արանց. զի և ամենեքեան յԱբրա-
համէ։ Ի սատակել սորա զքանա-
նացիս՝ անցին 'ի սմանէ փախստա-
կանք յԱգռաս, նաւելով 'ի Թարս-
սիս. և յայանի դրոշմամբն, որ յար-
ձանան ափրիկեցւոց աշխարհին,
գրեալ կան մինչեւ ցայսօր ժամա-
նակի արդարապէս այսպէս. Ի Յե-
սուայ գողոյ փախուցեալ մեք նա-
խարարք քանանացւոց եկաք բնա-

կել ասա. յորոց մի և Քանանիդաս պատուականագոյն մեր՝ 'ի Հայս։ Եւ ստուգեալ հաւատի գտաք զսերունդս ազգին գնթունեաց 'ի ամենէ առանց հակառակութեան լեալ. զայս և բարք արանց ազգի յայտնեն՝ քանանացի գոլ։

Գոթոնիէլ.
Աւոդ.
Բարակ.
Գեդէոն.
Աբիմելէք.
Թովղայ.
Յայիր.
Եփթայի.
Եսեբոնն.
Եղոնն.
Ղաբդոն.
Սամփսոն.
Հեղի.
Սամուէլ.
Սաւուղ.
Դաւիթ, և որ 'ի կարգին։

ՔԱՂԴԷԱՅՈՑ

Արիոս.
Առալիոս.
Սուսառիս.
Քսէնքսեր.
Գաղէոս.
Առմամիթռէոս.
Բեղոքոս.
Աղտագոս.
Մամիդոս.
Մասքաղէոս.
Զփառոս.
Մամիղոս.
Սպառեթոս.
Սկատադէս.
Ամինտէս.
Բեղոքոս.
Բաղոտոռէս.
Ղամպառիտէս.
Սուսառիս.
Ղամբառիս.
Պանիոս.
Սոսառմոս.
Միթռէոս.
Տեւտամոս.

Տեւաէոս.
Թինեւս.
Դեռկիւղոս.
Նեւպաղմոս.
Ղաւոսթենիս.
Պռիդիածիս.
Սփռատէս.
Փռատինիս.
Ակռազանիս.
Սարգանապալոս:

ՀԱՅՈՑ

Արայ.
Իսկ մերոյն Արայի որդի Արայ 'ի Շամիրամայ կոչեցեալ, և զգործ վերակացութեան աշխարհիս նմա հաւատացեալ:
Անուշաւան.
Պարէտ.
Արբակ.
Ջաւան.
Փառնաս.
Սուր.
Հաւանակ.
Վաշտակ.
Հայկակ.

Զ Հայկակ ասէն լինել առ Բելը-
քոսիւ, և ամբոխս իմն արարեալ
անիսորհուրդս, և մեռանել 'ի նմին։

Ամպակ.
Առնակ.
Շաւարշ.
Նորայր.
Վասակար.
Գոռակ.
Հրանտ.
Ընձաք.
Գղակ.
Հորոյ.
Զարմայր.

Սա օգնական Պոլիսոմու 'ի Տեւ-
տամայ առաքեալ ընդ Եթովպացի
զօրուն, մեռանի 'ի քաջացն Եղե-
նացւոց։

Պերճ.
Արբուն.
Բազուկ.
Հոյ.
Յուսակ.
Կայպակ.
Սկայորդի։

Ի. Վասն արայեան Արայի, և Ռէ սո-
ւրա որդի Անուշաւանն, որ Սօս անուա-
նէր։

ԱՅԼ անդրէն իսկ 'ի կենդանու-
թեան իւրում Շամիրամ զծնեալն
'ի Նուարդայ սիրելւոյ կնոջէն Ա-
րայի, որ էր Երկոտասան ամաց մնա-
ցեալ 'ի մահուանն Արայի, վասն
առաջին իւրոց խանդաղատանացն՝
որ առ Արայն գեղեցիկ, կոչէ զա-
նուն նորա Արայ. և կարգէ զնա
'ի վերակացութիւն աշխարհիս,
մտերմութեամբ հաւատացեալ 'ի
նա. զորմէ և մեռեալ ասէն զնա
ընդ Շամիրամայ 'ի պատերազմին։
Բայց յարէ զկարգ բանիցս զկնի
այսորիկ օրինակ զայս։ Արայեանն
Արայ մեռանի ընդ Շամիրամայ 'ի
պատերազմի, Թողլով արու զաւակ
ամենահարուստ և շատահանճար
յիր և 'ի բան զԱնուշաւանն, որ
Սօս անուանիւր. քանզի ձօնեալ
էր ըստ պաշտամանց 'ի սոսին Ա-
րամանեկայ, որ յԱրմաւիր. զորոց
զտաղարթուցն սոսաւիւն, ըստ հան-

դարտ և կամ սասսիկ շնչելոյ օդոյն եւ ետ ուստ շարժումն, սովորեցան 'ի հմայս աշխարհիս հայկազանց. և այս բազում ժամանակս։

Այս Անուշաւան բաւական ժամանակս արհամարհութիւն կրեալ 'ի Զամբասեայ, սուայտի 'ի գրան արքունի. իսկ օգնեալ 'ի բարեկամաց, շահի զմնան ինչ աշխարհիս՝ հարկահանութեամբ խնամել. զկնի ապա և զբոլորս։ Այլ կարի շատ լինի, թէ զամենայն՝ որ ինչ արժան է՝ ասիցեմք 'ի Հառիս զնախնակարգելոց արանց զբանս և զգործս։

ԻԱ. Որ 'ի Սկայորդոյն Պարոյր՝ առաջին 'ի Հայս Ռաքաւորէ. օգնական լինի Վարբակայ Մարի՝ Բառնալով Ռաքաւորութիւնն 'ի Սարդանապալայ։

ԹՈՂԼՈՎ, զոչ կարեւորագոյնսն 'ի բանից, ասասցուք որ ինչ հարկաւորն է։ Վերջին սոցա՝ որք առ ասորեստանեաց թագաւորութեամբն, և որք 'ի Շամիրամայ կամ

թէ 'ի Նինոսէ, զմերն ասեմ Պա-
ղոյր առ Սարդանապալլու։ Սա ոչ
փոքր ինչ օգնականութիւն գտեալ
'ի Վարբակայ Մարէ, բառնալով
զթագաւորութիւնն 'ի Սարդանա-
պալլայ։

Եւ այժմ ահա զուարճացայց՝ ոչ
փոքր ինչ կրելով խնդութիւն, հա-
սանելով 'ի տեղիս մերում իսկ բնկի
նախնւոյն, յորում սերունդք թա-
գաւորութեան հասանէն յաստի-
ճան։ Վասն որոյ արժան է մեզ
ստանօր մեծ գործ կատարել, և
բազումս ասել առարկութիւնս ճա-
ռից. զորոց մեզէն իսկ հիմունս
այսպիսեաց բանից ընթեռնուլ ար-
ժանաւորեցաք 'ի չորս հագնեցգու-
թիւնս զարգասաւորին 'ի բանս և
զնմանանոյն իսկ և զմէջ իմաստնոյն
իմաստագունի։

Քանզի Վարբակէս գաւառաս-
մեդացի, 'ի փոքրուէ կողմանց ծա-
գեաց գաւառին ամրագունի, խորա-
մանկագոյն 'ի կենցաղավարութեան
և 'ի մարտն երեսաւոր, ծանուցեալ
զանմարդի բարս և զհեշտասէր թու-

լամուԹիւն յուլուԹեան Թուլոյն Կոնկոզիոսոյ, խոստացուցանէ բարուցն և ձեռացն առատուԹեամբ 'ի քաջացն և 'ի պիտանեաց արանց բարեկամն՝ որով և աշխարհակալուԹիւնն ասորեստանի առ այնու ժամանակաւ վարիւր յայտնապէս մեծաւ հաստատուԹեամբ։ Յինքն և զքաջն մեր Նախարար յանդուցանէ զՊարոյր, ԹագաւորուԹեան ձեւ և շուք խոստանալով նմա. և բազմամբոխս յարի արանց, և որ 'ի տէգ Նիզակի և յաղեղն և 'ի սուսեր աջողաձեռք։ Եւ այսպէս զԹագաւորուԹիւնն 'ի Սարդանապալայ յինքն առեալ, տիրէ ասորեստանի և Նինուէի։ Բայց այլ վերակացուս կարգեալ ասորեստանի, փոխէ զԹագաւորուԹիւնն 'ի Մարս։

Այլ այս եԹէ առ այլս այլազգաբար պատմի, մի ինչ պանչանար։ Զի որպէս վերագոյն ուրեմն յառաջին Հաւան ամբաստանեցաք զառաջին Նախնեացն մերոց անիմաստաւէր բարուց ախորժակս, այս հանդիպի և առատնօր։ Քանզի և

ոլք 'ի հօրէն Նաբուգոդոնոսորայ գործք, գրեցան յիւրեանցն յիշողութեանցն վերակացուաց. իսկ մերոցն ոչ այսպիսի ինչ խորհեցեալոցն, մնացին նշանակեալ 'ի վերջինան։ Ապա եթէ ասիցեն, ուսա՞ մեզ և զնախնեացն մերոց բազմաց այսպէս գտանել զանուանս և զգործս, ասեմ. 'ի հնոցն գիւանաց քաղդէացւոց, ասորեստանեաց և Պարսից, վասն մատեալոց անուանց և գործոց նոցա 'ի քարտէս արքունի, իբր գործակալաց և վերակացուաց աշխարհիս 'ի նոցանէ կացեալոց, և մեծաց կողմնակալաց։

ԻԲ. Կարգ Ռաֆաելոյ մերոյ Ա համար նոցունց որդի 'ի հօրէ առնլոյ։

ԱՐԴ այժմ անցից 'ի թիւ մերոց արանց, մանաւանդ թագաւորաց, մինչեւ ցոերորդութիւնն Պարթեւաց։ Քանզի ինձ այսոքիկ արք 'ի մերոյ թագաւորէն սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեան առուք, և հաւատի հարազատք։ Եւ սի-

ելել էր ինչ յայնժամ գալ Փրկչին և զիս գնել, և առ նոքօք յաշխարհ զմուան իմ լինել, և նոցա տեսութեամբն խրախճանալ, և յարդեացս վտանգից ապրիլ։ Այլ վաղ ուրեմն փախեաւ 'ի մէնջ պատահումն այն, թէ արդեաք և վիճակ։ Բայց արդէն առ Մարաց թագաւորութեամբն կեցեալ ընիկք պակաւոր արք այնոքիկ, զորոց և զանուանն 'ի նեբքոյ դրոշմեմք։

Եւ զի արդարեւ զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն, վկայէ և Երեմիա մարգարէ 'ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի 'ի պատերազմ. Հրաման տուր, ասէ, այրարատեան թագաւորութեանն և ասքանազեան գնդին։ Եւ այս հաւատի գոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ։ Այլ մեք զկարգն կանոնիւ,ելով, առընթեր և զՄարաց թագաւորսն։

Մարաց առաջին

Վարբակիս.

Մոդակիս.

Առտիկիս.
Դէովկիս.
Փռաւորտիս.
Կւաքս.
Աժդահակ:

Իսկ մեր առաջին 'ի Վարքակայ պատկեալ

Պարոյր, որդի Սկայորդւոյ.
Հրաչեայ.
Փառնուաս.
Պաճոյճ.
Կոռնակ.
Փաւոս.
Մեւս Հայկակ.
Երուանդ սակաւակեաց.
Տիգրան:

Քանզի և վերջին Երուանդս և Տիգրան 'ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ ասեմ արդեւք. ոչ կարի հեռագոյն գոլով ժամանակին, յիշեսցուք զանուանս զայսոսիկ:

Հրաչեայ սա կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ: Առ սովաւ ասեն կեցեալ Ղնաբուգոդոնոսոր արքայ Բաբիլա-

ցւոց, որ գերեաց զՀրեայս։ Եւ սո-
ցա ասեն զմի 'ի գլխաւորաց Եբրայե-
ցւոցն գերելոց խնդրեալ 'ի Նաբու-
գոդոնոսորայ՝ Շամբաթ անուն, ա-
ծեալ բնակեցոյց մեծաւ պատուով.
և 'ի սմանէ ասէ պատմագիրն լի-
նել զազգն բագրատունի, և հա-
ւաստի է։ Բայց թէ որպիսի ջան
եղեալ թագաւորացն մերոց՝ ընոսա
'ի պաշտօն կուոցն խոնարհեցուցա-
նել, և կամ թէ քանիք և ոյք ո-
մանք 'ի սոցանէ՝ որք աստուածպաշ-
տութեամբ վճարեցին զկեանս, յե-
տոյ պատմեսցուք ոճով։ Քանզի
ասելն ոմանց անհաւաստի մարդոց,
ըստ յօժարութեան և ոչ ըստ ճըշ-
մարտութեան, 'ի Հայկայ զթագա-
դիր ազգդ լինել բագրատունեաց։
Վասն որոյ ասեմ. մի այսպիսեաց
յիմար բանից հաւանիր. զի և ոչ մի
շաւիղ կամ ցուցումն գոյ նմանու-
թեան յաստացեալսդ՝ որ զարդարու-
թիւն ակնարկէ. զի 'ի բայ բանից
և անոճ լիմն յաղագս Հայկայ և
նմանեացն կակազէ։ Բայց ծանիր
զՍմբատդ անուն, զոր յաճախ բադ-

բաառունիք 'ի վերայ պատանեաց կոչեն, Ճշմարիտ Շամբաթ է՝ բան նախնի իւրեանց խօսիցն, որ է եբրայեցի։

ԻԳ. Յաղագս որդւոցն Սենէքերիմայ, և նէ Արծրունի և Գնունի և Բդեշխան անուանեալ Աղձնեաց՝ 'ի նոցանէ ուերկեալ. և 'ի նոյն ճառի՝ էին Անգեղ գունն 'ի Պոտոմայ։

ԱՐԴ. յառաջ քան զձեռնարկելն մեր 'ի բանս՝ որ յաղագս մեծին Տիգրանայ, որ ինն ելորդ 'ի նախնեաց մերոց պատկառելոյ էր, հուժկու, անուանի և յաղթող ընդ այլ աշխարհակալս, ճառեսցուք որ ինչ կարեւորագոյնն է ոճոյ բանիս։ Եւ 'ի մուտացումն եկն արդեւք յաղագս Սենեքերիմայ. քանզի ուղիղ ասն ամօք, աւելի կամ պակաս, յառաջ քան զթագաւորութիւնն Նաբուգոդոնոսորայ էր և Սենեքերիմն կացեալ ալեքայ ասորեստանի, որ զԵրուսաղէմ պաշարեաց առ Եզեկիայիւ Հրէից առաջ

նորդաւ. զոր սպանեալ որդւոց նո-
ցա Ադրամելայ և Սանասարայ, ե-
կին փախստական առ մեզ։

Յորոց զմինն յարեւմտից հարաւ-
ոյ աշխարհիս մերոյ, մերձ 'ի սահ-
մանս նորին ասորեստանի, բնակե-
ցուցանէ Սկայորդին մեր քաջ նախ-
նին, այսինքն զՍանասարն. և 'ի
սմանէ սերեալ լցին զՍիսն ասա-
ցեալ լեառն։ Իսկ պերճքն և գըլ-
խաւորքն 'ի նոցանէ յետոյ ուրեմն
մեր մեր ցուցեալ, բդեշխու-
թիւն կողմանցն արժանաւորեցան
առնուլ։ Իսկ Արգամոզանն յա-
ջեւելից հարաւոյ նորին կողմանն
բնակեալ, 'ի սմանէ ասէ պատմա-
գիրն լինել զԱրծրունիս և զԳնու-
նիս։ Արդ յիշեալոյն մեր զՍենեքե-
ղիմ այս էր պատճառն։

Բայց զԱնգեղ տունն ասէ նոյն
պատմագիր 'ի Պասքամայ ումեմնէ
'ի Հայկակայ թոռնէ լինել։

ԻԴ. ՅԱՂԱԳԱ ՏԻԳՐԱՆԱՅ, ՌԷ ԱՐՊԻՆԷ ԱՄԵՆԱՅՆԻՆ։

ԲԱՑՑ անցցուք այսուհետեւ և որ ինչ յաղագս Տիգրանայ, և որ 'ի նմանէ գործք։ Քանզի սա ամենեցունց Թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և ամենայն այնոցիկ և ամենեցուն քաջ։ Որ և Կիւրոսի աջակցեալ, զՄարացն 'ի բաց բառնալով զիշխանութիւնն. և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեւ նուաճեալ հնազանդէր։ Եւ զսահման մերոյ բնակութեանս ընդարձակեալ 'ի հինան մեր հասուցանէ յեզերս ծայրից բնակութեանց, և ամենեցունց՝ որ առ իւրովքն էին ժամանակք՝ նախանձելի, և յեռանոցս ըղձալի ինքն և ժամանակ իւր։

Զի ո՞ք 'ի Ճշմարիտս արանց, և որոց 'ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կացցէ, սորա յիշատակքն ոչ զուարճասցի, և յորդորիցի այսպիսի այր լինել։ Արանց կացեալ դլուխ, և ա-

բուլթիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց. և զընդ լծով կացեալս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բաղմաց. մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէս-պէս գունոց և անգուածոց՝ արանց հասակաց և կանանց միանգամայն բաղմացոյց. որով ազգազգոյնքն ի բրեւ զգեզաւորս երեւէին սքանչելեալք, և գեղաւորքն ըստ ժամանակին առհասարակ գիւցազնացեալք: Հեռեւակամարաքն 'ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առհասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն 'ի սուսեր և 'ի տէգ նիզակի վառեալք, մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ պատրաստեալք: Որոց 'ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ 'ի նոցայցն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք, զմթընշամիսն արտահալածել: Խաղաղութեան և շինութեան բերող, խղով և մեղու զհասակս ամենեցուն պարարեալ:

Զայս, և որ այլ այսպիսեաք բազումք, եբեր մերոյ աշխարհիս խաղաղաշունչ այս և աղէբեկ ծայրիւ հերոց երուանդեանս Տիգրան, երեսաք գունեան և մեղուակն, անձնեայն և Թիկնաւէտն, առոյգաբարձն և գեղեցկոան, պարկեշան 'ի կերակուրս և յըմպելիս և 'ի խրախճանութիւնս օրինաւոր. զորմէ առէին 'ի հինան մեր, որք բամբառամբն երգէին, լինել սմա և 'ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր, մեծիմաստն և պերճաբան, և յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի: Եւ զինչ ինձ 'ի գիրս յայս արդեաք ի՞ցէ բան սիրելի, քան թէ որ յաղագս սորա էին գովեստք և պատմութիւնք յերկարել: Արդարապատ և հաւասարասէր կշիռս ուներով յամենայնի, զամենայն ուրուք կենցաղ մտացն լծակաւ կըշռէր: Ոչ ընդ լաւագոյնսն խանդայր, և ոչ զնուաստսն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր զինամոյն իւրոց 'ի վերայ տարածել զգեստս:

Սա նախ յառաջագոյն դաշնաւոր եղեալ Աշդահակայ, որ 'ի Մարաց էր, տայ նմա զքոյր իւր Տիգրանուհի կնութեան, ըղձիւք իսկն դրեալով զնա Աշդահակայ: Քանզի ասէր, կամ 'ի ձեռն այսպիսւոյ մերձաւորութեան սէր հաստատուն առ Տիգրան ունել, կամ դիւրաւ այսպէս դաւաճանել զնա 'ի սպանումն: Զի էր նմա խէթ կամաց իւրոց, մարգարէութիւն ինն յոչ կամաց լեալ նմա առաջիկայ դիպուածն իւր:

ԻԵ. Վասն երկիր-ղի կոչեցեալն Աշդահակայ 'ի միաբանութենէ սիրոյ Կիւրոսի և Տիգրանայ:

ԲԱՅՑ էր նիւթ այսպիսւոյ խոհականութեան դաշնաւորութիւն մտերմութեանն՝ որ 'ի Կիւրոսէ առ Տիգրան, յորմէ բազում անգամ և ախտ քնոյ 'ի բաց փախուցեալ լինէր յԱշդահակայ յիշատակաւս այսուիկ. և խորհրդակցաց իւրոց անդուլ առնէր զհարցուածս, վասն

այսպիսւոյ պատճառի . Որպիսի՞ հնարիւք լուծանել կարասցուք , ասէ , զկապ սիրոյ պարսկայնոյն և հայկազնին բազմաբիւրաւորի : Եւ յայսպիսի շփոթման խորհրդոց հասանէ նմա առաջնիկայնցն յայտնութիւն 'ի ձեռն անրջականաց նմին նախատեսութեանց , օրինակաւս այսուիկ որ պատմէն :

ԻԶ . Թէ ո՞ր դէս 'ի խիրի լինելով Աղտահակայ , ղառաջակայ ի-ր դիպուածն փեռանէ ոփանչէլի երազով :

Իր , ասէ , յաւուրսն յայնս ոչ սակաւ ինչ վտանգ՝ որ 'ի Մարացն Աշդահակայ , 'ի միաբանութենէ Կիւրոսի և Տիգրանայ : Վասն որոյ և 'ի սաստկութենէ ծփանաց խորհրդոցն լինելնմա 'ի տեսլենէ երազոյն երեւութանալ 'ի քուն գիշերոյ , զոր ոչ երբէք յարթնութեան հատես աչք , և ոչ 'ի լուր ականջաց լուաւ : Ուստի և ընդոստ 'ի քնոյն լինելով , ոչ յամէ ըստ սովորութեան կարգին 'ի ժամ խորհրդա-

կանութեանն. այլ այն ինչ գիշերոյն ժամն ունելով ոչ սակաւս, ձայնէ զխորհրդակիցսն. և որոնում երեսաք յերկիր հայելով 'ի խորոց սրտին մանչէ յոգւոցհանութեամբ: Եւ 'ի զվասն էրն 'ի խորհրդակցացն հարցանիլ՝ յերկարէ ժամն ինչ զպատասխանիսն. և ուր ուրեմն հեծութեամբ սկիզբն արարեալ յայտնէ զամենայն, որ 'ի ծածուկ սրտին խորհուրդ և կասկած, ընդ նմին և զկրս ահագին տեսչեանն:

Էր ինձ, ասէ, ո՛վ սիրելիք, լինել այսօր յերկրի անծանօթում, մերձ 'ի լեառնմի երկար յերկրէ բարձրութեամբ, որոյ գագաթն սասակութեամբ սառնամանեաց թուէր պատեալ. և ասէին գոգցես յերկրին հայկազանց զայս լինել: Եւ 'ի նայել ինձ յերկարագոյն 'ի լեառնն, կին ոմն ծիրանազգեաց՝ երկնագոյն ունելով զիւրեաւ տեռ, նստեալ երեւեցաւ 'ի ծայրի այսպիսւոյ բարձրութեան, աչեղ, բարձրահասակ և կարմրայտ, երկանց ըմբռնեալ ցաւով: Եւ յերկարագոյն նայելն

իմ յայսպիսի երեւումն և 'ի հիացման լինել, ծնաւ կինն յանկարծ երիս կաւսարեալս 'ի գիւցազանց հաստակաւ և բնութեամբ: Առաջինն զերանան ածեալ 'ի վերայ առիւծու՝ պանայր յարեւմուտս, և երկրորդն 'ի վերայ ընծու՝ 'ի հիւսիսի հայելով. իսկ երրորդն զվիշապն անարի ոտնձեալ, 'ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տէրութեանս:

Եւ 'ի մէջ այսպիսեաց խառն էրազոց, թուէր ինձ կալ 'ի վերայ տանեաց իմոց արքունեացս, և զնոյն ինքն վերին երեսս յարկացս տեսանել գեղեցիկ և բազմագոյն շատրուանօք զարդարեալ, և զպսակօղն զմեզ զդիան մեր հրաշատեսիկ տեսլեամբ 'ի վերայ կացեալ. և զիս ձեռք հանդերձ զնոսա պատուեալ զոհիւք և խնկովք: Եւ յանկարծ 'ի վեր նայեցեալ, զայն որ 'ի վերայ վիշապին հեծեալ կայր, արծուանման ոլացեալ թեւօք տեսի յարձակեալ. որ մօտ հասեալ՝ խորհէր կործանել զդիան: Իսկ ես Աշդահակ խարոց

ընդ մէջ անկեալ, և յիս զայնպի-
սի եղեալ յարձակումն ընկալայ,
մարս ընդ սքանչելոյն առնելով
դիւցազանն։ Եւ նախ 'ի տէգ նի-
զակաց զմարմինս երկաքանչիւրոցս
յօշելով, վտակս արեան 'ի վայր հո-
սեցուցաք, և զարեգակնատես ե-
րեսս սպարանիցս՝ արեան հոսեալ
ցուցաք ծով։ Ա յսպէս և զկնի այ-
լոցք զինուք ժամս ոչ սակաւս։

Բայց զի՞նչ օգուտ ինձ և խօսից
երկարութիւն, զի վախճան գոր-
ծոյն՝ ինն էր կործանումն. ուստի
և 'ի քրտան սաստիկ վտանգի եղեալ,
փախեաւ յինէն քունն. և այսու-
հետեւ ոչ թուիմ կենդանի։ Զի
ոչ այլ ինչ նշանակէ երեւութիցս
շարժումն, եթէ ոչ որ 'ի հայկազ-
նեանն Տիգրանայ հասանելոց է մեզ
բռնութեան յարձակումն։ Բայց
ո՛վ արդեաք, յե՞տ ասատուածոյն օգ-
նականութեան, բանիւ և գործով
մեզ յօգուտ խորհելով, ոչ զինքն
կարծիցէ թագաւորակից մեր լինել։

Եւ բազում՞ ինչ 'ի խորհրդակ-
ցացն լուեալ օգտութեան մտա-

ծութիւն, շնորհակալութեամբ պատուէ զնոսա։

ԻԷ. Յաղագս որ 'ի խորհրդոյն Բան. զինչ ապա և իւր որ ինչ մտածութիւն, և 'ի նոյն հէպոյն գործն։

ԲԱՂՈՒՄ ինչ հանճարով և խնամութեամբ 'ի ձէնջ լուեալ, ասէ, ո՛վ սիրելիք, ասացից և որ ինչ իմ յետ աստուածոյն օգնականութեան յայտնիկ օգտակար բան և մտածութիւն։ Քանզի ոչ ինչ առ թշնամեացն զգուշութիւն՝ վեհագոյն բերէ օգնականութիւն, և ծանօթութիւն նոցայցն առաջի արկելոցն գործոց, քան թէ որ 'ի ձեռն սիրոյն զգաւէլն ոք խորհիցի։ Եւ զայս դարձեալ ոչ 'ի ձեռն գանձուց, և ոչ 'ի ձեռն բանից պատրողաց այժմ առ մեզ հնարաւորութիւն է կատարել, եթէ ոչ որպէս կամք են ինձ այժմ գործել։ Եւ այն է նիւթ կատարման խորհրդոյս և հնարք որոգայթից, գեղեցիկն 'ի կանայս և խոհեմ, քոյր նորա Տիգ-

բանուհի։ Զի այսպիսի իսկ արտա-
քուստ և ենկամուտ հարստաստու-
թիւնք համարձակ զգաւելն 'ի ձեռն
երթեւեկութեան անյայտաբար ըն-
դարձակ մարթացուցանեն վարժել.
կամ յանկարծ օրէն իւրոց մտերմաց,
ընչիւք և խոստմամբ պատուոց,
տալ հրաման սրով խողխողել և
կամ գեղոց հնարիւք, և կամ զմտե-
րիմն նորա և զկուսակալս գանձիւք
'ի նմանէ 'ի բաց մերկանալ. և այս-
պէս իբրեւ զանողոր տալոյ 'ի բուռն
առցուք։

Եւ ազգօղ համարեալ բարեկա-
մացն զայսպիսի խորհուրդ, նիւթեն
և զգործն. 'ի ձեռն միոյ ուրումն 'ի
խորհրդակցացն տուեալ բազմու-
թիւն գանձուց, և 'ի ձեռն թղթոյ
օրինակաւս այսուիկ յուղարկէ։

ԻԸ. Թուղթ Աղաթանգեղայ. յԵպ ուրոյ
և յօծաբուխէն Տիգրանայ, և յու-
ղարկումն Տիգրանոհնայ 'ի Մարս։

ԳԻՏԷ սիրելի եղբայրութիւնդ
քո, ոչ ինչ օգտակարագոյն 'ի կեանս

աշխարհիս 'ի դէպն մեզ պարգեւեալ քան զսիրելեաց բազմութիւն, և այս՝ խնամանոց արդէք և հզօրագունից. զի այսպէս և արտաքուստ ոչ 'ի վերայ համարձակին խառնուլութիւնք, և էկեալքն վաղվաղակի հեռքին. իսկ 'ի ներքս ոչ զմուտն յումեքէ գտեալ այսպիսւոյ չարութեան, հալածեալ լինին։ Արդ զայսպիսի շահ օգտութեան, որ 'ի բարեկամութենէ լինի, տեսանելով, խորհեցայ եւս հաստատուն և խորագոյն զսէրն՝ որ է 'ի մէջ մեր՝ հաստատել. զի երկոքեանս յամենայն կողմանց ամրացեալք, ողջ և անշարժ զտէրութիւն մեր կալցուք։ Եւ այս լինի 'ի տալն քում զօրիորդն Հայոց մեծաց՝ զքոյր քո Տիգրանուհի՝ ինձ կնութեան. թէ արդէք և բարի համարեացիս դմա, զի Թագուհեաց Թագուհի լիցի։ Ողջ լեր Թագակից մեր և սիրելի եղբայր։

Եւ առանց յերկարելոյ զբանս ասացից։ Գայ առաքեալն և կատարէ յաղագս օրիորդին գեղեցկի.

զի յանձն առեալ Տիգրանայ, տայ զքոյր իւր Տիգրանուհի Աշդահակայ կնութեան։ Ոչ եւս գիտելով զառ 'ի նմանէ գաւաճանութիւն, յուղարկէ զքոյր իւր որպէս օրէն է թագաւորաց։ Զոր առեալ Աշդահակայ, ոչ միայն վասն նենգին՝ որ 'ի սրտին իւրում, այլ վասն գերեցկութեանն, առաջին կարգէ կանանց իւրոց, և զչարութիւնն 'ի ներքոյ ոտայն հինու։

ԻԹ. ԵՒ Ի՞ՐՊԷՍ ՅԱՅՊՆԷՑԱՒ ՆԷՆԳՈՒԹԻՒՆ, ԵՒ ԳՐԳՈՒԷՑԱՒ ՄԱՐՄՆ. ՅՈՐՈՒՄ ԵՒ ՄԱՀՆ ԱՇԴԱՀԱԿԱՅ։

ԶԿՆԻ այսորիկ ասէ, թէ 'ի հաստատել Աշդահակայ զՏիգրանուհի 'ի տիկնութիւն, ոչ ինչ առանց կամաց նորա 'ի թագաւորութեանն իւրում գործէր. այլ բերանով նորա կարգէր զամենայն, և հրամանի նորա ամենեցուն հնազանդ լինել հրամայէր։ Եւ յօրինեալ զայս այսպէս, սկսանի մեղմով մատուցանել նմա պատրանս. Ոչ գի-

տես, ասէ, եթէ եղբայր քո Տիգ-
րան խանդացաւ զտիկնութիւնդ քո
'ի վերայ Արեաց, 'ի կնոջէ իւրմէ 'ի
Զարուհեայ գրգռեալ։ Եւ զի՞նչ
լինիցի այն, եթէ ոչ նախ ինձ մե-
ռանել, և ապա լինել զԶարուհի
'ի վերայ Արեաց, և զաստուածու-
հեայց ունել զտեղի։ Բայց արդ ընտ-
րելի է քեզ այժմ զմի յայսցանէ.
կամ լինել եղբայրասէր և կործա-
նումն խայտառակելի յանդիման
Արեաց յանձն առնուլ, և կամ
զանձին իմանալով զբարի՝ խորհուրդ
օգտակար 'ի մէջ բերել և յաղագս
առաջիկայիցն հոգալ։

Բայց էր 'ի մէջ այսպիսւոյ խո-
րամանկութեան թագուցեալ և
զմեռանելն Տիգրանուհեայ, եթէ
ոչ ինչ ըստ կամաց խորհեսցի մարա-
պարսացւոյն։ Այլ իմացեալ խո-
րագիտոյ գեղեցկին զայսպիսի դա-
ւաճանութիւն, պատասխանի առ-
նէ սիրոյ բանս Աշդահակայ, և ա-
րագագոյն 'ի ձեռն մտերմաց պատ-
մէ եղբօրն զնենգութիւնն։

Եւ ձեռնարկէ այնուհետեւ 'ի

գործն 'ի ձեռն պատգամաւորութեան, գալ նոցա 'ի միաբանութիւն տեսութեան, 'ի տեղի միջոց սահմանաց եկեղեցունց թագաւորութեանց. իբր բան ինչ և գործ հարկաւոր հասեալ, որ 'ի ձեռն գրոյ և հրեշտակութեան կատարել ոչ է կարողութիւն, եթէ ոչ և դէմք եկեղեցունցն հանդէպ լինիցին: Այլ գիտելով Տիգրանայ զառաքելոյ իւրին կատարումն, ոչ ինչ յորոց խորհէրն Աժդահակ՝ ծածկէր. այլ 'ի ձեռն գրոյ յայտնէ որ ինչ 'ի նորայն խորութեան սրտին: Եւ 'ի յայտնել այսպիսւոյ չարութեանն՝ ոչ ինչ այնուհետեւ էր բան և խորամանկութիւն, որ զայսպիսիս առաքաստէր զչարութիւն. այլ յայտնի այնուհետեւ գրգռէր խաղմն:

Եւ ժողովէ ալքայն Հայոց 'ի սահմանացն կապադովկացւոց, և որչափ ընտիրք Վրաց և Աղուանից աշխարհին, և զամենայն ընտիրս Հայոց մեծաց և փոքունց: Եւ խաղայ ամենայն զօրութեամբ իւրով զկողմամբք մեդացւոց: Վասանդ հա-

անէ այնուհետեւ Աշդահակայ պատահել պատերազմաւ հայկազնին՝ ոչ փոքր ինչ ամբոխիւ։ Եւ երկայնէր հակառակութիւնն մինչեւ ցամիսս հինգ. քանզի հիւանդանայր գործն արագ և առոյգ, յորժամ զմոռաւ ածէր Տիգրան յաղագս քեռն իւրոյ սիրելւոյ։ Եւ այսպէս զելս իրացն հնարէր յարդարել, զի ապրելոյ ճար լեցի Տիգրանուհեայ։ Ի պատահման այսորիկ և ժամ մարին մերձենայ։

Բայց գովեմ զքաջահատակն զնմ և զնիզակաւորն և զամենեւին բոլոր անդամովք համեմատն և 'ի գեղեցկութիւն աւարտեալ հասակի. քանզի առոյգ ամենայնիւ ըստ իւրեարս պատշաճեալ, և ուժով ոչ զոք իւր ունելով զոյգ։ Եւ զի երկայնեմ զբանս. քանզի 'ի լինել պատերազմին, նիզակաւ որպէս զքուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն, շամփրէ զԱշդահակ յընդարձակ տէգ նիզակին, և յամփոփել միւսանգամ զձեռն՝ արտաքս զկէս մասն թոքիցն հանդերձ զի-

նաւն 'ի դուրս բերէ : Բայց մարտն էր սքանչելի . զի քաջք դիպեալ քա-
ջաց , ոչ վաղվաղակի թիկունս 'ի միմեանց դարձուցանէին . վասն որոյ
յերկարեալ քարշէր գործ պատերազմին ժամս ձիգս : Իսկ վախճան
գործոյն առնէր մահն Աշդահակայ . և այսպիսի դիպուածս 'ի բաղ-
բեբախտութիւն յաւելեալ , յաճախէր փառս Տիգրանայ :

Լ. Յաղագս Ինչ էր աղագաւ յղարկեաց զ-
Տոյր ի-ը Տիգրանուհի 'ի Տիգրանա-
հերտ . և վասն Անուշայ , առաջին
կնոջն Աշդահակայ , և Բնակուինեան
գերոյն :

ՊԱՏՄԻ և այս , թէ զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծ ամբոխիւ 'ի Հայս , յաւանն՝ զոր շինեաց իւրով անուամբ Տիգրան , որ է Տիգրանակերտ , և զգաւառն զայնոսիկ 'ի ծառայութիւն նմա հրամայէ : Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ա-

զառուԹիւն՝ 'ի զարմից սորա առ
լեալս իբր Թագաւորական զարմն։
Իսկ զԱնոյշ զառաջին կինն Աշ-
գահակայ, և զբազումս 'ի սերմա-
նէ Աշգահակայ աղջկունս՝ հան-
դերձ պատանեկօք և այլ բազում
գերեօք, որչափ Թէ աւելի քան
զբեւր մի, բնակեցուցանէ յարեւ-
ելեայ ուսոց մեծի լերինն՝ մինչեւ 'ի
սահմանս ԳողԹանն, որ էն Տամ-
բատ, Ոսկիողայ, Դաժգոյնք, և որ
այլք առ եզերբ գետոյն գասառ-
կերոք, յորոց մինն է Վրանջու-
նիք, մինչեւ հանդէպ ամրոցին Նախ-
ջաւանու. և զերիս աւանսն զԽրամ
և զՋուղայ և զԽոշակունիս։ Իսկ
'ի մեւս կողմանէ գետոյն զբոլոր
դաշտն, որոյ գլուխն Աժգանա-
կան, մինչեւ ցնոյն ինքն ամուրն
Նախճաւանոյ։ Բայց զնախասա-
ցեալ կինն Անոյշ բնակեցուցա-
նէ որդւովքն իւրովք յանդորրու-
Թեան ոպառուածի փլատի մեծի
լերինն, զորմէ լեալ ասեն յահա-
գին ինն շարժմանէ. զոր պատմեն
որք բազմաշրջուԹեամբ հրամանաւ

Պողոմեայ առապարհաջք զբնակու-
թիւն մարդկան չափեցին, այլ մասն
ինչ և զծով և զանբնակ 'ի յայլե-
ցածէն մինչեւ ցՔիմիւռոն։ Իսկ
պաշտօնեայս տայ Անուշայ 'ի նոյն
Մարաց, որ առ ոտամբ լերինն բնա-
կեցան։

Յայտնեն զայս Ճշմարտապէս և
թուելեացն երդք, զոր պահեցին
ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ
կողմանն գինաւէտ գաւառին Գող-
թան. յորս շարին բանք երգոցն
զԱրտաշիսէ և զորդւոց նորա, յի-
շելով այլաբանաբար և զզարմիցն
Աշդահակայ՝ վիշապազունս զնոսա
կոչելով. զի Աժդահակդ 'ի մեր լե-
զուս է վիշապ։ Այլ և Ճաշ ասեն
գործել Արդաւանայ 'ի պատիւ Ար-
տաշիսի, և խարդաւանակ լեալ նմին
'ի տաճարին վիշապաց։ Այլ և Ար-
տաւազդայ ոչ գտեալ ասեն, քա-
ջի որդւոյն Արտաշիսի, տեղի ա-
պարանից՝ 'ի հիմնանալն Արտաշա-
տու. նա անց, ասէ, գնաց և շի-
նեաց 'ի մէջ Մարաց զՄարակերտ,
որ է 'ի դաշտին՝ որ անուանեալ կս-

էի Շարուրայ։ Ա յլ և սենչայ, ա-
սեն, Սաթինիկ տիկին սենչանա՝
զարտախուր խաւարտ և զանց խա-
ւարծի 'ի բարձէցն Արդաւանայ։

Եւ արդ ոչ առաւել ասասանօր
զարմացիս՝ 'ի վերայ մերոյ ճշմարտաա-
պատմութեանս, թէ որպէս յայտ-
նեցաք զանցայտ իրս վիշտպայ, որք
էն յաղատն 'ի վեր 'ի Մասիս։

ԼԱ. Թէ ոյժ ոմանց ասրա ղարմ, և
ոյժ 'ի ոմանէ որոշեալ ոնեղ։

ՀԱՒԱՍՏԻ պատմել զբուն և
զառաջին Տիգրանն, և որ ինչ 'ի
նմանէ գործք, սիրելի՝ որպէս ինձ
պատմողիս 'ի մէջ իմոց բանից, որ
ինչ յաղագս Երուանդեանս Տիգ-
րանայ բանք, եղեցի և քեզ ընթեր-
ցողիդ. որպէս այրն և գործք, այս-
պէս և զնմանէ բանք։ Վասն որոյ
սիրեմ կոչել այսպէս ըստ քաջու-
թեան, Հայկ, Արամ, Տիգրան. քան-
զի ըստ իմ՝ քաջաց ազգք քաջքն.
իսկ միջոցքն՝ որպէս գէպ ումեք

թուիցն կոչել։ Բայց ըստ գիւցազ-
նութեանն կարծեաց՝ Ճշմարիտ է
և ասելս մեր. ոչ Արամազդ ոք,
այլ'ի կամեցողն լինել Արամազդ,
զորից եւս այլոց անուանեցելոց Ա-
րամազդ. յորոց մի է և կունդ ոմն
Արամազդ։ Այսպէս և բազումք
անուանեալ Տիգրանք, մի է և միայ-
նակ 'ի հայկազանցս, որ զԱշդա-
հակ սպան, և զտուն նորա 'ի գե-
ղութիւն վարեաց, և զԱնոյշ մայրն
վիշապաց. օժանդակ կամաւք և յօ-
ժարութեամբ զԿիւրոս ունելով,
զիշխանութիւնն Մարաց և Պարսից
յինքն յափշտակեաց։

Սորա որդի Բաբ, Տիրան, Վա-
հագն, զորմէ ասեն առասպելք.
Երկնէր երկին և երկիր, երկնէր և
ծիրանի ծով. երկն 'ի ծովուն ու-
նէր զկարմրիկ եղեգնիկն. ընդ եղե-
գան փող ծուխ ելանէր, ընդ եղե-
գան փող բոց ելանէր. և 'ի բոցոյն
պատանեկիկ վազէր, նա հուր հեր
ունէր. ապա թէ բոց ունէր մու-
ռուս, և աչկունքն էին արեգա-
կունք։ Զայս երգելով ոմանց բամբ-

ռամբ, լուաք իսկ ականջք մերովք։ Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգն կռուել նմա և յաղթել, և կարի ինն նմանագոյնս զՀերակլէայ նահատակութեանցն նմա երգէին։ Այլ ասէին զսա և աստուածացեալ. և անդ յաշխարհին Վրաց զսորա չափ հասակի կանգնեալ պատուէին զոհիւք։ Եւ սորա են զարմք Վահունիք. 'ի սորա կրտաեր որդւոյն Առաւանայ առաւենեանք։ Սորա Առաւան, սորա Ներսեհ, սորա Զարեհ. 'ի սորա զարմից և զարեհաւանիցն որ կարդան ազգք։ Իսկ առաջին սորա Արմոգ, սորա Բագամ, սորա Վան, սորա Վահէ. սա ընդվզեալ, մեռանի յԱղէքսանդրեայ մակեդոնացւոյ։

Յայսմ հետէ մինչեւ ցթագաւորութիւնն Վաղարշակայ 'ի Հայս՝ ոչ ինչ ճշմարտագոյն ունիմ պատմել քեզ. քանզի շփոթ ինն ամբոխից լեալ, այր զարամբ եկանէին պիրել աշխարհիս. և վասն այսորիկ գիւրամուտ 'ի Հայս լեալ Արշակ մեծ, թագաւորեցուցանէ զեղ-

բայր իւր Վաղարշակ 'ի վերայ աշ-
խարհիս Հայոց։

ԼՐ. Թէ Եղիշան պատերազմ առ
Տէր-Պատեաւ. և մեր Զարմայր ընդ Ե-
ռովպատի զորուն ելինել սակաւուց, և
'ի նոյն մահ։

ԵՐԿՈՒՔ այսոքիկ են, որք աշ-
խատութիւն ստգնապաւ մեզ 'ի վե-
րայ 'ի քումմէդ հասանեն հարցասի-
րութենէ. համառօտասիրութիւն,
արագաբանութիւն։ Եւ այսոքիկ՝
պերճ և պայծառ, պղատոնականք
իբր եղանիլ բանք. հեռի 'ի ստու-
թենէ, և լի որ ինչ ընդդէմ ստու-
թեան։ Եւ զայսոսիկ յառաջին մար-
դոյն մինչեւ ցքեզ առ ժամայն պատ-
մել. և այսոցիկ 'ի միասին պատա-
հել անհնարին է։ Քանզի որ զա-
մենայն ստեղծ, կարող գոլով ակն-
արկութեամբ 'ի քթթել ական զա-
մենայն կացուցանել, ոչ այսպէս
հաստատէ, այլ աւուրս որոշէ և
կարգս 'ի ստեղծուածս. քանզի են
ոմանք առաջնոյ և ոմանք երկրորդի

և երրորդի և այլոց աւուրց սահ-
ծուածք : Եւ այսու մեզ այսպիսի
լեմն ակնարկէ վարդապետութիւն
Հոգւոյն կարգս : Իսկ զքո փափաք
արտաքոյ այսպիսի լեմն սեռանեմք
սահմանի . զի արդար և բնաւն և
առ ժամայն ամենայնքն քեզ եղիցին
սասցեաւքն : Այլ առ 'ի մէնջ այ-
ոքիկ կամ յերկար , և քեզ ըստ
կամաց . կամ փոյթ , և քեզ ոչ հա-
ճելիք : Զի այսպէս 'ի քո հապ ճե-
պելոյ ահա ոչ ինչ յաղագս մակե-
դոնացւոյն , և ոչ վասն իկիականին
'ի կարգին նշանակեցաք , այլ զո-
դեմք աւասիկ : Ոչ ունիմք ասել ,
խմաստուն կամ անհանճար ասասա-
նօր լինել մեզ հեւան պատկանա-
ւոր , կամ ոչ զայնոսիկ այժմ ու-
րեմն զկնի հեղուսելով բանս , զկա-
րեւորսն և մերոյս ալժանի շարա-
գրութեանս :

Եւ ոյք արդեւք այսպիսեաց ճա-
ռից առաջինք , եթէ ոչ ոք 'ի Հո-
մերոնէ պատմին . թէ այն արդեւք ,
որ վասն եղիականի պատերազմին
պատմի առ Տեւատամաւ ասորեասա-

նեայ, և մեր Զարմայր 'ի ծառայութեան ասորեստանեայց սակաւուք ընդ Եթովպիացի զօրուն օգնական Պռիամու։ Եւ անդ 'ի քաջացն հելլենացւոց վերաւորեալ մեռանի. այլ կամիմ յԱքիլլեայ, և մի յայլ ումեքէ 'ի քաջացն։

ԿԱՏԱՐԵՑԱՆ ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ, ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ

Ի ՊԱՐՍԻՑ ԱՌԱՍՊԵԼԵԱՑ

Յաղագս Բիւրասպի Աժդահակայ։

ԲԱՅՑ զինչ արդեաք տարփանք քեզ՝ և Բիւրասպի Աժդահակայ փծուն և անճառնի առասպելքն լցեն. և կամ էր սակս զմեզ Պարսից անյարմար և անոճ բանից, մանաւանդ թէ առաւել վասն անբանութեան, առնեա աշխատ, և անբարի առաջնոյ նորա բարերարութեան, և գիւաց նմա սպասաւորութեան, և ոչ վրիպեցուցանել կարելոյ զվրիպեալն և զտուն. և ուստն համբուրումն, և անդուստ զվիշապացն ծնունդս. և յայնմ հետէ ջարութեան յաճախութիւն, ծախել զմարդիկ 'ի պէտս որովայնի։ Իսկ ապա և Հրուդենայ ումեմն կապեալ զնա տարեօք պղնձիւք, և

'ի լեառն տանել՝ որ կոչի Դրմբաւրնդ։ Այլ և 'ի Հանապարհի զնընջելն Հրուգենայ, և Բիւրատպեայ քարշելն 'ի բլուրն, և զարթչելն Հրուգենայ, և տանել զնա յայրս ինչ լերինն և կապել, և զինքն անդրի ընդդէմ նորա հատատել. յորմէ պակուցեալ, հնազանդեալ կայ ընդ ինքեան, և ոչ զօրէ ելանել և ապականել զերկիր։

Զինչ քեզ առ այսոքիկ կարօտութիւն առասպելք սուտք, կամ զինչ պէտք անմիտ և անհանճար բանից յարմարանք։ Մի՞ արդեաք յոմնական պերճ և ողորկ առասպելքն ի՞նչն հանդերձ պատճառաւ, որք զՀնչմարտութիւն իրացն այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ։ Այլ ասես, մեզ պատճառս տալ անբանութեան նոցա, և զարդարել զանզարդն։ Այլ տացուք զայսոսիկ մանկականի քոյոց տիոց և անհասութեան խակութեանդ լեալ տարփանք։ Վասն որոյ եղիցի և ասասնօր ընուլ մեզ զփափաք կամաց քոյ։

Սիրոգրութիւն, որ ինչ սակս Բիբ-
լիոպէայ հաստատին։

ԶՊՂԱՏՈՆԱԿԱՆՆ համարձակագոյն այժմ բարբառիմ. իսկ արդ արդեւք իցէ սիրելւոյ այլ ոք ես. քանզի և չէ իսկ ոք։ Զի՝ ի վերոյ այլոց անհնարիցն՝ հնարաւոր վասն քո արարելոց մեր, կատարեմք և զայս. զի զորոց առեմք զբանս և զգործս, և այնոցիկ մանաւանդ թէ լուրն զլսելիս մեր տաղտկացուցանէր, այսօր ձեռամբ իմով շարադրեմ զայնոսիկ, միտս անմոռութեան նոցա տալով, և զկարի վաղուց նոցա իրս և նոցա անհասանելիս աւասիկ յայտնեմ. միայն թէ և քեզ յայտնոսիկ ուրախութիւն և կամ շահ օգտութեան։ Այլ ծանիր զատելութիւն մեր առ այսպիսի բան, զի ոչ յառաջինան մեր ասացեալ գիրս, և ոչ՝ ի վերջին բանս արժանաւորեցաք շարել, այլ զատ և ուրիշ։ Եւ սկսայց այսպէս։

Ասացեալն՝ ի նոցանէ Բիւրասպի Աժդահակայ՝ առ Ներբուեաս

նախնի նոցա : Քանզի 'ի բաժանել
լեզուացն ընդ ամենայն երկիր , ոչ
խառն 'ի խուռն և ոչ անառաջնորդ
կամ անգլխաւոր այս լինէր . այլ
սատուածայնով իմն ակնարկու-
թեամբ գլխաւորք և ցեղապետք ո-
րոշեալք զիւրաքանչիւր սահմանս
ժառանգեցին կարգաւ և զօրու-
թեամբ : Եւ զայս Բիւրասպեայ հա-
ւասարի անուն ճանաչեմ ես , կեն-
տորոս Պիւռիդայ 'ի քաղդէականի
գտեալ մատեանի : Սա ոչ քաջու-
թեամբ քան թէ հարստութեամբ
և ճարտարութեամբ զցեղապետու-
թիւն ազգին իւրոյ ունէր հնազան-
դեալ Նեբրութայ . և հասարակաց
զկենցաղս կամէր ցուցանել ամենե-
ցուն , և ասէր՝ ոչ ինչ իւր առան-
ձին ուրուք պարտ լինել , այլ հա-
սարակաց . և ամենայն ինչ յայտնի
և բան և գործ . և 'ի ծածուկ ինչ
ոչ խորհէր , այլ զամենայն յանգի-
ման արտաքս բերէր լեզուով զծա-
ծուկս սրտին : Եւ զեղ և զմուտ
բարեկամացն որպէս 'ի տուընջեան
նոյնպէս և գիշերի սահմանէր : Եւ

այս է առաջին նորա ասացեալն և անբարի բարերարութիւնն :

ԱՅԼ քանզի աստեղաբանութեամբ հղօր եղեալ, յօժարեցաւ ուսանել զկատարեալ չարութիւն , և այսք անկարելիք նմա . որպէս վերագոյնն ասացաք, սովորութիւն ունէր պատրանաց աղագաւ առ բազումս ոչ ինչ 'ի ծածուկ գործել . և այնպէսի վերջին և կատարեալ չարութիւն յայտնի ուսանել կարողութիւն ոչ էր , հնարի այսպիսում ուսման դառնութեան , և հնարս և ցաւս ինչ յորովայնի ունել, և բաղբաղել չարաչարս , որ ոչ այլով իւիք , քան թէ բանիւ ինն և անուամբ սոսկալեաւ բժշկիցի , զոր ումեք վայրապար լսել ոչ է կարողութիւն : Եւ այս , որ զսովորեալ չարութիւն նիւթէր , ուսուցանէր նմա 'ի տան և 'ի հրապարակս , անկասկած զգըլուխս 'ի վերայ ուսոց Բիւրասպեայ դնելով, և խօսելով յականջն՝ ուսուցանէր զանբարի արուեստն . զոր յառաջագոյն՝ մանուկ ատուանայի , ասէն , սպասաւորելով լինէր կա-

մակատար. և տպա վասն որոյ պար-
գեւ 'ի նմանէ խնդրեալ, համբու-
րէր զուսան։

Իսկ վիշապացն բուսումն, կամ
կատարելապէս վիշապանալն Բիւ-
բասպեայ, որ ասի, է այս։ Քանզի
անբաւ մարդիկ սկսաւ զոհել գի-
ւաց. մինչեւ տաղտկանալ 'ի նմա-
նէ բազմութեանն և հալածել, և
փախչել նմա 'ի նոխատացեալ վե-
րին կողմանն. և 'ի սատիկ վարե-
լոյն զնա՝ թօթափեցաւ ամբոխ նո-
րա 'ի նմանէ։ Յայս վատահացեալ
վարոզացն զնա, հանգեան աւուրս
ինչ զսեղեօքն։ Իսկ Բիւբասպեայ
ժողովեալ զցրուեալսն, յանկարծ-
օրէն հասանէ 'ի վերայ՝ զնաս սա-
տիկ առնելով. այլ յաղթէ բազ-
մութիւնն, և փախստական լինի
Բիւբասպ. և հասեալ ապանանէն
զնա մերձ 'ի լեառնն, և ընկենուն
'ի վիհ մեծ ծծմբոյ։

ՑԱՆԿՔ ԵՐԿՐՈՐԴ ԳՐՈՑ

Ա. Մինչև պատմութիւն Հայոց։

Բ. Թագաւորեալ Արշակայ և որդւոցն, պատերազմ ընդ մակեդոնացւոցն, և սէր ընդ հռովմայեցիս։

Գ. Թագաւորեցուցանէ զԱ-ղարշակ Հայոց աշխարհիս։

Դ. Թէ ո՛րպէս միաբանեալ Ա-ղարշակայ զքաջքն Հայոց 'ի կարգս զօրու, խաղայ 'ի վե-րայ մակեդոնացւոց մոերմաց։

Ե. Պատերազմ Մորփիլիկեայ և մինդահալ մահ։

Զ. Թէ ո՛րպէս կարգեաց Ա-ղարշակ զարքեւմուտս և զնիւսի-սի մերոյ աշխարհիս։

Է. Յօրինուած Թագաւորու-

թեանն, և ուստի զնախա-
ռարութիւնս սերեաց, որ-
պէս և զիարդ կենցաղավա-
րել հրամայեաց։

Ը. Երկրորդ լինել թագաւորու-
թեան 'ի զուակէ Աշդահա-
կայ Մարաց թագաւորի։

Թ. Յաղագս մերոյ Արշակայ ա-
ռաջնոյ և նորին գործոց։

Ժ. Եւ թէ ուստի էգիտ զպատ-
մութիւնս զկնի մատենիցն
Մար Աբաս Կատինայ։

ԺԱ. Յաղագս մերոյ առաջնոյ Ար-
տաշէսի, և յափշտակելոյ
զնախագահութիւնն։

ԺԲ. Խաղալն Արտաշիսի յարեւ-
մուտս, և ձերբակալ առնել
զԿրիւսոս, և աւարել ըն-
ձեռել Հայոց զպատկերս կը-
ռոցն։

ԺԳ. Վկայաբանութիւնք տիեզե-
բակալութեանն Արտաշիսի
և կապելոյ զԿրիւսոս, յայ-
լոց պատմագրաց։

ԺԴ. Յաղագս թագաւորելոյ Տիգ-
բանայ միջնոյ, և ընդդէմ

կալոյ զօրացն Յունաց, և զմեհեանսն շինելոյ, և արշաւանս առնելոյ 'ի Պաղեստինէ :

ԺԵ. Դիմու� 'ի մեզ Պոմպէի հռոմայեցւոց զօրավարի, և առնուլն զՄաժակ, և մահն Միհրդատայ :

ԺԶ. Յաղագս յարձակելոյ Տիգրանայ 'ի վերայ զօրացն հռոմայեցւոց, և խոյս տալ Գաբիանոսի, և արձակելոյ զմանուկն Միհրդատ :

ԺԷ. Պատերազմ Կրասոսի, և սատակումն նորին 'ի Տիգրանայ :

ԺԸ. Եւ թէ ո՞րպէս Կասիոս ընդդիմակաց եղեալ Տիգրանայ, և ապստամբելն Միհրդատայ և շինելն զԿեսարիայ :

ԺԹ. Յաղագս վիճաբանութեանն Տիգրանայ և Արշէզի. և առաքէ ապստամակ 'ի Պաղեստինէ. և գերութիւն Հիւրկանու քահանայապետի և այլ բազմութեանն Հրէից :

Ի. Այլ պատերազմ Հայոց ընդ զօրս Հռոմայեցւոց, և պարտութիւն Սիլանի և Բենդիդեայ։

ԻԱ. Եւ թէ զիարդ Անտոնինոս իւրովի դիմեալ՝ի վերայ զօրացն Հայոց՝ առնու զՇամշաթ։

ԻԲ. Յաղագս Թագաւորելոյն Արտաւազդայ, և պատերազմել ընդ Հռոմայեցիս։

ԻԳ. Զերբակալ արարեալ զԱրտաւազդ Անտոնինոս։

ԻԴ. Յաղագս Թագաւորութեանն Արշամայ, և զառաջին հարկիչ Հայոց Հռովմայեցւոց մատնաւոր. և արձակումն Հիւրկիանոս, և վասն նորին վասանդ ազգին բագրատունեաց։

ԻԵ. Գժտութիւն ընդ Հերովդի Արշամայ և ակամայ հնազանդութիւն։

ԻԶ. Թագաւորութիւն Աբգարու, և մատնել բովանդակ Հայոց ընդ հարկիս Հռոմայեցւոց. և պատերազմ ընդ

Հերովդի, և ապանանել զեղ-
բօրորդի նորա զՅովսէփ :

ԻԷ. Շինուած Եդեսիա քաղա-
քին, և յիշատակումն սա-
կաւուք ազգի մերում Լու-
սաւորչին :

ԻԸ. Յաղագս երթալոյն Աբգա-
րու յարեւելս և թագաւո-
րեցուցանելոյ Պարսից զԱր-
տաշէս. և թէ զինարդ կար-
գեաց զեղբարն, յորոց մեր
Լուսաւորիչն և նորին ազ-
գակիցքն :

ԻԹ. Դարձ Աբգարու յարեւելից,
և տալ օգնութիւն Արեւտայ
'ի մարտ ընդ Հերովդի չոր-
րորդապետի :

Լ. Առաքումն իշխանացն Աբ-
գարու առ Մառինոս, յո-
րում տեսին զՓրկիչն մեր
Քրիստոս, ուստի եղեւ ըս-
կիզբն հաւատոյն Աբգա-
րու :

ԼԱ. Թուղթ Աբգարու առ Փըր-
կիչն :

ԼԲ. Պատասխանի թղթոյն Աբգա-

ըու, զոր գրեաց Թովմաս Առաքեալ հրամանաւ Փըրկչին :

ԼԳ. Քարոզութիւն յԵդեսիա Առաքելոյն Թադէոսի, և պատճէն թղթոց հնգից :

ԼԴ. Յաղագս վկայութեան Առաքելոյն :

ԼԵ. Վասն Սանատրկոյ թագաւորութեանն, և սպանմանն ծննդոց Աբգարու, և վասն հեղինայ տիկնոջ :

ԼԶ. Յաղագս նորոգմանն Մծբին քաղաքի, և անուանակոչութեան Սանատրկոյ և մահուանն :

ԼԷ. Թագաւորելն Երուանդայ, և կոտորել զորդիս Սանատրկոյ, և զերծանել Արտաշիսի փախստեամբ :

ԼԸ. Որ ինչ ՚ի Երուանդայ վասն ՚ի բուռն արկանելոյ զմանուկն Արտաշէս. և ՚ի բաց թողլոյ զՄիջագետս :

ԼԹ. Յաղագս շինուածի Երուանդաշատի :

Խ. Թէ ո՛րպէս չինեաց զԲագա-
րան քաղաք կռոց։

ԽԱ. Վասն անկելոյ զանտառն
Ծննդոց։

ԽԲ. Վասն ձեռակերտին Երուան-
գակերտի։

ԽԳ. Թէ ո՛րպէս օգնական արա-
բեալ Սմբատայ զնախարար-
սին Պարսից՝ խնդրէր Թա-
գաւորեցուցանել զԱրտա-
շէս։

ԽԴ. Լսելոյ Երուանդայ զգալն
Արտաշիսի, և գումարեալ
զզօրսն 'ի պատրաստութիւն
պատերազմի։

ԽԵ. Թէ ո՛րպէս ընդ մուտն Ար-
տաշիսի յիւր աշխարհն աջո-
ղեցաւ գործն։

ԽԶ. Երուանդայ պատերազմ ընդ
Արտաշիսի և փախուստ, և
առումն քաղաքին և մահ
նորին։

ԽԷ. Թագաւորեալ Արտաշէս, և
առնել բարի իւրոց երախ-
տաւորաց։

ԽԸ. Սպանումն Երուազայ, և շի-

նեալ միւսոյ Բագարանին, և հարկեալ Արտաշիսի հռոմայեցւոցն։

ԽԹ. Յաղագս շինուածոյ Արտաշատ քաղաքի։

Ծ. Յարձակումն Ալանաց 'ի մեզ և պարտումն, և խնամութիւն Արտաշիսի ընդ նոսա։

ԾԱ. Սպանումն Արգամայ և որդւոց նորա։

ԾԲ. Եւ թէ ո՞րպէս Սմբատ, և զինչ յԱլանս գործեաց. և բնակեալ Արտազու։

ԾԳ. Աւարումն Կասպից, և գերգռութիւն ընդ Սմբատայ զարմից Արտաշէսի և ընդ միմեանս։

ԾԴ. Պատերազմ ընդ զօրս Դոմիտիանոսի 'ի Բասէն։

ԾԵ. Յաղագս Տրայիանոսի և նորին գործոց, և մահուան Մաժանայ յեղբարցն։

ԾԶ. Թէ ո՞րպէս բազմամարդ արար Արտաշէս զաշխարհս Հայոց, և սահմանս հաստատեաց։

ԾԷ. Վասն ամաստուենաց նախա-
բարութեան։
ԾԸ. Վասն առուեղինից տոհմից։
ԾԹ. Արուեստից գիտութիւն որ
ինչ յաւուրս Արտաշիսի։
Կ. Յաղագս մահուանն Արտա-
շիսի։
ԿԱ. Արտաւազդայ թագաւորու-
թիւն, և հալածեալ զեղբարս
և զքորս, և մահն հանդերձ
այլաբանելով։
ԿԲ. Որ ինչ վասն Տիրանայ։
ԿԳ. Յաղագս Տրդատայ բագրա-
տունւոյ, և անուանց ազգի
նորա առաջնոյ։
ԿԴ. Եւ թէ զիարդ Տիգրան վեր-
ջին, և զինչ'ի նմանէ գործք։
ԿԵ. Յաղագս թագաւորելոյ Վա-
ղարշայ, և շինելոյ զաւանն
Բասենոյ, և պատել պարս-
պաւ զնոր քաղաքն, և պա-
տերազմել ընդ Խազրաց և
մահ նորին։
ԿԶ. Եւ թէ ուստի զայս պատմէ։
ԿԷ. Եթէ ի՞ր պէս Ագաթանգեղոս
պատմեաց համառօտ։

ԿԸ. Զթագաւորական աղգացն՝ յորմէ ցեղք պարթեւական որոշեցան։

ԿԹ. Եթէ զիարդ ցեղն Արտաշէսի Պարսից արքայի մինչեւ ցվախճան։

Հ. Եւ թէ զինչ առասպելք պահլաւկաց։

ՀԱ. Առաջին արշաւանք Խոսրովու յաստրեատան, որով համարէ օգնել Արտեւանայ։

ՀԲ. Խոսրով օգնութիւն գտեալ 'ի Փիլիպոսէ՝ դիմէ 'ի վերայ Արտաշրի պատերազմաւ։

ՀԳ. Դարձեալ յարձակումն Խոսրովու 'ի վերայ Արտաշրի առանց հռոմայեցւոց օգնականութեան։

ՀԴ. Յաղագս գալստեանն Անակայ և լինելութեան սրբոյն Գրիգորի։

ՀԵ. Յաղագս Փերմելիանու եպիսկոպոսին Կեսարու կապադովկացւոց և պատմութեանց նորին։

ՀԶ. Դիմումն 'ի մեզ Արտաշրի, և

յաղթել կայսեր Տակիտոսի։

ՀԷ. Յաղագս խաղաղութեան Պարսից ընդ Յունաց, և շինելոյն Արտաշրի զՀայս յամս անիշխանութեան։

ՀԸ. Սատակումն ազգին մանդակունեաց յԱրտաշրէ։

ՀԹ. Նահատակութիւն Տրդատայ յամս անիշխանութեանն Հայոց։

Զ. Յայտարարութիւն տակաւուք աննդեանն և վարուց Գրիգորի և որդւոցն նորա 'ի թղթոյն Արտիթեայ եպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միայնաւորի 'ի Յագռոճանի։

ԶԱ. Ուստի և զինչդ ազգ մամիկոնեան։

ԶԲ. Նահատակութիւնք Տրդատայ 'ի թագաւորութեանն յառաջքան զհաւատալն։

ԶԳ. Վասն առնլոյ Տրդատայ կին զԱշխէն և Կոստանդնի ըզ Մաքսիմինայ, և թէ ո՞րպէս հանդիպեցաւ հաւատոց։

ՁԴ. Սատակումն սկսունեաց 'ի Ճենազնոյն Մամգունայ:

ՁԵ. Նահատակութիւնք Տրդատայ 'ի պատերազմին որ յԱղուանս, յորում միջակտուր արար զԲասլացթագաւորն:

ՁԶ. Վասն Նունէի երանելոյ, թէ ո՞րպէս եղեւ պատճառք փրկութեան Վրաց:

ՁԷ. Պարտումն Շապհոյ և ակամայ հնազանդութիւն ընդ ձեռամբ մեծին Կոստանդիանու, և Տրդատայ ունելզԵկբատան, և գալ ազգականացն, և թէ յայնմ ժամանակի եղեւ գիւտ փրկական փայտին:

ՁԸ. Կապումն Լիկիանու. և փոխումն արքունեացն 'ի Հռովմէ, և շինումն Կոստանդնուպօլսի:

ՁԹ. Յաղագս Արիոսի չարափառի և ժողովոյն որ եղեւ վասն նորա 'ի Նիկիայ, և սքանչելեացն՝ որ երեւեցաւ 'ի Գրիգորիոս:

Ղ. Դարձ Արիստակայ՝ի Նիկիոյ, և հաւատալ աղգականացն, և որ ինչ՝ի Գառնի շինուածք։

ՂԱ. Յաղագս մահուանն Գրիգորի և Արիստակայ, և թէ էր աղագաւ լեառն կոչի Մանեայ այրք։

ՂԲ. Յաղագս վախճանին Տրդատայ թագաւորին, ընդ որում և ողբերգական մեղադրութիւն։

Բռնանդակէցան ցանկ էջերոտ գրոց մէջակ պատմութեանց։

Uegrtybuy pute p glnypg.. wbtgwbp
tgpnuqpuwb p pnnp pute dti J.
Tp.206

Rizz. dis. 151 Bozza inc.

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆ ՄԻՋԱԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՑՆ ՆԱԽՆԵԱՅ

Ա. ԳՐԵՄ քեզ այժմ և որ ինչ առանձինն մերոյ աշխարհիս գործք, երկրորդ առնելով գիրս, սկսեալ 'ի թագաւորութենէն Աղէքսանդրի, մինչեւ ցթագաւորութիւնն սրբոյ և քաջի առնն մեծին Տրդատայ, կարգաւ, որ ինչ եղեալ աստ գործ քաջութեան և արութեան, իմաստից և կարգաց միոյ միոյ ուրուք 'ի նոցանէ, որք յարքայէն Պարսից Արշակայ և Վաղարշակայ եղբօրէնորա, զոր մերոյ ազգիս թագաւորեցոյց. և ինչ որ յետ նորա եղեն թագաւորք աշխարհիս մերոյ 'ի նորին սերմանէ, որդի 'ի հօրէ առնլով զտէրութիւնն՝ անուանե-

ցան արշակունիք յԱրշակայ. աւ-
լորդքն յաղգ և 'ի բազմութիւն ա-
ճեցեալք, և միակն ըստ կարգի հե-
տեւանայ 'ի թագաւորութիւն:
Բայց գրեմ կարճ 'ի կարճոյ որ ինչ
մեզ անկ է, և զաւելորդն թողում:
Քանզի բաւական է յաղագս այ-
լոց ազգաց որ ինչ 'ի բազմաց աւա-
ցեալ էղեւ:

Յետ տիրելոյն ամենայն տիեզե-
րաց Աղէքսանդրի մակեդոնացւոյ,
որդւոյ Փիլիպպոսայ և Ոլոմպիադայ,
որ էր քսան և չորրորդ յԱքիլլայ,
բազմաց տալով զտէրութիւնն կատ-
կաւ, զի ամենեցուն իշխանութիւն՝
մակեդոնացւոցն անուանեսցի, ինքն
մեռանի: Զկնի որոյ թագաւորեալ
Բաբելոնի Սելեւկոս, զյոլովից
կորզելով զիշխանութիւն. ուստի
և զՊարթեւս հնազանդեաց մեծաւ
պատերազմաւ, և կոչեցաւ Նիկա-
նորն այնորիկ աղագաւ: Սորա տի-
րեալ ամս երեսուն և մի, թողու
զթագաւորութիւնն որդւոյ իւ-
րում Անտիոքայ անուանեցելոյն
Սաւտէր ամս ինն եւ տասն: Զսա

յաջորդէ Անտիոքոս, ասացեալն Թեւոս, ամս տասն. և 'ի մեռանելոյ նորոյ ապստամբեն Պարթեւք 'ի ծառայութենէ մակեդոնացւոցն։ Ուստի և թագաւորեաց Արշակ քաջ, որ է 'ի զաւակէ Աբրահամու, 'ի քեռուրական ծննդոց, առ 'ի հաստատել բանին Տեառն առ Աբրահամ, թէ թագաւորք ազգաց 'ի քէն ելցեն։

Բ. Թագաւորէաւ Արշակայ Ա որդոյն, պատերազմ ընդ մակեդոնացիս, Ա սեր ընդ հռովմայեցիս։

ՈՐՊԷՍ ասացաք, յետ վաթսուն ամի մահուանն Աղէքսանդրի՝ թագաւորէ 'ի վերայ Պարթեւաց Արշակ քաջ 'ի քաղաքին, որ կոչի Բահղ Առաւատին, յերկրին Քուշանաց։ Եւ ասայ պատերազմ ասպիկ յոյժ, թափելով յինքն զամենայն արեւելեայս։ Հալածէ և 'ի Բաբելոնէն զմակեդոնացւոց իշխանութիւնն։ Լսէ զզօրանալն հռովմայեցւոց 'ի վերայ արեւմտից և ծո-

վու. և թէ 'ի սպանիացւոցն թա-
փեցին զբովն, ուստի ոսկի և ար-
ծաթն հատանի. և զգաղատացիս
հարեալ ընդ հարկիս կացոյց, և
զթագաւորութիւնն ասիացւոց:
Հրեշտակս առաքեալ, խնդրէր ըզ-
դաշնաւորութիւն, զի մի օգնեսցէ
մակեդոնացւոցն. ոչ տալով հարկս,
այլ պատարագս միայն ամի ամի
հարեւր քանքարոյ:

Այսպէս տիրեալ ամս երեսուն
և մի, և յետ նորա Արտաշէս որ-
դի նորա ամս քսան և վեց, զսա
պայազատէ նորին որդի Արշակ, որ
կոչեցաւ մեծ. պատերազմի ընդ
Դեմետր և որդւոյն Դեմետրեայ
Անտիգոնեայ. քանզի 'ի վերայ նո-
րա եկն 'ի Բաբելոնն մակեդոնական
զօրու, և պատերազմեալ՝ 'ի գերու-
թիւն ըմբռնեցաւ. զոր կալեալ Ար-
շակայ՝ տարաւ 'ի Պարթեւս երկա-
թեղէն կապանօք, ուստի և Սելի-
պինդէան կոչեցաւ: Այլ խմացեալ
եղբօր նորին սիդիացւոյ Անտիոքայ
զգնալն Արշակայ, գայ ունի զԱ-
սորիս: Իսկ Արշակ երկոտասան

բիւրեաւ անդրէն դարձեալ, և Անտիոքոս 'ի սասակց ձմերայնոյ հերքեալ, պատահի նմա պատերազմաւ յանծուկ տեղիս, և կորնչի հանդերձ զօրքն. և Արշակ տիրէ երրորդ մասին աշխարհիս, որպէս յիրականացն պատմութեանց Հերոդոտեայ է ուսանել 'ի չորրորդէ, որ յաղագս բաժանելոյ զբոլոր երկիրս յերիս մասունս, և կոչեալ զոմն Եւրոպիէ, և զոմն Լիբիէ, և զոմն Ասիայ, որում և տիրեաց Արշակ։

Գ. Թագաւորեցուցանել զԱղաղրշակ Հայոց աշխարհի։

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յայնմիկ թագաւորեցուցանէ զեղբայր իւր Աղաղրշակ մերոյ աշխարհիս, զՀիւսիսի և զարեւմուտս տալով նմա սահմանս։ Սա, որպէս յառաջնում մերում մատենին գրեցաք, այր քաջ և խոհեմ՝ ընդարձակեաց 'ի վերայ սահմանաց իւրոց. և կարդս կենցաղականս, որչափ մարթէր, սահմանեաց աշխարհիս. և նախարա-

րութիւնս, և նոցին նախարարու-
թեանցն նահապետութիւնս հաս-
տատեաց զարս պիտանիս, որ 'ի զա-
ւակաց նախնւոյն մեր Հայկայ և
յայլոց:

Քանզի յետ սանձահարելոյ զՄա-
կեդոնացիս և դադարելոյ պատե-
րազմացն, սկիզբն առնէ բարեգոր-
ծութեանց Պարթեւն քաջ. նախ
և առաջին փոխարէն բարեաց հա-
տուցանելով առնն զօրաւորի և ի-
մաստնոյ, որ 'ի Հրէից՝ Ղամբայ
Բագարատ. տալ նմա իշխանու-
թիւն ազգաւ թագադիր լինել ար-
շակունեաց. և որ 'ի նմանէ ծնեալ
ազգ՝ լինել յանուն նորա կոչմամբ
բագրատունի, որ և այժմ մեծ նա-
խարարութիւն 'ի մէջ աշխարհիս:
Քանզի այս Բագարատ նախաձեռն
ընծայ ըստ կամաց մատոյց զինքն
Ղաղարշակայ յառաջ քան զպա-
տերազմն Արշակայ ընդ Մակեդո-
նացիսն, և սա 'ի դրան ալքունի:
Իսկ 'ի ծայրս հայերէն խօսից կողմ-
նակալ իշխան բիւրուց և հազարաց
յարեւմտից կուսէ:

Բայց գարձցուք անդրէն 'ի վերս պատմելով յաղագս պատերազմին Վաղարշակայ ընդ պոնդացիս, և որ 'ի Փռիւգիայ, և վասն յաղթութեանն։

Դ. Եթէ արդեւ միաբանէաւ Վաղարշակայ ղՅոյոց 'ի կուրգ ղՅրոն, խաղայ 'ի վերայ Մակեդոնացւոյ Մպերմայ։

ՅԵՏ պատերազմին Արշակայ ընդ մակեդոնացիս և ունելոյ զԲաբելոն և զարեւելս և զարեւմուտս ասորեստանի, միաբանէ և Վաղարշակ զՅոյ բազում յԱտրպատականէ և 'ի Հայոց, որ 'ի միջոցի աշխարհիս, արս անուանիս և քաջս, և զկոչեցեալն Բագարատ, և որ ընդ նովաւ քաջք, և զծովեզերեայն մանկունս, որք 'ի Գեղամայ և 'ի քանանացւոց, և Շարայի ծնունդք և Գուշարայ, և առ թեր սիսակեանն, և զկագմեանն և զնոցա վերաձաւորսն, որպէս թէ զկէս մասն աշխարհիս։ Հասանէ 'ի միջոց աշ-

խարհիս վերագոյն քան զակունս մօրին մեծի յափին Երասխայ, մօտ յԱրմաւիրն որ ասի բլուր. աւուրս շատս առնելով անդ, որպէս պարտ է ասել. զի ոչ գիտէին զկարգս ինչ։

Եւ ասի միաբանեալ զբոլոր կողմ աշխարհիս, հասանէ առ սահմանսքն Խալտեաց։ Քանզի Ղազիկայ, Պոնդոս, Փռիւգիայ, Մաժաք և այլք, ոչ գիտելով զհամ պատերազմին Արշակայ, առ մակեդոնացւոց պետութիւնն զմիաբանութիւն դաշանցն հաստատուն պահէին։ Վասն որոյ ոմն Մորփիւղիկեայ միաբանեալ զասացեալ կողմանս զայսոսիկ, և դրդռի 'ի պատերազմ ընդ Վաղարշակայ։ Բայց պատահէն միմեանց առ բարձրաւանդակի միոջ բլրով քարտադաթնիւ, որ այժմ ասի Կողոնիայ. և մօտեալք 'ի միմեանս ձիգ ասպարիսաք միջոցացն, ամրանան երկոքին կողմանքն բովանդակ աւուրս։

Ե. Պատերազմ Մուրիէ-Ղիկեայ և Մնդեահար մահ։

ԶԿՆԻ անցանելոյ բազում աւուրց ամրանալոյ կողմանցն երկոցունց, գրգռի պատերազմ 'ի մերմէ կողմանէս դիմեալ. վասն որոյ յարդարէ կամաւ կամ ակամայ և Մուրիւղիկեան զիւրոյ կողման ճակատն, հասանէ յանդուգն յարձակմամբ։ Քանզի այր սրտեայ էր, և անդամովք երկար և ընդ իրեարս պատշաճ, զոյգ մարմնոյն և ոյժ սաստիկ ունելով։ Ամրացեալ պղնձով և երկաթով, և այլովք ընտիր վառելովք, ոչ սաստիկ ինչ թուով, սակայն յերկիր արկանէր արս ընտիրս և քաջս 'ի մանկանցն Վաղարշակայ. և չանայր անցանել հասանել յարքայն Հայոց 'ի մէջ խմբի մեծի և զինու ամրացելոց։ Եւ մինչ անցեալ աջողեցաւ ձգել զսուինն. քանզի էր կորովի և երկայնաձիգ, հեռի զաշտէն արձակեալ՝ որպէս 'ի թուիչս սրաթեւ հաւուց։ Այլ ոչ ինչ կարի յամեցին ընդ մէջ ան-

ցանել ալք քաջք և անուանիք 'ի զարմից Հայկայ և ասորեստանեցոյն Սենեքերիմայ. և աշտէիւ հարեալ սատակեն զքաջն, և զզօրան առաջի արկեալ 'ի փախուստ դարձուցանէին. բազում վտակս արեան հեղեալ, զերկիրն ողողանէին իբրեւ հեղեղք անձրեւաց: Եւ յայնմ հետէ դադարեալ խաղաղէր երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ, և մակեդոնացւոցն դադարեալ գոռն:

Զ. ԵՐԷ ԻՐԱՆԷՈՅ ԿՐԳԷՈՅ ՎԱՂԱՐՇԱԿ ՂԱՐԷՄՈՊՈՆ Ի ՂԻԻՈՊԻՈՅ ՄԷՐՈՅ ԱՇԽԱՐՀԻՈՆ:

Եւ այս այսպէս կատարեալ, կարգէ զկողմանս Մաժաքայ և զպոնդացիս և զեգերացիս. դառնայ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց 'ի գիւղին և 'ի մառախլուսոտ տեղիս մայրեացն և 'ի լոռաւէտս. գեղեցիկ իմն կարգելով զերկիրն, հաւասարելով զլեռնայինն և զբերմահոան 'ի բարեխառն և 'ի զուգա-

գեղեցիկ վայելչութիւն իւրոյ թագաւորութեանն. ամառնային ժամանակին հովանոցս պատրաստելով, յորժամ զհիւսիսով երթիցէ: Գոմս զերկուս տապիարական անտառախիտս հանդերձ լերամբքն կազմելով, և որսոց տեղիս. և զՋերմութիւնն Կողայ 'ի մարմանդս այգեաց և բուրաստանեաց: Այլ խարեմ՝ ասա վասն սիրելի առնն յայտնի դրել զամենայն և մանրապատում. զի անցի միայն զտեղիսն նշանակելով, զհաւաստին և զոճն 'ի բաց թողեալ, վասն զկապ սիրոյ զհրաշալւոյն անխզելի պահելոյ:

Եւ ասա կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ 'ի դաշտին հիւսիսոյ և որ զատորոտով մեծի լերինն Կաւկասոյ, և որ 'ի հովիտս կամ 'ի ձորս երկայնագոգս խորացեալս, 'ի լեռնէն՝ որ զհարաւով ինչեալ մինչ 'ի դաշտաբերանն մեծ. պատուէր տալով զաւազակութիւն և զմարդադաւութիւն 'ի բաց քեցել յինքեանց, և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել:

որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսա, առաջնորդս և իշխանս հանդերձ գեղեցիկ կարգաւք հաստատեցէ: Եւ արձակէ զնոսա հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուաւք յիւրմէ: Եւ ինքն արձակեալ զարեւմտեայ բազմութիւնն, ինչանել 'ի տեղիս խոտաւէտս մերձ 'ի սահմանն Շարայի, զոր հինքն Անփայա և վերին Բասեան կոչէին. իսկ յետոյ վասն հատուածին Վղընդուր ԲուՀկարայ Վնդայ բնակելոյ 'ի տեղիս, յանուն նորա անուանեցաւ Վանանդ. և անուանք չինիցն յանուն եղբարց և զարմից նորա անուանեալ կոչին մինչեւ ցայժմ:

Իսկ 'ի ցրտանալ հիւսիսոյ 'ի դառնահոտ փչելոյ, խաղայ ինչանէ 'ի գաշան մեծ. և անդ զափամբ մօրին մեծի բանակի 'ի տեղւոջ, ուր գետն մեծ 'ի ծովակէն հիւսիսոյ սկիզբն առեալ՝ ինչանէ և խառնի 'ի մօրն մեծ: Եւ անդ կարգեալ զզօրս աշխարհիս, և թողեալ յինքեանէ վերակացուս, և իւր առեալ զամենայն գլխաւորսն՝ չուէ 'ի Մծբին:

Է. Յօրինուածք Աստուածաշունչն, և նէ ուսուցանէ զնախագրութիւնն բազմայոյց, ուրպէս և զիւրդ կենցաղավարքէ հրամայէաց։

ԱՅՍ գրուածք մեծ, և հաւասարի պատմութեամբ լի, և արժանի բանից ողորկագունից և յոլովից։ Քանզի բազում ինչ ասա կարգաց և յօրինուածոց, տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, և համայն ասել օրէն թագաւորութեան, և որ ինչ շուրջ զթագաւորութեամբն. զօրաց, զօրապետաց, կողմանց կողմնակալաց, և որ նման այսոցիկ։

Արդ նախ և առաջին օրինադրէ թագաւորն զինքն և զտուն իւր, սկիզբն առնելով 'ի գլխոյն իւրմէ և 'ի թագէ։ Եւ զկոչեցեալն Բագարատ, որ 'ի Հրէից, շնորհակալութիւն նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեան առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն, զյառաջասացեալ

տանուտէրական պատիւն ազգին պարգեւելով. և իշխել նմա թագ 'ի գլուխ դնել թագաւորին, և կոչել թագադիր և ասպետ. և առանց ոսկւոյ և ականց զկրտսեր մարդապետն երեքտակէն վարսակալ ածել՝ յարժամ յարքունիս և 'ի տան թագաւորին չրջեցի:

Եւ զգեցուցանողն իւր զՁեռէս 'ի զաւակաց քանանացւոց. անուն կոչէ ազգին գնթունիս: Եւ թիկնապահս իւր, զինու հանգերձ, 'ի զաւակացն Խոռայ հայկազնոյ՝ արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս. և գլուխ նահապետ նոցա զՄաղնաղ ոմն: Բայց անուն ազգին զնախնականն պահէ: Իսկ զԴատ 'ի զաւակէ Գառնկայ, որ 'ի Գեղամայ, 'ի վերայ որսոց արքունականաց կարգէ: Որոյ որդի եղեալ Վարժ, յանուն նորա ա-նուանի ազգն. բայց այս զինի, յաւուրս Արտաշիսի: Եւ զԳաբաղ ոմն 'ի վերայ կուսակց, և զԱբէլ սպասարար և գահաւոր. և շէնս պարդեւէ նոցա, յորոց և անուն կո-

չին . սապէս և նախարարութիւնքն՝ աբեղէն և գաբեղէն :

Եւ զարծրունիսդ գիտեմ՝ ոչ արծրունիս , այլ արծիւ ունիս , ոլք արծուիս առաջի նորա կրէին : Թողում զառասպելեացն բաջաղանս , որ 'ի Հադամակերտին պատմին . մանկան Նիրհելոյ անձրեւ և արեւ հակառակեալ , և հովանի Թռչնոյ պատանւոյն Թալկացելոյ : Գիտեմ զգնունիսդ գինի ունիս , որ առաջի Թագաւորին պատրաստէր զըմպելիսն . որ սքանչելի ինն գիպեալ եղեւ ըստ գործոյն և անուանն . քանզի պատրաստէր զըմպելիսն ալքայի յընտիր և համեղ գինեաց , ունէր և կոչումն անուանն Գին . ընդ որ կարի զուարճացեալ , ասեն , Վաղարշակ , կարդէ 'ի Թիւ Նախարարութեան ազգաց մեծապէս : Եւ են այս երկու տունքս 'ի զաւակէ Սենեքերիմայ , արծրունիս և գնունիս :

Ասեմ և զսպանդունիսդ 'ի վերայ զենարանաց , և զհաւենունիսդ՝ բաղէակիրս և բաղէակալս յաղագս

'ի մայրիս բնակելոյ : Եւ եթէ առ
ցոփս ոչ ունիցիս , զձիւնականդ՝
ամարայնոցաց պահակս և ձիւնա-
կիրս , և յառաջադիմութենէ ա-
զատացեալս , որպէս ընտանիք Թա-
գաւորաց :

Եւ գունդս և պահապանս դրան
ալքունի պատրաստէ զչորս , զմի
մի իւրաքանչիւր վառելովք , 'ի նոյն
հին զարմից Թագաւորացն՝ որ 'ի
Հայկայ , որ ընդ ժամանակս ժա-
մանակս ժառանգութեան 'ի հա-
րանց ստացեալ գեւղս և դաստա-
կերտս : Իսկ աստ ուրեմն Պարսից
Թագաւորութեանն , որպէս լսեմ,
յայլոց յարուցեալ գունդս և Ոս-
տան անուանել . ոչ գիտեմ Թէ
վասն սպառելոյ ազգին առաջնոյ ,
Թէ վասն ընդդիմութեան իրիք լի-
նելոյ չկապեալ և 'ի բաց ընկեցեալ
զազգն , զայլս 'ի տեղիս նոցա յա-
րուցին գունդս անուամբ ալքունի :
Այլ առաջինն հաստատ 'ի զարմից
Թագաւորացն առաջնոց . որպէս
և այժմ 'ի Վրաց աշխարհին , որ
Սեփծուղն կոչի : Նա և նեղքինիս

հրամայէ 'ի նոյն ազգէ խզել. և նա-
հապետ նոցա զՀայր Իշխանն մասին
յԱրարատեանէ մինչեւ ցՃուաշ
և Նախճաւան։ Բայց թէ ո՞րպէս
է և ո՞ւր սորա իրք անցին անյիշա-
տակելի, ես ոչ գիտեմ։

Ը. Երիրորդ Թագաւորութեան լինելն
'ի զաւակէ Աշտահակայ Մարաց Թագա-
ւորին։

ԲԱՅՑ յետ կարգելոյ զտուն
Թագաւորին, երկրորդ Թագաւո-
րութեանն լինելը 'ի զաւակէ Աշդա-
հակայ՝ Մարաց եղելոյ Թագաւո-
րի, որ այժմ Մուրացանդ կոչեն։
Քանզի ոչ ասեն նահապետի ազ-
գին՝ Մուրացան տէր, այլ մարա-
ցւոցն տէր։ Եւ թողու 'ի վերայ
նորա զամենայն շէնս, որ 'ի գերու-
թենէն Մարաց։ Եւ յարեւելից
կողմանէ զեզերք հայկական խօսից
կողմնակալս, զերկու ցեղից նահա-
պետութեանցն՝ Սիսակեան և Կադ-
մեայն, զորոց զանուանն յառաջ-
նում Ճառին կարգեցաք։

Յետ սորա մեծ և անուանի և բազմաբեւր զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մուսաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան. առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր: Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի՝ մուռացումն եղեւ մեզ յառաջին մատենին յիշատակել, զդունդս սիսական՝ որ ժառանգեաց զդաշտն Աղուանից, և զլեռնակողմն նորին դաշտի, 'ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն՝ որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա: Եւ 'ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ՝ կարգեցաւ 'ի պարթեւէն Վաղարշակայ կողմնակալ բիւրաւոր: Ի սորա զաւակէ ասեն սերեալ զազգ ուսէացւոց և գարգմանացւոց և ծովդէացւոց և գարգարացւոց իշխանութիւնն:

Իսկ Գուշարայ, որ յորդւոցն Շա-

րայի, Ժառանգեաց զլեառն մթին, որ է Կանդարք, և զկէս մասինն Ջաւախայց, զԿողբ, զԾորբ, զՁոր՝ մինչեւ ցամուրն Հնարակերտ։ Բայց զսէրութիւնն Աշոցայ, և զսեպհականութիւնն Տաշրայ՝ կարդէ Վաղարշակ 'ի զաւակացն Գուշարայ հայկազնոյ։ Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարդէ զմեծ և զհզօր ազգն. և նահապետութեանն անուն կարդայ՝ բդեշխ գուգարացւոց. որ էր լեալ 'ի զաւակէ Միհրդատայ Դարեհի նախարարի, զոր ածեալ Աղեքսանդրի, թողեալ իշխան 'ի վերայ դերութեան իվերիացւոց ազգացն, զորս էած Նաբուգոդոնոսոր, որպէս Աբիւդենոս պատմէ այսպէս ասելով. Մեծազօրն Նաբուգոդոնոսոր բռնագոյն էր քան զԵրակլէս լեբիացւոց. զօրաժողով լեալ, հասանէր 'ի վերիացւոց աշխարհն, և վանեալ խորտակեալ ընդ ձեռամբ նուաճէր. և զման մի 'ի նոցանէ յաջակողմն Պոնդոս ծովու յարեւմուտս տարեալ բնակեցու-

ցանէր։ Իսկ 'ի հովտին մեծի Բասենոյ կարդէ նահապետութիւն զորդունին անուանեալ, որ 'ի զաւակացն Հայկայ։

Իսկ զայր խոժոռադէղ և բարձր և կոպտարանձն և տափաքիթ, խորանին և դժնահայեաց, 'ի զաւակէ Պապքամայ, 'ի Հայկակայ թոռնէ, Տորք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահադիմութեանն ձայնէին անգեղեայ, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուսակալ արեւմտից. և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անդեղ տուն։ Բայց եթէ կամիս, տես՝ և ես յաղագս նորա անյաջ և փցուն, որպէս Պարսիկք վասն Ռոստոմայ Սագճկի հարեւր և քսան փղոց ոյժ ասեն ունել։ Քանզի կարի ինն անյարմար թուէին նմա երդբանիցն վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոյն. որում՝ ոչ Սամսոնի և ոչ Երակլեայ և ոչ Սագճկին յարմարեն այս զրոյցքս։ Քանզի երդէին նմա բուռն հարկանել զորձաքար վիմաց ձեռաք, ուր ոչ դոյր

գեղութիւն, և Ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր. և քերել ըղընդամբք և կազմել որպէս տախտակ, և գրել նոյնպէս ըղընդամբք իւրովք արծուիս և այլս այսպիսիս: Եւ յեղերս ծովուն Պոնդոսի գիպեալնաւաց Թշնամեաց, գիմէ 'ի վերայ. և 'ի խաղալն նոցա 'ի խորն իբրեւ ասպարէզս ուԹ, և սա ոչ ժամանեաց նոցա. առնու, ասէն, վէմս բլրաձեւս, և ձգէ զկնի. և 'ի սաստիկ պատառմանէ ջուրցն ընկղմին նաւք ոչ սակաւք, և ամբարձումն ալեացն, որ 'ի պատառմանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն բազում մղոնս: Ա՜հ, կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպել: Բայց քեզ զի՞ է. քանզի էր արդարեւ սաստիկ հզօր, և այսպիսեաց զրուցացս արժանի:

Բայց զկնի դորա հաստատէ զմեծ նահապետութիւնն Ծովուց 'ի ջրրորդն կոչեցեալ Հայս: Այլ և զնախարարութիւնն Ապահունեաց և զԱնաւաղեանն և զԲզնունեանն 'ի նոյն զաւակացն Հայկայ. 'ի բնակ-

ջայց գտեալ պերճագոյն, տեարս կարդէ յանուն շինից և գաւառաց կոչելով։

Այլ մոռացաք և զդժնեայ Սլաքն անուանեալ այր. զոր ոչ կարեմ հաւատաւ ասել, 'ի Հայկայ՝ Եթէ յառաջագունից քան զնա եղելոց յաշխարհին, զոր հին զրոյցքն պատմեն լինել. բայց էր այր քաջ։ Զսա կարդէ ասկաւ արամբք պահել զլեառնն, որսալ զքոչն. որք անուանեցան Սլկունք։ Այսպէս և 'ի նոյն իրս և զՄիանդակն անդառնալի. և 'ի սմանէ Մանդակունք։

Բայց յորդւոցն Վահագնի գտեալ արս, որք ինքնակամ ինդրեցին զմեհենից պաշտամունս, պատուէ մեծապէս, 'ի ձեռն տալովնոցա զքրմութիւնն. և կարդէ ընդ առաջին նախարարութիւնան, և անուն կոչէ վահունիս։ Սապէս և զԱռաւենեանն և Զարեհաւանեանն գրեալ 'ի զարմից առաջին Թագաւորացն, կարդէ 'ի նոյնանուանս աւանս։

Եւ զՇարաշան 'ի տանէ Սանա-
սարայ հաստատէ բդեշխ մեծ և կու-
սակալ յարեւմտից հարաւոյ, յե-
զեր սահմանացն Ասորեստանի, առ
ափն Տիգրիս գետոյ. գաւառս պար-
գեւելով զԱրձն, որ շուրջ զնովաւ,
և զլեառն Տաւրոս, ուր և Սիմ, և
զԿիլիսուրն ամենայն։

Իսկ զՄոկացին 'ի նոյն գաւառէ
գտեալ այր, որ ունէր ընդ իւրեաւ
սրիկայս բազում, նախարարու-
թիւնս հաստատէ։ Նոյնպէս և զԿոր-
դուացիս, զԱնձեւացիս, զԱկէա-
ցիս 'ի նոյն գաւառաց։ Իսկ զՌըշ-
տունիս և զԳողթնեցիս գտի պատ-
մեալ 'ի Սիսականէն արդարեւ հա-
տուած. ոչ գիտեմ, թէ յանուն
արանցն զգաւառն անուանեն, և
թէ յանուն գաւառացն զնախա-
րարութիւնսն կոչեցեալ։

Իսկ յետ այսր ամենայնի մեհեան
շինեալ յԱրմաւիր, անդրիս հաս-
տատէ արեգական և լուսնի և իւ-
րոց նախնեաց։ Եւ աղերսեալ որ 'ի
Հրէից Շամբայ Բաղարատ, որ և
Թագադիր և ասպետ, հանդերձ

հարկեցուցանող բանիւք, թողուլ զօրէնս հրէութեան, և պաշտել զմեհեանս. զոր չառեալ յանձն, բառ կամաց թողու զնա արքայն Վաղարշակ։

Հրաման տայ և զքաղաքն Շամիրամայ նորոգել, և յայլ բազում տեղիս շինել քաղաքս բազմաբնակս, և շէնս գլխաւորս և մարդախիտս։

Եւ օրէնս իմն հաստատէ 'ի տան թագաւորութեան իւրոյ, և ժամն որոշէ էլեւմտից և խորհրդոց և խրախճանութեանց և զբօսանաց։ Եւ կարգս զինուորութեանց. և նոցունց առաջինս և երկրորդս և երրորդս, և որ 'ի կարգին։ Եւ յիշեցուցանողս երկուս 'ի ձեռն գրոյ. այլ ոմն զբարի յիշողութիւնն առնելով, և այլ ոմն զվրէժխնդրութեանցն։ Եւ բարւոյ յիշեցուցանողին հրաման տայ՝ 'ի բարկութեան արքայի և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել զնրաւն և զմարդասիրեալն։ Իրաւարարս 'ի տան արքունի, իրաւարարս 'ի քաղաքս և յաւանս։ Հրաման տայ քաղաքացեաց

մարդկան արդոյ և պատիւ լինել քան զգեղջկաց, և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զնշխանս. և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և անհնախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք. և որ ինչ նման այսոցիկ:

Եւ քանզի բազում ունէր ուսումերս, պատշաճ վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ 'ի Մծբին. վասն որոյ առաքէ զնոսա բնակել 'ի գաւառս Հաշտենից, և 'ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ. 'ի նոսա թողլով զչէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն և ռոճկաց կարգելոց յարքունուստ: Եւ միայն զառաջին որդին իւր, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր 'ի համար թագաւորութեան, և զնորին ուստր՝ զոր անուանեաց Արտաշէս, և յոյժ սիրեցեալ. քանզի էր արդարեւ տղայն կայտառ և հզօր մար-

մնով. որպէս զի կարծիս հայեցողացն տալ՝ որ 'ի նմայն աձեալոց էին արուեստիւնք։ Եւ եղեւ այս յայնմ հետէ և առ յապայ օրէնք 'ի մէջ Արշակունեաց, միոյ որդւոյ բնակել ընդ արքայի՝ փոխանորդ լինել թագաւորութեանն, և այլ ուստերաց և դստերաց գնալ 'ի կողմանս հաշտենից՝ յազգին Ժառանգութիւն։

Բայց Վաղարշակ յետ այսպիսեաց արութեանց և բարեկարգութեանց մեռանի 'ի Մծբին, թագաւորեալ ամս քսան և երկուս։

Թ. Յաղագս մերոյ Արշակայ առաջնոյ, և նորին գործոյ։

ԱՐՇԱԿ որդի Վաղարշակայ թագաւորէ 'ի վերայ Հայոց ամս երեքտասան. նախանձաւոր և հեռեւոզ Հայրենի առաքինութեանցն լեալ, բազում կարգս ուղղութեանց գործեաց, պատերազմելով ընդ Պոնդացիս, և նշանակ եթող յեղեր ծովուն մեծի. զնիզակն իւր զբոլորատեղ, որ էր արեամբ զեռնոց

վեալ, ձգեալ 'ի հետեւակուց՝ խո-
լոգոյնս նստոյց յերկանաքար ար-
ձանին, զոր կանգնեաց 'ի ծովե-
զերն։ Զայս արձան բազում ժա-
մանակս պատուէցին Պոնդացիք որ-
պէս զաւռ 'ի յաստուածոց գործ։
Իսկ 'ի գոռալն Արտաշիսի միւսան-
գամ ընդ Պոնդացիս, ընկէցեալ ա-
սեն զարձանն 'ի ծով։

Ի սորա աւուրս աղմուկ մեծ
լեալ 'ի գօտիս մեծի լերինն Կաւ-
կասու յաշխարհին Բուլղարայ, և
բազումք 'ի նոցանէ հաստուածեալք
եկին յաշխարհս մեր, 'և բնակեցան
նեղքոյ Կողայ՝ յարգաւանդ և 'ի
հացաւէտ տեղիս բազում ժամա-
նակս։

Ի սմանէ նեղեալ որդիք Բագա-
րատայ վասն զկռուս պաշտելոյ,
երկու 'ի նոցանէ սրով կատարեցան
արիաբար 'ի վերայ հայրենի օրի-
նացն. զորս ոչ պատկառեմ ասել
հետեւողքնեալ Անանիանցն և Եղիա-
զարանց։ Բայց այլքն յանձն առ-
նուն այսչափ միայն, 'ի շաբաթու
հեծանել յորս և 'ի պատերազ-

մունս, և զմանկունս թողուլ անթլփատս, յորժամ լինիցին. քանզի անկին էին։ Եւ հրամայեցաւ յԱրշակայ մի տալ նոցա կանայս յամենայն նախարարութեանցն, եթէ ոչ ուխտ պայմանի հաստատեսցեն՝ թողուլ զթլփատութիւնն։ Զորս յանձն առնուն զերկուսս զայս միայն, այլ ոչ զերկրպագութիւն կռոցն։

Ատանօր սպառին բանք ծերունւոյն Մար Աբաս Կատինայ։

Ժ. Եւ ասէ ասպէ էգիպ զպատմութիւնն զնի մատենիցն Մար Աբաս Կատինայ։

ՍԿԻԶԲՆ արասցուք պատմել քեզ 'ի հինգերորդ գրոցն Ավրիկանոսի ժամանակագրի, որում վկայէ Յովսեպոս և Հիւպոլիտոս և այլք բազումք Յունաց։ Քանզի նա բովանդակ փոխադրեաց և որ ինչ 'ի քարտէսս դիւանին Եդեսիայ՝ որ է Ուռհայ, որ յաղագս Թագաւորացն մերոց պատմէր. որ մատեանքն 'ի Մծբնայ էին փոխեալ

անդր, և 'ի Սինոպայ Պոնդոսէ 'ի մեհենական պատմութեանցն։ Մի՛ ոք անհաւատասցի, քանզի մեզէն իսկ ականատես եղաք այն գիւանին։ Եւ վկայ քեզ 'ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկղեսիաստէ գիրք Եւսեբի կեսարացւոյ, զորս էաւ Թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց 'ի հայ լեզու։ Խնդիր արասցես 'ի Գեղաքունի 'ի գաւառին Սիւնեաց, և գտցես յառաջին հաղներդութեանն յերեքտասաներորդ թուին, զի վկայէ յԵդեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջին թագաւորացն մերոց մինչեւ ցԱբգար, և զկնի Աբգարու մինչեւ ցԵրուանդ։ Որ այժմ կարծեմ գտանի պահեալ 'ի նոյն քաղաքի։

ԺԱ. Յաղագս մերոյ առաջնոյ Արտաշիսի, և յաթշտակելոյ ընտիրագահուրինն։

ԱՐՏԱՇԷՍ թագաւորէ Հայոց փոխանակ Արշակայ հօր իւրոյ 'ի

քան և 'ի ջորդորդ ամի Արշակա-
նայ Պարսից արքայի. և յաւաջա-
դէմ եղեալ, ոչ զերկրորդականն ու-
նի գահ, այլ զաւագութեան թեկն
ածէ. որում հաւանեալ, յանձն
առնու Արշական տալ նմա զնա-
խագահութիւնն։ Քանզի էր այր
հպարտ և պատերազմասէր. որ և
արքունիս իւր 'ի Պարսից աշխարհին
շինեաց, և դրամ առանձին զիւր
պատկերն հարկանէր. և զԱրշա-
կան ընդ իւրով ձեռամբ կացուցա-
նէր թագաւոր Պարսից, որպէս
զՏիգրան որդի իւր՝ Հայոց։

Բայց տայ զՏիգրան որդի իւր
ցպատանի ոմն Վարաժ անուն, որ-
դի Դատայ, որ 'ի զաւակէ Գառնը-
կայ՝ որ 'ի Գեղամայ, քանզի էր
պատանին նշաւակ 'ի նեռաձգու-
թիւն կորովութեան, ուսուցանել
զՏիգրան։ Զնա իշխան արքունա-
կանացն արարեալ որսոց, և շէնս
պարգեւեալ նմա առ Հրազդան գե-
տով, յանուն նորա կոչի ազգն Վա-
րաժնունի։ Բայց զդուստր իւր զԱր-
տաշամայ տայ կին Միհրդատայ ու-

մեմն Վրաց բդեշխի մեծի, որ էր 'ի զաւակէ Միհրդատայ՝ Դարեհի նախարարի, զոր կացուցեալ էր Աղէքսանդր 'ի վերայ գերութեանն վերիացւոց, որպէս յառաջագոյն պատմեցաք. և հաւատայ սմա զկողմնակալութիւն հիւսիսային լերանցն և Պոնդոս ծովու։

ԺԲ. Խաղալն Արտաշէսի յարեւմուտս, և ձերբակալ առնել զԿրիս-սոս, և յերբակալ առնել զԿրիս-սոս։

ՅԱՅՆԺԱՄ հրաման տայ Արտաշէս զոր յարուցանել յարեւելից և 'ի հիւսիսոյ բազում յոյժ, մինչեւ ոչ գիտել նմա զհամարն, այլ յանցս և յիջեւանս քար ըստ մարդաթուի կարկառ՝ նշան բազմութեանն թողուլ։ Խաղայ յարեւմուտս, և ձերբակալ արարեալ զԿրիսոս թագաւոր Լիւդացւոց։

Եւ գտեալ յԱսիայ զԵնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպողոնի, տայ

քերել յաշխարհս մեր, զի կանգ-
նեսցեն յԱրմաւիր։ Զոր առեալ
քրմապետացն, որ էին յազգէ Վա-
հունեաց, զԱպողոնին և զԱրտե-
միդայն կանգնեցին յԱրմաւիր. իսկ
զՀերակլայն զառնասպատակերն, զոր
արարեալ էր 'ի Սկիւղեայ և 'ի Դի-
պինոսէ կրեսացւոյ, զԱհագն իւ-
րեանց վարկանելով նախնի, կանգ-
նեցին 'ի Տարօն յիւրեանց սեփհա-
կան գեւղն յԱշոիշատ, յետ մա-
հուանն Արտաշիսի։

Բայց Արտաշիսի նուաճեալ զցա-
մաքս միջոցաց ծովուցն երկոցունց,
ընդ զՈվկիանոս բազմութեամբ նա-
ւաց, ծառայեցուցանել կամելով
զբոլոր արեւմուտս։ Քանզի մեծ
յոյզք խռովութեան եղեալ 'ի Հռ-
ովմէ, ոչ ոք ընդդիմանայ նմա հզ-
ւրասէս։ Այլ ոչ գիտեմ ասել յոր-
պիսի ազգմանէ, ահագին իմն աղ-
մուկ լեալ շփոթիչ, բազմութեան
զօրացն զմիմեանս կոտորեալ. իսկ
Արտաշէս փախուցեալ մեռանի,
որպէս ասեն, յիւրոց զօրաց. թա-
գաւորեալ ամս քսան և հինգ։

Բայց և յԵլլադայ առեալ պատ-
կերս զԴիոսի, զԱրտեմիդայ, զԱ-
թենայ, զԵփեսաու, զԱփրոդի-
տեայ, տայ բերել 'ի Հայս. որ ոչ
ժամանեալ միջամուտ լինել յաշ-
խարհս, լսեն զբօթ մահուանն Ար-
տաշիսի. և փախուցեալ ընկենուն
զպատկերսն յամրոցն յԱնի. և
քուրմք զնոցին զհետ լինելով, դա-
դարեն առ նոսա,

ԺԳ. Վկայութիւն փիլիսոփայու-
թեանն Արտաշիսի Ի կոդէլոյն ՉԿրի-
սոս, յայլոց պատմագրաց:

ԶԱՅՍ ասացեալ պատմագրացն
Յունաց, ոչ միոյ կամ երկուց, այլ
բազմաց. ընդ որ տարակուսեալ մեր՝
բազում խոյզ խնդրոյ արարաք:
Քանզի լսեաք 'ի պատմութեանց
ոմանց՝ Կիւրոսի սպանեալ զԿրիս-
տոս, և բարձեալ զթագաւորու-
թիւնն Լիւդէացւոց: Եւ դարձեալ
պատմի առարկութիւնն Կրիւսեայ
և Նէքտանեբայ. և Նէքտանեբոսս
այս վերջին թագաւոր է Եգիպատա-

ցոց 'ի Մանեթոսէ պատմեալ, զոր ոմանք հայր Աղէքսանդրի ասացին։ Եւ գտանեմք զԺամանակս Կրիւսոսի երկերիւր ամաւ յառաջ քան զՆէքտանեբայ, իսկ զՆէքտանեբայ Ժամանակս աւելի եւս երկերիւր ամաւ յառաջ եղեալ քան զառաջին Արտաշիսի Թագաւորի Հայոց։

Բայց քանզի բազումք են, որ ասեն զԿրիւսոս մերոյ Արտաշիսի կալեալ, և ոՀով ինն պատմեն, ես հաւանիմ։ Քանզի ասէ Պոլիկրատէս այսպէս. Վէհ ինձ Արտաշէս Պարթեւ քան զՄակեդոնացին Աղէքսանդր, զի կալով յիւրում աշխարհին, իշխեաց Թեբայ և Բաբելոնի. և չեւ ընդ Ալիւսա գետ անցեալ, զլիւդականն սատակեաց զզօրս, և կալաւ զԿրիւսոս. և յառաջ քան յԱսիայ հասանելն՝ յԵստիկէ դղեկին քարոզեցաւ։ Աւա՜ղ բախտին. միայն Թէ 'ի տէրութեանն և ոչ 'ի փախստեան էր վախճանեալ։

Հանդոյն դմին ասէ Եւսեբիոս. Փոքր Աղէքսանդրի և Դարեհի պա-

տերազմ առ Արտաշիսին բաղդա-
տեալ. քանզի նոցայն ոչ փոշւոյն
մաքուր երեւէր լոյս տուընջեանն,
այլ սա ծածկեաց նեռաձգու-
թեամբն և ստուերացոյց զարե-
գակն, ձեռագործ գիշեր զմիջօրէիւ
արարեալ: Ոչ փախստեայ համբա-
ւաբեր Լիւդացւոցն թողեալ. այլ
և զթագաւորն նոցին զԿրիւսոս 'ի
տապակի հրամայեաց կացուցանել:
Վասն սորա և ոչ ուխք զգեան ըս-
տուերացուցին, արբամբն 'ի ձմեռ-
նային նուազութիւն իջուցանելով.
վասն զի և զթուոցն եցոյց տկար՝
բազմութեամբ զօրացն, մինչ զի
չափոյ պէտք եղեն առաւել քան
զհամարոյ: Ընդ այս ոչ հպարտա-
ցեալ, այլ արտասուեաց ասելով.
Աւաղ փառացս անցաւորի:

Գրէ և Կամագրոս այսպէս. Խաբ-
կանք լինէին հպարտացելոցն Լիւ-
դացւոց, Կրիւսեայ Պիւթիայ հար-
ցուկն պատասխանելով. Կրիւսոս
անցեալ ընդ Ալիւս գետ քակեաց
զնշխանութիւնս: Զոր նորա զո-
տարաց կարծեցեալ. զինքն քակէ.

քանզի կալեալ զնա պարթեւին Արտաշիսի, հրամայեաց հանել յերկաթեղէն տապակ։ Իսկ Կրիւսոսի յիշեալ զբան Սողոնի աթենացւոյ, ասէ յիւր լեզուն. Ո՛վ Սողոն Սողոն, գեղեցիկ բարբառեցար, ոչ երանեալ զբարեբախտութիւն մարդոյ մինչեւ ցվախճան։ Եւ լուեալ որ մերձն կային, պատմեցին Արտաշիսի, եթէ զնոր ոմն աստուած կարդայ Կրիւսոս։ Եւ գթացեալ Արտաշիսի, հրամայեաց ածել. և հարցեալ և ուսեալ, թէ զինչ է որ աղաղակեացն, հրամայեաց ներել զտանջանսն։

Գրէ և Փիլեդոնիոս. Ամենայն թագաւորաց հուժկու եղեալ պարթեւն Արտաշէս, և ոչ միայն զԼիւդացիս վանեալ և զԿրիւսոս կապեալ, այլ յԵլէսպոնտոս և 'ի Թրակէ զտարերացն փոխեաց զբնութիւն. ծովագնաց ընդ երկիր բերեալ լինէր, և ընդ ծով հետեւակելով. թեւակոծացեալն սպառնալով, և համբաւն հիացուցանէր զհելլենականն։ Կործանեաց զԼա-

կեղեմոնացիս, փախոյց զՓոկէացիս, ՝ի՛ոլկրացեք անձնատուրք Է-ղեն, բիւռացեք մատն էն ՝ի կազմածոյ նորա. առ հասարակ նմա Եղլադայ մատուցանէր զահն։ Յետ փոքու ժամանակի աղէտք անցին զամենեքումբք. ոչ այնքան թշուառացաւ Կիւրոս ընդ Մասքութս պատերազմելով, ոչ այսպիսի կիրս կրեաց Դարեհ ՝ի Սկիւթացւոցն պահուստ, և ոչ Կամբիւսէս յԵթիոպացիս. փոքր և Քսերքսին յԵլլադայ զօրու երթալն, թողլով նոցա զգանձս և զիսորանս, միայն կենդանի փախուցեալ մազապուր։ Այլ սա մեծամեծ յաղթանակօք պանծացեալ, ՝ի յիւրոց զօրացն խողխողի։

Արդ էս հաւատարմութեան արժանի համարիմ զայսոսիկ պատմութիւնս. և զայն Կրիւսոս, որ առ Կիւրոսիւ և կամ Ներքսանեբաւն պատմին, կամ սուտ լեալ և կամ միով անուամբ բազում թագաւորաց վարեալ, որպէս յոլովից է սովորութիւն։

ԺԴ. Յաղագս Ռաքաւորութեանն Տիգ-
բանայ մինչոյ և ընդդէմ կուլոյ զօրացն
Յունաց, և զմեհեանն շինելոյ, և ար-
շաւանս առնելոյ 'ի Պաղէստինէ։

ՅԵՏ Արտաշիսի առաջնոյ թա-
գաւորէ Տիգրան որդի նորա յինն-
եւատանեւրորդ ամի Արշանակայ թա-
գաւորի Պարսից։ Եւ ժողովեալ
զզօրս Հայոց, ընդդէմ երթայ զօ-
րացն Յունաց. որք յետ մահուանն
Արտաշիսի հօրն իւրոյ և ցրուելոյ
զօրացն՝ հետամուտ լեալ դիմեալ
գային յաշխարհս մեր։ Որոյ ընդ-
դէմ պատահեալ Տիգրանայ, ար-
գելեալ 'ի վերջ նահանջէ։ Եւ 'ի
քեռայր իւր Միհրդատ հաւատա-
ցեալ զՄաժաք և զհոգս մէջեր-
կրայցն, և զօր բազում թողեալ
նմա, դառնայ յաշխարհս մեր։

Առաջին գործ զմեհեանն շի-
նել կամեցաւ։ Իսկ քրմացն, որ ե-
կեալ էին 'ի Յունաց, զմտաւ ա-
ծեալ՝ զի մի 'ի խորագոյն Հայս վա-
ղիցին, պատճառեցան ըղձութիւնս,
իբր թէ դիւքն անդէն կամին զբնա-

կին։ Որում հաւանեալ Ցիպրան, կանգնեաց զոլոմպիական պատկերն Դիոսի յամուրն յԱնի, և զԱթենաս 'ի Թիլ, և զԱրտեմիդայ զմեւս պատկերն յԵրիզայ, և զԵվեատոն 'ի Բագայատինջ։ Բայց զԱփրոդիտայ զպատկերն իբրեւ Երակղէայ տարփաւորի՝ առ նորին պատկերին Երակղէայ հրամայեաց կանգնել յաշտից տեղիսն։ Եւ ցասուցեալ ընդ վահունիսն, եթէ ընդէր յիւրեանց սեպհականին խլեսցին կանգնեցին զպատկերն Երակլի առաքեալ 'ի նորին հօրէ, ընկենու զնոսա 'ի քրմութենէն, և զգեւսն յարքունիս առնու, յորում պատկերքն կանգնեցան։

Եւ այսպէս մեհեանս շինեալ, և առաջի մեհենիցն բագինս կանգնեալ, զոհս ամենայն նախարարացն հրամայէ մատուցանել հանդերձ երկրպագութեամբ. զոր չառեալ յանձն ազգին Բագրատունեաց, զմիոյ զլեզուն հատեալ, որում անուն էր Աւուդ, վասն պատկերացն անարգութեան, և ոչ այլ

իւնք խոշանդէ. քանզի յանձն առին ուսել 'ի զոհից և զմիս խոզի, թէպէտ և ոչ ինքեանք զոհեցին երկրպագութեամբ։ Վասն որոյ առնու 'ի նոցանէ 'ի բաց զնշխանութիւն զօրուն, բայց միայն զթագակապ ասպետութիւնն ոչ հանէ։ Ինքն իջանէ 'ի Մինջագեաս, և գըտեալ անդ զԲարշամինայ զպատկերն, զոր 'ի փղոսկրոյ և 'ի բիւրեղէ կազմեալ էր արծաթով, հրամայէ տանել կանգնել յաւանին Թորդան։

Եւ նոյն հետայն դիմէ յաշխարհն Պաղեստինացւոց՝ վրէժ պահանջել 'ի Պաղոմայիդ Կղէոպատրայ յաղագս Դիոնիսի որդւոյ նորա առ հայր իւր յանցանաց։ Առեալ գերի բազում և 'ի Հրէից, նաև շուրջ զՊաղոմայիդ քաղաքաւ։ Իսկ դշխոյն Հրէից Աղէքսանդրիայ, որ և Մեսալինայ, որ էր լեալ կին Աղէքսանդրի, որդւոյ Յոհաննու, որդւոյ Շմաւոնի, եղբօր Յուդայ Մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից,

ինչս բաղումս տալով դարձոյց զնա անտի։ Քանզի էր լուեալ և համբաւ, թէ Վայկուն ոմն անուն յեղուզակ խռովէ զերկիրն Հայոց, զլեառն ամուր կալեալ. որ և այժմ յանուն յեղուզակին կոչին վայկունք։

ԺԷ. Դիմոֆ 'ի մէջ Պոմպիոսի Հռոմայեցւոց զօրավարի, և առնուլն զԱՄՃՈՓ, և մահն Միհրդատայ։

ՅԱՅՆՄ ժամանակի Պոմպիոս Հռովմայեցւոց զօրավար զօրք բազմաք եկեալ հասեալ 'ի մէջերկրայս, զԱկաւրոս սպարապետ իւր յԱսորիս առաքէ՝ տալ պատերազմ ընդ Տիգրանայ։ Որոյ եկեալ, և ոչ պատահեալ Տիգրանայ, քանզի էր դարձեալ յիւր աշխարհն վասն խուճապանաց յեղուզակին, անցեալ Սկաւրոս 'ի Դամասկոս, և տեսեալ զքաղաքն առեալ 'ի Մեսեղայ և 'ի Ղուղայ, զնոսա հալածեալ անտի, ինքն 'ի Հրէաստան փութայր հասանել 'ի վերայ Արիստաբուղի օդ-

նականութեամբ եղբօր նորա Էրի-
ցու՝ Հիւրականու քահանայապե-
տի, որդւոյ Ալէքսանդրի։

Իսկ Պոմպէոս պատերազմեալ ընդ
Միհրդատայ, տեսանէ սաստիկ ընդ-
դիմակացութիւնս և ահագին մար-
տս, և վտանգի յոյժ. սակայն բազ-
մութեանն յաղթեալ, փախստա-
կան լինի Միհրդատ 'ի կողմանս
Պոնդոսի։ Յորմէ իբր թէ զերծեալ
Պոմպէոս, որուսմանն ոչ ունէր, և
առեալ զՄաժաք, և կալեալ զոր-
դի նորա զՄիհրդատ, նստուցանէ
զոր 'ի քաղաքին. և ինքն ոչ հետա-
մուտ լինել նմա, այլ ընդ Ասորիս 'ի
հրէաստան փութայ հասանել։ Եւ
'ի ՀԵՌՆ հօրն պոնդացւոյ Պիղատոս
զՄիհրդատ ապանանէ թունա-
ւոր դեղովք։ Վկայէ այսմ բանիս
և Յովսէպոս 'ի Հռոմին, որ վասն
ապրանքին պատմէ, այսպէս ասե-
լով. Պոմպէի հուպ յԵրիքով հա-
սանէն աւետիք մահուանն Միհրդ-
դատայ։

Ժ.Զ. Յաղագս յարքայական Տիգրանայ 'ի Վերայ զօրացն հռոմայեցւոց, և խոյս տալ Գաբիանոսի, և արքայական զմանուն Միհրդատ։

ԻՍԿ թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւն հրէից նստուցեալ 'ի յԱրմաւիր և 'ի յաւանին Վարդգէսի, որ 'ի վերայ Քասապ գետոյ, և զյեղուզական բնաջինջ արարեալ 'ի լեռնէն, և զսուգն Միհրդատայ կատարեալ, խաղայ գնայ յԱսորիս 'ի վերայ զօրացն հռոմայեցւոց՝ առ 'ի վրէժս պահանջել։ Ընդդէմ նորա գայ Գաբիանոս սպարապետն հռովմայեցւոց, զոր թողեալ էր Պոմպիոս 'ի դառնալն իւրում 'ի Հռոմ. և Գաբիանոս ոչ իշխեաց 'ի դիմի հարկանել Տիգրանայ, դառնայ յԵփրատայ յԵգիպտոս, զՊտղոմէոս ունելով պատճառս։ Եւ գաղտնի հաշտութիւն խօսեցեալ ընդ Տիգրանայ, տայ զքեռորդին նորա զպատանին Միհրդատ, զորդին Միհրդատայ, զոր կալեալ էր

Պոմպէի 'ի Մաժաք, ասելով թէ գաղտ գնաց։

ԺԷ. Պապէրաղմ Կրասոսի, և ապա-
կոնն նորին 'ի Տիգրանայ։

ԶԿԱՍԿԱԾ առեալ հռոմայեցւոցն, զԳաբիանոս փոխէն, և զԿրասոս փոխանակ առաքէն. որոյ եկեալ և առեալ զամենայն գանձս գտեալս 'ի տաճարին Աստուծոյ յԵրուսաղէմ, խաղայ 'ի վերայ Տիգրանայ։ Եւ անցեալ ընդ Եփրատ, ստատակի ամենայն զօրքն հանդերձ 'ի պատերազմէն ընդ Տիգրանայ։ Զորոյ ժողովեալ Տիգրանայ զգանձսն, դառնայ 'ի Հայս։

ԺԸ. Թէ ուրդէս Կասսիոս ընդդիմակոյ էղէ Տիգրանայ, և ապստամբէն Միհրդատայ, և շինէն զԿէսարիայ։

ԶՁԱՐԵԱԼ հռոմայեցւոց, առաքէն զԿասսիոս անթիւ զօրք։ Այս եկեալ և ընդդէմ կացեալ, չայայ թոյլ զօրացն Հայոց անցանել

ընդ Եփրատ և առպատակել յԱ-
սորիս։

Զայսու ժամանակաւ թերահա-
ւատութիւն լեալ Տիգրանայ 'ի պա-
տանին Միհրդատ, չկարծելով ին-
քեան քուէր որդի, չասայ նմա մասն
ինչ իշխանութեան, այլ և ոչ զիւր
աշխարհն Վրաց։ Եւ Միհրդատայ
արհամարհութիւն կրեալ 'ի քեռ-
ւոյն իւրմէ Տիգրանայ, ապստամ-
բութեամբ անկանի առ Կեսար. իշ-
խանութիւն դտեալ 'ի նմանէ զՊեր-
գեայ քաղաքի, զօրավիգ օգնակա-
նութեան լինի Անդիպատրոսի հօր
Հերովդի, Կեսարու հրամանաւ։
Սա շինէ զՄաժաք ընդարձակա-
գոյն և պայծառ շինուածովք, և
անուանէ Կեսարիայ 'ի պատիւ Կե-
սարու։ Եւ յայնմ հետէ բարձեալ
լինի իշխանութիւն Հայոց 'ի քա-
ղաքէն յայնմանէ։

ԺԹ. Յաղագս միաբանութեան Տիգրանայ և Արտաշիրի, և առաքելական սպասաւորի 'ի Պաղեստինէ, և գերութեան Հիւրկանոս քահանայապետի և այլ բազմութեան հրէից։

ՅԵՏ այսր ամենայնի 'ի հիւանդութիւն եղեալ Տիգրան, ազերսէ 'ի սէր զԱրտաշէզ ալքայ Պարսից, յաղագս հպատակութեան հօրն՝ հանելով 'ի նոցանէ զնախագահութիւնն։ Իսկ սա իւրովք կամաք զերկրորդականն ունելով ըստ իրաւանց, դարձուցանէ 'ի նա զնախագահութիւնն. և 'ի հաշտութիւն ածեալ զԱրտաշէզ, առնու 'ի նմանէ զոր յօգնականութիւն ինքեան։ Յայնմ ժամանակի առեալ Տիգրանայ զԲարզափրան նահապետ ըստ ուսուցանելոյ նախարարութեանն, սպասարկեա կացուցանէ Հայոց և Պարսից զօրաց, և առաքէ 'ի վերայ զօրացն հռովմայեցւոց, հրաման տուեալ զբնակիչս աշխարհին Ասորւոց և պաղեստինացւոց 'ի հաշտութիւն հաւանութեան խօսել։ Նմա ընդ

առաջ լինի ոմն Պակարոս անուն, որոյ հայրն Թագաւոր լեալ Ասորւոց, և ինքն խնամի Անտիգոնեայ արիստաբուղեանց։ Եւ եկեալ առ Բարզափրան նահապետ ըռըշաունեաց և սպարապետ Հայոց և Պարսից, և խոստանայ հինգ հարեւր կին գեղեցիկ և հազար քանքար ոսկւոյ, զի օգնեսցէ նոցա՝ ընկենլով 'ի Թագաւորութենէ Հրէից զՀիւրկանոս, և Թագաւորեցուցանէ զԱնտիգոնոս։

Իբրեւ եառեալ Հիւրկանոս Հրէից քահանայապետ և Թագաւոր, և Փասայելոս եղբայր Հերովդէի, եՀԷ զզօրս հռոմայեցւոց փախստական արարեալ, զոմանս 'ի ծով, զոմանս 'ի քաղաքս, խաղաղութեամբ ընդ երկիրն անցանէր Բարզափրան, խօսին և ինքեանք զխաղաղութիւն առ Բարզափրան։ Եւ նորա զգնել ոմն տակառապետ արքային Հայոց, որ էր յազգէն գնունեաց, առաքէ յԵրուսաղէմ հանդերձ հեծելաւորու, իբր թէ 'ի պատճառս խաղաղութեան. բայց 'ի գաղտնիս՝ օգ-

նել Անտիգոնեայ։ Եւ Հիւրկանոս զտակառապետն ամենայն զօրքն ոչ ընդունէր յԵրուսաղէմ, այլ միայն հինգ հարեւր հեծելով։ Եւ տակառապետին դաւով խրատ տուեալ Հիւրկանու՝ զի առ Բարզափրան երթիցէ վասն աւերածոյ աշխարհին, և ինքն խոստանայր լինել բարեխօս։ Եւ Հիւրկանու երդումն խնդրեալ 'ի Բարզափրանայ, երդնուն մա յաբեգակն և յամենայն պաշտամունս իւրեանց երկնայինս և երկրայինս, և յարեւ Արտաշէզի և Ցիդրանայ։ Ընդ որ վստահացեալ Հիւրկանոս, թողու զՀերովդէս 'ի վերայ Երուսաղէմի, և զփաստայելոս երէց եղբայր Հերովդէի առեալ ընդ իւր, գայ առ Բարզափրան 'ի ծովեզրն՝ 'ի գեօղն որ կոչի Եքսիպոն։

Եւ Բարզափրան խորամանկութեամբ պատուէր զնոսա. և ինքն յանկարծակի դնացեալ անտի, մնացելոց զօրացն հրաման տայր 'ի բուռն առնուլ զնոսա, և 'ի ձեռն Անտիգոնի մատնել։ Եւ Անտիգոնոս 'ի վերայ Հիւրկանու անկեալ, զա-

կանչն ատամամբքն 'ի բաց կտրէր. զի թէ և այլ ժամանակ փոխեսցի, անհնար լիցի նմա զքահանայապետութիւնն ունել, քանզի օրէնքն զողջանդամն հրամայեն կացուցանել քահանայս։ Եւ Փասայէլ եղբայր Հերովդի Իւրովի զարկեալ զգլուխ իւր զքարի, առաքեցաւ ընժիկ յԱնտիգոնէ, իբր թէ բժշկել զնա. Եւ ինչ զվէրն թունաւոր դեղովք, և վախճանեցոյց։

Եւ Բարզափրանայ հրաման տուեալ տակառապետին Հայոց յԵրուսաղէմ զՀերովդէս որսալ. իսկ տակառապետն երեալ արտաքս քան զպարիսպն, զՀերովդէս պատրել. զոր չառեալ յանձն Հերովդի, այլ և ոչ կալ 'ի քաղաքին, երկուցեալ 'ի պատառմանէ անտիգոնեանցն, 'ի գիշերի 'ի ծածուկ ընդանեօքն հանդերձ առ եդոմայեցիս փախչէր. 'ի Մասադան յամուր թողեալ զընտանիսն, ինքն 'ի Հռոմ փութայր հասանել։ Բայց զօրքն Հայոց ձեռնտուութեամբ անտիգոնեանցն յԵրուսաղէմ մնանեն՝ ոչ

ինչ ու�ք վնասեալ, բայց միայն զՀիւրկանու զինչն առնուին աւելի քան զերեքարիւր քանքար։ Եւ ընդ գաւառն ասպատակեալ, զՀիւրկանեանսն առեալ աւերէին. և զմարիսացւոց քաղաքն գերի առեալ, թագաւոր կացուցանելով զԱնտիգոնոս։ Եւ զՀիւրկանոս կապեալ ածէն Տիգրանայ հանդերձ գերութեամբն. և Տիգրան հրաման տայ Բարզափրանայ նստուցանել զգերին Հրէից՝ որ 'ի մարիսացւոց, 'ի քաղաքն Ղամիրամայ։ Եւ Տիգրանայ ոչ աւելի բաւեալ քան զերեամ յետ այնորիկ՝ վախճանի, թագաւորեալ ամս երեսուն և երիս։

Ի. Այլ պատերազմ հայոց ընդ ղօրս հռոմայեցւոց, և պարտութիւն Սիղոնի և Բէնդիդէայ։

ՀԵՐՈՎԴԷՍ անցեալ 'ի Հռովմէ առաջի Անտոնի և Կեսարու և սինկղիտոսին, զինքեան միամտութիւն առ հռովմայեցիսն պատմէ, և թագաւոր եղեալ Հրէաստանի

յԱնտոնինէ, առնու իւր զօրավիգ
օգնականութեան զԲենդիդիոս ըս-
պարապետ հռոմայեցւոց զօրք, 'ի
պատերազմել ընդ զօրս Հայոց և
քակել զԱնտիգոնոս։ Որոյ հասեալ
յԱսորիս, փախստական առնէ զզօրս
Հայոց, և զՍիլոն թողեալ ընդդի-
մակաց Հայոց մերձ 'ի յԵփրատ,
և զՊակարոս սպանեալ, դառնայ
յԵրուսաղէմ 'ի վերայ Անտիգոնի։
Իսկ Հայոց միւսանգամ օգնակա-
նութիւն գտեալ 'ի Պարսից, դի-
մեալ 'ի վերայ Սիլոնի, և փախչ-
տական 'ի Բենդիդիոս արկանէն,
հեղումն արեանց առնելովանբաւս։

ԻԱ. ԵՐԷ ՂԻՍԴ ԱՆՏՈՆԻՆՈՍ ԻՐՈ-
ՎԻ ԴԻՄԵԱԼ 'Ի ՎԵՐԱՅ ՁԶՐՈՅՆ ՀԱՅՈՑ,
ԱՌՆՈՒ ՂՇԱՄՇԱՊ։

ԶՁԱՐԵԱԼ Անտոնինոս, իւրո-
վի հասանէ ամենայն զօրք հռո-
մայեցւոց. և հասեալ 'ի Շամշատ,
լսէ զմահն Տիգրանայ. և առեալ
զքաղաքն, և թողեալ զՍովսիոս զօ-
րավիգն Հերովդի՝ մարտ դնել ընդ

Երուսաղէմի 'ի վերայ Անտիոքոնի, և ինքն 'ի ձմերոց գնայ յԵգիպտոս։ Փութայր հասանել ըստ շամշուղթեան առնն կնամոլոյ, ցանկութեամբ վառեալ 'ի Կղէոպատրեայ դշխոյն Եգիպտացւոց։ Այս Կղէոպատրեայ դուստր է Պտղոմէոս Դիոնիսի, թոռն Պտղոմայիդ Կղէոպատրայ, և Հերովդի յոյժ սիրելի. վասն որոյ առաւել եւս յանձնէ Անտոնիոս զՀերովդէս Սովսիայ։ Որ և մարտուցեալ իսկ քաջապէս, առնու զԵրուսաղէմ. և ապանեալ զԱնտիգոնոս, թագաւորեցուցանէ զՀերովդէս ամենայն հրէաստանի և Գալիլեայ։

ԻԲ. Յաղագս Ռագաւորելոյն Արտաւազդայ, և պատերազմել ընդ Հռոմայեցիս։

ՀԱՅՈՑ թագաւորէ Արտաւազդ որդի Տիգրանայ։ Սա ժառանգեցուցանէ զերկրաս իւր և ըզքոյս 'ի գաւառս Աղիովսի և Աբբերանոյ, թողով 'ի նոսա զմանն

արքունի՝ որ 'ի չէնս այնմ գաւառաց, հանդերձ առանձին մոխց և ռոճկաց, ըստ օրինակի աղդականացն՝ որ 'ի կողմանս Հաշտենից. որպէս զի լինել նոցա պատուական նագոյն և առաւել թագաւորացն քան զայնս արշակունիս. միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ 'ի բնակութիւն արքայի։

Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց. այլ ուսելեաց և ըմպելեաց պարապեալ, մսրից և եղեգնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց. զնշավայրիս և զնոզս արածելով. զնմաստութենէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ և ստրուկ արդարեւ որովայնի լինելով, զաղբիսս մեծացուցանէր։ Սա բասրելով յիւրոց զորացն վասն առաւել պղերգութեանն և սաստիկ որկորամոլութեանն, մանաւանդ զի և զՄինչադեաս Անտոնի հանեալ էր 'ի նմանէ, զայրացեալ՝ հրաման տայր զոր յարուցանել զբիւրաւորս Ասորպա-

տական նահանգին և զբնակիչս լե-
ռինն Կաւկասու հանդերձ Աղուա-
նիւք և Վրօք. խաղայ ի Ջանէ 'ի
Միջագետս, և հալածական առնէ
զզօրս Հռոմայեցւոց։

ԻԳ. Զերբ-ի-ալ արարեալ Անտոնի-
ղԱրքա-ալդ։

ՄՈՐՆԶԵԱԼ առիւծաբար գա-
զանութեամբ Անտոնինոս, առա-
ւել եւս թունեալ 'ի Կղէոպատրայ,
քանզի քէն պահէր վասն լկանաց
իւրոյ հանոյն, որ 'ի Տիգրանայ. և
ոչ միայն Հայոց, այլ բազում թա-
գաւորաց լինէր մահաբեր, զի նո-
ցայոցն տիրեացէ իշխանութեանց։
Սակս որոյ բազում թագաւորս
սպանեալ Անտոնի, 'ի Կղէոպատրայ
հաւատայ զնոցա իշխանութիւնն,
բայց 'ի Տիւրոսէ և 'ի Սիդոնէ, և
որ միանգամ ընդ Ազատ գետոնն
էին։ Եւ առեալ զբազմութիւն զո-
ւրացն, դիմէ 'ի վերայ Արտաւազ-
դայ. և անցեալ ընդ Միջագետս,
կոտորէ անհնարին զզօրս Հայոց, և

ձերբակալ առնէ զարքայն նոցա։ Եւ դառնայ յԵգիպտոս պարգեւել Կղէոպատրի զԱրտաւազդ որդի Տիգրանայ, հանդերձ բազում ընչիւք յանկածէ պատերազմին։

ԻԴ. Յաղագս Թագաւորելոյն Արշամայ. և զառաջինն մանաւոր հարկիւ Հայոց հռոմայեցւոց, և արքայութիւն Հիւրկանոսի, և վասն նորին վանգ ազգին Բագրատունեաց։

Ի ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ամի 'ի կատարումն աւուրց Թագաւորութեանն Արշէզի, ժողովեալ զօրք Հայոց՝ հրամանաւ նորին Թագաւորեցուցին 'ի վերայ ինքեանց զԱրշամ, որ և Արշամ, որդի Արտաշիսի եղբօր Տիգրանայ, հայր Աբգարու։ Զսա ոմանք յԱտրուոց կոչեցին Մանուայ, ըստ յոլովից սովորութեան կրկին ունելով անուանս. որպէս Հերովդէս Ագրիպաս, և որպէս Տիտոս Անտոնինոս և կամ Տիտոս Յոսատոս։ Բայց քանզի 'ի նմին ամի վախճանեցաւ Արշէզ, Թող-

լով զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Արշաւիր, որ էր փոքրիկ մանուկ և տղայ, ոչ ոք էր որ օգնէր Արշամայ՝ ընդդէմ կալ հռոմայեցւոց. խօսի ընդ նոսա 'ի հաշտութիւն խաղաղութեան, տալով հարկս 'ի Միջագետաց և 'ի կողմանց Կեսարու 'ի ձեռն Հերովդի: Այս եղեւ սկիզբն Հայոց մասնաւոր մտանել ընդ հարկաւ հռոմայեցւոց:

Զայսու ժամանակաւ եղեւ մեծ ցասումն Արշամայ 'ի վերայ Ենանոսի ասպետի որուն թագակալի. քանզի նա արձակեաց զՀիւրկանոս Հրէից քահանայապետ, զոր գերեալ էր Բարզափրանայ ըռըշտուանոյ յաւուրս Տիգրանայ: Իսկ Ենանոս պատճառի ազգայի, ասելով՝ եթէ փրկանս խոստացաւ հարեւր քանքար. ակն ունելով առնուլ 'ի նմանէ. և յանձն էառ տալ: Վասն որոյ ժամադրութիւն 'ի վերայ նորա սահմանէ Արշամ: Եւ նորա առաքեալ զմի յեղբարց իւրոց 'ի Հրէաստան առ Հիւրկանոս,

որում անուն էր Սենեքիայ, զի տա-
ցէ ինչս վասն փրկութեան իւրոյ։
Եւ երթեալ առաքեալն յԵնանոս,
պատահէ սպանեալ Հերովդէս
զՀիւրկանոս, զի մի ինչ դաւ լեցի
թագաւորութեան նորա։ Արդ իբ-
րեւ եհաս ժամադրութիւնն և չսայ
գանձս փրկանացն Հիւրկանու Ենա-
նոս, բարկանայ 'ի վերայ նորա Ար-
շամ, և ընկեցեալ 'ի պատուոյն՝ հրա-
մայէ դնել 'ի բանտի։

Յայնմ ժամանակի քսութիւն
զնմանէ մատուցանէ արքայի Զօ-
րայ նահապետ ազգին գնթունեաց,
ասելով. Գիտեա, արքայ, զի տարբ-
տամբեալ 'ի քէն կամեցաւ Ենանոս,
խորհուրդ ընդ իս բերելով, զի եր-
գումն խնդրեսցուք 'ի Հերովդէէ
թագաւորէ հրէաստանի, իբր ընդ-
ունել զմեզ և տալ ժառանգու-
թիւն 'ի բնակ երկրի մերում. քան-
զի նորակոուտ ծանակեցաք յաշ-
խարհիս յայսմ։ Եւ իմ ոչ առնլով
յանձն, ասեմ ցնա. Ընդէր պատ-
ւինք զբուցքդ վաղնջուց և պառա-
ւեալ առասպելքդ, պագեսոինացիս

զմեզ վարկանելով։ Եւ նորա ան-
յուսացեալ լինէն, նմին իրի առա-
քեաց զքահանայապետն Հիւրկա-
նոս, և առաւել եւս 'ի Հերովդէէ
անյուսացաւ. այլ ոչ մեկնի 'ի դըր-
ժողութեան բարուցն, եթէ ոչ ար-
քայդ աճապարեսցես նմա։ Այս
քսութեանցս հաւատայ Արշամ.
հրամայեաց տանջանս պէս պէս 'ի
վերայ Ենանոսի կուտել. և վախ-
ճան գործոյն, կամ թողուլ 'ի սպառ
զօրէնս հրէութեան, և երկիր պա-
գանել արեգական, և պաշտել ըզ-
կուռս արքայի, ընդ որով հար-
կեալ արքայ տացէ նմա զնոյն իշ-
խանութիւնն, կամ կախել զփայ-
տէ և բնաջինջ լինել ազգի դորա։
Եւ սպանեալ մի յազգականացն ա-
ռաջի նորա, որում անուն էր Սա-
րիայ, և առ ընթեր զորդիսն մա-
տուցեալ 'ի տեղի սպանմանն, որոց
անուանքն Սափատիայ և Ազարիայ,
յերկիւղէ մահուան որդւոցն և 'ի
թախանձելոյ կանանցն կատարէ
զկամս արքայի՝ հանդերձ ամենայն
ազգատոհմիւն, և յառաջին պա-

տիւն իւր հաստատի։ Սակայն ոչ ամենեւին վատահացաւ 'ի նա արքայ. այլ առաքէ 'ի Հայս՝, հաւատալով նմա զաշխարհն, զի 'ի Մէջագետաց միայն հեռացուցէ։

ԻԵ. Գծպուրիւն ընդ Հերովդի Արշամայ, և ակամայ հնազանդութիւն։

ՅԵՏ այսր եղեւ խռովութիւն 'ի մէջ Հերովդի արքայի հրէաստանի և մերոյն արքայի Արշամայ։ Քանզի Հերովդէս, յետ բազում գործոց արութեանց, ձեռնամուխ լինի 'ի բարեգործութիւնս, շինուածս բազումս առնելով յոլով քաղաքաց, սկսեալ 'ի Հռովմէ մինչեւ ցԴամասկոս։ Խնդրեալ 'ի յԱրշամայ բազմութիւն արանց անարուեստից գործաւորաց, որովք զԱսորւոց զԱնտիոքայ զանանց և զանկոխ հրապարակն 'ի խոհերացն և 'ի տղմոցն՝ լցցէ։ Զոր չառեալ յանձն Արշամայ, զօրս ժողովէ ընդդիմանալ Հերովդի, և 'ի ձեռն հրեշտակաց յղէ առ կայսրն 'ի Հռոմ, զի

մի զնա ընդ խշխանութեամբ Հե-
րովդի արասցէ։ Իսկ կայսրն ոչ մի-
այն զԱրշամ չաղատէ յիշխանու-
թենէ Հերովդի, այլ և զամենայն
միջերկրայս նմա հաւատոյ։

Յայնմ ժամանակի Հերովդէս
զաներ Աղէքսանդրի որդւոյ իւրոյ,
որ էր 'ի հօրէ Տիմոնէ և 'ի մօրէ
Թագաւորութենէ Մարաց՝ 'ի զա-
ւակէ Դարեհի վշտասպեանց, ընդ
իւրով ձեռամբ Թագաւոր միջեր-
կրեացն կացուցանէր, առեալ իւր
'ի ապաստաւորութիւն տան գունդ
'ի գաղատացւոց և 'ի պոնդացւոց։
Տեսեալ զայն Արշամայ, երկրպա-
գէ Հերովդի խբրեւ տեառն ամենայ-
նի, տալով զոր խնդրէրն գործա-
ւորս. որովք լցեալ զհրապարակս
անտիոքացւոց քան վտաւանաւ
երկայնութեամբ, յատակեաց սպի-
տակ կճասալ յատակօք, զի ուխտ-
ւորքք յատակացն դիւրագոյնս կար-
գեսցեն առ ոչ ինչ ինաս առնել
քաղաքին։ Բայց Արշամայ վարեալ
զԹագաւորութիւնն ամս քսան,
վախճանեցաւ։

ԻԶ. ԹԱԳԱՒՈՐՈՒԻՆ ԱԲԳԱՐՈՒ, Ե ՄԱՆԵԼ ԲՈԼՈՐՈՎԻՄԲ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՀԱՐԿԱ ՀՌՈՄԱՅԵՑՈՑ. Ե ՊԱՊԵՐԱՂՄ ԸՆԴ ՂՕՐՈ ՀԵՐՈՎԷ, Ե ՍՊԱՆԱՆԵԼ ՂԵՂԲՕՐՈՐԷՆ ՆՈՐԱ ՂՅՈՒՍԻՆ:

ԹԱԳԱՒՈՐԻ Աբգար որդի Արշամայ 'ի քաներորդ ամի Արշաւրի արքայի Պարսից: Այս Աբգարէս կոչիւր աւագ այր՝ վասն առաւել հեզութեանն և իմաստութեանն. որում յեւոյ և ակն. զայս ոչ կարելով ուղղախօսել Յունաց և Ասորւոց, կոչեցին Աբգարիոս: Ի սորա երկրորդ ամի Թագաւորութեանն հարկին հռոմայեցւոց բոլորովիմբ ամենայն կողմանքն Հայոց: Քանզի հրամայեաւ յԱւգոստոս կայսերէ, որպէս ասի 'ի Ղուկայ աւետարանին, աշխարհագիր լինել ընդ ամենայն ազգերս. վասն որոյ և 'ի Հայս առաքեաւ գործակալք հռոմայեցւոց բերելով զպատկերն Աւգոստոսի կայսեր, կանգնեցին յամենայն մեհեանս: Զայսու ժամանակաւ լինի ծնեալ Փրկիչն մեր

Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ։

Զամին աւուրքեք լինի խռովութիւն 'ի մէջ Աբգարու և Հերովդի։ Քանզի Հերովդի հրամայեալ զիւր պատկերն հուպ 'ի կայսերական պատկերն կանգնել 'ի մեհեանս Հայոց, զոր ջառեալ յանձն Աբգարու, պատճառս 'ի վերայ նորա յուզէր Հերովդէս։ Առաքէ զզօրս Թրակացւոց և գերմանացւոց ասպատակաւ հինից յերկիրն պարսից, հրաման տուեալ ընդ աշխարհն Աբգարու անցանել։ Իսկ Աբգարու ոչ հաւանեալ, ընդդիմանայ ասելով, եթէ ընդ անսպատ է հրաման կայսեր անցանել զօրացդ 'ի յերկիրն Պարսից։ Ընդ որ դառնացեալ Հերովդէս, անձամբ ինչ ոչ կարէր վճարել, պէս պէս ցաւոց զնա ըմբռնեալ՝ վասն որոյ 'ի Քրիստոս համարձակեցաւ, որպէս պատմէ Յովսէպոս. առաքէ զեղբօրորդին իւր, որումն տուեալէր զդուստր իւր, որ էր յառաջ կին Փերուրի եղբօր իւրոյ։ Եւ նորա առեալ զբազմութիւն զօրացն, գայ հասա-

նէ յաշխարհն Միջագետաց, պա-
տահէ Աբգարու 'ի զօրանիստ գա-
ւառին Բուգնան. և մարտուցեալ
մեռանի, և զօրքն փախստական լի-
նին: Նոյն հետայն վախճանի և Հե-
րովդէս, և Հրէից աղգապետ զԱր-
քեղայոս նորին որդի Աւգոստոս
կացուցանէ:

ԻԷ. ՇԻՆՈՒԱԾ ԵՐԷՈՒԻՑ ԳԱՂԱՓԻ, ԵՒ
ՅԻՇԱՊԱՀՈՒՆ ՍԱՀԱՌՈՒՊ ԱՂԳԻ ՄԷՐՈՅ
ԼՈՍՈՍՈՐԻՆ:

ԶԿՆԻ ոչ բազում աւուրց վախ-
ճանի Աւգոստոս, և փոխանակ նո-
րա Թագաւորէ Հռոմայեցւոց Տի-
բեր. և Գերմանիկոս կեսար եղեալ,
ճաղէ զառաքեալսն 'ի Հռովմ զնշ-
խանս Արշաւրի և Աբգարու, յա-
ղագս պատերազմին նոցա՝ յորում
սպանին զեղբօրորդին Հերովդի:
Ընդ որ խոստացեալ Աբգարու, խոր-
հի ապստամբութիւն և պատրաս-
տութիւն պատերազմի: Յայնժամ
շինէ քաղաք զտեղի պահպանու-
թեան գնդին Հայոց, ուր յառա-

ջագոյն զգուշանային Եփրատու 'ի Կասպիոսէ, որ կոչի Եգեսիայ. և փոխէ 'ի նա զարքունիս իւր՝ որ 'ի Մծբին, և զամենայն կուռս իւր, զՆաբոդ և զԲէլ և զԲաթնկքաղ և զԹարաթայ, և զմատեանս մեհենից վարժարանին, և միանգամայն զգիւանս թագաւորացն։

Յետ այսր մեռեալ Արշաւիր, թագաւորէ 'ի վերայ Պարսից Արտաշէս որդի նորա։ Արդ թէպէտ և ոչ է կարդ պատմութեանս 'ի ժամանակի, և ոչ ըստ կարգի՝ զոր ասէր ձեռնարկեցաք, այլ քանզի սերունդք Արշաւիրի թագաւորին են, և արիւն և հարազատութիւն Արտաշէսի որդւոյ նորա, սկիզբն արասցուք յաղագս պատուականութեան մարդկանն, նախակարգեալ 'ի գիրս առ ընթեր Արտաշէսի. զի խմբացին ոչք ընթեռնուն, եթէ համազգիք քաջին են։ Իսկ զկնի ապա նշանակեսցուք և զժամանակ գալստեան հարցն նոցա 'ի Հայս, ոչք են կարենանք և սուրենանք, յորմէ սուրբն Գրիգոր, և յորմէ կամարականք,

յորժամ՝ի շարի կարգին հասանի-
ցեմք ՝ի ժամանակս թագաւորին,
որ զնոսա ընկալաւ։

Բայց Աբգարու ոչ յաջողեցաւ
խորհուրդն ապստամբութեան. զի
խռովութիւն անկեալ ՝ի մէջ ազգա-
կանաց իւրոց՝ թագաւորութեանն
Պարսից, զոր ժողովեալ անդր չուէր
՝ի համոզել և ՝ի դադարեցուցանել
զնոսա։

ԻԸ. Յաղագս երթալոյն Աբգարու յա-
րեւելս և թագաւորելոյ Պար-
սից զԱրտաշէս. և թէ զիա՞րդ կոր-
գեաց զԵդեսիա իւր, յորոց մեր Լու-
սաւորիչն և նորին ազգակիցքն։

ԵՐԹԵԱԼ Աբգարու յարեւելս,
զտանէ թագաւորեալ Պարսից զԱր-
տաշէս որդի Արշաւիրի, և ընդդի-
մացեալ նմա զեղբարս իւր. քանզի
նա խորհէր ազգաւ ՝ի վերայ նոցա
թագաւորել, և նոքա ոչ առնուին
յանձն։ Վասն որոյ պաշարեալ զնո-
սա Արտաշիսի և երկեւղ մահու ե-
դեալ ՝ի վերայ նոցա, բաղում պա-

տառմունք և անմիաբանութիւնք 'ի մէջ զօրացն և այլ ազգականացն լինէին : Քանզի էին Արշաւիրի Թագաւորի որդիք երեք և դուստր մի . առաջին՝ նոյն ինքն արքայն Արտաշէս , երկրորդն Կարէն , երրորդն Սուրէն , և քոյր սոցին՝ որ անուանեալ կոչի Կոշմ, կին զօրավարին ամենայն Արեաց 'ի հօրէն կարգեցեալ:

Իսկ Աբգարու համոզեալ զնոսա խաղաղանալ , 'ի մէջ ամենեցունց հաստատէ զայս ինչ սահմանելով . Թագաւորեալ Արտաշիսի հանդերձ ծննդովք իւրովք՝ որպէս և խորհեցաւն , և զեղբարն անուանեալ Պահլաւա՝ յանուն քաղաքին իւրեանց և աշխարհին մեծի և քաջաբերոյ . որպէս զի լինել նոցա պատուականագոյն և առաջինքան զամենայն նախարարութիւնս Պարսից՝ որպէս արդարեւ զարմն Թագաւորաց : Եւ դաշինս և երդմունս 'ի միջի հաստատեալ, զի թէ լիցի սպառեալ զարմից Արտաշիսի 'ի պատանեաց , նոքա մատիցեն 'ի Թագաւո-

բուլթիւնն։ Եւ արտաքոյ ցեղի նո-
բա թագաւորեցելոյ՝ ցեղս որոշել
զնոսա երիս, կոչմամբ այսպիսեաւ.
Կարենի Պահլաւ, Սուրենի Պահ-
լաւ, և զքոյրն՝ ասպահապետի Պահ-
լաւ, յառնն տանուտէրութենէ
զանուանն որոշեալ։

Եւ ասեն զսուրբն Գրիգոր 'ի սու-
րենեանն Պահլաւէ, և զկամսարա-
կանս 'ի կարենեանն Պահլաւէ։ Այլ
զայսր գալոյն զորպիսութիւն 'ի կար-
գին պատմեացուք. միայն նշանակե-
լով այժմ առ ընթեր Արտաշիսի,
զի ծանիցես զազգս զայս մեծ, թէ
հաւատի արիւն Վաղարշակայ են.
այս ինքն զարմ Արշակայ մեծի, եղ-
բօր Վաղարշակայ։

Եւ այսոցիկ այսպէս կարգեցե-
ալոց, և զգիր ուխտին ընդ իւր ա-
ռեալ Աբգարու՝ դառնայ ոչ առաղջ
մարմնով, այլ չարաչար ցաւովք
պիտացեալ։

ԻԹ. ԴԱՐՁ ԱԲԳԱՐՈՍ ՅԱՐԵՒԵԼԻՑ ԵՒ ՊԱՏԼ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՆ ԱՐԵՊԱՅ 'Ի ՄԱՐՊ ԸՆԴ ՀԵՐՈՎԴԷԻ ՔՐԻՍՏՈՍԱՊԵՏԻ :

ԻԲՐԵՒ դարձաւ Աբգարիոս յարեւելից, լուաւ նա զհռովմայեցւոց, թէ 'ի կասկածանս անկեալ են վասն նորա, որպէս թէ զկնի զօրու գնաց յարեւելս Աբգար : Վասն որոյ յղէ առ գործակալս հռովմայեցւոց զպատճառս երթալոյն իւրոյ 'ի Պարսս, միանգամայն և զգիր ուխտին՝ որ ընդ Արտաշէս և ընդ եղբարս նորա՝ տայ տանել : Եւ նոքա ոչ հաւատացին նմա. վասն զի և թշնամիք չարախօսէին զնմանէ, Պիղատոս և Հերովդէս ջորրորդապետ և Լիւսանիա և Փիլիպպոս : Իսկ Աբգարու եկեալ 'ի քաղաքն իւր յԵդեսիայ, միաբանեաց ընդ Արեւայ արքայի պատրիացւոց, սատարս տալով նմա 'ի ձեռն Խոսրանայ որուն արծրունւոյ՝ մարտնչել ընդ Հերովդէի : Քանզի նախ ըզդուստրն Արեւայ կին առեալ Հերովդէի, և անարգեալ'ի բայց եթող.

և զՀերովդիադայ մեկնեալ յառ-
նէ իւրմէ Եհան կենդանւոյն, յա-
ղագս որոյ սպանեալ զՅովհաննէս
Մկրտիչ։ Եւ եղեւ պատերազմ ընդ
նա և ընդ Արետա վասն անարգա-
նաց դստերն. յորում սասակապէս
հարեալ սասակեցան զօրքն Հերով-
դի յօգնականութենէ քաջացն Հայ-
ոց. որպէս յաստուածային գրոց
տեսչութենէ, վրէժս հատու-
ցանել ընդ մահուան Մկրտչին։

Լ. Ապոստոն իշխանացն Աբգարու առ
Մառինոս, յորմէ պէտքն զփրկիչն մեր
Քրիստոս, ոսպի եղէ- ակիզբն հա-
պոցն Աբգարու։

ԸՆԴ այն ժամանակս եկաց 'ի
գործ հաղարապետութեան կայսեր
'ի վերայ փիւնիկեցւոց և պաղեստի-
նացւոց, Ասորւոց և Միջագետաց
Մառինոս որդի Սատրգեայ. առ որ
առաքեաց Աբգարիոս երկուս 'ի
գլխաւորաց իւրոց, զՄար Ի հաբ բը-
դեշխն Աղձնեաց, և զՇամշագրամ
նահապետ ապահունեաց տոհմին,

և զԱնան հաւատարիմ իւր՝ 'ի քաղաքն Բեթքուրին, զգացուցանել նմա զպատճառս երթալոյն իւրոյ յարեւելս, ցուցանելով և զգիր ուխտին՝ որ ընդ Արտաշէս և ընդ Եղբարս իւր, և առնել զնա թիկունս օգնականութեան: Որոց եկեալ գտին զնա յԵլեւթերոյպոլիս: Եւ նորա ընկալեալ զնոսա խաղաղութեամբ և մեծարանօք, առնէ պատասխանի Աբգարու. Մի կասկածեր 'ի կայսերէ սակս այնր, միայն զի զհարկեալն լիով փութացիս:

Եւ նոցա դարձեալ անտի, եկին յԵրուսաղէմ տեսանել զՓրկիչն մեր Քրիստոս վասն լրոյ համբաւուց պանչելագործութեանցն. որում և ականատես եղեալ, պատմեցին Աբգարու: Ընդ որ զարմացեալ Աբգարու, հաւատաց ճշմարտապէս իբր յարդարեւ որդի Աստուծոյ, և ասէ. Այն զօրութիւնք ոչ մարդոյ են, այլ Աստուծոյ. զի չկաք ոք 'ի մարդկանէ որ կարէ զմեռեալս յարուցանել, բայց միայն Աստուած:

Եւ քանզի ապականեալ էր մարմինն իւր 'ի չարաչար ցաւոց, որ պատահեցինն նմա 'ի Պարսից աշխարհին յառաջ քան զեւթն ամ, և 'ի մարդկանէ ոչ եղեւ նմա հնարք բժշկութեան, էառ ասնել նմա թուղթ աղաչանաց, գալ և բժշկել զնա 'ի ցաւոցն, օրինակ զայս։

ԼԱ. ԹՈՒՂԹ ԱՐՔԱՐՈՒ ՈՒ ՓՐԿԻՉ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ։

ԱՐՔԱՐ Արշամայ իշխան աշխարհի, առ Յիսուս Փրկիչ և բարերար, որ երեւեցար աշխարհի Երուսաղեմացւոց, ողջոյն։

Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ, որ լինին 'ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի, ասս գու կուրաց տեսանել և կաղաց գնալ և զբորոտս սրբել, և զայս պիղծս հանես, և որ միանգամ չարչարեալ են երկար հիւանդութեամբք՝ բժշկես. գու և զմեռեալս յարուցանես։ Եւ լսեալ լուայ վասն քո զայս ամենայն,

եղի 'ի մոլ խմում մի յերկուց ասոլ. կամ թէ դու Աստուած ես, ինչեալ յերկնից գործես զայդ. կամ թէ որդի ես դու Աստուծոյ, և զայդ առնես: Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս և բժշկեսցես զհիւանդութիւնս, զոր ունիմ ես: Նա և լուայ զի հրեայք ասանջեն զքէն և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս:

Որոց տարեալ զթուղթն, պատահեցին նմա յԵրուսաղէմ: Զայս վկայէ աւետարանական բանն, եթէ էին ոմանք 'ի հեթանոսաց ելեալոց առ նա. վասն որոյ ոչ համարձակին, ոչք լուանն, ասել ցՅիսուս, այլ ասեն ցՓիլիպպոս և ցԱնդրէաս. և նոքա ասեն ցՅիսուս: Իսկ ինքն Փրկիչն յայնմ ժամանակի յորում կոչեացն զնա, ոչ առ յանձն. բայց թղթոյ արժանի ալեալ զնա, որ ունի այսպէս:

ԼԲ. Պոպասխանի Ղղեոյն Աբգարու, զոր գրէաց Թովմաս Առաքեալն հրամանաւ Փրկչին։

ԵՐԱՆԻ իցէ այնմ, որ հաւատայ յիս՝ իբրեւ ոչ իցէ նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս. Զի որք տեսանեն զիս՝ ոչ հաւատացեն յիս, և որք ոչն տեսանեն՝ նոքա հաւատացեն և կեցցեն։ Իսկ վասն այն զի գրեցեր դու առ իս գալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել ասա զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես։ Եւ իբրեւ կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս. և յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց ասելոց, զի զցաւս քո բժշկեսցէ, և կեանս քեզ և որոց ընդ քեզ են շնորհեսցէ։

Զայս թուղթ եբեր Անան սուրհանդակ Աբգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ յեդեսացւոց քաղաքին մինչեւ ցայսօր ժամանակի։

ԼԳ. Քարոզութիւն յԵդեսիայ Առաքելոյն Թադէի, և պատճէն նշխարացն հնգից։

ԲԱՅՑ յետ համբառնալոյ Փրկչին մերոյ՝ Թովմաս առաքեալ, մի յերկոտասանից, առաքեաց մի յեւթանասնից անսի՝ զԹադէոս, 'ի քաղաքն Եդեսիայ՝ բժշկել զԱբգար և աւետարանել ըստ բանին Տեառն։ Որոյ եկեալ 'ի տուն Տուբիայ իշխանի հրէի, զոր ասեն քինել յազգէն բագրատունեաց. որոյ խուսեալ յԱրշամայ՝ ոչ ուրացաւ զհրէութիւնն ընդ այլ ազգականս իւր, այլ նոյն օրինօքն եկաց մինչեւ հաւատալ 'ի Քրիստոս։ Եւ եկ համբաւ նորա ընդ ամենայն քաղաքն։ Լուեալ Աբգարու ասէ. Նա է վասն որոյ գրեացն Յիսուս. և խսկոյն կոչեաց զնա։ Եւ եղեւ 'ի մտանելն Թադէի, տեսիլ մեծ երեւեցաւ Աբգարու յերեսան Թադէի. և յարուցեալ 'ի գահոյիցն անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց և երկիր երպագնեա. և զարմացան ա-

մենայն իշխանքն՝ որ շուրջն կային, զի ոչ գիտացին զտեսիլն։ Ասէ ցնա Աբգար. Եթէ դու ի՞նչ ես արդարեւ աշակերտ օրհնելոյն Յիսուսի, զոր ասաց առաքել ինձ այսր, և կարո՞ղ ես բժշկել զցաւս իմ։ Պատասխանի ետ Թադէ. Եթէ հաւատացեա՛ ի Քրիստոս Յիսուս յորդին Աստուծոյ, տացին ինդրուածք սրտի քո։ Ասէ ցնա Աբգար. Ես հաւատացի՛ ի նա և ի հայրն նորա. վասն որոյ կամեցայ առնուլ զքեզս իմ և գալ կոտորել զՀրեայսն, որ խաչեցին զնա, եթէ ոչ էր արգելեալ վասն Թագաւորութեանն հռովմայեցւոց։

Եւ յայսմ բանէ սկիզբն արարեալ Թադէի, աւետարանեաց նմա և քաղաքին նորա. և եդեալ ձեռն՝ ի վերայ բժշկեաց զնա, և զԱբգիւս պատուական իշխան քաղաքին և պատուական յամենայն տանն ալքայի. նա և զամենայն՝ որ էին՝ ի քաղաքին հիւանդք և ախտաժէտք, բժշկեաց։ Եւ հաւատացին ամենեքեան. և մկրտեցաւ ինքն Աբգար և ամենայն

.քարքաքն . և զգուրս տաճարաց կը-
ռոցն փակեցին . և որ 'ի վերայ բագ-
նին և սեղանն կային պատկերքն
ծածկեալ պատեցին եղեգամբ : Եւ
ոչ ոք ածէր բռնութեամբ 'ի հա-
ւատս, բայց օր ըստ օրէ յաւելեալ
'ի հաւատացեալսն բազմանային :

Իսկ Առաքելոյն Թադէի զիսոյրա-
բար ոմն մեռաքսագործ մկրտեալ,
և անուն կոչեցեալ Ադդէ, ձեռ-
նադրեալ 'ի վերայ Եդեսիայ, փո-
խանակ իւր Թողու առ արքայի : Եւ
իւր առեալ հրովարտակ յԱբգա-
րէ, զի ամենեքեան լուիցեն աւե-
տարանին Քրիստոսի, գայ առ Սա-
նատրուկքեռորդի նորին, զոր կար-
գեալ էր 'ի վերայ աշխարհին և զо-
բայն : Բայց Աբգար յօժարեցաւ
գրել Թուղթ առ Տիբերիոս կայսր,
որ ունի օրինակ զայս :

Թուղթ Աբգարու առ Տիբերիոս :

ԱԲԳԱՐ արքայ Հայոց, տեսան
խնամեմ Տիբերի կայսեր Հռովմայե-
ցւոց խնդալ :

գիտելով իմ, թէ ոչ ինչ ծածկի 'ի քումմէ թագաւորութենէդ, այլ ելբերեալ զմտերիմ քո՝ աւելի եւս ի մայուցանեմ 'ի ձեռն գրոյ։ Զի հրեայք, որ բնակեալ են 'ի գաւառս պաղեստինացւոց, ժողովեալ խաչեցին զՔրիստոս առանց ելնելոյ յանցանաց, 'ի վերայ մեծամեծ երախտեացն՝ զոր արար առ նոսա, նշանս և սքանչելիս, մինչեւ զմեռեալս անգամ յարուցանել։ Եւ գիտեա, զի զօրութիւնքս այս ոչ են սոսկ մարդոյ, այլ Աստուծոյ։ Զի և 'ի ժամանակին յորում խաչեցին զնա՝ արեգակն խաւարեցաւ, և երկիր շարժեալ սասանեցաւ. և ինքն յետ երից աւուրց յարեաւ 'ի մեռելոց և երեւեցաւ բազմաց։ Եւ այժմ յամենայն տեղիս անուն նորա 'ի ձեռն աշակերտաց նորա սքանչելիս մեծամեծս կատարէ. որ և առ իս ինքեան եցոյց յայտնապէս։ Եւ արդ այսուհետեւ տէրութիւնդ քո գիտէ, որ ինչ արժան է հրամայել 'ի վերայ ժողովրդեանն հրէից, որք զայն դարձեցին, և գրել

ընդ ամենայն տիեզերս, զի երկրպագեսցեն Քրիստոսի Աստուծոյ։ Ողջ լեր։

Պապասխանի Ղազարոն Աբգարու 'ի Տիբերիոս։

ՏԻԲԵՐԻՈՍ կայսր հռովմայեցւոց, Աբգարու Թագաւորի Հայոց խնդալ։

ԶԹուղթ մատերմութեանդ քո ընթերցան առաջի իմ, վասն որոյ շնորհակալութիւն 'ի մէնջ քեզ հասցէ։ Թէպէտ և 'ի բազմաց մեր լուեալ զայդ յառաջագոյն, եցոյց և Պիղատոս ստուգապէս վասն նշանացն նորա, և եթէ յետ յարութեանն 'ի մեռելոց հաւատարիմ եղեալ բազմաց, թէ Աստուած է։ Վասն որոյ և ես կամեցայ առնել զայդ, զոր և դու խորհեցար։ Այլ քանզի սովորութիւն է հռովմայեցւոց՝ աստուած 'ի հրամանէ Թագաւորի միայնոյ ոչ նատուցանել, մինչեւ ոչ փորձեալ քննեսցի նա 'ի ամենեղեսն, վասն որոյ և իմ յայտնեալ

զբանս զայս սինկղիտոսին, արհա-
մարհեաց սինկղիտոսն, զի ոչ քննե-
ցաւ նա յառաջագոյն 'ի սմանէ։
Ա.ՅԼ մեք առաւք հրման ամենայն
ումեք որում և հաճոյ թուեսցի
Յիսուս, ընկալցին զնա ընդ աս-
տուածս. և մահ այնոցիկ սպառնա-
ցեալ, որ չարախօս կայցեն զքրիս-
տոնէից։ Եւ վասն ժողովրդեանն
Հրէից, որ յանդգնեցան խաչել
զնա, զորմէ լսեմ՝ թէ ոչ արժա-
նի խաչի էր նա և մահու, այլ պա-
տուի և երկրպագութեան, յոր-
ժամ առեալ պարապումն 'ի պատե-
րազմէս սպանիացւոց ապստամբ-
ղաց յինէն, քննեալ հատուցիս նո-
ցա զարժանն։

Դ. ՈՐՅԷԱԼ ԳՐԷ ԲՈՂՔ ԱԲԳԱՐ ԱՌ ՏԷ-
ԲԵՐԻՈՍ։

ԱԲԳԱՐ արքայ Հայոց, սեռաւն
խմուտ Տիբերի կայսեր հռովմայե-
ցւոց խնդալ։

Զթուղթ գրեալ ըստ արժանի
քոյոյ սէրսութեանդ սեսի, և ընդ

հրաման մոտածութեանդ քո ուրա-
խացայ. և եթէ ոչ ցանուցուս լինէ,
գործ սինդղիտոսիդ յոյժ այպանե-
լի է. քանզի առ դուռա՝ 'ի քննու-
թենէ մարդկան տուեալ լինի աս-
տուածութիւնն: Եւ արդ այսու
հետեւ եթէ ոչ լինիցի հաճոյ Աս-
տուածն մարդոյն, Աստուած լի-
նել նա ոչ կարէ. և իբրեւ յայսմա-
նէ մարդոյն արժան է քաւել զԱս-
տուածն: Բայց քեզ տեառն իմոյ
հաճոյ թուեսցի առաքել զայլ ոք
յԵրուսաղէմ փոխանակ Պիղատո-
սի, զի լուծցի նա անարգանօք յիշ-
խանութենէն՝ յոր կարգեցեր զնա.
վասն զի արար զկամս Հրէից, և
խաչեաց զՔրիստոս 'ի տարապար-
տուց առանց քոյոյ հրամանի: Ողջ
լինել քեզ ըղձամ:

Զայս գրեալ Աբգարու, զհա-
ւատար թղթոյն եդ 'ի դիւանի իւ-
րում, որպէս և զայլսն: Գրեաց և
առ Ներսեհ մանուկ ալքայ Աս-
ուրեստանի 'ի Բաբելոն:

ԹՈՂԹ ԱՐՔԱՐՈՒ ԱՌ ՆԵՐՍԵՀ։

ԱՐՔԱՐ արքայ Հայոց, որդւոյ իմոյ Ներսեհի խնդալ։

Զգիր ողջունի քոյոյ տեսի, և զՊերոզ լուծի 'ի կապանաց, և զվնաս նորա թողի նմա. և եթէ կամ իցէ քեզ, կարգեսցես զնա 'ի վերակացութիւն Նինուէի, որպէս և կամիս։ Այլ վասն այնր զի գրեցեր առ իս, թէ տուր ածել զայրդ բըժիշկ, որ զնշանսդ առնէ և քարոզէ այլ աստուած 'ի վեր քան զհուր և զջուր, զի տեսից և լուայց դմա, նա ոչ էր բժիշկ ըստ արուեստի մարդկան, այլ աշակերտ էր որդւոյն Աստուծոյ՝ արարչի հրոյ և ջրոյ. և վիճակ հասեալ 'ի կողմանս Հայոց առաքեցաւ։ Բայց յընկերացս նորա գլխաւորաց Սիմոնն անուն, նա 'ի կողմանս Պարսից առաքեալ է. խնդիր արարեալ՝ լուիցես նմա, յորժամ և հայրնքո Արտաշէս։ Եւ նա բժշկեսցէ զամենայն հիւանդութիւնս, և ճանապարհ կենաց ցուցցէ։

Եւ յաւել եւս գրել առ Արտաշէս արքայ Պարսից օրինակ զայս։

Թուղթ Աբգարու առ Արտաշէս։

ԱԲԳԱՐ արքայ Հայոց, Արտաշիսի եղբօր իմում Պարսից արքայի խնդալ։

Գիտեմ զի արդ լուեալ է քո վասն Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ, զոր խաչեցին Հրեայքն, որ յարեաւն 'ի մեռելոց, և առաքեաց զաշակերտսն իւր ընդ ամենայն ազգս երկրի՝ ուսուցանել ընդ հանուր։ Եւ մի յաշակերտաց նորա գլխաւորաց Սիմոնն անուն՝ է 'ի կողմանս քոյոյ ազգութեանդ։ Արդ խնդիր արարեալ գացես զնա, և նա բժշկեացէ զամենայն ախտս հիւանդութեանց՝ որ 'ի ձեզ, և Ճանապարհ կենաց ցուցցէ. և հաւատացեալս բանի նորա, դու և եղբարք քո և ամենեքեան, որ հնազանդին քեզ կամաւոր։ Զի ախտաժետի է ինձ, զձեզ ըստ մարմնոյ ազգականս՝ լինել ինձ մոլորիմ հարազատս և ըստ հոգւոյն։

Եւ մինչ դեռ պատասխանի այոց թղթոց ոչ էր ընկալեալ, վախճանի Աբգարիոս, թագաւորեալ ամս երեսուն և ութ։

ԼԴ. Յաղագս Վկայութեան Առաքելոյն Մեղոց։

ՅԵՏ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորել յԵդեսիայ, և քեռորդի նորա Սանատրուկ 'ի Հայս։ Գտանի որ մինչ առ սոցա ժամանակաւ՝ յառաջագոյն գրեալ յայլոց, զգալուստ Առաքելոյն 'ի Հայս, և հաւատալ Սանատրկոյ, և թողուլ զհաւատն յերկիւղէ նախարարացն Հայոց, և կատարումն Առաքելոյն և ոչք ընդունմա՝ 'ի գաւառին Շաւարշան՝ որ այժմ կոչի Արտազ, և պատառումն քարին և յիրար գալ և ընդունել զմարմին Առաքելոյն, և առնուլ անտի աշակերտացն և թաղել 'ի գաշտին. և մարտիրոսանալ թա-

գաւորի գաւերն Սանդիսայ հուպ
'ի Ճանապարհն. և ասա ուրեմն
յայտնել նշխարաց երկոցունց, և
փոխել յառաջարն։ Այս ամե-
նայն, որպէս ասացաք, այլոց պատ-
մեալ յառաջագոյն քան զմեզ, ոչ
ինչ կարեւորագոյն համարեցաք ո-
ճով երկրորդել։ Դոյնպէս և որ
ինչ վասն կատարմանն Ադդէի ա-
շակերտի Առաքելոյն յԵդեսիայ
յորդւոյն Աբգարու, գոսանի յայ-
լոց պատմեալ յառաջագոյն քան
զմեզ։

Որ իբրեւ թագաւորեաց յետ
մահուան հօրն, ոչ եղեւ ժառան-
գորդ հայրենի առաքինութեանն,
այլ եբաց զտաճարս կռոցն և կա-
լաւ զպաշտօն հեթանոսութեանն։
Եւ յղեաց առ Ադդէ, զի արասցէ
նմա խոյր բեհեզեայ անգուածով
ոսկւոյ, որպէս յառաջագոյն առ-
նէր հօրն նորա։ Եւ պատասխանի
ընկալաւ, թէ ոչ արասցեն ձեռք
իմ խոյր գագաթան անարժանի,
որ ոչ երկրպագէ Քրիստոսի Ա-
ստուծոյ կենդանւոյ։ Եւ իսկոյն հրա-

մայեաց միում՝ի զինակրացն կարել զոտս նորա արով։ Ոչոյ երթեալ, և տեսեալ զնա՝ զի նատէր յաթոռ վարդապետութեանն, էած սուսերաւ և՝ի բաց կարեաց զարուն նորա և նոյնժամայն աւանդեաց զոգին։ Զայս ծայրաքաղ արարեալ համառօտ յիշատակեցաք, որպէս զառ՝ի յայլոց պատմեալ նախկին։

Բայց վիճակեցաւ Հայոց և Բարդուղիմէոս Առաքեալ, որ և կատարեցաւ առ մեզ յԱրեբանոս քաղաքի։ Իսկ զՍիմոնէ, որ Պարսիցն վիճակեցաւ, ոչ զհաւատոյն կարեմ պատմել՝ եթէ զինչ գործեաց և կամ ուր կատարեցաւ։ Քանզի պատմի յոմանց, Սիմոնէի ումեմն Առաքելոյ կատարիլ՝ի Վերիոսփորայ. և թէ նա եկեալ ճշմարտիւ, և թէ էր աղագաւ գալուստ նորա անդր, ոչ գիտեմ. այլ միայն նշանակեցի. զի գիտասցես՝ թէ ոչ ինչ մեայ յիմմէ Ջանկոյ պատմելոյ զամենայն, որ ինչ անկ է։

Լ. Վասն Սանատրկայ Թագաւորութեանն, և սպանման Ծննդոյն Աբգարու, և վասն Հեղինէայ թիկնոջ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ Թագաւորեալ, զօրս ժողովէ 'ի ձեռնքաջացն բազբատուն եաց և արծրունեաց գայլեկաց իւրոց, ինչանեալ տալ պատերազմ ընդ որդեան Աբգարու, զի բոլորին տիրեսցէ Թագաւորութեան։ Եւ մինչ դեռ նա յայսմ էր, առուածային նմն ակնարկութեամբ խնդրեցաւ վրէժ մահուանն Ադդէի յորդւոյն Աբգարու։ Քանզի սիւն կՃեայ կանգնեալ տայր յԵդեսիայ 'ի վերնատունն ապարանից իւրոց, և ինքն 'ի նեղքոյ կալով հրամայէր զորպէսն առնել. որ զերծեալ յուռնոզացն, անկաւ 'ի վերայ նորա և խորտակեաց զոտսն և սատակեաց։

Եւ խսկոյն պատգամ բնակչաց քաղաքին եկն առ Սանատրուկ, խնդրելով պայման ուխտի, զի մի վրդովեսցէ զնոսա 'ի քրիստոնէու-

թեան հաւատոց, և նոքա տացէն զքաղաքն 'ի ձեռս և զգանձս թագաւորին։ Զոր արարեալ, յետոյ ասեաց. Նա և զամենայն զաւակ տանն Աբգարու մաշեաց սրով, բայց յաղջկանց՝ զոր եհան 'ի քաղաքէն բնակել 'ի կողմանս Հաշտենից։ Սապէս և զգլուխ կանանցն Աբգարու, որում անուն էր Հեղինէ, առաքեաց յիւրային քաղաքն բնակել 'ի Խառան, 'ի վերայ թողլով նմա զխիկնութիւնն ամենայն Միջագետաց, փոխանակ բարեացն զոր գտեալ էր 'ի ձեռն նորա յԱբգարէ։

Այս Հեղինէ զարդարեալ հաւատովք որպէս և զայր իւր զԱբգար, ոչ հանդուրժեաց բնակել 'ի մէջ կռապաշտից. այլ ջոգաւ յԵրուսաղէմ յաւուրս Կղաւդեայ, 'ի սովին՝ զոր մարգարէացաւն Ագաբոս. և տուեալ զամենայն գանձս իւր յԵգիպտոս, և գնեաց ցորեան բազում յոյժ և բաշխեաց ամենայն կարօտելոց. որում և վկայէ Յովսեպոս. որոյ և չիրիմ նշանաւոր կայ

առաջի գրանն յԵրուսաղէմ մինչեւ ցայսօր ժամանակի :

Լ.Զ. Յաղագս Նուրգման Մծբին քաղաքի, և անուանակոչութեանն Սանատրուկայ, և մահուան նորին :

ԱՅԼ որ ինչ գործք եղեալ Սանատրկոյ, ոչ ինչ յիշատակաց աւ ժանի համարեցաք բայց 'ի շինուածոց Մծբին քաղաքի : Զի 'ի շարժմանէ խախտեալ, քակեաց և վերըստին շինեաց պայծառագոյն, և պարսպեաց կրկին պարսպով և պատուարաւ . և զինքն անդրի 'ի միջին հաստատեաց, մի գրամ 'ի ձեռն ունելով. որ նշանակէ այսպիսի ինչ, եթէ 'ի շինել քաղաքիս ամենայն գանձքս ծախեցան, և այս միայն մնաց :

Բայց թէ ընդէր Սանատրուկ կոչեցաւ, ասելի է : Քանզի յաւուրս ձմերայնոյ Ճանապարհորդեալ 'ի Հայս քոյր Աբգարու Օդէ, պատահէ բքոյ 'ի լերինս Կորդուաց . ցրուեաց զամենեսեան մրրիկ, մինչ

ոչ գիտելով ընկեր զընկեր՝ ընդ ո՞ր վարեցաւ։ Իսկ դայեկին նորա Սանոտայ, քեռ Բիւրատայ բագրատունւոյ, կնոջ Խոսրենայ արծրունւոյ, առեալ զմանուկն, քանզի տղայ էր, եդ 'ի մէջ սառանց իւրոց, ճնալով 'ի նեղքոյ ձեռանն զերիս տիւս և զերիս գիշերս։ Զորմէ առասպելաբանեն, եթէ կենդանի իմն նորահրաշ սպիտակ յաստուածոցն առաքեալ՝ պահէր զմանուկն։ Բայց որչափ է՝ զաք վերահասու, այսպէս է. շուն սպիտակ ընդ ինդրական լեալ, պատահեաց մանկանն և դայեկին։ Ընդ կոչեցաւ Սանատրուկ, 'ի դայեկէն զանուանակոչութիւնն առեալ, որպէս թէ տուրք Սանոտայ։

Սա թագաւորեալ յերկոտասանեներորդի ամի Արտաշիսի Պարսից արքայի, կեցեալ ամս երեսուն՝ մեռաւ յորսի, նեսիւ ուրուք դիպեալ փորոտեացն. իբր թէ վրէժս հատուցեալ ընդ չարչարման արբոյ դըստերն։ Ղերուբնայ որդի Ափշադարայ դպրի գրեաց զամենայն գործս, որ ինչ յաւուրս Աբգարու և Սա-

նատրկոյ, և էդ 'ի գիւանին յԵ-
գեսիայ :

ԼԷ. ԹԱԳԱՒՈՐԷԼ ԵՐՈՒԱՆԴՅԱ Ի ԿՈ-
ՊՐԷԼ ՂՈՐԳԻՆ ՍԱՆԱՏՐԿՈՅ, Ի ՂԵՐ-
ԾԱՆԷԼ ԱՐՊԱՇԻՆԻ ՀԱԽՍՊԷՍԱՄԲ :

ՅԵՏ մահուանն Սանատրկոյ շփոթի թագաւորութիւնն : Քանզի Երուանդ ոմն, որդի կնոջ արշակունւոյ, թագաւորէ յուլթերորդ ամի Դարեհի վերջնոյ : Եւ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս : Կին ոմն յազգէ արշակունեաց, անձամբ խարսխի և խոշորագեղ, վարար, զոր ոչ ոք դիմագրաւեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանկունս յանկարգ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄինոտաւրոս : Եւ 'ի զարգանալ մանկանցն կոչեն անուանս Երուանդ և Երուազ : Եւ 'ի չափ հասեալ Երուանդայ, լինի սրտեայ և անդամովք յաղթ : Սա 'ի բազում իրս վերակացու առաջնորդութեամբ առաքեալ Սանատրկոյ, գտանի երեւելի. մինչեւ ա-

մենայն նախարարացն Հայոց առաջին լինել. և խոնարհութեամբ և առատաձեռնութեամբ զամենայն ոք յինքն յանգուցանէր։ Եւ 'ի մեռանելն Սանատրկոյ, միաբանեալ թագաւորեցուցին զնա առանց արանց յազգէ բագրատունեաց լինել թագադիր։

Բայց 'ի թագաւորելն իւրում Երուանդ, կասկած ունելով յորդւոցն Սանատրկոյ, կոտորէ զամենեսեան։ Թուի թէ վրէժս հատուցաւ սպանման որդւոցն Աբգարու։ Բայց մի ոմն տղայ Արտաշէս անուն, զոր առեալ ստընտուի նորա, փախեաւ 'ի կողմանս Հերայ՝ 'ի հովուական Մաղխազանի, լուր առնելով դայեկի նորա Սմբատայ, որդւոյ Բիւրատայ բագրատունւոյ, 'ի Սպեր գաւառի, 'ի շէնն Սմբատաւանի։ Ապա իբրեւ լսէ Սմբատ, որդի Բիւրատայ, զբօթն Սանատրկոյ և զգոյժ կոտորման որդւոց նորա, առեալ զերկուս դստերս իւր՝ զՍմբատանոյշ և զՍմբատուրհի, նստուցանէ 'ի Բայբերդի, որս քաջս թողլով 'ի

վերայ ամրոցին. և ինքն հանդերձ միով կնաւ իւրով և սակաւ արամբք գայ անցանէ 'ի խնդիր մանկանն Արտաշիսի։ Որում իրաղգած է ղեալ արքային Երուանդայ, հեռաւ յոյզս առաքէ. վասն որոյ բովանդակ ժամանակս ընդ երեսս լերանց և դաշտաց այլակերպեալ շրջելով հետի հանդերձ մանկամբն, անուցանէ 'ի հովուավանս և յանդէորդս, մինչեւ պարապ գտեալ ժամ, անցանէ առ Դարեհ արքայ Պարսից։ Եւ քանզի այր քաջ էր Սմբատ և ծանօթ յառաջագոյն, պատուի մեծապէս ընդ զօրագլուխսն Պարսից, որպէս և մանուկն ընդ որդիս Թագաւորին, տեղի բնակելոյ առեալ զԲատ և զՈզոմն կոչեցեալ գաւառս։

ԼԸ. Ոչ ինչ ջան Երուանդայ վասն 'ի բուռն ածելոյ զմանուկն Արտաշէս. և 'ի բաց Ռոշլոյ զՄիջագէպս։

ԲԱՅՑ Երուանդայ զմտաւ ածեալ, թէ որպիսի՞ չար Թագաւոր

բութեան նորա անանի 'ի Մարս, խէթ սրտի լեալ՝ ոչ հեշտալի էր նմա քուն։ Հանապազ 'ի յարթնութեան յայն հոգալով, նա և 'ի քուն անուրջս ահագինս նմին իրի տեսանէր։ Վասն որոյ 'ի ձեռն հրեշտակաց և պատարագաց խնդրէր հաշտեցուցանել զարքայն Պարսից, տալ 'ի ձեռն զԱրտաշէս. ասելով, թէ Արիւն իմ և հարազատութիւն, ընդէր անուցանես զՄարդ Արտաշէս հակառակ ինձ և իմոյ թագաւորութեանս, լսելով բանից Սմբատայ յեղուզակի, որ ասէ, թէ որդի է Արտաշէս Սանատրկոյ. և զորդի հովուաց և զանդէորդաց ջանայ առնել արշակունի, և արիւն քո և հարազատութիւն համբաւելով զնմանէ։ Նա չէ որդի Սանատրկոյ, այլ ընդ խաբս գտեալ Սմբատայ զմար ոմն տղայ, բաջաղի։ Նոյնպէս և առ Սմբատ յղէր բազում անգամ, թէ ընդէր այդ քո անոտի աշխատութիւնդ. խաբեալ 'ի ատենտուէդ, անուցանես զորդի Մարիդ հակառակ ինձ։ Եւ լսէ ոչ սիրելոյ

բանս պատասխանեաց։ Յայնժամ առաքէ Երուանդ և սատակէ ըզ-քաջն 'ի Բայբերդի, զերեալ զԳրիգորն Սմբատայ՝ պահէ յամրոցին յԱնի ոչ վատթարապէս։

Բայց Թիկունս առնել Երուանդայ զՀռոմայեցիս՝ ոչ ինչ վանդի 'ի Թագաւորութեանն Ղէսպիանու և Տիտոսի, Թողով 'ի նոսա զՄիջագետս։ Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց 'ի Միջագետաց, և հարկս առաւելագոյնս տայր Երուանդ 'ի Հայոց։ Իսկ գործակալացն Հռոմայեցւոց մեծապէս հանդերձեալ զքաղաքն Եդեսիայ, 'ի նմա հաստատեն զտուն գանձուց հարկաց ժողովելոց 'ի Հայոց, 'ի Միջագետաց և յասորեստանեաց։ Եւ ժողովեն 'ի նմա զամենայն դիւանս, և կարգեն դպրոցս երկուս։ մի՝ զբուն խրեաց զԱսորին, և մեւս եւս զՅոյնն։ և զդիւանն հարկաց և զմեհենականն, որ կայր 'ի Սինոպ պոնդացւոց, անդր փոխեն։

ԼԹ. ՅԱՂԹ. ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐՈՒԱՆԴԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ։

ՅԱՒՈՒՐՍ սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բըլրոյն. քանզի էր հեռացեալ գեան Երասխ, և յերկարել ձմերայնոյն, և 'ի դառնահոտ հնչմանէ հիւսիսոյ պաղացեալ ձուլեալ վտակն, ոչ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղւոյ։ Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա և ամրագունի եւս տեղւոյ եղեալ 'ի խնդիր, փոխէ զարքունիսն յարեւմուտս կոյս 'ի քարակաւր մի բըլուր, զորով պատ առեալ Երասխայ ընդդէմ Ավսուրեանն հոսի գեա։ Պարապէ զբլուրն, և 'ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն մինչեւ յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչեւ գիմել ջուրց գետոյն 'ի փոլոտածն, յրմպելեաց պատրաստութիւն։ Զմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպաւք, և գրուանս պղնձիս կանգնէր 'ի միջոցի պարիս-

ալին, և Եղանելիս Երկաթիս 'ի Ներ-
քուստ 'ի վեր մինչեւ ցգուռնն. և
'ի նմա որոգայթս խմն ծածուկս ընդ
մէջ ասուիճանացն, որպէս զի ըմ-
բռնեսցի՝ թէ ոք գայցէ Եղանելով
դաւել կամիցի զարքայն։ Եւ էր,
ասէն, Երկդիմի. որպէս զի մինն լի-
ցի սպասաւորացն արքունի և ամե-
նայն Եղեւմոնից Ճանապարհ տուրն-
ջենային, իսկ մեւսն գիշերային և
մարդադաւաց։

Խ. Թէ ՝ի՞նչպէս զԻնեաց զԲաբելոն
փաղաքեաց։

ԲԱՅՑ Երուանդ շինեալ զքա-
ղաքն իւր, և փոխեալ անդր զամե-
նայն ինչ յԱրմաւրայ ուրոյն 'ի
կռոցն, զոր ոչ օգուտ իւր համա-
րեալ յիւրն փոխել 'ի քաղաքն, զի
մի 'ի գալն և 'ի զոհել անդ աշխարհ,
ոչ զգուշութեամբ պահեսցի
քաղաքն. այլ հեռագոյն 'ի նմանէ
իւր քառասուն ասպարիսաւ զհիւ-
սիսով՝ նման իւր քաղաքին շինեաց
քաղաք փոքր 'ի վերայ գետոյն Ա-

խուրենայ, և անուանեաց Բաղաբան, այս ինքն թէ 'ի նմա յօրինեալ է զկազմուածիւն բաղնացն. և փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եւ մեհեանս շինեալ, զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր:

ԽԱ. Վասն փնիէլոյ զանգատն, որ ի՞նչ է ծննդոց:

ՏՆԿԷ և մայրի մեծ 'ի հիւսիսոյ կողմանէ գետոյն, և որմովք ամրացուցանէ, արգելլով 'ի նեղքս այծեմունս երագունս, և զեղանց և զեղջերուաց աղգ, և ցիռա և վարազս. ոլոր 'ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր Թագաւորն յաւուրս որոց: Եւ անուանէ զանտառն ծնընդոց:

ԽԲ. Վասն յԵռաքելոցն, որ կոչի Երուանդակերպ։

ՔԱՂՑՐ է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի ընու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիւր. իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտաբանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբոնն զայլբոլորակութիւն ական։ Իսկ զբազմութիւն այգեստանոց, ելբր զարտեւանաց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձեւ՝ արդարեւ գեղաւոր կուսից յօնից դարեւանդաց համեմատ։ Իսկ 'ի հարաւոյ հարթութիւն դաշտաց, ծնօտից պարզութեան գեղեցկութիւն. իսկ գեան բերանացեալ դարաւանդաքաւանցն՝ զերկթերթիան նշանակէ շրթունս։ Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի ելեն գոգցես

'ի բարձրաւանդակ Թագաւորա-
նիսան զՀայեցուածսն ունի. և ար-
դարեւ բերրի և Թագաւորական
դասատակերսն։

Զայս ամենայն զգործեցեալսն
Երուանդայ՝ պարդեւէ մեծն Տըր-
դատ մարդկան ազգին կամարա-
կանաց, որպէս զմեերմաց և արեան
կցորդաց ազգին արշակունեաց. զոր
յիւրում տեղին պատմեացուք։

Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ
հմայից դժնեայ գողովական հայե-
ցուածով. վասն որոյ ընդ այդա-
նալ աչալրջացն սովորութիւն ու-
նել սպասաւորացն արքունի՝ վէմս
որձաքարեայս ունել ընդդէմ Ե-
րուանդայ, և 'ի հայեցուածոցն
դժնութենէ ասեն պայթել որձա-
քար վիմացն։ Բայց այս կամ եղի-
ցի սուտ և առասպել, և կամ դի-
ւական ինչ առ իւր ունել զօրու-
թիւնս, զի այսպէս հայեցուածոցն
անուամբ ինքասեպէ զորս կամի։

ԻՍԿ. Թէ ո՞րպէս Սմբատայ օգնական արարէալ զնախարարս Պարսից՝ խնդրէ Ներսէս զԱրտաշէս։

ԻՍԿ 'ի զարգանալ մանկանն Արտաշիսի, և 'ի բազում արութիւնս քաջութեան ցուցանել դայեկին Սմբատայ, հաճեալ ընդ նա նախարարքն Արեաց, մաղթեն զթագաւորն տալ նմա պարգեւս զինչ և խնդրեսցէ։ Եւ յանձն առեալ թագաւորին, ասէ ցնախարարսն. Տեսէք զինչ կամի այրն քաջ։ Եւ նոքա ասեն. Անմահ բարերարութիւնդ քո. ոչ այլ ինչ կամի Սմբատ, քան թէ զարիւնդ քո և հարազատութիւն, զԱրտաշէս որդի Սանատրկոյ զմերժեալն 'ի թագաւորութենէ իւրմէ, հաստատել յիւրում թագաւորութեանն։ Եւ յանձն առեալ արքային արքայից, տայ 'ի ձեռն Սմբատայ մատն ինչ 'ի զօրացն ասորեստանի և զզօրս Ատրպատականի, զի տարեալ զԱրտաշէս հաստատեսցեն 'ի գահն հայրենի։

ԽԴ. Յաղագս լսելոյ Երուանդայ ըղ-
գալն Արտաշիսի, և գումարելոյ զզօրս
'ի պատերազմն պատերազմի։

ԼՈՒՐ հասանէ առ Երուանդ յուսէացւոց գաւառին, եթէ գումարեաց արքայն Պարսից զօր բազում 'ի ձեռն Սմբատայ, զի 'ի վերայ քո խաղացեալ ածցէ զմանուկն Արտաշէս 'ի թագաւորութիւն իւր։ Զայս իբրեւ լուաւ Երուանդ, եթող անդէն զբազումն 'ի նախարարացն կողմնապահս, և ինքն գնաց 'ի քաղաքն իւր փութանակի, կուտեալ առ ինքն զզօրս Հայոց և զՎրաց և զկողմանցն Կեսարու, այլ և զՄիջագետացն աղերսիւք և տրոփք։ Եւ էին աւուրք գարնայնոյ. վասն որոյ երագ ժողովեցան զօրքն ամենայն. նա և Արդամ տանուտէր ազգին Մուրացան, որ 'ի ծննդոցն Աժդահակայ, ամբոխ հեռեւակաւ։ Քանզի էր Երուանդայ դարձուցեալ 'ի նա զդահն երկրորդական, զոր հանեալ էր 'ի նոցանէ Տիգրանայ և տուեալ էր Իւրում քեռ-

առնն Միհրդատայ. իսկ յետ մահուանն Միհրդատայ՝ ոչ լինէր ու�ք տուեալ, մինչեւ Երուանդայ դարձուցանել զնա առ Արդամ: Եւ ոչ միայն նմա, այլ և ամենայն նախարարացն տայր պարգեւս, և զորացն ամենեցուն պարգեւէր առատապէս:

Խե. Թէ ՝ի՞ր պէս ընդ մուսն Արտաշիսի յե՞ր աշխարհն աջողեցաւ գործն:

ԻՍԿ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ աճապարէր հասանել 'ի սահմանս ուտէացւոց: Ընդ առաջ նորա եելին զօրք այնր կողմանն, նա և նախարարքն զորս եթող Երուանդ: Զայն իբրեւ լուան այլ նախարարքն Հայոց՝ լուծանէին լքանէին և զատչեալ յԵրուանդայ խորհէին. նա և զայն եւս տեսանէին, եթէ զօրքն հռովմայեցւոց ոչ հասանեն նմա 'ի Թիկունս: Իսկ Երուանդ առաւել եւս յորդորագոյն տայր զպարգեւսն, և բաշխէր միոյ միոյ ումեք 'ի նոցանէ զգանձ-

ոլն. և որչափ առատանայր, առա-
ւել եւս ատելի լինէր։ Քանզի գի-
տէին ամենեքեան, եթէ ոչ առ ա-
ռատութեան տայ, այլ առ երկիւ-
ղի վասանէ։ Եւ ոչ այնչափ սիրելի
զայնոսիկ առնէր՝ որոց շատն տայր,
քան թէ թշնամի զայնս՝ որոց ոչն
տայր պերճագոյնս։

ԻԶ. Երուանդայ պատերազմ ընդ Ար-
տաշիսի և խախուսպ, և առուտն փա-
ղատի Նորա և մահ։

ԲԱՅՑ Սմբատ հանդերձ ման-
կամբն Արտաշիսիւ եկանէ առ ոտին
ծովուն Գեղամայ, զթիկամբք Ա-
րագածն կոչեցեալ լերինն. ուստ-
պարէին հասանել 'ի բանակն Ե-
րուանդայ։ Առ ոչինչ համարեալ
զբազմութիւն զօրաց Նորա, միայն
կասկածէին 'ի Մուրացանէն Ար-
գամայ, զի այր քաջ էր և բազմաց
տէր տիգաւորաց։ Եւ ճամբարն
Երուանդայ էր բացագոյն 'ի քա-
ղաքէ Նորին աւելի քան երեքհա-
զիւր ասպարիսաւ 'ի հիւսիսոյ 'ի վե-

լայ գետոյն Ախուրեան։ Զայս իբ-
բեւ լսէր Երուանդ, հանէր ընդ ա-
ռաջ զբազմութիւն զօրացն, և Ճա-
կատէր ոչ հեռի յիւրմէ բանակէն։
Իսկ Արտաշիսի առաքեալ պատ-
գամ առ Արգամ նահապետ Մու-
ցացանաց հանդերձ բազում երդ-
մամբք, թողուլ 'ի վերայ նորա զոր
ինչ գտեալ է յԵրուանդայ, և կըր-
կին այլ յաւելուլ, միայն զի զԵ-
րուանդ թողեալ 'ի բաց գնասցէ։

Եւ իբրեւ հանդէպ Ճակատուն
Երուանդայ եղին նշանք Արտաշի-
սի, Արգամայ առեալ զբազմու-
թիւն հետեւակացն՝ 'ի կողմ եղա-
նէր։ Եւ Սմբատ հրամայէր զփողն
պղնձիս հնչեցուցանել. և յառա-
ջեալ զՃակատն իւր, իբրեւ զարդ-
ծիւ յերամն կաքաւուց խոյանայր։
Իսկ նախարարքն Հայոց, որ յաջ
և յահեակ թեւան էին, 'ի նա խառ-
նեալ միանային։ Եւ զօրքն Վրաց,
հանդերձ արքայիւն Իբերանց Փարս-
մանաւ, թէպէտ և յանդուգն յար-
ձակմամբ յառաջեալ բախէին, ա-
ղարտարէս դառնային 'ի մեւս կողմն

փախուցեալ։ Եւ անդ էր տեսանել կոտորած անհնարին զգնդին Երուանդայ և զզօրաց Միջագետացց։ Եւ 'ի խառնակել այսպիսի ճակատուց, պատահէն Արտաշիսի արք քաջք տաւրացիք, որոց զոգիս 'ի բաց եդեալ, Երուանդայ պայմանեալ՝ սպանանել զԱրտաշէս։ Որոց դիպեալ հետի ընդ մէջ անցանէր Գիսակ որդի սարնատուին Արտաշիսի, և սատակեալ զնոսա, ուր և զկէս դիմաց նորա 'ի վայր բերեալ ուսերաւ, զյաղթութիւն ստացեալ՝ մեռանի 'ի վերայ այսպիսեացս։ Եւ մնացեալ զօրքն 'ի փախուստ դառնային։

Իսկ Երուանդ ձիոքն իւրով բովանդակ ասպարէզս անցեալ, էլանէ 'ի խանս կարգեալս 'ի բանակէն իւրմէ 'ի քաղաքն իւր, հեծեալ 'ի նոր ձիս հանդոյց 'ի հանգուցէ փախչել։ Եւ քաջն Սմբատ զհետ մտեալ, սատակագոյն վարէր զնա 'ի գիշերի մինչեւ ցդուռն քաղաքին։ Եւ Մարայց զօրացն անցեալ 'ի կողմն Երուանդական գնդին, նսեմաւ 'ի

վերայ դիակացն բանակէին։ Իսկ Արտաշիսի հասեալ Երուանդայ, ընդ շրջապատեալ առագաստն 'ի կաշոյ և 'ի կաւէ պարսպին էջ, և 'ի խորանս նորա բնակեցաւ զայն գիշեր։ Եւ այգուն եղելոյ՝ տիրաբար արարեալ, զսպանեալսն թաղել հրամայեաց. և անուանեաց զհովիտն, ուր 'ի վերայ դիակացն բանակեցաւ, Մարաց մարդ. և զտեղի ճակատուն՝ Երուանդաւան, որ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի. այս ինքն եթէ յայսմ տեղւոջ վանեաց զԵրուանդ։ Եւ ինքն չուեաց 'ի քաղաքն Երուանդայ. յաւուրս քան զմիջօրեայ հասեալ 'ի դաստակերան Երուանդայ, և միաբան գոչմամբ հրամայեաց աղաղակել զորացն՝ Մար ամատ, որ թարգմանի Մարս եկն. յիշեցուցանելով զթշնամանան, զոր յղէր Երուանդ առ թագաւորն Պարսից և առ Սմբատ, Մար գնա կոչելով։ Յայսմ 'ի սոյն ձայն անուանեցաւ դաստակերան Մարմէտ, իբր 'ի կամաց Արտաշիսի, բառնալ զանուն Երուանդայ

'ի տեղւոջէն. այս պատճառ է ա-
նուանակոչութեան դատակերին:

Բայց Սմբատայ գիշերոյն զհետ
Երուանդայ եկեալ տակաւ վաշտ-
կանաւ, զդուռն քաղաքին պահէր
մինչեւ 'ի գալն Արտաշիսի և զո-
ւրացն ամենեցուն: Եւ 'ի մարտնչել
քաջացն ընդ ամրոցին, անձնա-
տուրք եղեն մարդիկ ամրոցին, և
բացին զդուռն քաղաքին: Իսկ մի
ոմն 'ի զինուորացն մտեալ եհար
վաղերբ զգլուխն Երուանդայ, և
ցրուեաց զուղիղն 'ի յատակս տանն.
և այսպիսի ջախմամբ վախճանե-
ցաւ, կալեալ զթագաւորութիւնն
ամս քսան: Բայց Արտաշիսի յի-
շեալ՝ թէ խառնուած արշակունւոյ
է Երուանդ, հրամայէ զդի նորա
թաղել մահարձանօք:

Խէ. Թագաւորէ Արտաշէսի և տա-
նել բարի էրոց երախտաւորացն:

ՅԵՏ մահուանն Երուանդայ
մտեալ Սմբատայ զարքունական

յուզէր զդանձան. և գտեալ զԹագն Սանատրկոյ արքայի. դնէ 'ի գլուխն Արտաշիսի և Թագաւորեցուցանէ 'ի վերայ ամենայն երկրիս Հայոց 'ի քսան և ինն երորդի ամի Դարեհի Պարսից արքայի: Իսկ Արտաշիսի առեալ զԹագաւորութիւնն, տայ պարգևս զորացն Մարաց և Պարսից, և արձակեաց յաշխարհն իւրեանց: Տայ և առնն քաջին և պատուականին Արդամայ զխոստացեալ դահն երկրորդական, և պատակ յանկնթակապ, և գինդ յերկոսին ականջն, և կարմիր զգեստ միոյ ոտինն. տարդալ ունել ոսկի և պատառաքաղ, և ոսկեղինոք ըմպել նուագոք: Եւ ոչ ինչ ընդ հատ յայսց պատուոց տայ դայեկին իւրոյ Սըմբատայ, բայց միայն յերկուց գընդաց և 'ի կարմիր կոշկէ. և աւելի քան զհայրենական զիւր Թագակապ ասպետութիւնն և զիշխանութիւն արեւմտեայ զորուն, հաւատայ 'ի նա զամենայն զորս Հայոց, և զբոլոր աշխարհիս զգործակալս և զհամօրէն տունն արքունի: Եւ

զնեբաէս զորդի որդւոյ իւրոյ սաղն-
տուին Գիսակայ՝ ազգ զնա սերե-
լով, անուն կոչէ զնահատակու-
թեանցն հօրն, Դիմաքսեան. քան-
զի, որպէս ասացաքն, զկէս դիմացն
սուսերաւ 'ի վայր բերին 'ի վերայ
Արտաշիսի։

Պատմի սորա 'ի նոյն աւուրս սե-
բեալ ազգ և զորդիան Տուրոյ, պա-
տանիս հինգ հանդերձ տասամբ,
յանուն հօրն իւրեանց արուսիս.
ոչ վասն արուսթեան ինչ գործոց,
այլ միայն վասն քաւութեան հօրն
նոցա, զոր առնէր 'ի տանէն ար-
քայի առ Սմբատ, քանզի ընտանի
էր Երուանդայ, սակս նորին և ապա-
նաւ 'ի նմանէ։

ԽԸ. Սպանումն Երուապոյ, և շինել
մի-ոոյ Բագարանի, և հարկիւ Աշտա-
շիսի հռովմայեցւոց։

ԶԿՆԻ այսորիկ հրաման տայ
Սմբատայ, երթալ յամուրն Բա-
գարան, որ հուպ 'ի քաղաքն Ե-
րուանդայ 'ի վերայ Ախուրեան գե-

տոյ, զի սպանցէ զԵրուազ Եղբայր Երուանդայ։ Զոր կալեալ Սմբատայ, երկան զուլանէ հրամայէ կապել, և ընկենուլ 'ի պատյա մի գետոյն։ Եւ 'ի տեղի նորա 'ի վերայ բագնացն կացուցանէ զընտանի Արտաշիսի, աշակերտ մոգի որուն Երազահանի, որ յայն սակս և Մոգպաշտէ անուն կարդային։ Եւ ապա աւար առեալ զգանձն Երուազայ, և ծառայս անձինս հինգ հարեւր, նա և զընտիր ընտիր գանձուցն մեհենից, բերէ Արտաշիսի։ Եւ Արտաշէս պարգեւէ Սմբատայ զծառայն Երուազայ. բայց զգանձն հրամայէ տանել Դարեհի Պարսից արքայի, յաւելլով և ինքն 'ի գանձսն, 'ի շնորհակալութեան պատիւ խբրու հօր և օգնականի։

Յայնժամ Սմբատայ զծառայն Երուազայ, զոր գերեցն 'ի Բագարանէ, տարեալ բնակեցուցանէ 'ի Թիկանց Մասեաց, 'ի նոյն անուն Բագարան կոչելով զձեռակերտն։ Ինքն անցանէ 'ի Պարսս ընծայատար Դարեհի, ոչ ինչ փոյթ առ-

նելով զՀռովմայեցւոց իշխանութեանէն։ Իսկ'ի գնալն Սմբատայ'ի Պարսս հասանէն հարկահանք կայսեր և սպայ ծանր 'ի սահմանս Հայոց. զորս մաղթեալ Արտաշիսի և կըրկին տուեալ զհարկան, հաշտեցուցանէ։ Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ուղիւպ քուրմ Հանուոյ, գրօղ մեհենական պատմութեանց, և զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում և Պարսից մատեանքն վկայեն և Հայոց երգն վիպասանաց։

Խթ. Վասն շինուածոյ Արտաշատ քաղաքի։

ԱՐՏԱՇԻՍԻ վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ 'ի վիպասանացն, որ պատմին 'ի Գողթան. շինել զքաղաքն, և խնամութիւն ընդ Ալանք և ծնունդք զարմիցն, և իբր տրփանք Սաթինկան ընդ վիշապազունան՝ առասպելաբար, այս ինքն ընդ զարմն Աշդահակայ, որ ունին զամենայն զառ-

սարոտոուն Մասեաց. մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութեանէն, և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն, և նախանձ որդւոցն Արտաշիսի և գրգռութիւն ընդ միմեանս 'ի ձեռն կանանցն: Այս ամենայն, որպէս ասացաք, յայտնի են քեզ յերգս վիպասանացն. բայց յիշատակեսցուք և մեք կարճառօտիւք, և զայլաբանութիւնն ճշմարտեսցուք:

Երթեալ Արտաշիսի 'ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն, շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ: Ձեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրից. վասն որոյ անաշխատ և երագ շինեալ, կանգնէ 'ի նմա մեհեան, և փոխէ 'ի Բագարանէ զպատկերն Արտեմիդայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ 'ի ճանապարհն: Եւ յարուցանէ 'ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն հրէից, որ փոխեալ էին անդ յԱր-

մաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ։ Նա և զամենայն վայելչութիւն քաղաքին Երուանդայ, զոր տարեալ էր յԱրմաւրայ և զոր անդէն արարեալ նորա, փոխէ յԱրտաշատ. և առաւել եւս յինքեանէ յօրինէ նոր զքաղաք արքայանիստ։

Ծ. Յարյաքուստ Ասանայ 'ի մեղ և պարպուտն, և խնամուելն Արտաշիսի ընդ նոսա։

ԶԱՅՍՈՒ ժամանակաւ միաբանեալ Ասանք լեռնականաքն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Վրաց աշխարհին, մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր։ Ժողովէ և Արտաշէս զնուրոյ զօրացն բազմութիւն, և լինի պատերազմ 'ի մէջ երկրին երկոցունց ազգացն քաջաց և աղեղնաւորաց։ Սակաւ ինչ տեղի տայ ազգ Ասանաց, և գնացեալ անցանէ ընդ գետն մեծ Կուր, և բանակի առ եզերբ գետոյն 'ի հիւսիսոյ. և հասեալ Արտաշիսի բանակի 'ի հաս

բաւոյ, և գետն ընդ մէջ նոցա։

Բայց քանզի զորդի Ալանաց արքային ձերբակալ արարեալ զօրացն Հայոց ածեն առ Արտաշէս, զնա զաղուելիւն խնդրէր արքայն Ալանաց, տալ Արտաշիսի զինչ և խընդրեսցէ. և երդմունս և դաշինս ասէր հաստատել մշտնջենաւորս, որպէս զի մի եւս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից եկցեն յաշխարհն Հայոց։ Եւ 'ի չառնուլ յանձն Արտաշիսի առ 'ի տալ զպատանին, գայ քոյր պատանւոյն յափն գետոյն 'ի դարաւանդ մի մեծ. և 'ի ձեռն թարգմանչաց ձայնէ 'ի բանակն Արտաշիսի. Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց. եկ հաւանեաց աչագեղոյ դստերս Ալանաց՝ տալ զպատանիդ. զի վասն միոյ քինուոչ է օրէն դիւցազանց զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով և 'ի սարկաց կարգի պահել, և թշնամութիւն յաւիտենական 'ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաս-

տատել : Եւ լուեալ Արտաշիսի զայսպիսի խնամատուն բանս, գնաց յեղը գեղոյն. և տեսեալ զկոյսն գեղեցիկ, և լուեալ 'ի նմանէ բանս խնամատուութեան, ցանկացաւ կուսին : Եւ կոչեցեալ զդայեակն իւր Սմբատ, յայտնէ նմա զկամս սրտի իւրոյ, առնուլ զօրիորդն 'ի կնութիւն իւր, և դաշինս և ուխտս հաստատել ընդ ազգի քաջացն, և զպատանին արձակել 'ի խաղաղութիւն : Եւ հաճոյ թուեցեալ Սմբատայ, առ արքայն Ալանաց յոլէ՝ տալ զտիկին օրիորդն Ալանաց զՍաթինիկ 'ի կնութիւն Արտաշիսի : Եւ ասէ արքայն Ալանաց. Եւ ուսաւ՞ տացէ քաջն Արտաշէս հաղարս 'ի հաղարաց և բեւրս 'ի բիւրուց ընդ քաջազգեաց կոյս օրիորդիս Ալանաց :

Զայս տեղն առաստղեալաբանելով վիպասանքն յերդելն իւրեանց ասեն. Հեծաւ արի արքայն Արտաշէս 'ի սեաւն գեղեցիկ, և հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն, և անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն, և ձգեալ զոսկէօղ շիկա-

փոկ պարանն՝ ընկէց 'ի մէջք օրիորդին Ալանաց, և շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին, արագ հասուցանելով 'ի բանակն իւր։ Որ և Ճշմարտութեամբ ունի այսպէս։ Քանզի պատուեալ է առ Ալանամորթ կարմիր, այլքա շատ և ոսկի բազում տուեալ 'ի վարձանս, առնու զտիկին օրիորդն Սաթինիկ։ Այս է ոսկէօղ շիկափոկ պարանն։ Դոյնպէս զհարսանեացն առասպելեալ երգեն, այսպէս ասելով. Տէղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ 'ի հարսնութեան Սաթինկանն։ Քանզի սովորութիւն իսկ էր Թագաւորացն մերոց, փեսայութեամբ 'ի գուռն տաճարին հասանել՝ դահեկանս Ճապաղել իբրեւ զհիւսպատեանն հռովմայեցւոց. սապէս և Թագուհեացն յառագաստին՝ մարգարիտ։ Այս է Ճշմարտութիւն բանիցս։

Սա առաջին եղեալ 'ի կանանցն Արտաշիսի՝ ծնանի նմա զԱրտաւազդ և այլս բազումս, զորս ոչ կա-

բեւոր համարեցաք այժմ անուամբ թուել. բայց զկնիսն յորժամ 'ի գործ ինչ հասանիցեմք։

ԾԱ. Սպանումն Արգամայ և որդւոց նորա։

Ի ՁԱՓ հասեալ Արտաւազդայ որդւոյ Արտաշիսի, եղեւ այրքաջ, անձնահաճ և հպարտ. և նախանձ բերելով ընդ ծերունւոյն Արգամայ, հրապուրեաց զհայր իւր ցասնուլ Արգամայ, որպէս թէ թագաւորել 'ի վերայ ամենայնի խորհիցի։ Այսպէս ընկեցեալ զնա 'ի պատուոյն, ինքն առնու զերկրորդութիւնն։ Յետ այսր երթալով Արտաշիսի 'ի ճաշ Արգամայ, կասկած նմին անկեալ, իբր թէ դաւել զարքային խորհեցան, յարուցանեն որդիքն արքայի ապշոպ, և անդէն իսկ 'ի հացին քարշեն զալիսն Արգամայ։ Եւ խուովութեամբ մեծաւ եկեալ յԱրտաշատ Արտաշէս արքայ, դարձեալ արձակեաց զորդի իւր զՄաժան մեծաւ դնդաւ, և

զբազումս յազգէն Մուրացան սպա-
նանել հրամայեաց, և զապարանսն
Արգամայ այրել. և զհարճ նորին,
որ կարի ջքնաղ էր գեղով և մնա-
ցեալ գնացիւք ոտից, զոր կոչէին
Մանդու, ածել 'ի հարճութիւն
Արտաշիսի։ Զոր դարձեալ նուա-
ճեալ յետ երկուց ամաց, 'ի բաց
տալ հրամայէ զինչսն բայց 'ի հար-
ճէն։

Իսկ Արտաւազդայ ոչ շատա-
ցեալ առնուլ 'ի բաց 'ի նոցանէ
զերկրորդութեան պատիւն, յա-
ւելու եւս հանել և զնախճաւան,
և ըստ հիւսիսոյ Երասխայ զամ-
նայն գեղս, յորում և ապարանս
և բերդս 'ի նոցանէ շինէ իւր 'ի ժա-
ռանգութիւն։ Այսմ ոչ կարա-
ցեալ համբերել որդւոյն Արգա-
մայ, ընդդիմանայ նմա պատերազ-
մաւ. բայց յաղթեալ ալբայոր-
դւոյն՝ ստոտակէ զամենայն ծնունդս
Արգամայ հանդերձ հարսն, և որք
միանգամ երեւելիք էին յազգէ Մու-
ցացան, և գրաւէ յինքն զչէնս և
զամենայն իշխանութիւնս նոցա։

Եւ ոչ ոք ապրեաց 'ի նոցանէն, բայց միայն աննշանաւորք ոմանք և կրտսերք փախուցեալ առ Արտաշէս՝ ապրեցան 'ի դրան արքունի։ Այս Արգամ է որ յառաստղելին Արգաւանն անուանի, և այս պատճառ պատերազմին ընդ Արտաւազդայ։

ԾԲ. ԵՒԷ ՈՐՊԷՍ ՍՄԲԱՏ, Ի ՊԻՆԷ ՅԱԼԱՆՍ ԳՈՐԾԷՍՑ. Ի ԲՆԱՒԷԼ ԱՐՊԱՊԷՍ։

ՍԻՐԵԼԻ է ինձ ասել և վասն առնն քաջին Սմբատայ. քանզի արդարեւ ըստ առաստղելին ոչ ինչ կարի հեռի 'ի ճշմարտութենէն. որ ունէր հաստակ անդամոց համեմատ քաջութեանն, և առաքինութեան ոգւոցն որսորդ, և գեղեցկութեան աչեաք վայելչացեալ. սակաւ ինչ ասեան նիշ ունելով յաչսն՝ որպէս գրականիկոն 'ի վերայ ոսկւոյ և 'ի մէջ մարգարտոյ ծագէր. և 'ի վերայ շոյտ անձին և մարմնոյ՝ զգոյշ յամենայնի, և տուչութիւն յաչո-

զուածոց ունէր 'ի մարտս առաւել քան զամենայն ոք : Զի յետ այն-չափ արուեստանց՝ օգնական Սաթինկայ եղբօրն յաշխարհն Ալանաց հանդերձ զօրու երթայ հրամանաւ Արտաշիսի : Քանզի մեռաւ հայր Սաթինկան, և այլ ոմն բըռնացեալ թագաւորեաց աշխարհին Ալանաց, և հալածէր զեղբայրն Սաթինկան. զոր վանեալ հեռեաւ Սըմբատ, և տիրացուցանէ 'ի վերայ ազգին զեղբայրն Սաթինկան, և զերկիր հակառակորդացն աւերէ. զամենայն միահամուռ ածէ գերի սատակ յԱրտաշատ : Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա 'ի հարաւոյ յարեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշան գաւառ, 'ի վերայ պահելով զբնիկ անուանն Արտազ. քանզի և աշխարհն՝ ուստի գերեցանն՝ Արտազ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի :

ԾԴ. Ա-ԷՐՈ-ՖԻ ԿԱՍԷԷՅ, Ի ԳՐԳՈՐԻՆ ԸՆԴ ՍՄԲԱՏԱՅ ՂԱՐԻՆ ԱՐԱՇԷՍԻ Ի ԸՆԴ ՄԻՄԵԱՆՆ :

ՅԵՏ մեռանելոյ վերջնոյ Արշակայ Թագաւորի Պարսից, Թագաւորեցուցանէ մերս Արտաշէս զՀոմանուն իւր զԱրտաշէս որդի նորին 'ի վերայ Պարսից աշխարհին : Եւ ոչ կամեցան հնազանդել նմա բնակիչք Լերինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն Պատիժահար գաւառ, որ է Գեղմանց լեառն, և Ծովեզերայք, և այսր էաս քան զնոսա. նա և Կասբից երկիրն յայն սակս ապստամբեն 'ի մերոյ արքայէն : Վասն որոյ առաքէ 'ի վերայ նոցա Արտաշէս զՍմբատ ամենայն զօրքն Հայոց, ինքն արքայ յուղարկաւոր երթալով աւուրս եւթն : Իսկ Սմբատայ երթեալ հնազանդէ զամենեսեան, բայց զերկիրն Կասբից աւերեալ, առաւել քան զարտաքեան գերին ածէ 'ի Հայս. ընդ որս և զՋարգմանոս անուն Թագաւոր նոցին : Վասն որոյ արժանի ըստ

վաստակոցն պարգեւէ նմա Արտաշէս զմասն արքունի, որ 'ի շէնս Գողթան, և զՈւղտու ակունս, և առ այսոքիկ՝ և զաւարն ամենայն նմա թողու։ Ընդ որ նախանձեալ Արտաւազդ, կամեցաւ սպանանել զՍմբատ. և յայտնեալ խորհրդոյն, բազում խռովութիւն վասն այնր լինէր հօրն։ Իսկ Սմբատայ տեղի տուեալ գնաց զկողմանքն ասորեստանի. իւրով կամաւ թողու զիշխանութիւն զօրացն Հայոց, ընդ որ խանդայր Արտաւազդ։ Հրամանաւ Արտաշիսի բնակէ 'ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդուք, 'ի յԱլկի նստուցեալ զբազմութիւն գերեւոյն, քանզի էր 'ի ծերութեան կին արարեալ յաստուածանեաց հուպ յայն կողմանս, զոր յոյժ սիրեաց, վասն այնորիկ և զնորին կողմանքն բնակեցաւ։

Իսկ Արտաւազդ յետ գնալոյն Սմբատայ առնու 'ի հօրէն, որում ցանկայրն, զիշխանութիւն զօրացն ամենայնի։ Եւ նախանձ բերելով ընդ նմա եղբարցն՝ 'ի գրգռութենէ

կանանց իւրեանց, վասն որոյ կար-
գէ Արտաշէս զԱրոյր՝ հաղարա-
պետ, զայր խնամատուն և բանա-
ստեղծ, և հրաւատայ 'ի նա զամե-
նայն գործս տանն արքունի. և զՄա-
ժան կարգէ քրմապետ 'ի յԱնի գիւղն
Արամազդայ: Բաժանէ Արտաշէս
և զիշխանութիւն զօրուն ընդ չորս.
զարեւելեանն Թողու 'ի վերայ Ար-
տաւազդայ, և զարեւմտեանն տայ
Տիրանայ, զհարաւայինն 'ի Սմբատ
հաւատայ և զհիւսիսայինն 'ի Զա-
րեհ: Եւ Զարեհ էր այր սէգ և
յորս էրէոց նահատակ, իսկ առ
պատերազմունս վատ և տաղտուկ.
զորոյ զփորձ առեալ Քարձամայ ո-
րուն արքայի Վրաց, ապստամբե-
ցուցանէ զերկիրն. և կապեալ զՁա-
րեհ, 'ի բանտի դնէ 'ի Կաւկաս: Ընդ
որում պատերազմեալ Արտաւազ-
դայ և Տիրանայ հանդերձ Սմբա-
տաւ, դարձուցանեն զերկրայրն 'ի
մեծ կապանաց և 'ի բանտէ:

Ծ'Ի. Պատերազմ ընդ զօրս Դոմեպիանոսի 'ի Բասէան։

ԱՂՄՈՒԿ չփոթից լիմն լեալ յարեւմուտս, ընդ որ վստահացեալ Արտաշէս՝ նշխահեալ ընդդիմանայ հռովմայեցւոցն, ոչ տալով հարկս։ Իսկ Դոմեպիանոսի կայսեր ցասուցեալ, զօրս 'ի վերայ Արտաշիսի առաքէ. որոց հասեալ 'ի կողմանս Կեսարու, զՏիրան և զզօրսն արեւմտեան առաջի եդեալ՝ ածէն տագնապաւ մինչեւ ցքաջ ընդարձակ հովիտն Բասենայ. յորում ընդդէմ դիպեալ Արտաւազդ արեւելեայ և հիւսիսային զօրքն, հանդերձ ամենայն որդւովքն արքայի, և պատերազմեալ սաստկապէս, վտանգին։ Յորոյ 'ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրքն, ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքայի, յաղթութիւն և զբաւ պատերազմին առարեալ։ Զի Թէպէտ և Ծերագոյն էր, երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զՀակատն, և հետամուտ

եղեալ հալածեաց զզօրսն հռով մայեցւոց մինչեւ 'ի սահմանս կեսարու։

Զայս կամելով երդել յառաջելն, Դոմետ զոմն ասեն եկեալ, որ է ինքն կայսրն Դոմետիանոս. ոչ եկեալ այսր, այլ զհրաման նորա և զզօրս այլաբանելով յանուն նորա կոչեն։

Բայց ըստ բախտին եղեալ Արտաշիսի, մեռանի 'ի նոյն ժամանակի Դոմետիանոս 'ի Հռոմ, և զկնի նորա Ներուսաս ոչ աւելի թագաւորեալ քան զմի ամ։ Ընդ որս առաւել հպարտացեալ զօրացն Հայոց և Պարսից, անպատակ եւս 'ի Յոյնս արարին։ Ընդ սոսա հայելով Եգիպտացւոց և կողմանցն պաղեստինացւոց, արդելուն և նոքա զհարկին հռովմայեցւոց։

ԾԵ. Յաղագս Տրայիանոսի և նորին գործոց, և մահուանն Մաժանայ յեղբարցն։

ԶԱՅՍՈՒ ժամանակաւք լինի թագաւորեալ հռոմայեցւոց Տրայիանոս, և խաղաղացուցեալ զամենայն արեւմուտս, դիմէ 'ի վերայ եգիպտացւոց և պաղեստինացւոց. և նուաճեալ զնոսա ընդ իւրով ձեռամբ, խաղայ յարեւելս 'ի վերայ Պարսից։ Ասա աճապարեալ Արտաշէս մեծապէս ընծայիւք լիջանէ ընդառաջ նորա, զմեղանս 'ի յանձն առեալ, հանդերձ հարկաւք անցեալոց ամացն լինի առաջի նորա. և թողութիւն 'ի նմանէ գտեալ, դառնայ յաշխարհս Հայոց։ Եւ Տրայիանոս անցեալ 'ի Պարսս, և զամենայն զկամս իւր կատարեալ, դառնայ ընդ Ասորիս։

Ընդառաջ նորա իջանէ Մաժան. մատնութիւն զեղբարցն առնէր. Գիտեա, ասէ, արքայ, եթէ զԱրտաւազդ և զՏիրան վտարանդիս ոչ արասցես, և զբոլոն Հայոց Զարեհի

ոչ հաւատացեալ, հարկքն անաշ-
խատ 'ի քեզ ոչ եկեսցեն։ Զայս
արար Մաժան քէն պահելով վան
Սմբատայ, զի և զնա նորա էր անու-
ցեալ. ընդ նմին և զՏիրան խորհե-
ցաւ հանել, զի ինքն ընդի քրմապետ
միանգամայն և սպարապետ արեւ-
մանց։ Զորմէ ոչինչ փոյթ արարեալ
Տրդատանու, արձակէ ունայն։ Իսկ
Արտաւազդայ և Տիրանայ խմացեալ
զխորհուրդն նորա, դարան գոր-
ծեալ յորս սպանին զՄաժան, զոր
տարեալ թաղեցին 'ի բաղնացն ա-
ւանի իբր զքրմապետ։ Իսկ Արտա-
շէս յայնմ հետէ անսայթաք հար-
կեաց Տրդատանու, և յետ նորա
Աղրիանոսի կայսեր զամենայն ա-
ւուրս իւր։

ԾԶ. Թէ ո՞րպէս Բաղմամարդաց
Արքաշէս զաշխարհս, և սահմանս հաս-
տատէաց։

ՅԵՏ ամենայն առաքինութեանց
և գործոց ուղղութեանց Արտա-
շիսի, հրամայէ զսահմանս գիւղից

և ագարակաց որոշել. քանզի բազ-
մամարդացոյց զաշխարհս Հայոց՝ ե-
կամուտ բազում ածելով յազգս,
և բնակեցուցանելով 'ի Լերինս և 'ի
հովիտս և 'ի դաշտս: Եւ նշանս
սահմանաց հաստատեաց այսպէս.
հրաման տալով քարինս կոփել զո-
րեքկուսիս, և պնակաձեւ փոսել
զմէջն, ծածկելով յերկրի. և զո-
րեքկուսիս 'ի վերայ յարուցանել
ամբարտակս, սակաւ ինչ բարձրա-
գոյն յերկրէ: Ընդ որ նախանձեալ
Արտաշրի, որդւոյ Սասանայ, զնոյն
նման հրամայէ առնել և 'ի Պարսից
աշխարհին և յիւր անունն անուա-
նել, զի մի ևս յիշեսցի անունն Ար-
տաշիսի:

Բայց՝ ասի, 'ի ժամանակս Ար-
տաշիսի ոչ գտանել երկիր անգործ
յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային
և ոչ դաշտային, յաղագս շինու-
թեան երկրիս:

ԾԷ. Յաղագս Նախարարութեանն Ա-
մատունեաց։

ՅԱՒՈՒՐՍ սորա ասեն եկեալ զազգ ամատունեաց 'ի կողմանցն Ա-
րեւելից Արեաց աշխարհին։ Բայց են սոքա բնութեամբ Հրեայ 'ի Մա-
նուէայ ումեմնէ. որոյ որդի իւր մեծահասակ և ուժեղ, Սամսոն ա-
նուն կոչեցեալ, որպէս սովորութիւն է Հրէից՝ ըստ յուսոյ զնախ-
նեացն կոչել անուանս։ Բայց է Ճշմարիտ և այժմ իսկ տեսանել 'ի
զարմս ամատունեաց, քանզի անձ-
նեայքն և բարեձեւք ըստ պատշա-
ճի վայել են ամենայն իրօք և ու-
ժեղք։ Տարեալք են սոքա 'ի յԱր-
շակայ առաջին 'ի Պարթեւաց թա-
գաւորեցելոյն, և յառաջադիմու-
թեամբ անդէն յԱրեաց աշխարհին
'ի պատիւ հասեալք 'ի կողմանս
Ահմատանի։ Բայց թէ յինչ պատ-
ճառաց գալուստ նորա այսր՝ ոչ գի-
տեմ. այլ պատուին յԱրտաշիսէ
գեղիւք և դաստակերտօք, և ա-
նուանին ամատունիք, որպէս թէ

եկք։ Եւ կէսք 'ի Պարսից մանուեանս զնոսա կոչեն յանուն նախնեւոյն։

ԾԸ. Վասն առուեղինէր պահին, թէ ուստի սերէալ ազգ։

Ի ՍՈՐԱ աւուրս և առուեղեանքդ յազգէ Ալանաց մերձաւորք Սաթինկայ զհետ նորա եկեալք, կարգեցան յազգ և 'ի նախարարութիւն աշխարհիս Հայոց, որպէս հարազատք Թագուհւոյն մեծի. և 'ի ժամանակս խոսրովու հօրն Տրդատայ խնամացեալ ընդ ումեմն քաջի Բասիլացն եկեալ հաստատեցի։

ԾԹ. Արտաշիսի գիրքն որ ինչ յաւուրս Արտաշիսի։

ՔԱՆԶԻ բազում ինչ գործք յաւուրս Արտաշիսի գործեցան, վասն այնորիկ 'ի բազում ճառս կոտորեցաք, զի մի երկայնութեամբ բանից տաղտկութիւն ընթերցողացն լինիցի. որոյ է վերջին ճառս այսպիսի ինչ, յիշատակեալ և զայլն ևս

որ ինչ 'ի ժամանակս Արտաշիսի։ Զի Թէպէտ և զայն ամենայն զոր ինչ յիշատակեցաք յառաջագոյն ճառիցն, կարգք և սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան 'ի Վաղարշակայ և յայլոց առաջնոց Թագաւորացն, այլ 'ի մեծամեծ աւրուեանից և 'ի գիտութեանց ունայնացեալք էին, որպէս հինից և ասպատակաց պարապեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք. զշաբաթուց ասեմ և զամսոց և զտարեաց բոլորմանց։ Քանզի ոչ այսպիսի ինչ ճանաչիւր առ նոսա, այլոց ազգաց վարելով. և ոչ 'ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ 'ի վերայ գետոց ճանապարհորդութիւնք, և ոչ գործիք ձկանց որսոց. այլ և ոչ յամենայն տեղիս երկրագործութիւնք, բայց գոյզն ուրեք. ըստ օրինակի հիւսիսականաց կողմանց՝ շաղղակերութեամբ և այլովք այսպիսեօք կեցեալք։ Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի։

Գ. Յաղագս Մահուանն Արտաշիսի։

ԳԵՂԵՑԻԿ իմն պատմէ և Արիստոն փիլիսոփայն յաղագս մահուանն Արտաշիսի։ Քանզի 'ի ժամանակի որպէս ապստամբեցին Հրեայք յԱդրիանոսէ հռովմայեցւոց թագաւորէ, և եառուն պատերազմ ընդ Բուփոսի Եպարքոսի՝ առաջնորդութեամբ առն ուրումն աւազակի, որոյ անուանն էր Բարքոբայ, այս ինքն աստեղ որդի, որ էր գործովք չարագործ և սպանող, բայց անուամբ խրոխ մեծաբանեալ պարծէր, որպէս թէ յերկնից ծագեաց նոցա փրկիչ, իբր նեղելոց և գերեաց։ Եւ այնքան սաստկացոյց զմարտն, մինչեւ 'ի նա հայելով 'ի բաց կացին 'ի հարկելոյ հռովմայեցւոց Աստրիք և Մինջապետք և Պարսք ամենայն. քանզի էր և լուեալ, եթէ եմուտ յԱդրիանոս ախտ ուրկութեան։ Բայց մերն Արտաշէս ոչ երկմտեաց 'ի նմանէ։

Եւ եղեւ ընդ այն ժամանակս հասանել Ադրիանոսի 'ի Պաղեստինէ

և սատակել զապստամբսն պաշար-
մամբ 'ի քաղաքի մի փոքր՝ հուսկ
յԵրուսաղէմ. վասն որոյ և ամե-
նայն ազգին Հրէից հրամայեաց մեր-
ժել 'ի հայրենի աշխարհէն, որ և
ոչ 'ի բաղում հեռաստանէ հայեա-
ցին յԵրուսաղէմ: Եւ ինքն շինէր
զԵրուսաղէմ զաւերեալն 'ի Վես-
պիանոսէ և 'ի Տիտոսէ և յիւրմէ.
և անուանեաց Էլիայ յիւր անուն՝
որպէս և կոչէրն իսկ Ադրիանոս՝
արեգակն: Բնակեցոյց 'ի նմա հե-
թանոս և քրիստոնեայս, որոց է-
պիսկոպոս էր Մարկոս ոմն: Ընդ
այն ժամանակս առաքեաց զոր ծանր
զկողմամբք սարսեսանեաց. և մե-
ծոյն Արտաշիսի հրամայեաց երթալ
'ի Պարսս հանդերձ իւրովք զիւգոս-
տասոք. զորոյ զհետ քարտուղարու-
թեամբ լեալ այս այր, որ զայս պատ-
մութիւնս եառ մեզ, հանգիպի Ար-
տաշիսի 'ի Մարսս, 'ի Սոհանդ ա-
նուանեալ տեղւոջ:

Պատմի և հիւանդանալ նմա 'ի
Մարանդի, 'ի Բակուրակերտ աւա-
նի. և զԱբեջոյ զոմն նահապետ ա-

բեղինից առհմին, զայր շոյտ և շղոլ-
մարար և սուտակասպաս 'ի նորին
խնդրոյ արձակէ յԵկեղեաց յԵ-
րիզայ, 'ի մեհեանն Արտեմիդայ,
խնդրել 'ի կռոցն բժշկութիւն և
զբաղում կեանս։ Որոյ ոչ ժամա-
նեալ դառնալ, հասանէ վախճան
Արտաշիսի։ Եւ գրէ, եթէ ոչ-
չափ ամբոխութիւնք մեռան 'ի մա-
հուանն Արտաշիսի, սիրելի կա-
նայք և հարճք և մտերիմ ծառայք.
և որպիսի շուք բազմադիմիս արա-
ւին առ 'ի պատիւ գիւոյն, քաղա-
քական կարգօք և ոչ որպէս զբար-
բարոսս։ Դադաղքն էին ոսկեղէնք,
գահոյքն և անկողինքն բեհեզեայ,
և պատմուճանն որ զմարմնոյն՝ ոս-
կէթել. թագ կապեալ 'ի գլուխն,
և զէնն ոսկւով առաջի եդեալ. և
զգահոյիւքն շուրջ՝ որդիքն և բազ-
մութիւն ազգականացն, և առ այ-
ոքիւք պաշտօնէիցն զինուորու-
թիւնք, և նահատակաքն և նախա-
յարութեանցն գունդք և միանգա-
մայն զօրականացն վաշտք, ամենե-
քին կազմեալ զինու հանդերձ, իբր

թէ 'ի պատերազմ Հակատիցին. և առաջի պղնձիս հարկանելով փողս, և զկնիսն ձայնարկու կուսանք սեւազգեստք և աշխարհս կանայք, և զհետ՝ բազմութիւն ռամկին։ Եւ այսպէս տարեալ թագէցին։ Եւ շուրջ զգերեզմանաւն ընդէին կամաւոր մահուանք, որպէս վերագոյնն ասացաք։ Եւ սորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ, թագաւորեալ ամս քառասուն և մի։

ԿԱ. Արքա-աղաչ Ներգ-որ-ութ-ն, և հալածել զ-ղէարս ի-ր և զ-տրս, և մահ հանդերձ այլոքանելով։

ՅԵՏ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատոյ զամենայն էղբարս իւր 'ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի բնակեսցեն յԱյրարատ 'ի կալուածս արքայի. բայց միայն զՑիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա։ Որ յետ ոսկաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, անցեալ զկամրջաւն

Արտաշատ քաղաքի՝ որպէս կինչ և իշավայրիս զակամբք Գինայ, աղ-
մկեալ ելեն 'ի ցնորից խելագարա-
նաց, ընդ վայր յածելով երիվա-
րաւն, անկանի 'ի խոր ելեն մեծ, և
խորասոյզ լեալ՝ անհետի։

Զամանէ երդիչքն Գողթան ա-
ռասպելաբանեն այսպէս. Եթէ 'ի
մահուանն Արտաշիսի բազում կո-
տորածք լինէին ըստ օրինի հեթա-
նոսաց. դժուարի, ասեն, Արտա-
ւազդ՝ ասելով ցհայրն. Մինչ դու
գնացեր, և զերկիրս ամենայն ընդ
քեզ տարար, ես աւերակաց որ-
պէս թագաւորեմ։ Վասն որոյ ա-
նիծեալ զնա Արտաշիսի՝ ասաց այս-
պէս. Եթէ դու յորս հեծցիս յա-
զատ 'ի վեր 'ի Մասիս, զքեզ կալ-
ցին քաջք, տարցին յազատ 'ի վեր
'ի Մասիս, անդ կացցես, և զլոյս
մի տեսցես։

Զրուցեն զամանէ և պատա-
ւունք, Եթէ արդեալեալ կայ յայրի
մի՝ կապեալ երկաթի շղթայ-
ւք. և երկու շունք հանապազ կըր-
ծելով զշղթայսն, Ջանայ ելանել և

առնել վախճան աշխարհի. այլ 'ի ձայնէ կռանարկութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն։ Վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ՝ բազումք 'ի դարբնաց, զհետ երթալով առասպելին, յաւուրս միաշաբաթուոջ երկոցս կամ չորկոցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ։ Բայց է ճշմարտութեամբ այսպէս, որպէս ասացաքս վերագոյն։

Այլ ոմանք ասեն և 'ի ծնանելն զսա. դիպեալ պատահարաց իմն. զոր համարեցան կախարդել զսա կանանց զարմից Աշդահակայ. վասն որոյ զնոսա բազում չարչարեաց Արտաշէս։ Եւ զայս նոյն երգիչքն յառասպելին ասեն այսպէս. եթէ վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ, և դեռ փոխանակ եդին։ Բայց ինձ արդարացեալ թուի լուրն այն, թէ 'ի ծննդենէն եւեթ մոլութեամբ լեալ, մինչ նովիմբ և վախճանեցաւ։ Եւ առնու զթագաւորութիւնն Տիրան եղբայր նորին։

ԿԲ. Որ ինչ վասն Տիրանայ։

ԹԱԳԱՒՈՐԷ Հայոց Տիրան որդի Արտաշիսի յերրորդ ամի Պերոզի առաջնոյ Պարսից արքայի։ Սորա ոչ ինչ պատմին գործք մեծամեծք, այլ միայն՝ թէ մտերմութեամբ ծառայեաց հռովմայեցւոց. էկաց խաղաղութեամբ, որսոց և զբօսանաց պարապեալ, որպէս ասեն։ Եւ ձիոց երկուց լեալ՝ թեթեւառաւել քան զՊիգասոս երագութեամբ անբաւ. զորս ոչ երկրակոխս, այլ օդագնացս համարէին. յոր խնդրեալ հեծանել Դատաքէի ուրուն իշխանի բզնունեաց, պարծէր ընչեղագոյն գոլ քան զարքայ։

Եւ էկեալ առնա կանխագոյն իւրոյ ազգին արշակունեաց, որ էին 'ի կողմանս Հաշտենից, ասեն. Ընդալ ձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք։ Եւ նա հրամայէ ոմանց 'ի նոցանէ երթալ 'ի գաւառն Աղիովտի և Առբերանոյ։ Իսկ սոցա առաւել եւս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւե-

լագոյն նեղ է մեզ, ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունին հաւատար տրոհել յինքեանս: Զոր բաժանեալ ըստ մարդաթուի, գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք 'ի նոցանէ եկեալ 'ի գաւառն Աղիովտի և Առբերանոյ:

Յաւուրս սորա ասեն լեալ զպատանի ոմն յազգէն անձաւացեաց, սեգ յամենայնի, Երախնաւու անուն կոչեցեալ. որ առնէ էին զվերջին կանանցն Արտաւազդայ, զոր 'ի Յունաց էր ածեալ: Եւ քանզի զաւակ ոչ գոյր Արտաւազդայ, արքայ Թողու յԵրախնաւու զամենայն տունն Արտաւազդայ: Զի ասէին զնա այր ընտիր լինել և համեստ յամենայնի, այլ և 'ի ցանկութիւն մարմնոյ իբրեւ զօրինաւորք: Զոր սիրեալ արքայի, տայ նմա զգահն երկրորդական, զոր ունէրն Արտաւազդ. և զհոգս արեւելեան զօրուն 'ի նա հաւատացեալ, առ

նմա թողու զԴրուասպ ոմն սար-
սիկ զմտերիմ իւր, որ խնամոցեալ
էր ընդ նախարարս Վասպուրական-
նի, որում տուեալ էր զաւանն Տա-
ռեօնս հանդերձ ագարակօքն, և
զայգին մեծ՝ յոր մտանէր առուն՝
դեռ հանեալ 'ի ծովէն Գայլա-
տուայ։ Եւ ինքն դնաց զկողմանքն
Եկեղեաց, 'ի յաւանին Շրմէս հաս-
տատելով զաղքունիսն։ Ի հանդար-
տութեան վարեաց զԹագաւորու-
թիւնն՝ ամս քսան և մի. և մեռաւ
'ի Ճանապարհի, ձեռն հիւսիսոյ
կալեալ։

ԿԳ. Յաղագս Տրդատայ Բագրատու-
նւոյ, և անուանց ազգի նորա տոհմոյ։

ՏՐԴԱՏ ոմն անուն յազգէն
Բագրատունեաց, որդի Սմբատու-
հեայ դասեր քաջին Սմբատայ, այր
սրտեայ և ուժեղ, կարճ հասակաւ
և գծուծ տեսլեամբ, զոր իւր փե-
սայացոյց ազգայ Տիրան 'ի դուստր
իւր յԵրանեակ։ Որ ատեցեալ զայր
իւր զՏրդատ, պչրանօք և սրատե-

լեաւ կայր զօրհանապազ, աւաղելով զինքն, իբր թէ ջնաղագեղ ընդ վատակերպոյ և քաջատոհմիկ ընդ վատթարազգւոյ բնակէ։ Ընդ որ զայրացեալ Տրդատ, յաւուր միում գանէ զնա ատատկապէս. և կարեալ զգեղձան հերան և զբերանսն փեստեալ զնոսպոսկս, հրամայէ քարշել արտաքս և ընկենուլ 'ի սենեկէն։ Եւ ինքն գնաց ապրատամբեալ 'ի կողմանս ամրութեանն Մարաց. և հասեալ 'ի Սիւնեաց աշխարհն, ժամանէ նմա համբաւ մահուանն Տիրանայ. զոր լուեալ դադարէ անդ։

Եւ եղեւ յաւուր միում կոչէլ զնա յընթրիս Բակրոյ նահապետին Սիւնեաց. և յուրախանալն գինւով՝ տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր, և երգէր ձեռամբ, որում անուն էր Նազինիկ, տրփացաւ և ասէ ցԲակուր. Տուր ինձ զվարձակս զայս. և նա ասէ. Ոչ տամ, զի հարճ իմ է։ Իսկ Տրդատայ բուռն հարեալ 'ի կինն, յիւրն քարշեաց 'ի բազմականն.

շամչելով վաւաշէր ըստ օրինակի
երիտասարդի անարգել տարփաւո-
րի։ Ընդ որ խանդացեալ Բակրոյ.
յարեաւ հանել զնա 'ի նմանէ։
Բայց յոտն կացեալ Տրդատոյ, ծաղ-
կակալ սկսեալքն իբր զինու վարե-
ցաւ, նա և զբարձակիցսն 'ի բաղ
մականացն 'ի բաց պուղեաց։ Եւ
անդ էր տեսանել նոր զոմն Ոդի-
սեւս՝ զՊէնեղոպայ զսեղեին սատա-
կելով, և կամ զՂաղիթեայցն և
զյուշկապարկացն կռիւս 'ի վերայ
Պերիթեայ հարսանեացն։ Եւ այն-
պէս յիւր վանան եկեալ խսկոյն 'ի ձի
ելեալ հանդերձ հարճիւն 'ի Սպեր
գնաց։ Զայս աւելորդ եղեւ պատ-
մել մեզ զնահատակութիւն առնն
ցանկասիրի։

Բայց գիտեա, զի 'ի Թողուլ աղ-
գին բագրատունեաց զօրէնս հարցն,
նախ խժական ժառանգեցին յոր-
ջորջումն, Բիւրատ և Սմբատ և այլ
տոհմիսն կոչմունս, զրկեալ 'ի նախ-
նական անուանցն, որպէս կոչէին
յառաջ քան զուրանալն՝ Բագա-
դիա, Տուբիա, Սենեքիա, Ասուդ,

Սափատիա, Վազարիա, Ենանոս։ Եւ ինձ թուի, թէ որ այժմդ կոչին բադրատունիք Բագարատ՝ Բագադիա է դա, և Ասուդ՝ Աշոտ. դոյնպէս և Վազարիա՝ Վարազ, որպէս Շամբատ՝ Սմբատ։

ԿԴ. ԵՐԷ ՂԻՐԴ ՏԻԳՐԱՆ ՎԵՐՋԻՆ, ԵՒ ՂԻՆԼ 'Ի ՆՄԱՆԷ ԳՈՐԾՈՒ։

ՓՈԽԱՆՈՐԴԷ զՏիրան՝ եղբայր իւր Տիգրան վերջին, թագաւորեալ Հայոց 'ի քսան և 'ի չորրորդի ամի Պերոզի Պարսից արքայի. և երկայնակեաց եղեալ ամս քառասուն և երկու՝ մեռանի, ոչ ինչ գործ արժանի յիշատակի ցուցեալ, այլ 'ի յաղջկանէ միոջէ 'ի յունէ 'ի կալանս ընկեալ, 'ի ժամանակին յորում վախճանեցաւն Տիտոս երկրորդ թագաւոր հռովմայեցւոց, որ անուանեցաւն Անտոնինոս Աւգոստոս։ Եւ Պերոզ արքայ Պարսից 'ի հռովմայեցւոց իշխանութիւնն արշաւեաց, ուստի և Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող. քանզի յա-

ռաջ անուանիւր Վաղէգեսոս 'ի Յունաց լեզուն. բայց թէ Պարսք զինչ կոչեն զնա, ոչ գիտեմ։

Արդ յասպատակէն Պերոզի ընդ Սասրիս՝ 'ի կողմանս սպաղեսանենացւոց, վասն նորա և հրամանաւ նորին՝ և մերն Տիգրան 'ի մէջերկրեայս. և 'ի կալանս ըմբռնեալ յաղջկանէ միոջէ իշխելոյ կողմանցն այնոցիկ, մինչ դեռ Ղուկիանոս կեսար յԱթէնս զմեհեանն շինէր. որոյ և անցեալ զօրօք բազմօք 'ի մէջերկրեայսն յեռ մեռանելոյն Պերոզի նուաճեաց զՀայս, և արձակեաց զՏիգրան։ Եւ զՌոփի զկոյս, զմերձաւոր իւր, նմա կնութեան. զոր եկեալ 'ի Հայս 'ի բաց թողու, և 'ի նմանէ լեալ պատանիս չորս՝ ազգ սերէ յանուն մօրն իւրեանց Ռոփեայ՝ ռոփսեան. և զառաջին մանկանցն գլուխ նահապետ կացուցանէ, և կարգէ ընդ այլ նախարարութիւնս, զի մի անուանեսցին արշակունիք։

Եւ այլ՝ որ ինչ կրտսերագոյն ազգ, եթէ սատ և եթէ զկողմամբք

Կորնէից, հաստատէ այս Տիգրան. որք միանգամ անազգիք էին 'ի վաշ-
ալս և անձամբ երեւեալք, և վասն նորա փրկութեան պատերազմեալ
ընդ Յոյնս, որք 'ի Կորնէից և որք 'ի մերմէ կողմանէս, զյառաջագու-
նից ասացեալոց մնասաւորաց Վնենից և զարմից հայկազանց, ոմանք 'ի
յեկաց: Զոր ոչ անուամբ պատմեա-
ցուք. է՞ ինչ՝ որ վասն յայանի ոչ
լինելոյ մեզ, և է՞ ինչ՝ որ վասն աշ-
խատութեան 'ի վաստակիլն խոյս
տալով. երրորդ, զի և անհաս-
տատութիւնն բազմաց՝ կարծիս 'ի
ներքս ածէ ընդ բնաւն անցանել:
Եւ այսորիկ աղագաւ՝ ոչ ինչ վասն
այնց ազգաց, որք 'ի վերջնոյն Տիգ-
րանայ կարգեցան, ճառեացուք,
թէ և բազում անգամ վասն այսր
'ի մէնջ աղերսեցեալ. այլ միայն զորս
հաւաստի գիտեմք զկնիսն: Զի որ-
չափ էր հնար, փափեալք յաւելորդ
և 'ի պաճուճեալ բանից, և որ ինչ
յանհաւաստին հայէր բանն և մառա-
ծութիւնն. միայն զհետ երթալով
ըստ կարողութեան՝ որ ինչ այլուստ

և կամ՝ի մէնջ՝ զարդարոյն և զՀրշ-
մարտի։ Զնոյն և աստանօր պատ-
րաստելով, արդեւլում զընթացս բա-
նից յոչ պատշաճէն և որ զանհա-
ւասութեանն՝ի նեղքս ածել ակ-
նարկէ կարծիս։ Եւ զքեզ, որպէս
բազում անգամ, և այժմ աղա-
չեմ, մի յաւելորդն հարկաւորել
զմեզ. և սակաւ և կամ յոլով բա-
նիւք՝ զմեծ և զհաւասարի բովան-
դակ աշխատութիւնս մեր՝ ընդ վայր
և աւելորդ ցուցանելով գործ. զի
նմանագոյնս որպէս ինձ՝ և քեզ գոր-
ծէ վտանգս։

ԿԵ. Յաղագս Ռագաւորելոյն Վաղարշայ, և զինելոյ զաւանն Բասենոյ, և պապէլ պարսպաւ զնոր քաղաք, և պա-
պերազմ ընդ Խաղբայ և մահ նորին։

ՅԵՏ մահուանն Տիգրանայ Թագաւորէ Վաղարշ որդի նորին յերեսուն և երկու ամի հոմանուանն իւրոյ Վաղարշայ Պարսից արքայի։ Սա շինէ աւան մեծ զաւղի ծնընդեան իւրոյ՝ի վերայ Ճանապար-

հին. ուր 'ի գնալն մեր իւրոյ 'ի ձմե-
ռոց յԱյրարատ, յանկարծակի պա-
տեալ երկանց 'ի գնացու՝ ծնաւ 'ի
վերայ Ճանապարհին, 'ի գաւառին
Բասեան, 'ի տեղւոջ՝ ուր խաւնին
Մուրց և Երասխ. զոր շինեաց յիւր
անուն, և կոչեաց Վաղարշաւան:
Սա պատեաց պարսպաւ և զՀզոր
աւանն Վարդգէսի, որ 'ի վերայ
Քասախ գետոյ. զորմէ յառաստլեն
ասեն. Հատուած գնացեալ Վարդ-
գէս մանուկն 'ի Տուհաց գաւառէն,
զՔասաղ գետով, եկեալ նստեալ
զՇրեշ բլրով. զԱրտիմեդ քաղա-
քաւ, զՔասաղ գետով, կռեալ կո-
փեալ զդուռն Երուանդայ արքայի:
Այս Երուանդ՝ առաջինն է սակա-
ւակեացն, որ 'ի Հայկազանց, զո-
րոյ զքոյրն կին առեալ Վարդգէ-
սի, շինեաց զաւանս զայս. յորում
և Տիգրան միջին յարշակունեաց
նստոյց զՀասարակ առաջնոյ գերու-
թեանն Հրէից, որ եղեւ քաղաքա-
գեւղ վաճառաք: Այժմ այս Վա-
ղարշ պատեաց պարսպաւ և Հզոր
պատուարաւ, և անուանեաց Վա-

զարշապար, որ և Նոր քաղաք։

Սա թագաւորեալ ամս քսան, մեռաւ. թէ լոկ և այլքն կէցին. բայց ասեմ զսա և յետ մահուանն կեալ, յաղագս բարի անուանն քան զթուլագոյնս 'ի թագաւորաց։ Վասն զի 'ի սորա աւուրս միաբանեալ ամբոխութիւն 'ի հիւսիսականացն, զԽազրաց ասեմ և զՌասլաց, արտաքս քան զդուռն ճորայ ելանել, առաջնորդ և թագաւորունելով ինքեանց զՎնասեպ ոմն Սուրհապ. որք անցեալ վտարին այսր զԿուր գետով։ Որոց պատահեալ Վաղարշ ամբոխիւ մեծաւ և արամբք մարտիկք՝ ցիր դիւթաւալ կացուցանել զամբոխն ընդ երեսս դաշտին, և ձիգ զհետ եղեալ՝ անցանէ ընդ կապանն ճորայ։ Ուր միւսանգամ միաբանեալ թշնամեացն, յօրինեցին ճակատ. զորս թէպէտ և վանեալ քաջացն Հայոց՝ փախստականս առնէին, սակայն Վաղարշ մեռանի 'ի ձեռաց կորովեաց աղեղնաւորաց։

Եւ առնու զթագաւորութիւնն

խոսքով որդի նորա յերրորդ ամի Արտաւանայ Պարսից արքայի : Եւ նոյն հեռայն միաբանեալ զզօրս Հայոց, անցանէ ընդ լեառնն մեծ, վրէժս պահանջելով զմահուան հօրն . և վանեալ սրով և գերարդեամբ զհզօր ազգն զայնոսիկ, մի 'ի հարիւրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս . և զիւրոյ տէրութեանն նշանակ՝ արձան հաստատէ հելլենացի գրով, որպէս զի յայտ լիցի ընդ հնազանդութեամբ լինել հռովմայեցւոց :

ԿԶ . ԵՐԷ ՈՒՍՊԷ ՂԱՅՈՍԻԿ ՊԱՊՄԷ :

ԶՐՈՒՑԷ մեզ զայս Բարդաձան, որ յԵդեսիայ . քանզի նա յաւուրս Անտոնինոսի վերջնոյ երեւեցաւ պատմագրող : Որ յառաջ աշակերտեալ էր աղանդին Վաղենտինանոսի, զոր յետոյ անարդեալ յանդիմանեաց . ոչ գալով 'ի ճշմարտութիւն, այլ միայն 'ի նմանէ զատուցեալ՝ այլ հերձուած յարդարեաց յինքենէ : Սակայն զպատ-

մուլթիւնս ոչ սահաց , զի էր այր կարողի բանիւք . որ և առ Անտոնի նոս համարձակեցաւ գրել թուղթ , և բազում ասացուած արար ընդդէմ աղանդոյն մարկիոնացւոց և բաշխից և կուռց պաշտաման , զոր 'ի մերում աշխարհիս :

Վասն զի եկն նա այսր , որպէս զի աշակերտել զոք կարասցէ 'ի խուժ հեթանոսացս . և իբրև ոչ ընկալեալ եղեւ , եմուտն յամուրն յԱնի , և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն , յորում և զգործս թագաւորացն , յաւելով իւր և որ ինչ առ իւրեաւն , և փոխեաց զամենայն 'ի լեզու ասորի . որ և ապա անտի յեղաւ 'ի յոյն բան : Յորում պատմէ 'ի մեհենից պաշտամանց , վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Մաժանայ քրմապետի 'ի բագնացն աւանի , որ 'ի Բագրեւանդ գաւառի , բազին 'ի վերայ գերեզմանին շինեալ՝ զի 'ի զոհից ամենայն անցաւորք վայելեսցեն , և ընդունիցին հեւրք երեկոթիւք : Յորում

և զկնիկ Վաղարշ ասն աշխարհա-
խումբ կարգեաց իսկզբան ամի նո-
ցոյ, 'ի մուտն Նաւասարդի։ Յայսմ
պատմութենէ առեալ մեր երկրորդ-
եցաք քեզ 'ի թագաւորութե-
նէն Արտաւազդայ մինչեւ յարձանն
Խոսրովու։

ԿԷ. ԵՒԷ ՀՐՊԷՍ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ՊԱՊ-
ՄԷՍ ՀԱՄԱՌՕՏ։

ՈՐՊԷՍ ասացաք, 'ի Վաղարշայ
առնու զթագաւորութիւնն Խոս-
րով որդի նորա, հայր սրբոյ մեծին
Տրդատայ։ Յաղագս սորա և հա-
մատոհմից կարճ 'ի կարճոյ իմն ան-
ցանելով աջողքարտուղարն Տրդա-
տայ Ագաթանգեղոս, փոքր 'ի շատէ
պատմէ զմահն Արտաւանայ Պար-
սից թագաւորին, և զբառնալ տէ-
րութեանն Պարթեւաց յԱրտաշէս
որդւոյ Սասանայ, և զնուաճել
Պարսից ընդ ձեռամբ նորա, և զքի-
նախնդիր լինել Խոսրովայ հօր Տրդ-
տայ, և ապատակաւ հինից ա-
ւերել զաշխարհն Պարսից և ասորեաց

տանի։ Յետ որոյ ասէ, թէ յղեաց Խոսրով յիւր բնիկ աշխարհն 'ի կողմանս Քուշանաց, զի իւր տոհմայինքն 'ի թիկունս հասցեն, և Արտաշրի ընդդէմ կացցեն։ Այլ նոքա, ասէ, չլինէին ունկնդիր, զի հաւանեալք և միամտեալք էին 'ի տէրութիւնն Արտաշրի քան ընդ տէրութիւն ազգատոհմին իւրեանց և եղբայրութեանն։ Եւ եթէ, Խոսրով առանց նոցա վրէժս պահանջէ. և զնովքիմբ ածեալ՝ ասէ, թէ ամն տասն ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ զամենայն երկիրն յապականութիւն դարձուցանէր։ Ասէ ապա և զդալն Անակայ նենգութեամբ, հրապուրեալ 'ի խոստմունս Արտաշրի, որ ասաց՝ եթէ զբուն պատուական զձեր սեպհական Պահլաւն, զայն անդրէն 'ի ձեզ դարձուցից, և զքեզ թագաւ փառաւորեցից։ Վասն որոյ յանձն առեալ Անակայ, սպանանէ զԽոսրով։

Արդ թէպէտ և Ագաթանգեղոս այսպէս համառօտ էանց ընդ այս,

բայց ես հաւանեալ եմ յաւէտ ձիգ և երկայն առնել զպատմութիւն ժամանակիս այսորիկ ճառելով խակըզբանէն, և ճշմարիտ ասացուածովք հոծ և խիտ։

ԿԸ. Զլուսաւորչական աղգացն, յորմէ ցեղք պարսկական որոշեցան։

ՅԱԴԱՄԱՅ քաներորդ առաջնորդ Նահապետ մեզ զԱբրահամ ասուածային պատմութիւնքն ցուցանեն. և 'ի նմանէ ելեալ ազգդ Պարթեւաց։ Քանզի ասէ, յետ մեռանելոյն Սառայի՝ առեալ Աբրահամու կին զՔեթուրայ. յորմէ ծնան Եմրան և Եղբաքն նորա, զոր Աբրահամ 'ի կենդանութեանն իւրում մեկնեաց յԻսահակայ, արձակելով յերկիրն արեւելից։ Յորոց սերեալ ազգ Պարթեւաց. և 'ի նոցանէ Արշակ քաջ, որ ապստամբեալ 'ի մակեդոնացւոց՝ թագաւորեաց յերկիրն Քուշանաց ամս երեսուն և մի. և յետ նորա որդի նորին Արտաշէս ամս քսան և

վեց, ապա Արշակ նորին որդի, որ կոչեցաւն մեծ, որ զԱնտիոքոսն էաս պան, և զԱղարշակ զեղբայր իւր Թագաւոր կացոյց Հայոց, Երկրորդ իւր առնելով: Եւ ինքն ջուրեալ 'ի Բահլ, հասատատեաց զԹագաւորութիւնն իւր ամս յիսուն և երիս. վասն որոյ զարմք նորա Պահլաւք անուանեցան, որպէս և Եղբօրն Ա՞ղարշակայ՝ 'ի նախնւոյն անուն արշակունիք: Եւ էին Թագաւորք պահլաւիկք այսոքիկ: Յետ Արշակայ մեծի առնու զԹագաւորութիւն նորա Արշակն՝ յերեքտասաներորդի ամի Ա՞ղարշակայ Թագաւորին Հայոց՝ ամս երեսուն. ապա Արշանակ՝ ամս երեսուն և մի, յետ որոյ Արշէզ՝ ամս քսան, ապա Արշաւիր՝ ամս քառասուն և վեց: Սորա լինին որդիք երեք և դուստր մի, որպէս յառաջագոյն ասացի. որոց անուանքն՝ անդրականն Արտաշէս կոչիւր, Երկրորդին՝ Կարն. Երրորդին՝ Սուրէն, և դուստրն անուանեալ Կոշմ:

Արդ յետ հօրն վախճանելոյ,

կամ էղեւ Արտաշիսի ազգաւ 'ի վերայ եղբարցն թագաւորել, զոր յանձն առեալ եղբարցն, ոչ առաւել ողբական բանիւք և պատրողք, քան թէ սաստիւ նուաճեալ նորա: Եւ Աբգարու պայման ուխտի և դաշինս 'ի միջի հաստատեալ, թագաւորել Արտաշիսի ծննդովք իւրովք: Իսկ եթէ հատցին զարմք նորա, եղբարցն մատչել 'ի թագաւորութիւն ըստ կարգի աւագութեան: Եւ Արտաշիսի զայս 'ի նոցանէ գտեալ, գաւառս պարգեւէ, ազգ զնոսա ուերելով յանուն իւրաքանչիւր. և 'ի վերայ քան զամենայն նախարարութիւնս կարգէ, զնախնականն 'ի վերոյ պահելով զանուն ազգին, զի կոչեսցին այսպէս. Կարնի Պահլաւ, Սուրենի Պահլաւ, և քոյրն՝ ասպահապետի Պահլաւ, քանզի 'ի վերայ զօրաց էր այր նորա: Եւ այս կարգաւորութեամբս ձգեցան բազում ամս, մինչեւ վերացաւ 'ի նոցանէ տէրութիւնն:

Բայց մի ասասանօր բամբասեա-

ցեաս զմեզ Իբր գաւելագործ ոք, որ-
պէս թէ զմի անգամ պատմեալն
դարձեալ ասացաք. այլ գիտեա, զի
ախորժելով վասն աղդականաց մե-
րոյ Լուսաւորչին քաջահմուտ կա-
մեցեալ լինել ընթերցողացն, կըրկ-
նագրեցաք-երկրորդելով:

ԿԹ. ԹԷ ԶԻՍՐԴ ՅԵՂԻՆ ԱՐՊԱՇԻՆ
ՊՈՐՈՒՑ ԱՐՔԱՅԻ ՄԻՆՉԵՒ ՅՎԱԽՃԱՆ:

ԱՐԴ անցցուք այսուհետեւ ընդ
թիւ թագաւորաց ցեղին Արտաշի-
սի՝ մինչեւ ցբառնալ 'ի նոցանէ տէ-
րութեանն: Յետ Արշաւիրի, որպէս
ասացաք, թագաւորէ Արտաշէս
ամս երեսուն և չորս, Դարեհ ամս
երեսուն, Արշակ ամս լիներեւտասն,
Արտաշէս ամս քսան, Պերոզ ամս
երեսուն և չորս, Վաղարշ ամս յի-
սուն, Արտաւան ամս երեսուն և
մի: Զսա սպանեալ ստահրացւոյն
Արտաշրի, որդւոյ Սասանայ, բառ-
նալով զթագաւորութիւնն Պար-
թեւաց, հանելով 'ի նոցանէ զաշ-
խարհն ժառանգութեան: Բազում

են ժամանակիս այսորիկ պատմողք 'ի Պարսից և յԱսորւոց, այլ և 'ի Յունաց: Քանզի յիսկզբան Թագաւորութեանն Պարթեւաց մինչեւ ցդադարումն՝ ընդ հռովմայեցւոց կալան գործ. երբեմն հնազանդութեամբ և երբեմն պատերազմաւ, զոր պատմէ Պաղեփատոս և Պորփիւր և Փիլէմոն, և այլք բազումք: Բայց մեք ասասցուք 'ի մատենէն, զոր եբեր Խոռոհբուտ ըզբարսումայն:

Հ. ԵՒԷ ՂԻՆԼԱՒՍՊԷՏ ՊՀԼԱՒԿՈՅ:

ԱՅՍ Խոռոհբուտ դպիր եղեալ Շապհոյ Թագաւորին Պարսից, և անկեալ 'ի ձեռն Յունաց, յորժամ Յուլիանոս, որ և Պառաւատոսն, զօրու հանդերձ 'ի Տիզբոն ջոգաւ, և 'ի մեռանելն նորա անդ, ընդ Յոբիանու 'ի Յոյնս ընդ արքունական սպասաւորսն եկն. և մերոյ հաւատոյս գաւանեալ, անուանեցաւ Եղիազար, և յոյն լեզու ուսեալ, պատմագրեաց զգործս Շապհոյ և

Յուլիանու։ Ընդ նմին թարգմանեաց և զառաջնոցն պատմութիւնս մատեան մի, որ գերեկից իւր լեալ Բարսումայի որուն անուամբ, զոր Պարսք Ռասատոհուն կոչեն. յորմէ մեր ուսեալ, երկրորդեմք այժմ 'ի գիրս յայս, թողլով զառասպելեալսն նորա բարբանջմունս։ Քանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելսն յաղագս երազոյն Փափագոյ, և արտադատութեան հրոյն մանուածոյ՝ որ 'ի Սասանայ, և պատումն զհօտիւն, և զուանային, և ախտարմոզացն յառաջասացումն՝ որ են քաւդեայք, և որ ինչ զկնի այսորիկ. և պոռնկական խորհուրդն Արտաշրի հանդերձ սպանութեամբք, և անմիտ հանձարաբանութիւն մոգին դատեր վասն նոխազին, և որ ինչ այլն ամենայն։ Նա և այծին գիւեցումն մանկանն ընդ հովանեաւ արծուոյն, և գուշակումն ագռաւուն, և գերապանծին պահպանութիւն առիւծուն հանդերձ արքանիկութեամբ գայլուն. և միայնամարտութեանն առաքինութիւն,

և որ ինչ այլաբանութեանն բերէ կարդ։ Այլ մեք ասասցուք միայն զսոյգն, որ ինչ ճշմարտութեանն վայելէ պատմութիւն։

ՀԱ. Առաջին արշաւանք Խոսրովայսորէսպան, յորմէ համարէր օգնել Արպաւանայ։

ԹԱՆԶԻ յետասպանանելոյն զԱրտաւան և թագաւորելոյն Արտաշրի՝ որդւոյ Սասանայ, երկու ցեղք Պահլաւին՝ որ ասպահապետք և սուրենեան 'ի Պահլաւն անուանին, նախանձ պահելով ընդ թագաւորեալ ցեղին իւրեանց հարազատութեան ազգին, որ է Արտաշէսին, կամաւ յանձն առին թագաւորել Արտաշրի՝ որդւոյ Սասանայ։ Այլ մտերմութիւն պահելով առ էղբայրութիւն ազգականութեանն տան Կարն Պահլաւին, ընդդիմացան պատերազմաւ Արտաշրի՝ որդւոյ Սասանայ։ Բայց յառաջագոյն իբրեւ լսեաւ զաղմուկ շփոթին թագաւորն Հայոց Խոսրով, դիմեաց յօգ-

նականութիւն Արտաւանայ, թէ հնար լինի աճապարել ապրեցուցանել միայն զԱրտաւանն. և միջամուխ եղեալ յասորեստան, լսէ զբօթ մահուանն Արտաւանայ, և զմիաբանութիւն ամենայն զօրաց Պարսից և նախարարաց, նա և զիւրոյ ազգին Պարթեւաց և պահլաւկաց, բայց 'ի ցեղէն Կարնան. առ որ հրեշտակս առաքեալ, դառնայ յաշխարհս մեծաւ արտմութեամբ և զկծանօք: Եւ նոյն հեռայն փոյթ ընդ փոյթ ազդ առնէ Փիլիպպոսի կայսեր հռոմայեցւոց, օգնականութիւն 'ի նմանէ խնդրելով:

ՀԲ. Խոսրովայ օգնականութիւն գալ 'ի Փիլիպպոսէ, զիմէ 'ի վերայ Արտաշիրի պապեարշմա-:

ԱՂՄՈՒԿ խռովութեան լեալ 'ի թագաւորութեանն Փիլիպպոսի, ոչ կարաց 'ի հռովմայեցւոց գնդաց պարապեցուցանել՝ առ 'ի զօրավիգն լինել Խոսրովու: Այլ օգնէ նմա 'ի ձեռն գրոյ, հրամայելով սասա-

րել նոա յամենայն կողմանց։ Որոց ընկալեալ զայսպիսի հրաման, հաստատեն նոա յօգնականութիւն յԵդիպտոսէ և յանապատէն մինչեւ 'ի Ծովեզերան Պոնտոսի։ Որոյ գլուխ զայսչափ բազմութիւնս, խաղայ 'ի վերայ Արտաշրի. և Ճակատուեալ՝ 'ի փախուստ դարձուցանէ, թափելով 'ի նմանէ զասորեստան և զայլ ալբայանիստ աշխարհս։

Դարձեալ յղէ 'ի ձեռն հրեշտակաց առ իւր տոհմայինսն պարթեւ և պահլաւիկ ազգս, և առ ամենայն զօրս աշխարհին Քուշանաց, զի առնեն եկեալ վրէժս յԱրտաշրէ պահանջեսցեն, և զարժանաւորն 'ի նոցանէ թագաւորեցուսցէ, զի մի տէրութիւնն հեռասցի յինքեանց։ Իսկ նոցա ոչ առեալ յանձն, յառաջասացեալ ցեղիցն՝ որ ասպահապետ և Սուրէն անուանին, դառնայ խոսրով յաշխարհս մեր. ոչ այնչափ ուրախացեալ ընդ յաղթութիւնն, որչափ ընդ վերջակացութիւն ազգականացն դժգմեալ։ Յայնժամ հասանեն առ նա ունկնք

'ի հրեշտակաց իւրոց, որք 'ի պատուական ազգն երթեալ էին, 'ի խորագոյն աշխարհն, 'ի նոյն ինքն 'ի Նեղքս 'ի Բահլ. բերին նմա համբաւ, թէ ազգական քո Վեհատաճան, հանդերձ ցեղիւն իւրով Կարնան Պահլաւին, ոչ հնազանդեաց Արտաշիր, այլ 'ի կոչդ քո դիմեալ գայ առ քեզ:

ՀԴ. Դարձեալ յարձակումն Խոսրովու 'ի վերայ Արտաշիրի առանց հրամայողոց օգնականութեան:

ԹԷՊԷՏ և յոյժ զուարճացաւ Խոսրով ընդ լուր գալստեան ազգականացն, սակայն ոչ յաւեաց ուրախութիւնն, ընդ հուսալ հասանելով բօթն՝ եթէ ինքնին Արտաշիր հանդերձ միաբանութեամբ զօրացն հետահաս եղեալ. կոտորեաց զամենայն ցեղ Կարնան Պահլաւին, ջնջելով զամենայն արու՝ յերիտասարդաց մինչեւ ցստընդիայս, բայց 'ի միոյ տղայոյ, զոր առեալ մտերիմ տան նորա, Բուրզ անուն, փա-

խեաւ յաշխարհն Քուշանաց՝ հաստուցանելով յազգային նորա. զոր բազում Ջանիւ խնդրեալ Արտաշրի զմանուկն 'ի ձեռն առնուլ, ոչ կարաց յազգականացն կուսակցելոց. մինչեւ յոչ կամաց երդնուլ՝ անկասկած լինել մանկանն. վասն որոյ բեւր առասպելս յօդեցին Պարսք զնմանէ, անբանից սպասաւորել մանկանն: Սա է Պերոզամատն նախնի մեծի ազգին կամնարականաց, զոր յիւրում տեղւոջն պատմեցուք:

Այլ մեք այժմ որ լինչ զկնի կոտորածի ազգին կարենան Պահլաւին, զորոյ զվրէժն ոչ թուլագոյնս լինչ խնդրեաց Թագաւորն Հայոց Խոսրով: Թէպէտ վախճանեալ Փիլիպպոսի և շփոթեալ Թագաւորութեանն հռովմայեցւոց, մարդ 'ի մարդոյ առնլով զտէրութիւնն սակաւ ժամանակեայ՝ Դեկիոս և Գալլոս և Վալերիանոս կայսերք, ոչ օգնեցին նմա, սակայն Խոսրով զօրք իւրովք և այլ սիրելեաք յարեցելովք յինքն և հիւսիսային աղ-

գոք Արտաշրի յաղթեաց, հալա-
ծական առնելով մինչեւ յաշխարհն
հնդկաց։

ՀԴ. Յաղագս գալոպէան Անակայ և Լինելոնէան սրբոյն Գրիգորի։

ԱՐԴ փախուցեալ 'ի Խոսրովայ
Արտաշիր մինչ 'ի յաշխարհն հնդ-
կաց և նեղեալ յոյժ, բազում խոստ-
մունս նախարարացն առնէ, թէ ոք
բուժեսցէ զնա յայնմանէ, թէ հնա-
րիւք դեղոց և թէ գաղտնի խող-
խողմամբ սրոյ. ապէս ապէս պարգեւս
տալ խոստանայր. Մանաւանդ պար-
թեւազանցդ, ասէ, դիւրահնար
դոգցես 'ի ձեռն կեղծաւոր սիրոյ
զդաւելն։ Ազգականութեան ա-
նուամբ պատրել՝ 'ի դոսա վստա-
հանայ. խոստանայր զբուն տունն
դարձուցանել 'ի նոսա, որ Պահ-
լաւն կոչէր, զարքայանիստ քաղաքն
Բահլ, և զամենայն աշխարհն Քուշ-
անաց։ Նա և թագաւորութեան
ձեւ և շուք խոստանայր, և զհա-

սարակ Արեաց, ընդ իւրով ձեռամբ երկրորդ իւր լինել։ Յոր հրապուրեալ Անակայ, որ էր 'ի ցեղէն սուրենեան Պահլաւէ, յանձն առնու սպանանել զԽոսրով։ Եւ հատուածի պատճառաւ փախստական լինի յԱրտաշիր. և զհետ մտանելով զորացն Պարսից առ պատճառէ. որպէս թէ փախստական վարելով զնա ընդ ասորեստան, հանեն զառեղէրբ սահմանացն Արտպատականի ընդ մէջ Կորդուաց։ Զոր լուեալ մեծին Խոսրովայ յուտէացւոց գաւառին, իբր զկարենեանցն կարծեցեալ եկաւորութիւն, գունդ առաքէ յօգնականութիւն Անակայ։ Որոց պատահեալ Անակայ, ածէն զնա հրամանաւ Թադաւորին 'ի գաւառն, որ անուանեալ կոչի Արտազ, 'ի տեղի դաշտավայրս, ուր յայտնեցան նշխարք սրբոյ և մեծի Առաքելոյն Թադէի։

Եւ ասա ասեմ զրոյց զաքանչելի ծերոյն՝ որ ասէր, թէ 'ի նախնեաց ունիմ սովորութիւն, որդի 'ի հօրէ առնլով զիւրատակ զրուցացս այսո-

ցիկ, որպէս Ուլոմպիոդորայն յա-
ղագս Տարօնոյ և Սիմն կոչեցեալ
լերինն։ Արդ 'ի բնակելն Անակայ 'ի
գաշտին Արտազու, պատահէ սո-
րա տեղի օթարանին մօտ առ գիրս
սրբոյ Առաքելոյն, որպէս թէ 'ի
նեղքսագոյն սրսկապանի խորանին.
և անդ ասեն զյղութիւն մօր սրբոյ
և մեծի Լուսաւորչին։ Վասն որոյ
և զնորին Առաքելոյ շնորհն ընկա-
լեալ, որ առ հանգստարանաւ նո-
րին զլինելութիւնն էառ, զնորին
ելից զհոգեւոր մշակութեանն պա-
կասութիւն։

Եւ յետ անցելոյ երկուց ամաց
գալստեանն Անակայ 'ի Հայս, յեր-
րորդումն սպանանէ զխոսրով, որ
թագաւորեաց ամս քառասուն և
ութ. և մեռանի ինքն և իւրքն ամե-
նայն, պահելով խնամոցն Աստուծոյ
զսա միայն, որ ակնարկութեամբն
Աստուծոյ և շնորհօք Առաքելոյն
ստեղծանել կամ լուսաւորել ա-
ռեմք յարգանդի մօրն, զառաքելու-
թեան իւրոյ զշնորհս 'ի ձեռն տա-
լով նմա։ Իսկ զմնացեալս 'ի զրու-

ցայց ուսուցանէ քեզ Ադաթան-
գեղոս :

ՀԵ. Յաղագս Փերմելիանէայ Եպիս-
կոպոսի Կեսարու Կապադովկացւոյ և
պատմութեանց նորին :

ՓԵՐՄԵԼԻԱՆՈՍ Եպիսկոպոս Կեսարու Կապադովկացւոց էր աքանչելի յուսումնասիրութեան, որ և 'ի տղայութեան իւրում առ Որոգինէս երթեալ վարժեցաւ : Սա բազում խօսս արար, յորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղեցւոյ, որ յառաջ յաւուրս Մաքսիմիանոսի և Դեկոսի յարեաւ, և որ հուսկ յետոյ յամն Դիոկղետիանոսի, շարայարեալ 'ի նա և զգործս թագաւորացն : Յորում ասէ՝ վեշտասանեւրորդ Եպիսկոպոս կացեալ աղէքսանդրացւոց Պետրոս, վկայեալ յիններորդ ամի հալածանացն : Գրէ բազում վկայեալս և 'ի Խոսրովու 'ի մերում աշխարհիս, համայն և յետ նորա օտարք յօտա-

րաց։ Բայց զի ոչ ճշմարտութեամբ ոճով պատմէ, և ոչ զանուանս նշանակէ կամ զտեղի կատարմանցն, ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք երկրորդել։ Նոյնպէս և որ զԱնտոնէ որդւոյ Սեւերեայ ասէ, պատերազմեալ ընդ Վաղարշայ Պարսից արքայի 'ի Միջագետս, և մեռանել 'ի մէջ Եդեսիայ և Խառանու, և մերոյն Խոսրովու ոչ յոք հակամտեալ։

Իսկ որ ինչ զկնի մահուանն Խոսրովու մինչեւ ցթագաւորութիւնն Տրդատայ 'ի ժամանակս անիշխանութեանն պատմէ, ստոյգ համարելով երկրորդեմք համառօտ բանիւք։ Բայց որ ինչ և 'ի թագաւորութեանն Տրդատայ և յետ նորա, ոչ հեղգութեամբ և անզգուշաբար վրիպեալ, և ոչ կամաւոր սխալանօք 'ի սմա յարմարեալ բան, այլ որ ինչ 'ի յիշատակաց գիւանագիր մատենիցն Յունաց։ Իսկ ըստ նմանեացն ապա և որ ինչ 'ի համբաւուց արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ստուգապէս

տեղեկացեալ, արդարաբար քեզ ղրուցեցաք։

ՀԶ. Դիմառն 'ի մեղ Արքաշրի, և յաղթել կայսեր Տակիտոսի։

ՆՈՅՆ այր ասէ, թէ յետ սուսերահարն լինելոյ Խոսրովու, միաբանեալ նախարարքք Հայոց՝ ածեն Լուրեանց յօգնականութիւն զզօրս Յունաց, որ 'ի Փռիւգիայ, Պարսից ընդդիմանալ, և պահել զաշխարհս։ Եւ իսկոյն ազդեցին Վաղերիանոսի կայսեր։ Բայց վասն զի գունդք անցեալ ընդ Դանուբ գետ՝ զբազում գաւառս գերի վարեցին, և զԿիւկիդայ կղզիս աւար առին, վասն որոյ ոչ ժամանէ մերոյ աշխարհիս Թեւարկեալ Վաղերիանոս. նա և ոչ յերկարէ զկեանսն, առնլով 'ի նմանէ զթագաւորութիւնն Կղաւդիոս, և յետ նորա Աւրեղիանոս հուպ ընդ հուպ փոխանորդելով զմիմեանս. այլ և ամենականաք թագաւորեալ Կիւնտոս և Տակիտոս և Փիլոռիանոս եղբարքք։ Վասն որոյ

համարձակաբար արշաւեալ 'ի մեզ Արտաշրի, և զզօրս Յունաց փախըստական արարեալ, գերելով զյոլով մասն աշխարհիս՝ յաւեր դարձուցանէ։ Յորմէ գաղթեալ նախարարքն Հայոց, հանդերձ ազգաւն արշակունեաց 'ի Յոյնս ապաւինէին, յորոց մի էր և Արտաւազդ մանդակունի, որոյ աւեալ զՏրդատ որդի Խոսրովու՝ 'ի դուռն կայսեր հասուցանէ։ Վասն որոյ հարկաւորեալ Տակիտոս, ընդդէմ Արտաշրի գայ զկողմամբք Պոնտոսի, և զեղբայր իւր զՓիլոռիանոս այլով գընդաւ ընդ Կիւլիկիայ արձակէ։ Իսկ Արտաշրի հասեալ 'ի Տակիտոս, 'ի փախուստ դարձուցանէ, որ և ապանաւ 'ի յիւրոցն 'ի ճանիւս պոնդացւոց, որ են Խալտիք. Նոյնպէս և եղբայր նորա Փիլոռիանոս յետ ութ ամսեան և ութ աւուր 'ի Տարսոն։

ԻԷ. Յաղագս խաղաղութեան Պարսից և Յունաց, և զինելոյ Արտաշրի զՀայս յամս անիշխանութեանն։

ԲԱՅՑ Յունաց Թագաւորեաց Պուրբոս, և խաղաղութիւն արարեալ ընդ Արտաշրի՝ բաժանէ զաշխարհս սահմանադրութեամբ փոսա գործելով։ Եւ Արտաշրի նուաճեալ զազգ նախարարացն, զգաղթեալսն անդրէն դարձուցանէ, և զամրականսն 'ի վայր իջուցանէ, բայց 'ի նախարարէ ումեմնէ՝ որոյ անուն Օտայ կոչիւր, 'ի տոհմէ ամատունեաց, որ փեսայ էր ազգին սնկունեաց, և մնուցող Խոսրովի դրխաոյ՝ դատեր Խոսրովի. որչափ ցեալ յամուրն Անի իբր 'ի կալաղի հանդարտութեան զօղեալ։

Իսկ Արտաշրի գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց, 'ի կարգ առաջին հաստատէր։ Նա և զարշակունիսն, զմեկուսացեալսն 'ի Թադէն և յԱյրարատն բնակելոյ, կարգէ 'ի նոյն տեղիս մնիւք և ուռնկօք, որպէս էին։ Եւ զմեհենիցն պաշ-

տամուհան առաւել եւս յորդորէ. այլ և զհուրն ոսմզդական, 'ի վերայ բագնին՝ որ 'ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել։ Բայց զանդրին զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ և լուսնիւ յԱրմաւիր, և փոխեցաւ 'ի Բագարան և դարձեալ յԱրտաշատ, զայնոսիկ փշրէ Արտաշիր։ Եւ զերկիրս գրով ընդհարկաւ իւրով արկանէ, և ամենեւիմբ զիւր անուանն հաստատէ։

Նա և զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ զքարինս յերկրի կացուցանելով նորոգեաց, և յիւր անուանն փոխելով արտաշիրական անուանեաց։ Եւ կալաւ զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց, հանդերձ պարսիկ գործակալաբ, ամենքան և վեց. և յետ նորա որդի նորին, որ անուանեցաւ Շապուհ, որ լսի՝ աչքայի մանուկ, ցԹագաւորելն Տրդատայ, ամ մի։

ԺԸ. Կոստրոն ազգին Մանդակունեաց Արքայէ։

ԲԱՅՑ Արտաշէսի լուեալ էր, թէ ումն 'ի նախարարացն Հայոց առեալ յորդւոցն Խոսրովու, փախուցեալ ապրեցոյց։ Եւ քննեալ, թէ ո՞վ ոք նա իցէ, եղեւ վերահասու, թէ նա է Արտաւազդ յազգէն Մանդակունեաց. հրամայեաց զամենայն ազգն ջնջել սատակմամբ։ Քանզի 'ի գաղթելն Հայոց յԱրտաշէս՝ գաղթին և նոքա ընդ ցեղս այլոց նախարարացն. և 'ի նուաճելն Արտաշէսի զայլսն, դառնան և նոքա, և սատակին սրով ամենեքին։ Բայց կոյս մի գեղեցկադիտակ 'ի քերցն Արտաւազդայ գողացեալ Տաճատայ ուրումն, որ էր լեալ յազգէն աշոցան, 'ի զաւակէ Գուշարայ հայկազնոյ, փախուցեալ 'ի կեսարացւոց քաղաքին ապրեցուցանէր, ամուսնաւորեալ ընդ ինքեան վասն չքնաղագեղ կերպարանին։

ՀԹ. Յաղագս նահապետութեանն Տրդատայ յամս անիշխանութեանն Հայոց։

ՊԱՏՄԷ զնահատակութեանցն Տրդատայ, նախ 'ի մանկութեանն յերիվար կամակար աշտանակեալ, և կորովի ձիավարեալ, և զէնս շարժեալ յաջողակաբարս. և այլ պատերազմականս ուսանել ախորժակս. ապա ըստ պեղոպոնէսացւոց մեհենական հրամանին Հիփիտեայ 'ի մրցանակս ագոնին առաւելեալ քան զԿղինոսարդոս հռոդացի, որ զվզէ եւեթ կալեալ յաղթէր. դարձեալ և քան զԿերասոս արգիացի. զի նա զկճղակ եղին թափեաց, իսկ սա զերկուց ցլուց վայրենեաց միով ձեռամբ կալեալ զեղջերէն, թափեաց հանդերձ ընդվզեալ ջախջախմամբ։ Եւ 'ի ձիընթացս մեծի կրկիսին կառավարել կամեցեալ, 'ի հմտութենէ հակառակադրին ոտուցեալ յերկիր անկաւ, և բուռն հարեալ արդելըզկառան. ընդ որ ամենեքին զարմացան։ Եւ 'ի պատերազմէն Պուրբո-

սայ ընդ Գուլթս, եղեւ սով սաստիկ. և յոչ գտեալոց շտեմարանաց՝ յարեան զոլքն 'ի վերայ և սպանին զնա. նոյնպէս և 'ի վերայ ամենայն իշխանացն դիմեցին։ Իսկ Տրդատ միայն ընդդէմ կացեալ, չէթող զոք մոտանել յապարանսն Լիկիանոսի, առ որում ինքն Տրդատ էր։

Բայց Կարոս հանդերձ որդւովքն Կառինեաւ և Նոմեռիանոսիւ թագաւորեաց. և զորաժողով եղեալ, էտ Ճակատ ընդդէմ Պարսից արքային, և յաղթեալ՝ դարձաւ 'ի Հռոմ։ Վասն որոյ բազում ազգս 'ի սատարութիւն կալեալ Արտաշրի, թիկունս արարեալ զանապատն տաճկաստանի, դարձեալ էտ Ճակատ ընդ զորս Հռովմայեցւոց կրկին՝ աստի և անտի Եփրատու, յորմէ սպանաւ Կարոս 'ի Յռինոմն։ Նոյնպէս և Կառինոս, որ 'ի վերայ Կոռնակայ ջոգաւ յանապատ, ընդ որում և Տրդատ. և սատակեցաւ նա և զորն, և ճնացեալքն 'ի փախուստ դարձան։ Յորում և Տրդատայ վերաւորեալ երիվարն,

ոչ աճապարեաց ընդ փախստեայն, այլ առեալ զզէնն իւր և զկազմած ձիոյն, 'ի լուռ ընդ լայնատարած խորայատակն անցանէր ընդ Եփրատ 'ի բուն զօրան իւրեանց, ուր Լիկիանոսն էր: Ընդ նոյն աւուրս լինի ապանեալ և Նումեռիանոս 'ի Թրակէ, և փոխանորդեալ զԹագաւորութիւնն Դիոկղետիանոս: Իսկ որ լինէ 'ի նորա ժամանակն գործք, յայտնէ քեզ Ագաթանգեղոս:

Զ. Յայսարարութիւն սակաւուց անցեալոց Լուսաւորչի Գրիգորի Ներսոյն, 'ի Ներսոյն Արքիեպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարիոսի մեծնաւորի 'ի Յաղուռնի:

ԱՅՐ ոմն 'ի Պարսից ոչ 'ի փոքունց և յանշանից, որում անուն էր Բուրդար, գնացեալ անտի և եկեալ 'ի կողմանս Գամրոց, պանդխտեցաւ 'ի Կեսարիայ: Եւ առեալ կին 'ի հաւատացելոց, որում անուն Սոփի կոչիր, քոյր ուրումն

մեծատան, որ Եւթաղիոս յորջորջէր, դարձաւ անդրէն գնալ յերկիրն Պարսից հանդերձ կնաւ իւրով. զորոյ զհետ հասեալ աներոյ նորա Եւթաղեայ, համոզեալ արդելոյր: Որոյ հանդիպեալ ծնընդեանն մերոյ Լուսաւորչին, ըստ պատահման մասանէ ստընտու մանկանն. և 'ի հասանել աղեային՝ առեալ Եւթաղեայ զքոյր իւր և զայրն նորա հանդերձ մանկամբն 'ի կատարդովկացւոց աշխարհն դառնայր: Այլ զայս ամենայն գործէ յառաջատեսութիւնն Աստուծոյ, որպէս կամք են իմոյս ասել բանի, յաղագս որ 'ի մեզ փրկութեան Ճանապարհ: Ապա թէ ոչ, որո՞ւմ յուսոյ ակն ունելոյ զմանուկ պահլաւիկ 'ի հռովմայեցւոց իշխանութեանն անուցանէին, և Քրիստոսի ընծայէին հաւատով:

Բայց յարբունս հասակի հասեալ մանկանն, փեսայացուցանէ հաւատացեալ ոմն այր, որում անուն էր Դաւիթ, 'ի դուստր իւր Մարիամ. որ յետ երից ամաց երկուց

որդւոցլինելոյ, 'ի կամաց երկոցունց մեկնեալ 'ի միմեանց զաւչին։ Մա-
րիամ հանդերձ մանկամբն կրասե-
ցաւ 'ի վանս կանանց անկեալ կրօ-
նաւորիւր. որոյ յարբունս հասեալ
մանկանն, զհետ ընթանայ միայնա-
ւորի մի, որում անուն էր Նիկո-
մաքոս, և նա առաքէ յանապատ։
Իսկ անդրանիկն առ դայեկաց մնա-
ցեալ, որ ապա աշխարհավարեալ
ամուսնացաւ։ Բայց հայրն նոցին
Գրիգոր անցեալ գնաց առ Տրդատ՝
զհայրենեացն հատուցանել պար-
տիս, կամ որպէս պարտէ ասել ճըշ-
մարտութեամբ՝ զառաքելութեան
վիճակ մերոյ աշխարհիս և զքահա-
նայութեանն հանդերձ մարտիրո-
սութեամբ վարժելով։

Բայց արդարեւ հօր սքանչելոյ
որդիք զարմանալիք առաւել քան
զառաւել. զի ոչ նա խնդրեաց զոր-
դիսն՝ յորժամ դարձաւ ընդ Տըր-
դատայ, և ոչ նոքա չոգան առ նա.
և այն գրեթէ վասն երկիւղի հա-
լածանացն, բայց և ոչ 'ի քահա-
նայանալն և 'ի փառաւորել հօրն և-

բեւեալ պերճացան նոքա։ Վասն որոյ և ոչ նա յամեաց 'ի Կեսարիայ, այլ փութապէս դարձեալ 'ի սեբաստացւոց քաղաքին անսայր հաւաքելզնիւթ վարդապետութեանն։ Այլ թէ և բազում աւուրս արարեալ 'ի Կեսարիայ, ոչ ինչ զորոց զմտաւն ածէր՝ առնելոց էին, անսպառին և անանցականին միայն սկելով. որք ոչ զպատիւն յինքեանս ձգէին, այլ պատիւն զհետ նոցա ընթացաւ, որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս։

ԶԱ. ԵՐԷ ՈՒՍՈՊԻ Ի ՔԻՇԴԴ ԱՆԳ ՄԱՄԻԿՈՆԷԻՑ։

ՎԱԽՃԱՆԵԱԼ Արտաշրի որդւոյ Սասանայ, թոռու զթագաւորութիւնն Պարսից որդւոյ Իւրում Շապհոյ։ Ի սորա աւուրս էկեալ 'ի Հայս նահանի ազգին Մամիկոնէից յարեւելից հիւսիսականէն, 'ի քաջատոհմիկ և 'ի դլխաւոր աշխարհէ և ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին, ասեմ

իսկ զՃենացն՝ որ ունին զրոյց այս-
պիսի :

Յամն կատարման կենացն Ար-
տաշրի , Արբոկ ոմն Ճենբակուր,
որպէս ասի 'ի նոցա լեզուն պատիւ
Թագաւորութեան . սորա երկու
դայեկորդիք Բղդոխ և Մամգուն
անուն կոչեցեալ, մեծ նախարարք :
Եւ չարախօսեալ Բղդոխայն զՄամ-
գունայն, հրամայեաց Թագաւորն
Ճենաց Արբոկ սպանանել զՄամ-
գունն : Զոր խնայեալ Մամգու-
նայն, ոչ գայ 'ի կոչն արքայի . այլ
փախուցեալ աղխիւ իւրով անկա-
նի առ Արտաշիր Թագաւորն Պար-
սից : Եւ Արբոկ հրեշտակս առաքէ
խնդրել զնա . և 'ի չլսելն Արտաշ-
րի , պատերազմ 'ի վերայ նորա յօ-
րինէ Թագաւորն Ճենաց : Եւ խա-
կոյն մեռեալ Արտաշրի , Թագա-
ւորէ Շապուհ :

Արդ Թէպէտ և ոչ տայ Շապուհ
զՄամգուն 'ի ձեռն տեառն իւրոյ,
այլ և ոչ յԱրեաց երկիրն Թողու .
բայց ամենայն աղխիւն իւրով առա-
քէ զնա, իբրեւ վտարանդի , առ

գործակալս իւր որ 'ի Հայս։ Եւ յղէ առ Թագաւորն ճենաց՝ ասելով, թէ Մի թուեսցի քեզ դըժուար, զի 'ի ձեռս քո ոչ կարացի տալ զՄամգուն. վասն զի երդուեալ էր նմա հօրն իմոյ 'ի լոյս արեգական. այլ վասն անխռով զքեզ առնելոյ՝ հալածեցի զնա յաշխարհէս իմմէ յեզը երկրի և 'ի մուտս արեւու, որ հաւասար է նմա մահու. և արդ մի լիցի պատերազմ ընդ իս և ընդ քեզ։ Եւ զի քան զամենայն բնակեալս 'ի վերայ երեսաց երկրի խաղաղասէր ասեն գոլ զազգն ճենաց, յանձն առնու առնել զՀաշտուրթիւն. ուստի յայտ իսկ է, թէ են արդարեւ խաղաղասէր և կենասէր ազգ ճենաց։

Սքանչելի է և աշխարհն առատութեամբ ամենայն պտղոց, և գեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքմաւէտ և սիրամարգաշատ և բազմամեռաքս, անբաւութիւն յամուրաց և հրէշից, և որ էշայծեմունդ անուանեն. ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պա-

տուական և սակաւուց ճաշակելիս, զփասեան և զպոր, և այլ այսպի-սինք։ Այլ զականց և զմարգարտաց ոչ ասեն գիտել զհամար մեծամեծացն. իսկ պատուականքս առ մեզ զգեստուց և սակաւուց ագանելիք, հասարակաց նոցա է զգեստ։ Եւ այս յաղագս աշխարհին ճենաց։

Իսկ Մամգունայ յոչ կամաց եկեալ յաշխարհս մեր, հանդիպեցաւ գալստեանն Տրդատայ. և ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղխիւն իւրով ընդ առաջ գնաց նմա մեծաւ պատարագաւ. և Տրդատ ընկալաւ զնա, բայց զկնի իւր 'ի պատերազմ ոչ էառ յերկիրն Պարսից. այլ ետ տեղի աղխի նորա և ռոճիկ 'ի կերակուր, փոփոխելով տեղ 'ի տեղւոջէ ցբովանդակ ամս։

ԶԲ. Ներհաստակութիւնք Տրդատայ 'ի ընդարձակութիւնն յառաջ քան զհաստատելն։

ՔԱՆԶԻ ոչ է պատմութիւնն ճշմարիտ առանց ժամանակագրու-

թեան , վասն որոյ մանրախուզիւ քննեալ, գտաք զԹագաւորելն Տրդատայ յԵրրորդ ամի Դիոկղեսիանոսի , և գալ այսր հանդերձ մեծաւ զօրու : Որոյ հասեալ 'ի Կեսարիայ , յոլովք 'ի նախարարացն ընդ առաջ լինէին : Եւ եղեալ յաշխարհս , գտանէ զՕտայ անուցեալ զքոյր իւր Խոսրովիդուխտ , և պահեալ զդանձն ամրոցաւն հանդերձ յոյժ երկայնմտութեամբ . քանզի էր արդար և համբեր , ժուժկալ և առաւել իմաստուն . զի Թէպէտ և ոչ ծանեաւ զՀշմարտութիւն յաղագս Աստուծոյ , սակայն զստութիւն կռոցն գիտաց : Նոյնպէս էր և սան նորա Խոսրովիդուխտ , կուսան համեստ որպէս զօրինաւոր ոք , և ոչ ամենեւին ունել անդուռն բերան նման այլ կանանց :

Իսկ Տրդատ 'ի հազարապետութիւն Հայոց զՕտայն կացուցանէ , շնորհակալութեամբ պատուէ զնա : Եւ առաւել եւս զիւր դայեկորդին , զմանդակունի Արտաւազդ , վասն լինելոյ նորա նմա պատճառ փրկ-

կութեան և հայրենականացն հա-
սելոց փառաց. յաղագս որոյ 'ի
ձեռն նորա տայ զսպարապետու-
թիւն զօրացն Հայոց։ Նորին ազա-
գաւ և զՏաճատ քեռայր նորին ի-
խան 'ի վերայ գաւառին Աշոցայ
կարգէ։ Սա էր որ յասպայսն զգա-
ցոյց աներոյն իւրոյ Արտաւազդայ,
և նա ազգայի, նախ զԳրիգոր Ան-
կայ լինել որդի, և ապա զկնի վան
որդւոցն Գրիգորի, որպէս հմուտ է-
ղեալ 'ի կենսարանս քաղաքին բնա-
կելով։

Իսկ քաջին Տրդատայ երագապէս
և բազում ճակատս տուեալ, նախ
'ի Հայս և ապա 'ի Պարսս, իւրով
անձամբ առնէր զյաղթութիւնն։
Որ 'ի միում նուագի առաւել քան
զԵղիանանն զայն 'ի հնումն, կանգ-
նեաց զնիզակն յօգնական համա-
թիւ վերաւորաց։ Դարձեալ յերկ-
ըրորդումն՝ կորովեացն Պարսից ըզ-
փոխձառեալ զսաստկութեան սկայ-
ին և կուռ վառուածոցն, բազում
վերօք պատեալ զձին՝ սատակեցին
նետաձգութեամբք. որոյ զարկու-

ցեալ յերկիր ընկենոյր զարքայն։ Իսկ նորա յարուցեալ և 'ի հետ յարձակեալ, փոխանակ իւր զբաղումն ընկենոյր 'ի Թշնամեացն, և զմիոյ ուրուն զձի կալեալ, արիաբար աշտանակեալ. դարձեալ յերկրորդին միւսանգամ կամաւորելեալ հետի, սուսերաւ զերամակս փղացն պուղէր։ Եւ այսպիսի նահատակութեամբք յամեալ 'ի Պարսս և յասորեստան, անդր եւս քան զՏիզբոն յարձակի։

ԶԳ. Յաղագս առնլոյ ԻՆ Տրդատայ ՂԱՇԽԷՆ, Ի Կոստանդնի ՂՄՈՒՌԻՆԱՅ, Ի ՌԷ ԺՐԳԷՍ ՀԱՆԴԻՊԷՈՍ ՀԱՍՏԱՏՈՅ։

ԵԿԵԱԼ Տրդատայ յաշխարհս, առաքէ զՍմբատ ասպետ, զՀայր Բագարատայ, ածել զկոյսն Աշխէն՝ դուստր Աշխադարայ՝ իւր 'ի կնութիւն. որ ոչ ինչ նուազ էր կոյսն արքային հասակի։ Եւ հրամայէ գրել զնա արշակունի, և զգեցուցանել ծիրանիս և թագ կապել,

զի հարանացի արքայի։ Յորմէ ե-
ղեալ որդի Խոսրով, ոչ համեմատ հա-
սակի ծնողաց իւրոց։

Ընդ նոյն աւուրս լինին հարսա-
նիք և Մաքսիմինայ դստերն Դիոկ-
ղեսիանոսի 'ի Նիկոմիդայ, փեսայա-
նալով նմա Կոստանդիանոսի կեսա-
րի, որդւոյ Կոստայ Թագաւորին
Հռոմայ, որ ոչ էր 'ի դստերէն Մաք-
սիմիանոսի, այլ Հեղենայ պոռնկէ
ծնեալ։ Այս Կոստանդիանոս բա-
ղեկամացեալ 'ի հարսանիսն ընդ Տըր-
դատայ մեր Թագաւորի։ Եւ յետ ոչ
բազում ամաց մեռեալ Կոստանդ,
փոխանորդ նմա առաքէ Դիոկղե-
տիանոս զնորին որդի և զնոր որդիա-
ցեալն Կոստանդիանոս։

Սա յառաջ քան զԹագաւորեալն,
մինչ դեռ կեսար էր, պարտեալ 'ի
մարտն, և տրտմութեամբ մեծաւ
ննջեալ, երեւութացաւ նմա 'ի քուն
խաչ աստեղեայ յերկնից, պարու-
նակեալ գրով, ասէ. Այսու յաղ-
թեա. զոր արարեալ սիւգնոյն և
յառաջաբերեալ, յաղթեաց պա-
տերազմացն։ Բայց յետոյ հրապու-

րեալ 'ի կնոջէն Իւրմէ Մաքսիմինայ
'ի դասերէն Դիոկղեսիանոսի, յա-
րոյց հալածանս եկեղեցւոյ. և զբա-
զումս վկայեալ, ինքն եղեփանդա-
կան բորոտութեամբ ըստ բոլոր ըն-
կալեալ մարմնոյն ապականեցաւ
վասն յանդգնութեանն։ Զոր ոչ
կարացին բուժել արիոզական կա-
խարդքն և մարիսկեան բժիշկքն.
յաղագս որոյ յղեաց առ Տրդատ՝
առաքել նմա դիւթս 'ի Պարսից և
'ի Հնդկաց, սակայն և այնք ոչ հա-
սին նմա յօգուտ։ Զոր և քուրմք
ոմանք 'ի դիւաց խրատուէ հրա-
մայեցին բազմութիւն տղայոց զե-
նուլ յաւազանս և ջերմ արեամբ
լուանալ և ողջանալ, որոյ լուեալ
զլալիւն մանկանցն հանդերձ մարցն
կականմամբք, գթացեալ մարդա-
սիրեաց, զնոցայն լաւ վարկուցեալ
քան զիւրն փրկութիւն։ Յաղագս
որոյ զփոխարէնն յԱստուածընդու-
նի, յանրջական տեսութիւն Առա-
քելոցն առեալ հրաման սրբիլ լուացմամբ կենսատու աւազանին 'ի ձեռն
Սեղբեստրոսի եպիսկոպոսի Հռոմայ

որ 'ի նմանէ հալածանացն Թագուցեալ էր 'ի Սորակոխոն լեառնն. յորմէ և աշակերտեալ հաւատաց, զբռնաւորան ամենայն բառնալով Աստուծոյ յերեսաց նորա, որպէս համառօտ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս:

ԶԴ. Սոպոկոս սլիոնէաց 'ի ճենաղնոյն Մոմիգոնայ:

ԸՆԴ հանգչելն Շապհոյ արքայի Պարսից 'ի պատերազմացն, և 'ի գնալն Տրդատայ 'ի Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս, պարսալ առեալ խորհրդոց Շապհոյ, նիւթէ չարիս 'ի վերայ մերոյ աշխարհիս. Թողեալ զհիւսիսայինսն ամենայն՝ եկանել 'ի Հայս, ժամ դնէ և իւր գալ Արեւք 'ի մեւս կողմանէն: Ի սորին բանս հրապուրեալ Սղուկ նահապետ ազգին սլիոնեաց, զինքեանն ապանանէ զփեսայ՝ զծերացեալն Օտայ, որ էր 'ի տոհմէն ամատունեաց, և սնուցող Խոսրովիդխտոյ քեռ Թագաւորին: Եւ

այն ինչ ընդ հուպ եկեալ մեծին Տրդատայ յարեւմտից, և լուեալ զայս ամենայն, և դիտացեալ՝ թէ ոչ'ի ժամադրութիւն եկն Շապուհ, խաղայ 'ի վերայ հիւսիսականացն: Իսկ նահապետ ազգին սկսունեաց ամրանայր յամրոցին, որ անուանեալ կոչի Ողական, ապաւէն առնելով իւրեանց զբնակիչս Սիմն կոչեցեալս լերին. և ընդդիմացեալ թագաւորին, ալմկէր զերկիրն, և մերձառ լերամբն ոչ թողացուցանէր այլուամ՝ պարապել գործոյ: Ասէ ամենայն նախարարութեանց տանս Հայոց արքայ. Որ ոք ածէ առ իս զնահապետն սկսունեաց, տայց նմա յաւիտենական իշխանութեամբ ըզգեօղս և զդասատակերաս, և զամենայն իշխանութիւն ազգին սկսունեաց: Զոր յանձն առնոյր Ճենազնեայն Մամգուն:

Եւ 'ի խաղալ թագաւորին զկողմամբք Աղուանից 'ի վերայ հիւսիսականացն, գնաց Մամգուն ամենայն ալանիւն իւրով զկողմամբք Տարօնոյ, որպէս թէ ապատամբեալ 'ի

Թագաւորէն, և 'ի չու անկեալ, առաքէ գաղտագնաց հեռեւակս, զգացուցանելով նահապետի ազգին ալկունեաց զգնալն Թագաւորին ըզկողմամբք Աղուանից. Վասանգ մեծ է, ասէ, Թագաւորին Տրդատայ, վասն որոյ գնաց զկողմամբք Աղուանից պատերազմել ընդ ամենայն լեռնականեայսն, վասն որոյ մեր է ժամանակ 'ի ճահ խորհել և գործել որ ինչ կամք են. զի խորհեալ եմ դաշնաւոր լինել ընդ քեզ՝ վասն արհամարհանաց իմոց որ 'ի Թագաւորէն: Ընդ որ ուրախացեալ նահապետ ազգին ալկունեաց, ընդունի զնա երդմամբ ուխտից. բայց յամուրրն ոչ Թողու, մինչեւ տեսանել՝ Թէ որպէս պահիցէ զմտերմութիւնն երդմանց և դաշնաւորութեանցն: Իսկ ասացեալն Մամգուն ամենեւին չանացեալ զմտերմութիւն ցուցանել առ ապատամբին, հաւատարմացաւ նմա որպէս արդարեւ միամիտ գործակից. մինչեւ հրամայեաց նմա համարձակ մտանել յամուրն և ելանել:

Եւ յետ բազում վատահութեանն, 'ի միում աւուրց հաւանեցուցանէ զնահապետ ազգին սկսունեաց եկանել արտաքս յամրոցէն և որսալ երէս. և 'ի միջամուխ լինել որսոցն՝ դիպեցուցանէ աղեղամբն ընդ մէջ թիկանցն, և կործան յերկիր զարկուցանէ զապատամբն: Եւ ընթացեալ իւրով արամբքն 'ի գուռն ամրոցին, ունի զբերդն, կապելով զամենայն արսն որ 'ի նեղքս: Նա և զազգն սկսունեաց խորհեցաւ բառնալ, և կոտորեաց զամենեսեան. երկուք ոմանք փախստական անկան յաշխարհն Ծոփաց: Իսկ Մամգուն վաղվաղակի զգացուցանէ Թագաւորին. ընդ որ ուրախացեալ Տրդատայ, գրէ հրովարտակ՝ իշխել նմա ամենայնի. և կարգէ զնա նախարար 'ի տեղն ապատամբին, անուանելով յանուն իւր մամգունեան: Բայց մնացելոցն սկսունեաց հրամայէ չէնասել:

ԶԵ. ՆԱՀԱՊԱԿՈՒԹԻՒՆ Տրդատայ 'ի պատերազմին յԱղուանս, յորոմ մինչ-
էր արար զՔաղաքորն Բասլաց։

ԻՍԿ Թագաւորն Տրդատ ամենայն հայաստանեաց ելեալ 'ի դաշտն գարգարացւոց, պատահէ հիւսիսականացն Ճակատու պատերազմի. և 'ի խառնել երկոցունց կողմանցն՝ յերկու ճեղքէ զամբոխս թշնամեացն, սկայաբար շահատակելով։ Ոչ կարեմ ասել զերագութիւն ձեռին, որպէս անբաւք 'ի նմանէ յերկիր անկեալ թաւալագլոր խաղային. օրինակ իմն 'ի դեղեցիկ ցանցորդէ լի ձկամբք յերկիր թափեալ ցանցոյն, կայտառէին յերեսս երկրին։ Զոր տեսեալ Թագաւորին Բասլաց, մօտ հասանէ յարքայն. և հանեալ յասպազինէն զնեղոգեայ քեմխատպատ պարանն, և կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ, ճարակ դիպեցուցանէ յուս ձախակողմանն և լանութ աջակողմանն. զի էր վերացուցեալ զձեռն ածել ումեք սուսերաւ. և ինքն վառեալ վերստ պահ-

պանակօք, ուր ոչ գծէին նետք։
Եւ քանզի ոչ կարաց շարժել ձե-
ռամբ զհսկայն, զլանջիւք առ երի-
վարին. և ոչ այնչափ ինչ շուրթա-
փեաց մտրակել զերիվարն, քան թէ
ահեակ ձեռամբն 'ի ներդեայն ա-
ճապարեալ սկային, և սաստկու-
թեամբ ուժոյն զիւրեաւ ցանցեալ,
'ի ճահ դիպեցուցանէր զերկայրին,
և ընդ մէջ կտրէր զայրն և ընդ զոյգ
պարանոցին զգլուխ երիվարին։

Իսկ զօրացն ամենայն տեսեալ
զթագաւորն խուրեանց և զզօրաւո-
րըն միջակտուր յայնպիսի ահա-
ւոր բազկէ լեալ, 'ի փախուստ դառ-
նային. զորոց զհետ մտեալ Տրդատ,
վարէ մինչեւ յաշխարհն Հոնաց։
Եւ թէպէտ ոչ փոքր հարուածս իւ-
րոց զօրացն եհատ, և բազմաց ան-
կու�մեծամեծաց, յորում մե-
ռաւ և սպարապետն ամենայն Հայ-
ոց Արտաւազդ մանդակունի, սա-
կայն Տրդատ անտի ըստ հայրու-
թեան օրինաց պատանդս առեալ,
դառնայ։ Որով պատճառաւ միա-
բանեալ զամենայն հիւսիսի, հա-

նեալ զօր բազում, գումարտակ ա-
ղարեալ, խաղայ յաշխարհն Պարս-
կից, գիմեալ 'ի վերայ Շապհոյ՝ որ-
դւոյ Արտաշրի, զորս յիւրոցն առ-
նելով զօրավարս, զՄիհրան առաջ-
նորդ Վրաց, վստահացեալ վասն
'ի Քրիստոս հաւատոցն, և զԲա-
գարատ ասպետ և զՄանաճիհր նա-
հապետ ազգին ուրշտունեաց և զՎա-
հանն նահապետ ամատունեաց։ Բայց
յաղագս հաւատոց Միհրանայ և
աշխարհին Վրաց ասել կայ մեզ
առաջի։

ԶԶ. Յաղագս նոր-նէի երանելւոյ, ե-
ռէ ՝ի ՝ի պոպճառոտ քրիստոնեան
Վրաց։

ԿԻՆ ոմն, անուն Նունէ, յընկե-
ալոց սրբոց հռիփսիմեանցն 'ի ցրուե-
ալոցն, փախստականաբար հասեալ յաշ-
խարհն Վրաց 'ի Մծխիթայ, 'ի նո-
ցա քաղաքն նախագահ, յոյժ ճրագ-
նուութեամբ ստացեալ շնորհս բժշկ-
կութեան. որով և զբազում ախ-
տաժետս բժշկեալ, և զլեռվին զկին

Միհրանայ առաջնորդին Վրաց։ Վասն որոյ հարցեալ զնա Միհրանայ, եթէ որո՞վ զօրութեամբ առնես զայս սքանչելիս, ուստա՞ զքարոզութիւն աւետարանին Քրիստոսի. և ախորժելով լուեալ, պատմեաց իւրոց նախարարացն հանդերձ գովեստիւ։ Եւ իսկոյն եհաս 'ի նա լուր սքանչելեացն, որ եղեն 'ի Հայս 'ի Թագաւորն և 'ի նախարարսն, և զընկերացն երանելոյն Նունեայ, ընդ որ հիացեալ, զրուցեաց երանելոյն Նունեայ, որոց և ստուգագոյն եւս տեղեկացաւ զամենայն ոճով։

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ելանել Միհրանայ յորսս. մոլորեցաւ 'ի դժուարս լերանց խաւարեալ օդով, այլ ոչ տեսանելեօք, ըստ այնմ՝ թէ կոչէ զմէգ բարբառով, և դարձեալ՝ թէ զտիւ 'ի գիշեր մթացուցանէ։ Այսպիսի խաւարաւ ըմբռնեալ Միհրան, որ եղեւ նմա աւիթ մշտնջենաւոր լուսոյն. քանզի զարհուրեալ, յիշեաց զոր լուաւ վասն Տրդատայ, եթէ

կամեցաւ Ճանապարհորդել յոյն, հասին նմա հարուածք 'ի Տեառնէ. զոր համարեցաւ՝ թէ և նմա այնպիսի ինչ դիպեալոց է: Եւ երկիւղիւ մեծաւ պաշարեալ, խնդրեաց աղօթիւք լուսաւորիլ օգոյն և դառնալ խաղաղութեամբ, պաշտել զԱստուածն Նունէի խոստանայր. որում հանդիպեալ, կատարեաց զասացեալն:

Իսկ երանելոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս, յղեաց առ սուրբն Գրիգոր, եթէ զինչ հրամայեսցէ նմա գործել այնուհետեւ, քանզի յօժարութեամբ ընկալան Վիրք զքարոզութիւն աւետարանին: Եւ հրաման ընդունի՝ կործանել զկուռսն, որպէս ինքն արար, և կանգնել զպատուական նշան խաչին մինչեւ ցօր տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն նոցա: Եւ իսկոյն կործանեաց զամպրոպային պատկերն Արամազդայ. որ կայր մեկուսի 'ի քաղաքէն՝ գետոյն հզօրի ընդմէջ անցանելով. զոր սովոր էին երկրպագել այգուն այգուն 'ի տա-

նեաց իւրաքանչիւր, զի հանդէպ նոցա երեւէր. իսկ եթէ ոք զոհել կամէր, անցեալընդ գետն առաջի մեհենիցն զոհէր։

Բայց 'ի վերայ նոցա յարեան նա-խարարք քաղաքին, եթէ զո՛վ ար-դեւք փոխանակ կռոցն երկրպա-գեմք. ուստի՝ եթէ նշանի խաչին Քրիստոսի. զոր արարեալ կանգնե-ցին 'ի վերայ վայելուչ բլրոյն յա-րեւելից կողմանէ քաղաքին, մեկու-սի բաժանեալ և նա փոքրագոյն գետով։ Եւ երկրպագեցին ամենայն բազմութիւնն ընդ առաւօտն նոյն-պէս 'ի տանեաց իւրաքանչիւր։ Բայց յորժամ եղեալ 'ի բլուրն տեսին փայտ կոփեալ՝ ոչ Հարտարաց ինչ գործ, յոլովք քան զսակաւս ար-համարհեցին, իբր թէ այնպիսեաւ ի՛նչ ամենայն անտառն նոցա. և թողեալ 'ի բաց գնացին։ Իսկ բա-րերարին Աստուծոյ նայեցեալ 'ի գոյութագործութիւն նոցա, առաքեաց յերկնից սիւն ամպոյ, և լցաւ լեառնն բուրմամբ անուշահոտու-թեամբ. և ձայն բազմութեան սաղ-

մոսերգուաց լսելի եղեւ քաղցր յոյժ
և ծագեաց լոյս սպասաւորութեամբ
խաչի ըստ ձեւոյ և չափոյ փայտե-
ղինին, և կալով'ի վերայ նորա հան-
գերձ երկոտասան աստեղք. յոր
ամենեցուն հաւատացեալ, երկրը-
պագեցին նմա: Եւ յայնմ հետէ
զօրութիւնք բժշկութեան կատա-
րեին 'ի նմանէ:

Իսկ երանելին Նունէ էլ գնաց
աշակերտել զայլ եւս գաւառսն
Վրաց յանապակ լեզուէն, շրջե-
լով անպաճուճաբար և առանց ա-
ւելորդաց, օտարացեալ յաշխարհէ
և որ 'ի սմա. կամ թէ ճշմարտա-
գոյն ասել՝ 'ի խաչ ելեալ, 'ի կըր-
թութիւն մահու զկեանսն առնե-
լով, բանիւ վկայ բանին Աստու-
ծոյ, և յօժարութեամբն իւրով որ-
պէս արեամբ պսակեալ: Զոր հա-
մարձակիմք ասել, Առաքելուհի ե-
ղեալ, քարոզեաց 'ի Կղարջաց սկը-
սեալ առ դրամբք Աղանաց և Կաս-
բից մինչեւ 'ի սահմանս Մասքթաց,
որպէս ուսուցանէ քեզ Ագաթան-
գեղոս: Բայց մեք դարձցուք անդ-

ըէն 'ի պատմութիւն Տրդատայ յարձակմանն 'ի Պարսս։

ԶԷ. Պարսուտն Շապհոյ և ակամայ հնազանդութիւն ընդ յեռամբ մեծին Կոստանդիանոսի. և Տրդատայ ոնել զԵկեղեաց, և գալ ազգականացն. և Ռէ յայնժամ եղեալ գերապետ քրիստոնեից։

ԲԱՅՑ Տրդատայ թէպէտ և ցաղթութիւն ստացեալ էր, այլ 'ի հարկանելոյ զօրուն և 'ի բազում անկելոց նախարարացն, զանդիտեաց ինքեամբ յատուկ մարտնչել ընդ Շապհոյ, մինչեւ եհաս բազմութիւն զօրուն հռոմայեցւոց, որք ընդ ասորեստան յարձակեցան. և 'ի փախուստ Շապհոյ՝ դարձան և յաւարի առին զամենայն երկիրն։ Բանզի և Տրդատ միահամուռ իւրովքն, և որք ընդ իւրովք էին զօրքն, ընդ հիւսիսային կողմանս իշխանութեանն Պարսից դիմեաց տարեկան չուաւորութեամբ։

Յայնժամ գայ առ նա ազգականն իւր և հարազատ կամաւր,

առաջին որդի Պերոզամատայ։ Այս Պերոզամատ է այն տղայն, որ 'ի կուսարեն Արտաշրի զցեալն Կարնան Պահլաւին, փախուցեալ Բուրզայ ապրեցուցանէր։ Որոյ հասեալ յերիտասարդութիւն, 'ի պատիւ հօրն և 'ի վերայ զօրուն կարգի յԱրտաշրէ, առ 'ի պատերազմել ընդ խուժադուժ ազգն ընդ այնոսիկ. նենգութեամբ խորհել արկանել զնա 'ի ձեռս բարբարոսայ։ Որոյ եղեալ այր քաջ, սքանչելապէս մղեաց զպատերազմունն. և 'ի պարտել զՎզբրին որ անուանէր Խաքան, նուաճեալ՝ տայ զդուստր իւր նմա կնութեան. նա և այլ կանայս առեալ զմերձաւորս Արտաշրի, և բազում որդիք եղեալ, զօրացեալ բռնութեամբ ունի զկողմանսն զայնոսիկ. թէպէտ և էր 'ի համար Արտաշրի, այլ ոչ տեսանէ զնա։ Եւ 'ի մեռանելն Արտաշրի՝ ոչ հնազանդի որդւոյ նորա Շապհոյ. և 'ի մարանչելն 'ի բազում պատերազմունս յաղթէ, և 'ի մահերամայն Շապհոյ դեղակուր եղեալ մեռանի։

Աւ նովլիմբ ժամանակաւ այլ ոմն կեցեալ Ազբրկ Խաքան, որ թշնամութեամբ ընդ Կամսարայ որդւոյ նորա վարէր։ Իսկ Կամսարայ դըժուարին վարկուցեալ'ի մէջ երկուց հզօր թագաւորաց բնակել թշնամութեամբ, մանաւանդ զի և էրբարքն ոչ միաբանեցան ընդ նմա, խաղացեալ ամենայն ընդանեաք իւրովք և աղեխիւ գայ առ Տրդատ մեր թագաւոր, եղբարց նորա առ Շապուհ երթալով։ Այս Կամսար ահագին քաջութեամբ նահատակեալ աւ հարքն'ի պատերազմունս, 'ի շահատակելն իւրում հարկանի սակերը զգլուխն. և վերացուցեալ մասն ինչ յոսկերէ սկաւառակին, բժշկեալ'ի դեղոց, պակաս գոլով բոլորութիւն գագաթանն, անուանեցաւ Կամսար այնր ազգաւ։

Բայց Տրդատայ հաստատեալ իւր զեւթնապարսկեանն Եկբատան երկրորդ, և վերակացուս յինքենէ թողեալ, դառնայ'ի Հայս, ընդ իւր ածելով զԿամսար ամենայնիւքն։

Քանզի Շապուհ ապաչեաց զԿոստանդիանոս զյաղթողն, խնդրել զհաշտութիւն, և հաստատել խաղաղութիւն մշանջենաւոր. զոր ապարեալ սրբոյն Կոստանդիանոսի, յետ այնորիկ առաքեաց զՀելենէ զմայրն իւր յԵրուսաղէմ 'ի խնդիր պատուական խաչին, զոր և եգիտ իսկ զփրկական փայտն, հանդերձ հինգ բեւեռաքն։

ԶԸ. Կապոտն Լիկիանոսի, և քոխոտն արքունէական 'ի Հռովմէ, և ընդ Կոստանդնուպօլսի։

Ի ԲԱՌՆԱԼՆ Աստուծոյ զբարեբարութեանն ամենայն յերեսաց Կոստանդիանոսի՝ մեծարեաց նա զԼիկիանոս մեծութիւն յոյժ, և ետ նմա կնութեան զքոյր իւր ոչ համամայր, ծիրանեօք և պսակաւ կայսերական զարդարեաց զնա. և յերկրորդականս հաստատեալ պատիւս, արքայ ամենայն արեւելից կացոյց։ Բայց զոր աստուածային բանն առ էբրայեցւոցն անհնարին համարեալ՝

չարութեանն փոփոխումն, նոյն և ատանօր պատահի. ընձու անկա-
րելի է զխայտուցան փոխել, և է-
թովպացւոյ զթխութիւն, նոյնպէս
մարդոյ ամպարշտի զբարան։ Քան-
զի նախ առ 'ի հաւատան գտանի
դրժող, և երկրորդ առ բարեգործն
իւր ապստամբ։ Յարոյց հալածանս
եկեղեցւոյ, և նենգութիւն գաղտ-
նի ընդդէմ Կոստանդիանոսի. Նա և
չարիս բազմազանս ամենեցուն հա-
սոյց, որ ընդ իւրով իշխանութեամբն
էին, ցանկասէրս այս և գարշելի
ալեւոր՝ ներկուածոյ ունելով ըզ-
հերս. որ և զկին իւր 'ի մեծ նե-
ղութիւն արգել, սակս տրփու-
թեան երանելւոյն Գլափիւռայ,
վասն որոյ սպան զսուրբն Բասիլիոս
Ամասիոյ պոնտացւոց եպիսկոպոս։

Եւ իբրեւ յայտնեցաւ գաւն, և
գիտաց թէ նմա լուռ ոչ լինի Կոս-
տանդիանոս, ժողովեաց զօրս ընդ-
դիմանալ պատերազմաւ։ Եւ ցըր-
տացեալ 'ի սիրոյն Տրդատայ մեր
թագաւորի, ակնածէր որպէս ար-
դարեւ 'ի թշնամւոյ. քանզի գի-

տէր, եթէ տեսլի է արդարոյ ամենայն ամբարիշտ։ Իսկ իբրեւ եկն յաղթողն Կոստանդիանոս, մատնեաց Աստուած 'ի ձեռս նորա զՆիկիանոս. յոր խնայեալ որպէս 'ի ծերունի և 'ի քեռայր, եւ տանել 'ի Գայլլիուս հանդերձ երկաթի կապանօք՝ դնել 'ի մեռաղս, զի աղօթեսցէ առ Աստուած՝ որում մեղաւն, թերեւս երկայնամիտ լիցի առ նա։ Եւ ինքն հանդերձ որդւովքն մի թագաւորութիւն ըղհռովմայեցւոցն ցուցեալ, զքսանեմեակն 'ի Նիկոմիդացւոց քաղաքին կատարեաց։ Զի 'ի ջորրորդ ամէ հալածանացն սկսեալ թագաւորել մինչեւ ցերեքտասաներորդ ամն խաղաղութեան, զոր և այսօր ունէ աշխարհ։

Եւ ոչ պարտ վարկուցեալ 'ի Հռոմ դառնալ, այլ 'ի Բիւզանդիոն անցեալ՝ հաստատէր զարքունիսն, յանրջական իմն նախատեսութեանց հրամայեալ. գերասպայծառս իմն առնելով չինուածս, հրնդապատիկ յաւելեալ մեծացուցա-

նէ։ Քանզի ոչ ուրուք մեծի Թա-
գաւորի կայր 'ի նմա ձեռնարկու-
թիւնք այսպիսիք՝ բայց 'ի սակաւ
ինչ իրաց, որպէս տիեզերակալին
Աղէքսանդրի մակեդոնացւոյ, յոր-
ժամ անտի ընդդէմ Դարեհի սպա-
ռազինեցաւ, և սակս այնորիկ շի-
նեաց յիշատակ իւր զաստացեալն
Սորատիդին. քանզի 'ի նմա զպա-
տերազմականն յօրինեաց զկազ-
մուածիւն։ Զոր յետոյ Սեւերիոս
արքայ հռովմայեցւոց նորոգեաց.
և ինքն շինեաց զբաղանիսն 'ի տե-
ղւոջ սեանն, որ ունէր սորագիր
խորհրդական անուն Արեգական,
ըստ Թրակացւոց բառի Զեւքսի-
պոն, որոյ կոչմամբ յորջորջեցան և
բաղանիքն։ Սա շինեաց և զտեսա-
րանն և զդաղանամարտկացն և ըզ-
խաղալիկացն, և զձիրնթացսն ոչ կա-
տարմամբ։ Այլ Կոստանդիանոս
ամենապատիկ յարդարեաց, և ա-
նուանեաց նոր Հռոմ, իսկ աշխարհ
կոչեաց զնա Կոստանդիանու քա-
ղաք։ Սեն և զայս, եթէ գաղանի
եհան 'ի Հռովմայ զաստացեալն Պա-

ջադիոն քերածոյ, և եդ զնա 'ի փո-
ռոնին ներքոյ սեանն զառ 'ի յիւրմէ
կանգնեալ. բայց այս մեզ անհաւա-
տալի է, այլոց՝ որպէս կամք ի՛ցեն։

ԶԹ. Յաղագս Արիոսի աղանդաւորի,
և ժողովոյն՝ որ եղեւ վասն նորա 'ի
Նիկիայ, և ուսանելեաց՝ որ երեւե-
ցան 'ի Գրիգորիոս։

ԸՆԴ այն ժամանակս երեւեցաւ
Արիոս աղէքսանդրացի, որ ուսոյց
չարաչար ամբարշտել, ոչ գոլ զորդի
հաւասար հօր, և ոչ 'ի բնութեանէ և յէութեանէ հօր, և ոչ
ծնեալ 'ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս, այլ օտար զոմն և արարած
և կրտսեր, և յետ ժամանակի գոյացեալ. որ ըստ արժանեաց իւրոց
ամբարիշտս այս Արիոս 'ի գարշելիսն ընկալաւ զատակումն։ Վասն
որոյ ել հրաման յինքնակալէն Կոստանդիանոսէ՝ ժողով լինել բազմութեան եպիսկոպոսաց 'ի Նիկիայ քաղաքացւոց։ Եւ ժողովեցան Բիտոն և Բիկենդ երիցունք 'ի Հռոմ

քաղաքէ՝ ձեռնարկութեամբ սրբոյն Սեղբեստրոսի, Աղէքսանդրոս Աղէքսանդրի, Եւսեբիոս Անտիոքայ, Մակարիոս Երուսաղէմի, Աղէքսանդրոս Կոստանդնուպոլսի եպիսկոպոս։

Յայնժամ գայ հասանէ հրովարտակ ինքնակալին Կոստանդիանոսի առ մեր արքայն Տրդատ, զի զսուրբն Գրիգոր առեալ ընդ իւր 'ի ժողովն երթիցէ. զոր ոչ առ յանձն Տրդատ։ Քանզի լուեալ էր զինամանաչն Շապհոյ ընդ հնդկաց թագաւորին, և ընդ արեւելեանն Խաքանայ, և զզօրավարքն Ղերսեհի՝ որ և թագաւորեաց ամս ինն, և Որմըզդի՝ որ ապա և նա թագաւորեաց ամս երիս նահատակութեամբք։ Եւ 'ի կասկածի եղեալ, զի մի արդեւք պայմանին ստիցէ ըստ սովորութեան հեթանոսութեանն, վասն այնորիկ ոչ երթող առանց իւր զաշխարհս։ Բայց և ոչ սուրբն Գրիգոր հաւանեցաւ երթալ, զի մի զառաւել պատիւն վասն խոստովանողական անուանն 'ի ժողովոյն կրիցէ. որ-

պէս զի այսպէս փափաքանօք և մեծաւ փութով 'կոչէն։ Այլ նոքա առաքէն փոխանորդ իւրեանց զՈրոստակէս, հանդերձ Ճշմարիտ խոստովանութեամբ եկեղեցուն՝ գրով։ Որոյ երթեալ հասանէր մեծին Ղեւոնդի. և հանդիպի յայնմ ժամու, զի մկրտէր զԳրիգոր զհայր Գրիգորի աստուածաբանի. որ իրրեւ էլ 'ի ջրոյն, լոյս շուրջ փայլատակեալ զնովաւ, զոր ոչ ոք 'ի բազմութենէն էտես, այլ միայն Ղեւոնդիոս՝ որ մկրտէրն, և մերն Որոստակէս, և Եւթաղ Եդեսիայ, և Յակոբ Մծբնայ, և Յոհան Պարսից եպիսկոպոս, որք նոյն շաւղօք ուղեւորէին 'ի ժողովն։

Ղ. Դարձ Որոստակէսի 'ի Նիկիոյ, և հաւատալ ուղփանանցն, և որ էնչ 'ի Գառանի ղէնուածք։

ԵՐԹԵԱԼ Որոստակէս ընդ մեծին Ղեւոնդի, հասանէ 'ի քաղաքն Նիկիացւոց, ուր էղէն ժողովեալ

հալք երիքհարեւր և ութեւտասն
'ի քակաումն արիանոսաց, զորանզո-
վեալ մերժեցին 'ի հաղորդութենէ
եկեղեցւոյ. սասկս և ինքնակալն
արտատահմանեաց 'ի մետաղս: Ա-
պա դարձեալ Ռիստակեայ արժա-
նահաւատ բանիւ, և քան կանո-
նեալ գլխովք ժողովոյն, գայ հան-
դիպի հօրն և արքային 'ի Վաղար-
շապատ քաղաքի: Ընդ որ ուրա-
խացեալ սրբոյն Գրիգորի, սուղ
ինչ գլուխս յինքենէ 'ի կանոնս ժո-
ղովոյն յաւելու, վասն առաւել
զգուշութեան իւրոյ վիճակին:

Յայնմ ժամու և ազգային նոցա
Կամնար մկրտի իւրայովքն հան-
դերձ 'ի ձեռն մեծին Գրիգորի, ար-
քայի ընդունելով 'ի Ջրոյն, տալ
նմա ժառանգութիւն զմեծ դաս-
տակերան Արտաշիսի, որ այժմ ա-
սի Դրասխանակերտ, և զգաւառն
Շիրակ, որպէս ազգականի իւրում
և մտերիմ հարազատի: Այլ նա
ոչ աւելի բաւեալ քան զեւթն ա-
ւուրս յետ մկրտութեանն, վախ-
ճանի: Բայց թագաւորին Տրդա-

տայ Մխիթարեալ զգլուխ որդւոցն Կամսարայ զԱրշաւիր, զինքն փոխանակ ծնողին սահմանելով, ազգ զնա սերելով յանուն հօրն, և կարգէ 'ի թիւ նախարարութեանց։ Յաւելու և այլ պարգեւս, զքաղաքն Երուանդայ և զնորին գաւառն մինչեւ ցկատար ձորոյն մեծի. միայն զի 'ի մտաց նորա հեռացուցէ զյիշատակ բնիկ աշխարհին՝ որ Պահլաւն կոչի, որպէս զի անվրդով զհաւատն պահիցէ։ Իսկ Արշաւիր առաւել սիրեալ զգաւառն, յիւր անունն անուանէր արշարունիս. քանզի յառաջ Երասխաձոր կոչիւր։ Ահա ասացաք և զպատճառս գալստեան երկուց ցեղիցն, Պարթեւաց և պահլաւկաց։

Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուածն ամրոցին Գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմաք, երկաթագամ և կապարով մածուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանաք, սքանչելի դրօշուածովք բարձր քանդակաւ, 'ի համար քեռ իւրոյ Խոսրովիդուխ-

տոյ, և գրեալ'ի նմա զիշատակ իւր հելլենացի գրով։

Բայց սրբոյն Գրիգորի դարձեալ 'ի նոյն լերինս, ոչ ումեք յետ այնր յաւելոյր երեւելմինչեւ ցվախճան։

ՂԱ. Յաղագս մահուանն Գրիգորի Ի Ռըոպոկէայ՝ Ի ՌԷ ԷՐ ԱՂԱԳԱՒ ԿՈԼԻ ԷՄԱՌԱՆ, ՄԱՆԷԱՅ ԱՅՐՓ։

ՅԵՒԹՆ և 'ի տաճարորդի ամի Թագաւորութեանն Տրդատայ գոսաք նստեալ յաթոռ սրբոյ Առաքելոյն Թադէոսի զնախահայրն մեր Գրիգորիոս և ըստ աւետարանին ծնօղ։ Յետ լուսաւորելոյ զամենայն Հայս լուսով աստուածդիտութեան, և ջնջելոյ զխաւար կռապաշտութեանն, և ընկոյ զամենայն կողմանս եպիսկոպոսաք և վարդապետաք, սիրեցեալ զլերինս և զամայութիւն և զհանդարտութեամբ մնացս յինքեան կեալ, որպէս զի խոսեսցի ընդ Աստուծոյ անզբաղապէս. փոխանորդ իւր Թողլով զորդի իւր զՌըստակէս, ինքն կալով 'ի գաւա-

ուին Դարանաղեաց 'ի Լերինն Մանեայ այրս։

Այլ ասասցուք, թէ էր աղաղաւ կոչի նա Մանեայ այրք։ Քանզի էր կին ոմն Մանեայ անուն յընկերաց սրբոց Հռիփսիմեանցն, որպէս զնոունէ Վրոց վարդապետուհի. որ ոչ շութափեաց հետեւել նոցա 'ի գալն առ մեզ, գիտելով զամենայն տեղիս՝ Աստուծոյ, բնակեցաւ 'ի Լերինս յայսմիկ, յայրս ինչ քարանց. վասն որոյ կոչեցաւ անուն Լերինն Մանեայ այրք. յորմէ յետոյ բնակեցաւ և սուրբն Գրիգոր։

Այլ թէպէտ և բնակեցաւ անդ, սակայն ընդ ժամանակս ժամանակս յայտնեալ շրջէր ընդ աշխարհս, հաստատէր 'ի հաւատս զաշակերտեալսն։ Բայց խբրեւ եկն Ռիստակէս որդի նորին 'ի ժողովոյն Նիկիոյ, այնուհետեւ ոչ եւս երեւեցաւ յայտնեալ ումեք սուրբն Գրիգորիոս։ Վասն որոյ յիսկզբան քահանայանալոյ նորա, յեւթն և 'ի տասներորդ ամին թագաւորու-

թեանն Տրդատայ մինչեւ ցքառասուն և վեց ամն նորին, յորում ոչ էաս յաւել ումեք երեւել, համարեալ թուին ամք երեսուն։

Եւ յետ նորա Ուրստակէս ամս եւթն, 'ի քառասուն և յեւթնեերորդ ամէն Տրդատայ մինչեւ ցյիսուն և երրորդ ամն նորին, յորում եղեւ կատարումն Ուրստակեայ։ Զի արդարեւ էր սուսեր հոգեւոր ըստ ասացելումն, վասն որոյ թշնամի ամենայն անիրաւաց և զազրագործաց թուէր նա։ Յաղագս որոյ և Ամբեղայոս, որ էր կարդեալ 'ի վերակացութիւն չորրորդն կոչեցեալ Հայոց, կշռամբեալ 'ի նմանէ, ապաստեաց 'ի դիպող աւուր. և պատահեալ 'ի Ճանապարհի 'ի Ծոփաց գաւառին, ապան զնա սրով. և ինքն գնաց փախստական 'ի Տաւրոս կիւլիկեցւոց։ Իսկ զմարմին երանելոյն բարձեալ աշակերտացն, բերին յԵկեղեաց գաւառն, հանդուցանել 'ի Թիլն, յիւրում աւանին։ Եւ յաջորդեաց զաթոռն երէց եղբայր նորին Վրթանէս, 'ի յիսուն և 'ի

չորրորդ ամէն Տրդատայ և անդր։

Բայց սրբոյն Գրիգորի 'ի Մանեայ այրն կէցեալ անբերեւութաբար ամս բազումս, փոխի մահուամբ 'ի կարգս հրեշտակաց։ Եւ հովուաց, զոյն զնա վախճանեալ, 'ի նմին տեղւոջ թաղեցին, ոչ գիտելով թէ ով ոք նա էր։ Վայելէր իսկ նոցա, որք Փրկչին մերոյ ծնընդեանն եղեն խորհրդածուք, լինել և աշակերտի յղարկմանն սպասաւորք։ Եւ ծածկեալ ամս բազումս ստուգածային իմն գոգցեաս տեսչութեամբ, իբրեւ զՄովսէսն զայն 'ի հնումն, զի մի 'ի պաշտօն առցի 'ի գեռահասաւ բարբարոսացն ազգաց։ Իսկ յորժամ սերտեալ հիմնեցան հաւատք կողմանցս այսոցիկ, զկնի յետ բազում ժամանակաց յայտնեցաւ Ճգնաւորի ումեմն Դաւնիկ անուն կոչեցելոյ, և բերեալ եգաւ 'ի գեւղն Թորդան նըշխարքն սրբոյն Գրիգորի,

Սա, որպէս ամենեցուն յայտնի է, աշխարհաւ Պարթեւ, գաւառաւ Պահլաւ, յազգէ Թադաւո-

լեալ, զաստուցեալ արշակունի, 'ի ցեղէ սուրենական, 'ի հօրէ Անակ կոչեցելոյ, յարեւելից կողմանց աշխարհիս մերոյ՝ արեւելք ծագեալ մեզ և խմանալի արեգական հոգեւոր Հառագայթ, 'ի խորին ջարուլթենէ կուսապաշտութեան ելք, Հրշմարիտ բարի և այսահալած, երանութեան և շինութեան հոգեւորի առիթ, աստուածային արդարեւ արմաւենի անկեալ 'ի տան Տեառն և 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեալ. և այսպիսեաք և այսքանեաք ժողովրդովք բազմացեալ, 'ի ծերութիւն և 'ի պարարտութիւն հոգեւորի զմեզ ժողովեաց 'ի փառս և 'ի գովեստս Աստուծոյ:

ՂԲ. Յաղագս վախճանի Տրդատայ Ի գաւառին, ընդ որում և ողբերգական մեղադրութիւն:

ՔՍԲՈՅ և զմեծէ և զերկրորդ նահատակէ և զմերոյ լուսաւորութեանցն լուսաւոր վերակացուէ Հառելով, զի Քրիստոսէ հանուրց ե-

ղելոցս ճշմարիտ թագաւորէ, հրա-
շափառագունիւ պարտ էր անցա-
նել բանիւ, որպէս զգործակցէ և
զհաւասար ճգնողէ մերոյ նախա-
շաւղի և լուսաւորութեանց նահա-
պետի. որպէս թուեցաւ հաճոյ հո-
գւոյն սրբոյ երկնցայուցանել զնմ
Լուսաւորչին վկայութեանն միայ-
նոյ վիճակաւ, 'ի վերայ բերեմ՝ թէ
և առաքելութեանն. իսկ որ ինչ
զինի այսորիկ, զուգաբան և հա-
ւասարագործ։ Այլ զառաւելու-
թիւն ասեմ ասա զթագաւորին.
քանզի խորհէին յաղագս Աստու-
ծոյ և ճգնազգեցիկ լինել՝ զոյգ եր-
կոցունց, իսկ նուաճել հաւանե-
ցուցանողականաւ կամ բռնաւո-
րականաւ բանիւ՝ առաւել էր թա-
գաւորին շնորհ. քանզի ըստ հա-
ւատոյն ոչ ինչ կասեցուցանէր ըզ-
գործն։ Այնր աղագաւ կոչեմ և
զսա նախաշաւիղ ճանապարհ և
լուսաւորութեանցն մերոց հայր
երկրորդ։ Բայց զի պատմութեանց
և ոչ գովեստից է ժամանակս, մա-
նաւանդ զի և հաղնեցուցիչնս

բան խրաքանչիւր պատմագրաց արտասանութեանց և ոչ յատուկ 'ի մինչ շարագրեցաւ, անցցուք 'ի կարգ բանից՝ որ ինչ յաղագս սորա։

Սա յետ հաւատոյն՝ որ 'ի Քրիստոս, ամենայն առաքինութեամբք բացափայլեալ, եւս քան զեւս յաճախէր որ ինչ յաղագս Քրիստոսի գործ և բան. ասասելով և հաւանեցուցանելով զմեծամեծ նախարարսն, միանգամայն և զառենայն բազմութիւն ռամկին, լինել արդարեւ Քրիստոսի. որպէս զի վկայեսցեն հաւատոցն՝ ամենեցուն և գործքն։ Այլ զխստասրտութիւն կամիմ ասել, թէ և զամբարհաւաճութիւն ազգիս մերոյ յիսկզբանցն և այսր. որպէս անհամբոյր բարւոյ և ճշմարտութեան անհարազատ, կամ թէ բնութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւն, ընդդիմանան կամաց թագաւորին յաղագս կրօնիցն քրիստոսական, զհետ երթալով կամաց կանանց և հարճից։ Որում ոչ կարացեալ ներել թագաւորին,

ընկեցեալ զերկրաւոր պատկս՝ զհետ ընթանայր երկնաւորին, արագ հասանելով 'ի տեղի սուրբ ճգնաւորին Քրիստոսի, ծակամուտ լեռնակեցիկ եղեալ։

Ատանօր ամաչեմ ասել զՀրաշմարտութիւնն, մանաւանդ թէ զանօրէնութիւն և զամբարշտութիւն ազգիս մերոյ, և զմեծի ողբոց և արտասուաց արժանի ասցա գործս։ Քանզի զհետ առաքեալ, կոչէն զնա՝ լինել ըստ կամաց նորա, և ունել զթագաւորութիւնն։ Իսկ 'ի չհասանել սրբոյն տան նմա արքունի, որպէս անդ ուրեմն 'ի հինան աթենայեցիքն Սոկրատայ զմոլեխինդն։ և կամ թէ զմերն իսկ ասել, կատաղեալ եբրայեցիքն ըմպելի 'ի ձեղեաւ խառնեալ Աստուծոյ մերոյ։ Եւ զայս արարեալ շինչուցին յինքեանց զբազմափայլ Ճառագայթն աստուածպաշտութեան։

Վասն այսորիկ 'ի վերայ իմոցս ողբալով ասեմ, որպէս Պաւղոս յաղագս իւրոցն, և թշնամեաց խաչին Քրիստոսի։ բայց ասեմ ոչ զիմ

բանս, այլ զՀոգւոյն պրբոյ։ Աղէ թեւը և դառնացող, աղէ՝ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր, և ոչ հաւատարմացաւ Աստուծոյ ոգի նորա։ Ա՛ռք արամեանք, մինչեւ յե՞րբ էք ծանրասիրտք, ընդէ՞ր սիրէք զնանրութիւն և զանաստուածութիւն։ Ոչ ծանեայք, զի սքանչելացոյց Տէր զսուրբս իւր. և ոչ Տէր լուիցէ յաղաղակել ձերում առ նա. բարկացեալ մեղանչեցէք, և յանկողինս ձեր ոչ ղջայարուք. քանզի զենէք զենումն անօրէնութեան, և զյուսացեալսն 'ի Տէր արհամարհեցէք։ Վասն այսորիկ եկեսցէ ձեզ որոգայթ, զոր ոչ ծանեայք. և որսն զոր որսայցէք, ըմբռնեսցէ զձեզ, և նովին որոգայթիւն անկջիք։ Այլ նորա անձն ցնծասցէ Տերամբ, և ուրախասցի 'ի փրկութեան իւրում, և ամենայնիւ ինքեամբ ասասցէ. Տէր, ո՞վ նմանէ քեզ։

Եւ զի այսոքիկ ճշմարիտ այսպէս, մխիթարեսցուք մերովք վասնդիւքս և մեք. զի եթէ ընդ փայտ դալար զայս արարին, ասէ Քրիս-

տոս, իսկ ընդ ջրն զինչ լինիցի։ Արդ ընդ եթէ սուրբս Աստուծոյ, և որք 'ի թագաւորութենէ յաղագս Աստուծոյ զինքեանս նուաստացուցին՝ այս է, այլ զինչ մեր բանս առ Աստուծոյ յաղագս 'ի ձէնջ վտանգիցս, որոց վտանգք և աղքատութիւն սեպհական է։ Այլ սակայն ասացից։ Ո՞ՀՔ 'Ի ՁԷՆՋ ԹՈՇԱԿՍ ՅԱՂԱԳՍ ՄԵՐ, ՈՎ ՈՔ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՄԱՂԹԱՆՍ, ՈՎ ՈՔ ԲԱՆ ՅՕԺԱՐԵՑՈՒՑԱՆՕՂ ԿԱՄ ՅՈՐԴՈՐԱԿԱՆ, ՈՎ ՈՔ ՅԵՐԹԱԼՍ ՄԵՐ ԲԵՌՆԱԲԱՐՁՍ, ՈՎ ՈՔ 'Ի ԳԱԼՆ ՄԵՐՈՒՄ ՀԱՆԳԻՍՍ, ՈՎ ՈՔ ՏՈՒՆ ԿԱՄ ՕԹԱՆՈՑ ՄԵՂ ՊԱՏՐԱՍՏԵԱՑ։ Թողից զայլն, զի և ոչ զլեզուս չարս և զսգիտութիւնս, հանդերձ անոտի փառամոլութեամբն և կատաղի լեզուանութեամբն, սանձահարեցէք. այլ նիւթ նոցա անմտութեան զձեր ուսումնասիրեացդ տալով բարս, բորբոքեցէք առաւել քան զհնոցն Բաբելոնի։

Վասն որոյ իւրաքանչիւր ոք առանձինն է քուրմ և պաշտօնեայ, որպէս ասէ դիր. որպէս և այժմ

խօսողք բաղումք աստուածայնոցն, և զօրութեան մտացն ոչ հասուք. և խօսողք՝ ոչ ըստ հաճոյից Հոգւոյն, այլ ըստ օտարին: Վասն որոյ հիացումն ինն են Ճառքս և սարսափելի՝ որոց միտս ունին. քանզի խօսին, որ խօսին զԱստուծոյ և զաստուածայինսն, և խորհուրդք խօսողին յօտարն հային: Զի ոչ վասն որոյ խօսին՝ կրէ զաշխատութիւնն, և ոչ մեղմով և հեզիկ, որպէս ուսաւն, թէ մի ոք լուիցէ արտաքոյ զբարբառ նորա, այլ յաղագս փառաց մարդկայնոց, և Ճայթեցուցանելով հնչեցուցանեն 'ի լսելիս մարդկան: Որ շատխօսութեանն հոսանք ելբրեւ յաղբերէ գիմեն, որպէս ասաց ոմն 'ի հնոցն, և զկծեցուցանեն զամենայն գինարբուս 'ի հրապարակս: Ո՞վ ոք զնոսա ոչ ողբասցի, որ միտս ունիցի: Եւ եթէ ոչ ոք զբարեսցի, ասեմ՝ թէ և ոք յորդորեն զնոսա այսպիսի լինել: Արդեւրամ ասել զՔրիստոսին, զսաղն վրէժս յարենէն Աբելի արդարոյ մինչեւ ցարիւնն Զաքարիայ, որ

կայ 'ի մէջ տաճարին և սեղանոյն։
Այլ աստանօր դադարեսցէ բանս, որպէս աշխատութիւն կրեալ՝ յա-կանջս լինել խօսեցեալ մեռելոց։ Այլ պատմութիւնս յաղագս սրբ-բոյն Տրդատայ Ճշմարիտ է. քանզի արբուցեալ նմա դեղ մահու, զբր-կեցան 'ի լուսոյ շնորհաց Ճառագայ-թից նորա, որ թագաւորեաց ամ յիսուն և վեց։

ԲՈՎԱՆԴԱԿԵՑԱՆ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ, ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ

ՑԱՆԿՔ ԵՐՐՈՐԴ ՀԱՏԱԾԻ

Ա. Աւարտմանն Հայոց պատմութեան։

Բ. Որ ինչ յետ վախճանին Տրդատայ ընդ մեծն Վրթանէս և ընդ երիս նախարարութիւնսն անցք։

Գ. Կատարումն սրբոյն Գրիգորի 'ի բարբարոսաց։

Դ. Որոշումն Բակուր բդեշխին 'ի միաբանութենէ Հայոց, և խորհուրդ նախարարացն թագաւորեցուցանել զԽոսրով։

Ե. Պատճէն թղթոյն Հայոց։

Զ. Գալուստն Անախոքայ և գործք նորա։

Է. Յանցանք Մանաճհրի առ մեծն Յակոբ, և մահն։

Ը. Յաղագս թագաւորելոյ փոքր

խոսրովու և փոխելոյ զարքունիսն և տնկելոյ զանտառսն :

Թ. Որ ինչ յաւուրս սորա'ի հիւսիսականացն աղգաց արշաւանք 'ի մեզ, ուր և նահատակութիւնք Վահանայ ամատունւոյ :

Ժ. Վախճանն խոսրովու, և պատերազմ Հայոց ընդ Պարսս :

ԺԱ. Յաղագս թագաւորելոյն Տիրանայ, և փոխելոյն յաշխարհէս մեծին Վրթանայ, և փոխանորդելոյն զաթոռն սրբոյ Յուսկանն :

ԺԲ. Պատերազմ Հապհոյ ընդ Կոստանդեայ :

ԺԳ. Թէ զինարդ Տիրան ինքեալ ընդ առաջ Յուլիանոսի պանդանդս տայ :

ԺԴ. Վկայութիւն սրբոյ Յուսկանն և Դանիէլի :

ԺԵ. Թէ զինարդ Զօրայի առեալ զզօրսն Հայոց դարձաւ 'ի Յուլիանոսէ, և սատակի աղդաւ :

ԺԶ. Յաղագս մահուան որդւոցն Յուսկանն, և յաջորդելոյ զաթոռն Փառնեբսեհի:

ԺԷ. Թէ զիարդ 'ի Շապհոյ խաբեցաւ Տիրան երթալով 'ի կոչն Նորա, և կուրացաւ 'ի նմանէ:

ԺԸ. Յաղագս թագաւորեցուցանելոյ Շապհոյ զԱրշակ, և արշաւանաց 'ի Յոյնս:

ԺԹ. Եթէ ո՞րպէս արհամարհեաց Արշակ զթագաւորն Յունաց:

Ի. Յաղագս սրբոյն Ներսեսի և բարեկարգութեանն 'ի նմանէ:

ԻԱ. Սպանումն Տրդատայ՝ եղբօրն Արշակայ, և երթալոյ սրբոյն Ներսիսի 'ի Բիւզանդիոն և դարձուցանելոյ զսպանդանդան:

ԻԲ. Թէ ո՞րպէս եղեւ խռովութիւն Արշակայ ընդ Գնէլայ, և մահն Տիրանայ:

ԻԳ. Դարձեալ խանդալ Արշակայ ընդ Գնէլայ և սպանանել զնա:

ԻԴ. Եթէ ուրպէս Ժպրհեցաւ Արշակ առնուլ զկին Գնէլայ, յորմէ եղեւ Պապ։

ԻԵ. Սպանումն Տիրիթայ։

ԻԶ. Պարտումն Շապհոյ 'ի Տիգրանակերտի։

ԻԷ. Եթէ ուրպէս Արշակաւանն շինեցաւ և կոտորեցաւ, և առաւ Անի։

ԻԸ. Առումն Տիգրանակերտի և բնաբարձ քանդումն։

ԻԹ. Յաղագս պատերազմին Արշակայ ընդ Նախարարսն իւր, և վտարանդի երթալոյ Պապայ 'ի Բիւզանդիոն։

Լ. Յաղագս արտաքսման լինելոյ մեծին Ներսեհի, և արկանել պահել 'ի կղզին անբնակ. և թէ ուրպէս կերակրեալ լինէին 'ի վերին խնամոցն։

ԼԱ. Կոտորել Արշակայ զնախարարսն. և վասն վարուց Խաղայ եպիսկոպոսի։

ԼԲ. Եթէ ուրպէս Արշակ քարշէր զերանելին զԽաղ, և քար-

կոծել կամէր զնա սակս յան-
դիմանութեան յանցանաց
նորոց։

ԼԳ. Յաղագս թագաւորելոյն Թէո-
դոսի մեծի, և ժողովոյն՝ որ
եղեւ վասն հոգէմարտացն։

ԼԴ. Ակամայ երթ Արշակայ առ
Շապուհ, և անդարձ լինե-
լոյ։

ԼԵ. Յաղագս չարեացն որ անցին
ընդ Հայք 'ի Շապհոյ, և
մահ Արշակայ։

ԼԶ. Անցք ընդ մեզ չարեացն՝ որ
'ի Մերուժանայ, և թագա-
ւորելոյ Հայոց Պապայ։

ԼԷ. Յաղագս մեծ պատերազմին
որ եղեւ 'ի Ձիրաւ, և սա-
տակման ամբարշտին Մերու-
ժանայ։

ԼԸ. Եթէ ո՞րպէս Պապայ գեղ մա-
հու արբուցեալ սրբոյն Ներ-
սեսի՝ եւոյծ 'ի կենցաղոյս։

ԼԹ. Յաղագս աթոռակալութեանն
Սահակայ, և սպանմանն Պա-
պայ 'ի Թէոդոսէ։

Խ. Յաղագս թագաւորելոյ Վա-

բազդատայ, և կապանաց նորին։

ԽԱ. Թագաւորութիւն Արշակայ և Վաղարշակայ։

ԽԲ. Յաղագս բաժանելոյ Հայոց ընդ երկու 'ի ձեռն երկուց թագաւորացարշակունեաց, 'ի ծառայութիւն երկուց ազգաց Պարսից և Յունաց։

ԽԳ. Յաղագս փոփոխման նախարարացն Հայոց յիւրաքանչիւր ժառանգութեանց 'ի պաշտօն իւրաքանչիւր թագաւորաց։

ԽԴ. Եթէ որպէս մեծարեաց Խոսրով զՍահակ ասպետ. և նահատակութիւնք նորին 'ի յեղուզակս ազգին վանանդացւոց։

ԽԵ. Յաղագս գալոյն առ Խոսրով Սուրենայ, Վահանայ և Աշխադարայ հանդերձ գանձիւք Արշակայ։

ԽԶ. Պատերազմաւ Արշակ պարտեալ 'ի Խոսրովայ, վախճանի հիւանդութեամբ։

ԽԷ. Յաղագս Երանելոյն Մեսրովպայ։

ԽԸ. Դարձ առ Խոսրով նախարարացն, որ էին առ Արշակայ։

ԽԹ. Միապետեալ Հայոց Խոսրովայ, և ունել զաթոռ եպիսկոպոսութեան մեծին Սահակայ։

Ծ. Կապումն Խոսրովայ, և փոխանորդել զաթոռն Վռամշապհոյ եղբօր նորա։

ԾԱ. Երթ մեծին Սահակայ 'ի Տիսբոն, և դարձ մեծարանօք և պարգեւօք։

ԾԲ. Յաղագս դանիէլեան նշանագրացն։

ԾԳ. Յաղագս մեսրոպեան նշանագրացն 'ի վերնոյն տուեալ շնորհացն։

ԾԴ. Յաղագս կարգաց դպրութեան Հայոց, Վրաց և Աղուանից։

ԾԵ. Կրկին թագաւորելն Հայոց Խոսրովայ, և յետ նորա Շապհոյ պարսկի։

ԾԶ. Որ ինչ զկնի գնալոյն 'ի Հայոց Հապհոյ, և անիշխանութեանն յետ նորա :

ԾԷ. Առաքումն Մեսրոպայ 'ի Բիւզանդիոն, և պատճէն թղթոց հնդից :

ԾԸ. Վասն զարեւմտեայն մեր վարդապետելոյ, և խաղաղանալոյ բոլորովիմբ, և թագաւորելոյն Արտաշրի :

ԾԹ. Շինուած Կարնոյ քաղաքին, որ կոչի Թէոդուպօլիս :

Կ. Կրկին աւետարանիչ լինել Մեսրոպայ, և երթ թարգմանչացն 'ի Բիւզանդիոն :

ԿԱ. Յաղագս Ժողովոյն Եփեսոսի, որ վասն ամբարշտին Նեստորի եղեւ :

ԿԲ. Ի վարդապետան, յինքն և 'ի Ճանապարհորդութիւնուսմանն, օրինակաւ երկնային զարդու :

ԿԳ. Յաղագս չար միաբանութեանն Հայոց 'ի խորհուրդ կորստեան անձանց :

ԿԴ. Յաղագս բառնալոյ թագաւոր

րութեանն Հայոց ինքեանց կամաւ, և անարգելոյ աթոռոյ եպիսկոպոսապետութեանն։

ԿԵ. Արձակումն 'ի Պարսից մեծին Սահակայ հանդերձ Շմուէլիւ աթոռակցաւ։

ԿԶ. Գործք Շմուէլի անարժանք հոմիշխանի մեծին Սահակայ։

ԿԷ. Փոխումն յաշխարհէս մեծին Սահակայ և Մեսրովպայ երանելոյ։

ԿԸ. Ողբք վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց յաղգէն արշակունեաց, և քահանայապետութեանն յաղգէն սրբոյն Գրիգորի։

Ա-արդեցան ցանկ էրբոբդ գրոց յանկ
ելանելոյ պատմութեան Հայոց։

Zuuantgrle puupgenulgtrug
Znuulguille tnpitrug rulepbrug:

Ejr. 408.

Rizzard dis. 383 Borza inc.

ՀԱՏԱԾ ԵՐՐՈՐԴ

ԱՒԱՐՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՐՈՅ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ա. ՈՉ հնախօսութիւնք եղեալ մերոյ աշխարհիս, և ոչ ընդ ամենայն յունականն անցանել ատակեալ սակս կարճութեան ժամանակին. նա և ոչ մատենագրութիւնք Դիոդորի հուպ առ մեզ են, զի 'ի նմա պահելով զակն՝ անմոռաց անցանէաք ընդ բնաւն, զի մի ինչ 'ի մէնջ մնասցէ 'ի գլխաւորացն և 'ի պիտանեացն, և արժանի յիշատակի մերոյ շարադրութեանց։ Այլ որչափ ջան և յիշողութիւնք բաւիցեն, պատմեցաք ատուդապէս 'ի մեծէն Աղէքսանդրէ մինչեւ 'ի վախճան որբոյն Տրդատայ, յոյժ կանուխ և հեռի ժամանակօք։ Վասն

որոյ մի զմեզ այսպանեալ պարսա-
ւեսցես. զի ահա որ ինչ առ մերով
ժամանակաւս եղեալ կամ դոյզն
ինչ հեռի, զրուցեցցից քեզ անսխալ,
երրորդ առնելով գիրս, որ ինչ յետ
սրբոյն Տրդատայ մինչեւ 'ի սպառել
արշակունեաց ազգին 'ի Թագաւո-
րութենէ, և զաւակի սրբոյն Գրիգո-
րի 'ի քահանայութենէ. հասարա-
կաց խօսիւք անցանելով ընդ պատ-
մութիւնս, որպէս զի մի ոք երեւեսցի
'ի պերճաբանութիւնս գրաւեալ
առ փափագն, այլ ճշմարտութեան
բանից մերոց կարօտեալ, ստէպ
ստէպ և անյաղ առնիցեն զընթեր-
ցումն պատմութեանց մերոց հայ-
րենեաց:

Բ. Որ ինչ յետ վախճանին Տրդատայ
ընդ մեծն Վրթանէս և ընդ երիս նա-
խարարս-ի-նան անդ:

Ի ԺԱՄԱՆԱԿԻ վախճանին
Տրդատայ հանդիպեցաւ մեծն Վրը-
թանէս 'ի վկայարանի սրբոյն Յով-
հաննու, որ 'ի հօրէ նորին շինեալ

էր 'ի Տարօն։ Ուր նենգ գործեալ
լերին այնմիկ բնակչաց, 'ի սադրե-
լոյ նախարարացն, կամեցան սպա-
նանել. որք անլմբռնելի ձեռամբ
կապեալ, որպէս առ Եղիսէիւն այն
'ի հնումն, կամ նորին ինքեամբ
Քրիստոսի Աստուծոյ մերոյ զար-
կուցեալ հրեայքն, անվոխտ ան-
ցեալ գնայր յԵկեղեաց գաւառ 'ի
Թիլն աւան, ուր էրն հանգստա-
բան եղբօր նորին Ռըստակեայ. սգա-
ցեալ 'ի վերայ աշխարհիս Հայոց,
որք յանիշխանութեան մնացեալք,
յարեան ազգ յազգի վերայ նախա-
բարութիւնք կոտորել զմիմեանս.
ուստի և երեք տոհմքն, որ բզնու-
նական և մանաւազեանն և որդու-
նին անուանէին, սպառեալ բար-
ձան 'ի միմեանց։

Գ. Կոտորածն արքայն Գրիգորիայ 'ի Բարբարոսաց։

ՄԵԾԱՒ պնդութեամբ առ-
նէր վրէժինդրութիւն հաւատոց
և վարուց երանելին Տրդատ, առա-
ւել այնոցիկ, որ բացեակողմանքն

էին յիւրում իշխանութենն։ Վասն որոյ եկեալ գործակալք կողմանցն արեւելեայ հիւսիսոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին՝ որ կոչէր Փայտակարան, ասեն ցարքայն. Եթէ կամիցիս ուղղորդութեամբ վարել ըստ հաւատոյ՝ կողմանցն այնոցիկ, առաքեա նոցա եպիսկոպոս 'ի զաւակէ սրբոյն Գրիգորի. զի յոյժ փափաքելով խնդրեն, և գիտեմք հաւատի, թէ 'ի հռչակեալ յանուանէն Գրիգորի ակնածեսցեն և 'ի նորին զաւակէ, առնել զամենայն ըստ հրամանի։ Այսմ հաւանեալ երանելին Տրդատ, տայ նոցա եպիսկոպոս զմանուկն Գրիգորիս, զերեց որդին Վրթանայ։ Թէպէտ և յանկիւթիւն աւուրցն հայելով պատանւոյն՝ զկրն վարկանէր, այլ տեսեալ զհոգւոյն մեծանձնութիւն, և զմտաւ ածեալ զՍողոմոն երկրատատանամեայ թագաւորեալ Իսրայէլի, առաքէ բազում համարձակութեամբ, հանդերձ Սանատրուկաւ ոմամբ յիւրմէ ազգէն արշակունեաց։

Որոյ երթեալ, լինէր օրինակ բարի, հայրենականքն վարելով առաքինութեամբք. այլ կուսութեամբ գեր 'ի վերոյ քան զՀարան, և պատժականաւ զոյգ ընդ թագաւորութեան: Իսկ 'ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ, 'ի դաւելոյ նորին Սանատրկոյ և այլոց ոմանց հանապազասուտ արանց աղուանից՝ սպանին զերանելին ընթադրեալ ձիովքն բարբարոսքն 'ի վանեան դաշտին, մերձ 'ի կասբիական կոչեցեալ ծով: Զոր բարձեալ սարկաւագաց նորուն, բերելով 'ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի: Իսկ Սանատրկոյ թագ կապեալ ինքեան, ունի զքաղաքն Փայտակարան. զօրութեամբ օտար ազգաց խորհէր տիրել բոլորումն Հայոց:

Դ. Որոշումն Բակուր Եդեշիին 'ի միաբանութենէ Հայոց, և խորհուրդ նախարարացն Լաֆաուրէցոցանէլ ընդ Խուրով։

ՈՐՊԷՍ յաստուածայինն գըտանեմք ասացեալ պատմութիւնս, Եբրայական ազգին, յետ դատաւորացն 'ի ժամանակի անիշխանութեանն և անխաղաղութեան, ոչ լինել թագաւոր, և առնն ըստ հաճոյից ինքեան գնալ, սակայն և 'ի մերումս էր տեսանել աշխարհիս։ Քանզի 'ի վախճանել Երանելոյն Տրդատայ՝ մեծ իշխանն Բակուր, որ Եդեշիին Աղձնեաց կոչիւր, տեսեալ զԱնաստրուկ թագաւորեալ 'ի Փայտակարան, զնոյն խորհեցաւ և ինքն. թէպէտ և ոչ թագաւորել, զի ոչ էր արշակունի, այլ տիրապետել կամեցաւ լինել. ՀԵՂՔԵԱԼ 'Ի միաբանութենէ Հայոց՝ ՀԵՌԱՍ ԵՍ ՅՈՐՄԻԶԴ ԱՐՔԱՅ ՊԱՐԽԻՑ։ Ուստի ուշ 'ի կուրծս անկեալ և 'ի միտս եկեալ նախարարացն Հայոց, ժողովեցան առ մեծն Վրթանէս,

և առաքեցին երկուս 'ի պատուա-
ւոր իշխանացն, զՄար իշխանն Դո-
վոց, և զԳագ իշխանն Հաշտենից,
երթալ 'ի Նախագահ քաղաքն առ
կայսրն Կոստանդոս՝ որդի Կոստան-
գիանոսի, հանդերձ պատարագաւ
և թղթով, որ ունէր օրինակ զայս։

Ե. Պոփճէն Ռղբոյն Հայոց։

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ Վրթա-
նէս և ողջ ընդ նովաւ եպիսկոպո-
սունք և ամենայն նախարարքք Հայոց
մեծաց, տեառն մերոյ Կոստանդեայ
կայսեր ինքնակալի ինդալ։

Յուշ լիցի քեզ պայման ուխտի
հօրն քո Կոստանդիանոսի, որ առ
մերում Թագաւորին Տրդատայ. և
մի տացես զաշխարհն քո Պարսից
անաստուածից, այլ օգնեսցես մեզ
զօրօք՝ Թագաւորեցուցանել զորդի
Տրդատայ զԽոսրով։ Քանզի Ա-
տուած զձեզ ոչ միայն Եւրոպիայ,
այլ և ամենայն միջերկրայց տիրե-
ցոյց. և ահ զօրութեան ձերոյ եհաս
մինչեւ 'ի ծագս երկրի։ Եւ մեք

խնդրեմք առաւել քան զառաւել տիրել ձեզ։ Ողջ լերուք։

Այսմ լսող եղեալ Կոստանդեայ, առաքեաց զԱնտիոքոս յարդարիչ իւրոյ պալատանն զօրու ծանու, և ծիրանիս հանդերձ պատկաւ, և թուղթ՝ որ ունէր օրինակ զայս։

Թուղթ Կոստանդէայ։

ԱՒԳՈՍՏՈՍ ինքնակալ կայսր Կոստանդոս, մեծի Վրթանիսի և ամենայն համօրէն աշխարհականաց քոց խնդալ։

Առաքեցի ձեզ զօր յօգնականութիւն, և հրաման թագաւորեցուցանել ձեզ զխոսրով որդի արքայի ձերոյ Տրդատայ. որպէս զի բարեկարգութիւն հաստատեալ, մեզ ծառայեսջիք միամտութեամբ։ Ողջ լերուք։

Զ. Գալոս Անտիոքայ և գործ նորին։

ԵԿԵԱԼ Անտիոքոս թագաւորեցոյց զխոսրով, և զչորեսին սպա-

ռապետան մասոյց 'ի նոյն իշխանութիւն զորու, զորս կացուցեալ էր Տրդատայ յիւրում կենդանութեանն՝ յետ մեռանելոյ դայեկին իւրում Արտաւազդայ մանդակունւոյ, որ միագլխապետ էր և ամենայն Հայոց զորավար: Առաջին՝ Բագարատ ասպետ, զորավար արեւմտեայ գնդին. երկրորդ՝ Միհրան առաջնորդ Վրաց և բդեշխ գուգարացւոց, սպարապետ հիւսիսային զորուն. երրորդ՝ Վահան Նահապետ ամատունեաց, զորավար արեւելեան գնդին. չորրորդ՝ Մանաճիհր Նահապետ ըռըշտունեաց, սպարապետ հարաւային զորուն: Եւ բաժանեաց ետ նոցա զիւրաքանչիւր զորսն: Եւ առաքեաց զՄանաճիհր հարաւային զորքք և զկիլիկեցի զորս ընդ նմա զկողմամբք ասորեստանի և զՄիջագետաց. և զՎահան Նահապետ ամատունեաց արեւելեան գնդաւն և զգաղատացի զորս ընդ նմա՝ առաքեաց զկողմամբք Աղուանքի, ունել պահ յարքայէն Պարսից:

Եւ իւր թողլով զԹագաւորն խոսրով, քանզի փոքր էր յանձնէ և անարի ոսկերօք, ոչ գոլով 'ի նմա նուիրութիւն պատերազմական հասակի, առեալ ընդ իւր զՄիհրան և զԲագարատ զօրօք իւրեանց, միահամուռ ամենայն յունականաւն խաղայ 'ի վերայ Սանատրկոյ։ Իսկ նորա պարսկական զօրօք լցեալ զքաղաքն Փայտակարան, ինքն առ արքայն Շապուհ փութացեալ անկանի՝ հանդերձ Աղուանից նախարարօք։ Զոր տեսեալ Անտիոքայ, եթէ ոչ 'ի հնազանդութիւն խաղաղութեան նուաճեցան, հրաման տայ առիւ զնշխանութիւն պառակտելոցն նուաղեցուցանել. և իւր ժողովեալ զհարկն, առ կայսր գնայ։

Է. Յանցանք Մանաճհրի առ մեծն Յակոբ, և մահ։

ԵՐԹԵԱԼ Մանաճիհր Հայոց հարաւային գնդաւն և կիլիկեցւոց զօրօք զկողմամբք ասորեստանի, ճակատ տուեալ ընդ Բակուր բդեշ-

խի, սատակէ զնա, և զզօրս նորա և զպարսիկս օգնականս նմա հալա-
ծականս առնէ. և զորդին Բակրոյ զՀեշայ ձերբակալ արարեալ, հան-
դերձ երկաթի կապանօք առաքէ Խոսրովու. և զգաւառս իշխանու-
թեան նորա սրով դատի յանինայ, ոչ միայն զմարտիկս, այլ և զռամիկ
շինականս. և բազում գերիս ա-
ռեալ 'ի կողմանց Մծբնայ, ընդ
որս և սարկաւագունս ուրթ մեծի
եպիսկոպոսին Յակոբայ: Զորոյ
զհետ եկեալ Յակոբայ, համոզէ
զՄանաՃիհր՝ արձակել զգերու-
թիւն ռամկին, իբրեւ զոչ ինչ մե-
ղուցելոց. որում ոչ հաւանեալ
ՄանաՃիհր, պատՃառէ զայրքայ:

Եւ Յակոբու դէմ եգեալ առ
այրքայ, առաւել եւս զչարի Մանա-
ՃԻհր, և 'ի սադրելոյ գաւառակա-
նացն՝ զուրթ սարկաւագունս նորա,
որք 'ի կալանս էին, հրամայէ 'ի
ծովընկենուլ: Զոր լուեալ մեծին
Յակոբու, դառնայ 'ի տեղի իւր լի
բարկութեամբ, որպէս զՄովսէան
յերեսաց Փարաւոնի: Եկեալ 'ի

լեառն ինչ, յորմէ երեւէր գաւառն ամենայն, անէծ զՄանաՃիհր և զգաւառ նորին: Եւ ոչ ինչ յամեցին դատաստանքն Աստուծոյ հասանել 'ի վերայ. և նման Հերովդի պէս պէս ցաւովք սատակի ՄանաՃիհր. և պտղաբերութիւն գաւառին ջրաւորացն դարձաւ յաղտաղտուկ, եղեալ 'ի վերայ նոցա երկինք պղնձի ըստ գրոց, և ծով հակառակեալ՝ յինքն ընդունի զսահմանս անդաստանաց: Զոր լուեալ մեծին Վրթանայ և արքային Խոսրովայ, ցասուցեալ հրամայեն արձակել զգերեալսն, և առ նոյն այր մաղթել ապաշխարութեամբ, զի դարձցի սրտմտութիւն Տեառն. զոր յետ ելից Յակովբայ յաշխարհէս՝ ժառանգ որդի ՄանաՃիհրայ գեղեցիկ ապաշխարութեամբ, ուժգին արտասուօք և հառաչմամբ, նորին բարեխօսութեամբ գտեալ բժշկութիւն ինքեան և գաւառին:

Ը. Յաղագս Ներգործելոյ զոր խոսրով- և զոխելոյ զարտոնին և զբնակելոյ զանդաստն։

ՅԵՐԿՐՈՐԴ ամի Ուրմզդի Պարսից արքայի և յուլթերորդ ամի ինքնակալութեանն Կոստանդեայ, յոգնականութենէ նորին թագաւորեաց Խոսրով. ոչ ինչ արութիւն քաջութեան ցուցեալ որպէս ըզհայրն, այլ և ոչ վասն հաստատելոց կողմանցն հակառակեցաւ ինչ՝ յեւ միոյնուագին, զոր 'ի յունականացն կրեցին զօրացն. այլ 'ի կամս թողեալ զարքայն Պարսից, խաղաղութիւն առնէ ընդ նմա. բովանդակ վարկուցեալ մնացելոց սահմանացն տիրել, ամենեւիմբ ոչ ունելով փարել ազնուական մտածութիւնս։ Զի թէպէտ էր մարմնոյն փոքր, այլ ոչ որքան զմակեդոնացին զԱղեքսանդր, որ միայն երկոց կանգնոց ունէր զչափ հասակի, և ոչ զհոգւոյն խափանէր ածիսոյժս։ Իսկ սորա զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ,

զբօսանաց հաւորութեանց և այլոց որսոց պարապեալ. նորին աղաղաւ և անտառս տա Ազատ գեղտուքն անկէ, որ յանուն նորա կոչի մինչեւ ցայսօր ժամանակի։

Նա և զարքունեան փոխէ. վերոյ անտառին յոտտ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր։ Քանզի 'ի ժամանակին յայնմիկ Արէս ուղեկցեալ արեգական, և օդք ջերմայինք ալպտորեալք ժանդահոտութեամբ փչէին. յորմէ ոչ կարացեալ ժուժել որք յԱրտաշատ բնակեալ էին, կամաւ յանձն առին զփոփոխումն։

Թ. Որ ինչ յաւուրս սորա 'ի հիւսիսային աղգաց արշաւանք 'ի մեզ, որ և նահապետին Վահանայ ամսագրանայ։

ՅԱՒՈՒՐՍ սորա միաբանեալ բնակիչք հիւսիսոյ Կաւկասու, գիտացեալ զթուլասրտութիւն նորա և զյուսութիւն, և առաւել 'ի հրա-

պուրելոյ մաղթանաց Սանասարկոյ՝ 'ի գաղտնի հրամանէ Ղապհոյ Պարսից արքայի, արշաւանօք 'ի միջոց աշխարհիս մերոյ հասանէին մեծաւ ամբոխիւ, որպէս թէ երկու բիւրովք։ Որոց պատահեալ պատերազմաւ արեւելեան և արեւմտեան զօրուն Հայոց՝ հանդերձ զօրապետօքն Բագարատաւ ասպետիւ և Վահանաւ նահապետիւ ամատունեաց. քանզի հարաւային մեր գունդք առ արքային Խոսրովայ էին յաշխարհին Ծոփաց։ Եւ զՄիհրան սպանեալ, և զհիւսիսային մեր գունդն հարեալ՝ 'ի Թիկունս ընկեցեալ թշնամեացն, և հասեալ 'ի դրունս Վաղարշապատու՝ պաշարէին։ Որոց յանկարծակի 'ի վերայ անկեալ արեւելեայ և արեւմտեայ մեր զօրուն, և անտի մերժեալ զՕշական առապարաւն, ոչ եռուն ժամանել Ճապաղել 'ի նեռաձգութիւն ըստ օրինակի իւրեանց սովորութեանն, արագեալ սասակապէս զհետ ունելով քաջաձիոցն 'ի դժուարս քարանց և 'ի վիմուտ տեղիս։

Մինչեւ յոչ կամաց գումարեալ թշնամեացն 'ի Ճակատ, և զօրագլուխ նիզակաւորացն լեալ անարի ոմն ակայ վառեալ, և թաղեաւ կաՃեայ բոլորով ամենեւիմբ պարագծածկեցեալ, շահատակեր 'ի մէջ զօրացն։ Յոր ակնակառոյց լեալ քաջացն Հայոց և յարձակեալ, ոչ ինչ կարէին վնասել. քանզի հարեալ նիզակաւ՝ Ճախր առնոյր կաՃեայն։ Յայնժամ քաջին Վահանայ ամատունւոյ հայեցեալ յեկեղեցին կաթուղիկէ, ասէ. Օգնեա ինձ Աստուած, որ զդաւթեան պարսաքարն գիպեցուցեր Ճակատու խրոխտացելոյն Գողիաթու. ուղղեա և զնիզակս իմ ական հզօրիս այսմիկ։ Եւ ոչ վրիպեցաւ 'ի խնդրոյն, ընդ գաւակ ձիոյն յերկիր կործանեալ զահագին զվիրագն։ Այսպիսի գիպուած 'ի վախուստ յորդորեաց զթշնամին, և 'ի յաղթութիւն զՀայոց գունդն զօրացոյց։ Եւ ասսի դարձեալ յաշխարհն Ծոփայ Բագարատ, վկայ հաստատուն առանց նախանձու լի-

նի առ արքայի վասն Վահանայ քա-
ջութեանցն և առաքինի դիպուա-
ծոցն : Վասն որոյ պարգեւէ նմա
արքայ զտեղի Ճակատուն՝ զՕշա-
կան, որ ինքնակամ դիմադրաւ նա-
հատակն եղեւ : Եւ փոխանակ Մի-
րանայ կարգէ զԳարջոյլ Մախազ
նահապետ խոռխոռունեաց 'ի վե-
րայ զօրուն :

Ժ. Վախճան Խոսրովու, և պատ-
րաստութիւն Հայոց ընդ Պարս :

ՅԵՏ այսորիկ գիտացեալ Խոս-
րովայ, թէ ձեռն Շապհոյ Պարսից
արքայի ընդ թշնամիսն է, լուծա-
նէ զխաղաղութիւն ընդ նմա. և
զմասնաւոր հարկսն արդելու 'ի նմա-
նէ, տալով կայսեր. և ածելով
զզօրս Յունաց, ընդդիմանայ արքայ-
ին Պարսից : Բայց ոչ յերկարեալ
զկեանս իւր՝ վախճանի, թագաւո-
րեալ ամս ինն. և բարձեալ զնա՝
թաղեցին յԱնի առ հարս իւր : Եւ
ժողովեալ մեծին Վրթանիսի զա-
մենայն նախարարս Հայոց, հան-

դերձ զորք և զորապետաք, յանձն առնէ Արշաւիր կամաւորականի, որպէս գլխաւորի և յոյժ պատուականի յետ արքայի, զաշխարհս Հայոց։ Եւ ինքն առեալ զՏիրան որդի Խոսրովու, գնայ առ կայսր, զի Թագաւոր Հայոց 'ի տեղի հօր իւրոյ կացցէ։

Իսկ արքայն Պարսից Շապուհ իբրեւ լուաւ զմահն Խոսրովու, և եթէ որդի նորա Տիրան առ կայսր գնաց, գումարէ զօրս բազում 'ի ձեռն Ներսեհի եղբօր իւրոյ. որպէս զի Թագաւորեցուցանել 'զնա Հայոց խորհեցաւ. և առաքէ յաշխարհս մեր, իբրեւ անառաջնորդ զսա վարկուցեալ։ Որով պատահէ քաջին Արշաւիր կամաւորականի հանդերձ ամենայն հայաստանեացս զօրու Հակառ ունել 'ի Մռուղն անուանեալ դաշտի. և թէպէտ բազումք 'ի մեծամեծ նախարարացն անկան 'ի պատերազմին, սակայն յաղթեալ Հայոց գնդին, փախստական առնէն զզօրս Պարսից, և պահեն զաշխարհս մինչեւ ցդալն Տիրանայ։

ԺԱ. Յաղագս Լաւագաւորելոյն Տիրանայ, և Խոխելոյ յաշխարհէս Մեծին Վրթանայ, և Խոխանորդելոյ զաթոռն որբոյ Յովհան։

ՅԵՒԹՆ և 'ի տասներորդի ամի ինքնակալութեան իւրում Աւգոստոս Կոստանդոս որդի Կոստանդիանոսի թագաւորեցուցանէ զՏիրան որդի Խոսրովայ, և առաքէ 'ի Հայս հանդերձ մեծաւն Վրթանաւ։ Որոյ եկեալ, ունի զաշխարհս մեր խաղաղութեամբ, հաշտութիւն ընդ Պարսս առնելով և ոչ պատերազմունս. հարկելով Յունաց, այլ և մասնաւոր ինչ Պարսից, կայր 'ի հանդարտութեան իբրեւ զհայր իւր, ոչ ինչ արութիւն քաջութեան և սրբացուցեալ. նա և ոչ հայրենի առաքինութեանն հետեւեալ, այլ թուլացեալ յամենայն բարեպաշտութենէ գաղտնի, ոչ իշխելով համարձակ պատուել զախան 'ի մեծէն Վրթանիսէ։

Իսկ յետ ելոյ հնգետասան ամաց եպիսկոպոսութեան մեծին Վրթա-

նայ, փոխի յաշխարհէս յԵրրորդ ամի Տիրանայ։ Եւ 'ի հրամանէ նորին տարեալ հանգուցանեն 'ի գեօղն Թորդան, իբրեւ մարգարէական ակամբ հայեցեալ՝ որ զկնի բազում ժամանակաց և հօրն յայն տեղի հանգուցան նշխարք։ Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ որդի նորին 'ի Երրորդ ամի Տիրանայ, յոյժ հեռեւոր եղեալ հարցն առաքինութեանց։

ԺԲ. Պոպէրաղ Շապհոյ ընդ Կոպանդէայ։

ԲՈՅՑ Շապուհ որմզդեան առ Տիրան մեր արքայ առաւել սէր հաստատեաց. մինչեւ զօրավիգ օգնականութեան եղեալ, թափէ զնա յարձակմանէ հիւսիսականացն ազգաց, որ միաբանեալ էին արտաքս քան զկապանն Ղորայ, և բնակեցան 'ի սահմանս Աղուանից ամս չորս։ Եւ զայլ յոլով թագաւորս նուաճեալ Շապհոյ, և զազգս բարբարոսաց բազումս 'ի սատարութիւն կալեալ, յարձակեցաւ 'ի մէջերկ-

ցայս և 'ի Պաղեստինէ : Իսկ Կոստանդեայ արարեալ կեսար զՅուլիանոս, սպառազինեցաւ ընդդէմ Պարսից. և տուեալ Ճակատ, երկոքին կողմանքն պարտեցան. քանզի բազումք անկան յիւրաքանչիւրոցն. և ոչ մի 'ի միւսոյ թիկունս դարձոյց, մինչեւ 'ի հաւանութիւն եկեալ, արարին խաղաղութիւն ամս տասաւս : Եւ 'ի Պարսից դարձեալ Կոստանդեայ, յերկար հիւանդացեալ վախճանեցաւ 'ի Մոմփսիւեստի քաղաքին կիւլիկեցւոց, թագաւորեալ ամս քսան և երիս : Ի սորա աւուրս երեւեցաւ խաչն լուսեղէն առ երանելեաւն Կիւրղիւ :

ԺԳ. ԵՐԷ ՂԻՄԸՐ ՏԻՐԱՆ ԻՆՔԵԱՆ ԸՆԴ ՍՈՍԱՆ ՅՈՒԼԻԱՆՈՍ ՊԱՆԴԱՆՊՍ ՊԱՅ :

ԶԱՅՍՈՒ ժամանակաւ թագաւորեաց Յունաց ամբարիշան Յուլիանոս. ուրացաւ նա զԱստուած և պաշտեաց զկուռս, և յարոյց հալածանս և խռովութիւն 'ի վերայ եկեղեցւոյ. և բազմագիմի ջա-

նայր չիջուցանել զհաւատ քրիստոնէութեանս. բայց ոչ բռնութեամբ հաւանեցուցանէր, այլ խորհրդակեալ հնարէր, զի դեպք երկրպագեսցին: Եւ յորժամ զնա ընդդէմ Պարսից իրաւունքն զինեցին, և անցեալ ընդ Կիւլիկիայ հասանէր 'ի Սիջագեաս, և զօրացն Պարսից կողմնապահաց հատեալ զչուան նաւակամրջին Եփրատու, զդուշանային անցիցն: Իսկ Տիրան մեր թագաւոր իջեալ ընդ առաջ Յուլիանոսի, դիմէ 'ի վերայ Պարսից զօրացն, և հալածականս առնէ. և հարեալ սպասաւորութիւն, անցուցանէ զամբարիշտն Յուլիանոս հանդերձ բազմութեամբ այրեւձիոյն. և մեծարի 'ի նմանէ յոյժ:

Եւ խնդիրս արարեալ, զի մի տարցի զնա ընդ իւր 'ի Պարսս, իբր անկար գոլով ձիավարել, և յանձն առեալ Յուլիանոս՝ խնդրէ զօրս և պատանդս: Եւ Տիրանայ խնայեալ 'ի յորդի իւր Արշակ երկրորդ, տայ ցնա զորդի իւր զՏրդատ զերրորդ՝ հանդերձ կնաւ և որդւովք, և զՏի-

րիթ զորդի մեռելոյն Արտաշիսի որ-
դւոյ Իւրոյ անդրանկան։ Զորս ա-
ռեալ Յուլիանու նոյն հետայն ա-
ռաքէ 'ի Բիւզանդիոն. և զՏիրան
արձակէ յիւր աշխարհն, և տայ զիւր
պատկերն նկարագրեալ 'ի տախ-
տակս, յորում և զդիւաց ոմանց
ընդ նմա. և հրամայէ յեկեղեցիս
կանգնել յարեւելից կուսէ. ասե-
լով, թէ որք մի անգամ ընդ հռով-
մայեցւոց տէրութեամբն հարկին՝
դոյնպէս առնեն։ Զոր յանձին կա-
լեալ Տիրանայ, առեալ բերէ. ոչ ա-
ծելով զմտաւ, թէ խաբէութեամբ՝
դիւաց երկրպագին պատկերքս։

ԺԴ. Վկայութիւն սրբոյ Յուսկանն և Դանիէլի։

ԱՐԴ հասեալ Տիրանայ 'ի գա-
ւառն Ծոփաց, յիւրում արքունա-
կան եկեղեցւոջն կամեցաւ կանգ-
նել զպատկերն։ Զոր յափշտակեալ
սրբոյ Յուսկանն, ելհան 'ի ձեռաց
արքայի. և ընկեցեալ յերկիր, կո-
խեալ մանրեաց, զգացուցանելով

զերին խորամանկութիւն։ Որում ոչ ինչ ունկնդիր եղեալ Տիրան, քան զի երկեաւ 'ի Յուլիանոսէ, զմտաւ ածելով՝ մեռանել ինքեան իբր զկոխող Թագաւորական պատկերի. և յաւելեալ 'ի բորբոքումն չարութեանն, զոր ունէր ընդ սրբոյ Յուսկանն յաղագս հանապազորդ յանդիմանութեան իւրոց յանցանաց, հրամայեաց Ջալոսիւք հարկանել յերկար, մինչ 'ի դանելն աւանդեաց զոգին։

Եւ յետ կատարման նորա Թշնամանեալանիծիւք Տիրանայ 'ի ծերունւոյ քահանայէն Դանիէլէ, որ աշակերտ էր սրբոյն Գրիգորի և հիւպերիտ, հրամայեաց զնա խեղդամահ առնել։ Զոր բարձեալ աշակերտացն, Թաղեցին 'ի միայնարանի նորին, որ կոչի Հացեաց դրախտ։ Իսկ զմարմին սրբոյ Յուսկանն բարձեալ տարան առ հայր իւր 'ի գեւղն Թորգան. որ եկաց յեպիսկոպոսութեանն ամս վեց։

ԺԵ. ԵՐԷ ԼԻՍԻՊ ԶՕՐԱՅԻ ՍՈՒՏԱԼ ՂԱՐԻ ՀԱՅՈՑ ԹՈՒՅՑԱՆ 'Ի ՅՈՒԼԻԱՆՈՍԷ, Ե ՍԱՊԱԿԻ ՍԼՔԱՆ։

ԼՈՒՐ սպանման սրբոյ Յուսկանն և քրիստնջիւն ամենայն նախարարացն Եհան առ նահապետն ըռըշտունեաց Զօրայ, որ փոխանակ Մանաճհրի սպարապետ էր Հայոց հարաւային գնդին, և Տիրանայ հրամանաւ զհետ Յուլիանոսի զօրօք։ Որոյ լուեալ զայսպիսի համբաւ, ասէ ցզօրս իւր. Մի վարեսցուք հրամանաւ այնորիկ, որ դայթագղուիթիւն արկանէ յերկրպագութիւն Քրիստոսի, և սպանանէ զսուրբս նորա. և մի ճանապարհակցեսցուք այսմ ամբարիշտ թագաւորի։ Եւ զզօրսն համակամս իւր արարեալ՝ դառնայ, և եկեալ ամրանայ 'Ի Տմորիս, մինչեւ տեսցէ՝ թէ զինչ արասցեն այլ նախարարքն։ Բայց սուրհանդակքն Յուլիանու կանխաւ ժամանեն քան զդալն նորա, բերելով առ Տիրան թուղթ՝ որ ունէր օրինակ այսպէս։

Թուղթ Յուլիանոս առ Տիրան։

ԻՆՔՆԱԿԱԼ Յուլիանոս, ծընունդ Ինաքայ, Արամազդայ որդի, և Ճակատագրեալ յանմահութիւն, Տիրանայ մերում գործակալի խնդալ։

Զզօրս, զոր արձակեցեր ընդ մեզ, առեալ զօրագլխինոցին՝ 'ի բաց դարձաւ. և մեք բաւական էաք յանթիւ գնդացս մերոց զհետ առաքել՝ ունել զնոսա, այլ թոյլ տուաք վասն երկուց պատճառաց. առաջին՝ զի մի ասիցեն զմէնջ պարսիկք, եթէ բռնութեամբ և ոչ կամաւ ածէ զզօրսն. երկրորդ՝ փորձել զքո միամտութիւնդ։ Արդ եթէ ոչ 'ի քոյ կամացդ արար նա զայն, սատակեսցես զնա ազգաւիմբ՝ առ 'ի չթողուլ նմա մնացորդ. ապ՝ եթէ ոչ, երդուեալ 'ի Ռաս, որ զթագաւորութիւնս շնորհեաց մեզ, և յԱթենաս՝ որ զյաղթութիւնն, զի 'ի դառնալն մերում՝ անպարտելի զօրութեամբս վանեսցուք զքեզ և զաշխարհդ։

Տիրանայ զայս լուեալ, և յոյժ զարհուրեալ, առաքէ զմարդպետն կոչեցեալ Հայր՝ հանդերձ երդմամբ, և կոչէ առ ինքն զՁօրայ։ Իսկ զոլրայց նորա տեսեալ, թէ լուեալ կան նախարարքն ամենայն, ըստ սովորական մերոյ ազգիս անժուժկալութեան ցրուեցան 'ի տունս իւրաքանչիւր։ Եւ միայնացեալ Ձօրայ, գայ առ արքայ յոչ կամաց. և արքայ զՁօրայ 'ի բուռն առեալ, ունի և զամուրն նոցին զԱղթամար, և բառնայ զամենեսին սատակմամբ։ Բայց զմանուկ մի, որդի Մեհենդակայ եղբօրն նորա, փախուցեալ գայեկացն ապրեցուցին։ Իսկ արքայ փոխանակ նորա կարգէ զԱղամութ տէր Անծայ։

Ի.Ձ. Յաղագս մահուան որդւոցն Յուանան, և յաջորդելոյ զանոնա փառնէրսնէհի։

ԲԱՅՑ 'ի Տիրանայ խնդրեն նախարարքն Հայոց այր արժանի՝ կացուցանել յեպիսկոպոսութիւն փո-

խանակ Յուսկան։ Քանզի որդւոցն նորին ոչ գովելի վարս ստացեալ, անարժանք եղեն առաքելականին այնորիկ աթոռոյ. այլ և մահ եւս հասեալնոցա յաւուրսն յայնս՝ յոյժ ահագին և սարսափման լսողաց արժանի, 'ի միում տեղւոջ շանթահար եղեալ երկոցունցն, որոց Պաղ և Ամանագինէս կոչէին անուանքն. ոչ թողլով զաւակ հասակեայ, պատշաճ այնմ, բայց մանուկ մի որդի Ամանագենի, որում Ներսէս անուն ճանաչիւր. որ 'ի Կեսարիայ էր 'ի հրահանգս, և զայսու ժամանակաւ գնացեալ 'ի Բիւզանդիոն՝ առնուլ կին զդուստր Ասպիոնայ որուն իշխանի մեծի։ Եւ վասն ոչ կալոյ այր յազգէ Գրիգորի, ընտրեցին զՓառնեղսեհ ոմն յԱշխիշատից Տարօնոյ, կացուցին քահանայապետ 'ի տաճարորդ ամի Տիրանայ. որ կալաւ զաթոռն ամս չորս։

ԺԷ. ԹԷ ԶԻՍՐԷ Ի ՇԱՊՀՈՅ ԽՈՒԷՑԱՆ ՏԻՐԱՆ ԷՐԵԼՈՎ Ի ԿՈՂՆՈՐԱ, ԵՎ ԿՈՐԱՑԱՆ Ի ՆՄԱՆԷ։

ՅԵՏ այսր ամենայնի ամբարիշան Յուլիանոս լսեալ արժանի խորհրդոցն վէր ընկալեալ Ի փորոտիան՝ սատակի Ի Պարսս։ Եւ զօրացն դարձեալ, թագաւոր ունելով զՅովիանոս, որ Ի Հանապարհի վախճանեալ՝ ոչ ժամանեաց Ի Բիւզանդիոն։ Իսկ արքային Պարսից Շապհոյ զհետ նոցա կրթեալ, և խաբկանօք կոչէ զՏիրան, գրելով թուղթ այսպէս։

ԹՈՒՂԹ ՇԱՊՀՈՅ ԱՌ ՏԻՐԱՆ։

ՄԱԶԴԵԶԱՆՑ քաջ և բարձակից արեգական Շապուհ արքայից արքայ, Ի բարւոջ մերում յիշեալ եղբայր սիրելի Տիրան Հայոց արքայ, ողջոյն շատ։

Ճշմարտիւ Ի վերայ հասաք, եթէ զսէրն մեր հաստատուն պահեցեր, ոչ գալով ընդ կայսեր յաշխարհս Պարսից. այլ և զդունդն

զոր էառ 'ի քէն, զհետ յղեալ կո-
չեցեր 'ի բաց: Եւ զառաջինն զոր
արարեր, գիտեմք՝ զի մի ընդ աշ-
խարհս քո անցցէ՝ արարեր, զոր
ինքն իսկ առնելոց էր. ուստի և մեր
պահապանք գնդին վատասրաեալ
'ի բաց եկին, զքեզ պատճառելով.
վասն որոյ մեր ցասուցեալ, սալա-
րի նոցա ցլու արբուցաք արիւն:
Եւ քում թագաւորութեանդ ոչ
ինչ վնասեացուք, երդուեալ 'ի Մինչ
մեծ ատուած. միայն փութա տե-
սանել զմեզ, զի խորհել ինչ մար-
թասցուք վասն հասարակաց օգտի:

Զայս տեսեալ Տիրանայ, խելա-
գարեալ գնաց առ նա. քանզի ար-
ժանն տանէր զնա 'ի տեղի հասուց-
մանն: Զոր տեսեալ Շապհոյ, կըշ-
տամբեաց զնա բանիւք յանդիման
զօրաց իւրոց, և զաչս նորա կուրա-
ցոյց՝ որպէս Սեդեկիային 'ի հնումն.
թէ և արդեւք վրէժս ընդ սրբոյ
առնն այնորիկ պահանջեցաւ, որով
լուսաւորէր աշխարհս, ըստ աւե-
տարանին ձայնի՝ գոլ լոյս աշխար-
հի, յորմէ խաւարեցոյց Տիրան ըզ-

Հայս. խաւարեցաւ և ինքն, կա-
լեալ զԹագաւորութիւնն ամս մե-
ռաւան։

ԺԸ. Յաղագս Թագաւորելոյ
Շապհոյ զԱրշակ, և արշաւանաց 'ի
Յունս։

ԲԱՅՑ Շապուհ Թագաւորեցոյց
փոխանակ Տիրանայ զորդի նորա
զԱրշակ, ակն ածելով 'ի զորացն
Հայոց, զի մի խափան ինչ առաջի ար-
կելոց իւրոց գործոցն լինիցին. այս-
պիսի իմն պատեհ համարեալ, բա-
րերարութիւն առնելով իւր հաս-
տատել զաշխարհս. նուաճեաց և
զազգ նախարարացն՝ պատանդս առ-
նելով յամենեցունց։ Եւ փոխա-
նակ Վահանայ ամատունւոյ սպա-
սպասպետ կացուցեալ Հայոց արեւե-
լեան զօրուն՝ զհաւատարիմ իւր
զՎաղինակ սիւնի, և նմա յանձն
արարեալ զՀայս, ինքն զհետ երթ-
թեալ յաւնական զօրացն, և հա-
սեալ 'ի Բիւթանիայ, նստեալ ա-
միսս յոլովս, և ոչ ինչ կարացեալ

առնել, միւն առ ծովուն կանգնէ, և առեւծ 'ի վերայ՝ մատեան ընդ ոտիւք ունելով, որ նշանակէ այսպիսի ինչ. քանզի առեւծ հզօր է 'ի գազանս, այնպէս և պարսկաստանն 'ի թագաւորս. և մատեան ժողովիչ է իմաստութեան, որպէս հռովմայեցւոց տէրութիւնն:

ԺԹ. Թէ ո՞րպէս արհամարհէաց Արշակ զԹագաւորն Յունաց:

ԸՆԴ այնոսիկ ապա ժամանակս յարեաւ խռովութիւն ազգային Պարսից Շապհոյ 'ի հիւսիսականաց ազգաց: Եւ Յունաց թագաւորեալ Վալենտիանոս, և գումարտակ 'ի մէջերկրայս առաքեալ, հալածականս առնէ զզօրս Պարսից: Ապա առաքէ և առ Արշակ մեր թագաւոր թուղթ:

Թուղթ Վալենտիանոսի առ Արշակ:

ԻՆՔՆԱԿԱԼ Վալենտիանոս Աւգուստոս, հանդերձ աթոռակցաւ

մերով և թագակցաւ Վաղեսիւ կոյսերաւ, Արշակայ Հայոց արքայի խնդալ։

Պարտ էր քեզ յիշել զչարիսն, որ անցին ընդ ձեզ յանաստուածիցն Պարսից, և զերախտիսն՝ որ 'ի մէնջ 'ի վաղնջուց մինչեւ ցքեզ, և հեռանալ 'ի նոցանէ և մօտել 'ի մեզ։ Որպէս զի խառնեալ ընդ զօրս մեր՝ մարտիցես ընդ նոսա, և հանդերձ գոհացողական թղթովք մերոց զօրավարացդ առաքեսցես զհարկս աշխարհիդ. և առեալ զեղբայրս քո, և որ ընդ սոսա վտարանդեալս 'ի բաց ածցին։ Ողջ լեր ամենայն հնազանդութեամբ հռովմայեցւոց տէրութեանս։

Իսկ Արշակ և ոչ պատասխանի առնէ թղթոյն, այլ նշկահեալ արհամարհեաց զնոսա, նա և ոչ զհետ Շապհոյ միտեցաւ ամենայն արտիւ, այլ անձնահաճ եղեալ, պարծելով հանապազ 'ի գինարբուս և յերդս վարձակաց. քաջ և արի երեւեալ քան զԱքիլլիւս, իսկ արդեամբք թերսիտեայ նմանեալ կաղի և կո-

րապլեսոյ. վասրանդեալ յիւրոց նա-
խապլեսոցն, մինչեւ զամբարտաւա-
նութեանն ընկալաւ վարձս։

Ի. Յաղագս սրբոյն Ներսէսի և Բաղէ-
խարգաւանն 'ի նմանէ։

ՅԵՐՐՈՐԴ ամի թագաւորու-
թեանն Արշակայ եկաց եպիսկոպո-
սապետ Հայոց մեծն Ներսէս, որ-
դի Աթանագինեայ, որդւոյ Յուս-
կան, որդւոյ Վրթանայ, որդւոյ
սրբոյն Գրիգորի։ Եւ 'ի Բիւզան-
դիոյ դարձեալ 'ի Կեսարիայ, և ե-
կեալ 'ի Հայս, զամենայն կարգս
ուղղութեանց հարցն իւրոց նորո-
գեաց, այլ և առաւել եւս. քանզի
զբարեկարգութիւնն, զոր եառեալ
'ի Յունաց աշխարհին, մանաւանդ 'ի
թագաւորական քաղաքն, 'ի սմանկա-
բարդիկ։ Ժողով արարեալ եպիսկո-
պոսաց, և համօրէն աշխարհակա-
նաց, կանոնական սահմանադրու-
թեամբ հաստատեաց զողորմածու-
թիւն, խլեալով և զանգթութեանն
արմատ, որ բնաբար սովորութեամբ

էր յերկրին մերում։ Քանզի բորոտք հաշածեալ լինէին, իբր պիղծ համարեալ յօրինաց. և զուրուկս փախչասեայս առնէին, զի մի 'ի նոցանէ յայլս փոխեսցի ախտն, որոց դադարք՝ անասատք և ամայիք, և ծածկոյթ՝ վէմք և մացառք, ոչ յումեքէ գտանել մխիթարութիւն թշուառութեանցն։ Ա՛ռ այսոքիւք և հաշիք անդամովք ոչ խնամեալ լինէին, և հեւրք անծանօթք ոչ ընդունէին, և օտարք ոչ ժողովէին։

Իսկ նորա հրամայեալ ըստ գաւառաց գաւառաց շինել աղքատանոցս 'ի խորշս և 'ի զերծ տեղիս, զի փոխանակ հիւանդանոցացն Յունաց լինիցին 'ի մխիթարութիւն մարմնոց վշտացելոց։ Եւ բաժանեաց 'ի նոսա զաւանս և զադարակս, պտղաբերեալ յարդեանց անդաստանաց և 'ի կթից արօտականաց և 'ի գեղմանց. զի պաշտեսցեն զնոսա հարկաւ բացէ 'ի բաց, և նոքա մի եղցեն ըստ բնակութեան իւրեանց։ Եւ յանձն արար Խաղդայ, որ էր 'ի մարգաց Կարնոյ սարկաւագ իւր։ Հրամայ-

եաց և յամենայն գեւոլս վանս շինել, զի լինիցի օտարանոցք, և տեղի սնանդեան որբոց և ծերոց, և անուանողաց տաճուն։ Շինէ և յանապատ և յանմարդ տեղիս եղբայրանոցս և մենաստանս և յաստանձնակաց խրճիթս. և հայր և տեսուչ նոցա կացոյց զՇաղիտայ և զԵպիփան և զԵփրեմ, և զԳինդ՝ որ յազգէն ալկունեաց, և զայլս ոմանս։

Եւ զերկուս զայսոսիկ յազգաց նախարարացն բառնայ. մի՝ զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ագահելոյ սեփհական ազատութեանն առնէին. և մեւսն՝ որ 'ի վերայ մեռելոցն գործէին ոճիրս ըստ հեթանոսական սովորութեանն։ Եւ էր այնուհետեւ տեսանել զաշխարհս մեր՝ ոչ որպէս բարբարոսս այլանգակեալս, այլ որպէս զքաղաքացիս հաւասացեալս։

ԻՆ. Սպանուն Տրդատայ՝ Եղբօրն Արշակայ, և Երկաւ սրբոյն Ներսէսի 'ի Բիւզանդիոն, և դարձուցանել զպատանդսն :

ՍԱՍՏԻԿ և յոյժ ահաւոր էր 'ի վերայ անիրաւաց Վաղենտիանոս. որով և զբազումիշխանս վասն յափշտակութեան սատակեաց, և զՌոդանոս ոմն Ներքինապետ՝ այրեաց կենդանւոյն. քանզի երիցս հրամայեաց, և ոչ դարձոյց զյափշտակութիւն ընչից կնոջ միոյ այրւոյ : Եւ 'ի նմին աւուր հասեալ այնց հրեշտակաց, զոր 'ի Հայսն առաքեաց, ցասուցին զնա առաւել զրուցով՝ յԱրշակայ խրոխտանալոյն : Եւ վասն զի 'ի ժամուն յայնմիկ 'ի ձեռին ունէր զբարկութիւնն, հրամայէ սպանանել զՏրդատ զեղբայրն Արշակայ՝ զՀայր մանկանն Գնելայ :

Եւ Թէոդոսի զորու ծանուելեալ, 'ի վերայ Հայոց գիմեալ, և հասեալ 'ի սահմանս Հայոց, զարհուրի Արշակ և առաքէ ընդ առաջ նորա ըղձեծն Ներսէս. և 'ի հաշտութիւն

մաղթեալ, տայ լիով զհաւատեալ հարկան, և պայծառ պատարագաւք ընդ նմին իսկ արձակէ զմեծն Ներսէս։ Որոյ երթեալ և 'ի հաշտութիւն զթագաւորն շարժեալ, մեծարի 'ի նոցանէ յոյժ. նա և զպատանդն խնդրեալ առնու և դառնայ։ Եւ կոյս մի անուն Ոլոմպիադայ յաղդէ կայսերի, կին ածէ Արշակայ։ Բայց կայսերն բարերարութիւն արարեալ մանկանն Գնելայ՝ յաղագս զուր 'ի նոցանէ մահուանն Տրդատայ հօր նորա, տայ նմա զպատիւ հիւպատութեանն, և դանձս յոլովս։ Ընդ որ խանդացեալ Տիրիթ, խորհէր նմա 'ի չարիս հանապազ, ապատելով նմա 'ի դիպող աւուր։

ԻԲ. ԹԷ ՈՐՊԷՍ ԷՂԷՆ ԽՈՍՈՎՈՒԹԻՆ ԱՐՇԱԿԱՅ ԸՆԴ ԳՆԵԼԱՅ, ԵՎ ՄԱՀ ՏԻՐԱՆԱՅ։

ԻՍԿ Գնելեկեալ յաւանն Կուաշ, որ յոտին Արարածն կոչեցեալ լերինն, առ կուրացեալ հաւն իւր Տիրան, զի ցայնժամ կենդանի էր։ Եւ

Տիրան ողբացեալ դառնապէս զՏըրդատ զորդի իւր, զՀայր Գնեղայ, իբր զինքն ունելով պատճառ սպանման նորա. վասն որոյ ասայ Գնեղայ զամենայն ինչս իւր, և զկաչուածս դիւղից և դաստակերտաց. և 'ի նմին աւանի Կուաշ հրամայէ բնակել: Ապա առնու Գնէղ իւր կին զՓառանձեմ ոմն յազգէն Սիւնեաց. և թագաւորապէս արարեալ հարսանիս, ասայ առատապէս պարգեւս ամենեցուն նախարարացն: Որոց հաճեալ ընդ նա և սիրեալ, էառուն առ նա զզաւակս իւրեանց. զորս առեալ, մեծապէս հանդերձեաց զարդու և զինու. և առաւելեալս սիրեցին զնա:

Ատանօր էգիտ Տիրիթ պատճառս քսութեան. և մատուցեալ առ արքայն հանդերձ բարեկամաւ իւրով Վարդանաւ զինակրաւ արքայի, որ 'ի մամիկոնեան տոհմէն էր, ասէն. Ոչ գիտես, զի խորհեալ է Գնէղ սպանանել զքեզ, զի ինքն փոխանակ քո թագաւորեսցէ: Ահա սես, արքայ, զնշան իրին, զի բնակեցաւ Գնէղ յԱյրարատ 'ի կա-

լուծաս ձեր թագաւորաց, և սիրտ նախարարացն եղեալ ընդ նմա։ Քանզի կայսերքն նիւթելով զայդ՝ եառն նմա զպատիւ հիւպատոսութեանդ, և գանձս սասանիկս՝ որով պատրեաց զնախարարսն։ Երդնոյր Վարդան յարեւն արքայի և ասէր. Խմովք ականջք լուայ 'ի Գնելայ՝ զի ասէր, թէ ոչ թողում հօրեղբօր իմում զվրէժ մահուան հօր իմոյ, որ վասն դորա եղեալ։

Այսմ հաւատացեալ Արշակ, յղէ զնոյն իսկ զՎարդան առ Գնել, թէ ընդէր բնակեցար յԱյրարատ և լուծեր զկարգ հայրենեաց։ Քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ և միոյ որդւոյ նորա, զոր փոխանորդ թագաւորի պահէին, և այլոց արշակունեաց բնակել 'ի գաւառս Հաշտենից և Աղիովտի և Առբերանոյ, հանդերձ ռոճկօք և մսիւք յարքունուստ։ Եւ արդ ընտրելի է քեզ, կամ ընդունել զմահ, կամ գնալ յԱյրարատայ, և արձակել 'ի քէն զուստերս նախարարացն։ Զայս լուեալ

գնելայ, արար զՀրամանս արքայի՝ գնալ յԱզիովիա և յԱբերանի։ Բայց Տիրան հաւն նորա պատգամն խիստս յղեաց առ որդի իւր Արշակ. վասն որոյ հեղձամահ եղեալ յիւրոց սենեկապետաց 'ի հրամանէ արքայի 'ի գաղանիս, և 'ի նմին աւանի Կուաշ Թաղեցաւ, ոչ արժանի եղեալ հարցն գերեզմանաց. թէ արդեաք զփոխարէնն Դանիէլի առնէն Աստուծոյ հատոյց. որով չափով չափեաց՝ չափեալ եղեւ ըստ գրոց։

ԻԳ. Դարձեալ խանդալ Արշակայ ընդ Գնելայ և սպանանելն։

ԱՊԱ եւանէ արքայն զԹիկամբք Մասեաց առնել որսս յիւրում սիրեցեալ գաւառին 'ի Կոգայովսի. և եղեալ որս ստատիկ, որ ոչ այլոյ ուրուք 'ի Թագաւորաց նախ քան զնա այնչափ բազմութիւն էրէոց 'ի միում ժամու. և նա ուրախացեալ 'ի գինիս՝ պարծէր։ Ասասնօր դարձեալ նորոգեն զնենգութիւնն Տիրիթ և Վարդան՝ ասելով, Գնելայ

բազում էրէս քան զայն առնելընդ նոյն աւուրս յիւրում լերինն, որ Շահապիվանն անուանի, որ 'ի մայրենի հաւոյ իւրոյ Գնելոյ գնուն հասեալ էր ցնա։ Վասն որոյ առաքէ առ նա հրովարտակ այսպիսի։

Թուղթ Արշակայ առ Գնել։

ԱՐՇԱԿ արքայ Հայոց մեծաց, Գնելոյ որդւոյ իմոյ խնդալ։

Տեսցես տեղիս քաջէրէս 'ի լերինդ Ծաղկաց զպարկացիր ջրով, և պատրաստեսցես. զի եկեալ մեր՝ ըստ արժանեաց թագաւորականաց հանդիպեսցուք որսոց։

Եւ երագ զհետ հրովարտակին երթեալ Արշակ, խորհէր՝ եթէ ոչ ըստ հրամանին գացէ արարեալ Գնելոյ, պատճառս 'ի վերայ եգեալ՝ իբր թէ չարակնեաց զուրախանալն արքայի, կապեսցէ զնա։ Այլ իբրեւ եառեա, զոր չէր երբէք տեսեալ զայնպիսի պատրաստութիւն որսոց և բազմութիւն էրէոց, խոցեալ խորհրդովք նախանձու և կասկա-

ծանաց, հրամայեաց նոյն Վարդանայ 'ի նոյն որսին սպանանել զԳնէլ, որպէս թէ ընդ խաբս ինչ վրիպակաւ, երկոց կամէր ձգել, նմա պատահեաց նեան։ Որոյ առեալ զայսպիսի հրաման, վաղվաղակի կատարէ. ոչ այնչափ յաղագս հրամանի թագաւորին, քան թէ վասն կամացն Տիրիթայ իւրոյ սիրելւոյն։ Իսկ Արշակայ հանդերձ նախարարքն ի ջուցեալ 'ի դաշտ Աղիովտի զգին Գնէլայ՝ թաղեաց յարքունական քաղաքին Զարիշատի. 'ի ջրքմեղս եղեալ, կոծ մեծ առնէ։

ԻԴ. ԵՒ ՀՐՊԷՍ ԾԱՐՀԵՑԱ- ԱՐՇԱԿ ԱՌՆԱ-ԼՂԻՆ ԳՆԷԼԱՅ, ՅՈՐՄ ԷՂԷ- ՊԱՊ։

ԹԻՊԷՏ և Արշակ կարծեաց զանխուլ գործել զչարիս, այն՝ որ ոչն ծածկի յամենատես ականէն Աստուծոյ, յայտնի և աշխարհի՝ առ 'ի մեղուցելոց պակուցումն, որպէս զմահն Տիրանայ և Գնէլայ։ Քանզի գիտացեալ ամենայն ուրուք, խմացաւ զայս և մեծն 'Ներ-

սէս, և անէծ զԱրշակ և զաւրիթ սպանմանն. և գնացեալ նոտաւ 'ի սուգ զաւուրս բազումս՝ որպէս Սամուէլ վասն Սաւուղայ: Իսկ Արշակ ոչ զղջացեալ ապաշաւեաց, այլ անամօթեալ, ոգահելով 'ի գանձս սպանելոյն և 'ի ժառանգութիւն, յաւել առնուլ զկին նորին Փառանձեմ. յորմէ եղեւ պատանի մի, որ անուանեցաւ Պապ:

Այս Փառանձեմ գործեաց զանլուր և զանկարծելի չարիս. և զարտասփման լսողաց արժանաւոր: Անարժանիւ ոմամբ սուտանուն քահանայիւ 'ի կենաց գեղն զմահացուն խառնեալ, ետ Ոլոմպիադայ առաջին կնոջն Արշակայ, և ելոյծ 'ի կենաց սակս տիկնութեանն մախանաց: Նոյնպէս և զԱղինակ տայ Արշակայ սպանանել, և փոխանակ կարգեալ զիւր հայրն զԱնտիոք:

ԻԵ. Սպանումն Տիրիթայ:

ԻՐԵՒ եղեւ խաղաղութիւն Շապհոյ 'ի հիւսիսականաց ազգաց,

և պարապ առեալ 'ի պատերազ-
մացն, յայտնեաց զցաւումն՝ զոր ու-
նէր առ Արշակ, վասն ոչ նմա՝ այլ
կայսեր հարկելոյ զայնքան ամս։
Սակս որոյ առաքէ առ նա Արշակ
զՏիրիթ և զնորուն սիրեցեալն Վար-
դան արժանի պատարագաք, խնդ-
րել զհաշտութիւն։ Բայց վասն զի
քինախնդիր անցելոցն մարտից կա-
մեցեալ լինել Շապուհ, ինքն ելա-
նէ պատերազմել ընդ Յոյնս, որոյ
աղագաւ խնդրէ զԱրշակ մեր թա-
գաւոր հանդերձ ամենայն զօրօք
Հայոց ընդ իւր լինել։ Իսկ Արշակ
ոչ կամեցաւ իւրովի երթալ, այլ
բարուրս եդեալ՝ դոյզն գունդ առա-
քէ զկնի Շապհոյ։

Եւ իւր բարկացեալ Տիրիթայ,
ընկենու զնա 'ի պատուոյն, որպէս
զի թէ 'ի նորա հրապուրանացն է-
զեւ այն, յաղագս ատելութեանն
զոր ունէր առ Յոյնս։ Եւ առաւել
եւս գրգռէր զալքայ Վասակ զինա-
կիր նորա, նախանձ պահելով ընդ
եղբօրն՝ վասն աղջկան միոջ հարճի։
Վասն որոյ նախատեաց զնոսա ար-

քայ ամօթալի բանիւք և կսկծեցու-
ցանողք։ Որում ոչ կարացեալ
այնպիսի վատթարութեան և պար-
սաւանաց տանել, դէմ եդեալ գնա-
ցին առ Շապուհ հաստուած։ Ընդ
որ առաւել եւս զայրացեալ Ար-
շակ. հրամայէ նոյն Վասակայ զհետ
նոցա կրթել բազմաձեռն գնդաւ,
զի ուր և հասցէ՝ սպանցէ զնոսա.
զոր ոչ հեղգացաւ կատարել Վա-
սակ, թէպէտ և եղբայր էր նորա
Վարդան։ Եւ խնդրեցաւ անպարտ
արիւնն Գնելայ յամբարշտէն Տի-
բրնթայ ըստ անիծիցն Ներսիսի, և
'ի Վարդանայ՝ 'ի հարազատ եղբօրէ
իւրմէ մեռանել։

ԻԶ. Պարսո-ֆ Շապհոյ 'ի Տիգրանա-
կերտ։

ԻՍԿ Շապուհ գայ հասանէ 'ի
Տիգրանակերտ մեր քաղաք, կան
ընդդէմ նորա արք քաղաքին, հան-
դերձ գումարտ գնդաւ. քանզի Ան-
տիոք նահապետ Սիւնեաց, որ էր
աներ Արշակայ և վերակացու քա-

ղաքին, հրամայեաց աղեսել ընդդէմ Շապհոյ։ Եւ ոչ միայն զմուսն արդել, այլ և ոչ հրեշտակս առաքեաց առ նա, և ոչ զնորայն ընկալաւ։ Եւ հզօր կռուոյ եղեալոյ, զբազումս 'ի Պարսիցն սպանին. և 'ի պարտութիւն մատնեալ գնդին Շապհոյ, դառնայ անդրէն 'ի Մծբին. և հանդիսաս առեալ և արծարծեալ յաշխատութենէն, խնդրէր առնուլ զՏիգրանակերտ. և ոչ թողացուցին յառաջխաղաց գունդք և լերեսք՝ պատաղելնմա զայնու, իբրու թէ Յունացն խանգարեցի գործ։ Եւ Շապհոյ յառաջ անցեալ, գրէ առ նոսա թուղթ օրինակ զայս։

Թուղթ Շապհոյ 'ի Տիգրանակերտ։

ՄԱԶԴԵԶԱՆՑ քաջ Շապուհ արքայից արքայ, տիգրանակերտացի՝ որք ոչ եւս էք անուանելոց 'ի մէջ Արեաց և անարեաց։

Ես կամէի 'ի ձէնջ սկսեալ յամենայն առաջիկայ քաղաքս խաղա-

զութեամբ և քաջութեն ազատութեամբ զմուտն առնել. և եթէ դուք ակնարանակերտեալք, որ առաջին էք, ոչ շահատակութեամբ ասեմ, այլ'ի մտէ ուղեւորութեանս, ընդդէմ կացէք ինձ, 'ի ձէնջ ուսցին և այլք զդոյն առնել: Այլ 'ի դարձին մերում, բարկութեամբ այնպէս վանեցից զձեզ, զի կրկին եղիջիք օրինակ խեռեալ ստահակելոցն:

Ի Է. Թէ ՝ՐՊԷՈ Արշակաւանն ՀԻՆԷՅԱՆ Ի ԿՈՓՐԷՅԱՆ, Ի ԱՌԱՆ ԱՆԻ:

ԲԱՅՑ Արշակ եւս ժպրհեցաւ առնել գործ անմտութեան: Ի թիկանց կուսէ լերին Մասեաց շինեաց ձեռակերտ, ժողով մարդկան մեղաւորաց. և եռ հրաման, որ ոք անկեալ անդր բնակեսցէ, մի լիցի 'ի վերայ նորա իրաւունք դատաստանի: Եւ նոյն ժամայն ծովացեալ լցաւ մարդկութեամբ հովիտն ամենայն. քանզի առանդառուք և պարտականք և ծառայք և վնասակարք և գողք և սպանողք և կնահանք,

և այլք այսպիսիք փախուցեալք անդր անկանէին, և ոչ կայր նոցա այլ և ինդիր։ Եւ բազում անդամ բողոքեալ նախարարացն, և ոչ ինչ լուաւ նոցա Արշակ. մինչեւ առ Շապուհ եւս ունել նոցա բողոք։ Եւ եղեւ 'ի դառնալն Շապհոյ 'ի Յունաց, առաքեաց զմի 'ի սպարապետաց իւրոց և հայ գունդ ընդ նմա, թէ դէպ լինի, ունել զԱրշակ. և նա խոյս եառ 'ի նոցանէ զկողմամբք Կաւկասու՝ Վրաց միաբանելով։

Իսկ սպարապետն Պարսից եկեալ 'ի Հայս, 'ի ձեռնտու լինելոյ նախարարացն առնու զամուրն Անի, և գերէ զամենայն գանձս ալքունի որ 'ի նմա, այլ և զոսկերս թագաւորացն. ոչ գիտեմ՝ թէ վասն նախատինս առնելոյ Արշակայ, և թէ վասն հմայից ինչ հեթանոսական։ Զոր ապա մոլթեալ նախարարացն, թափեալ թաղեցին յաւանին յԱղցս, որ յոտին Արագած կոչեցեալ լերինն։ Քանզի ոչ գիտացին ընտրել զոսկերս հեթանո-

սաց և հաւատացելոց, զի ընդ մի-
մեանս էր խառնակեալ գերոզացն.
յաղագս այնր ոչ արժանի համա-
րեցան 'ի գերս սրբոցն Թաղել 'ի
Վաղարշապատ քաղաքի։

Եւ նախարարացն Հայոց ժողո-
վեալ՝ գիմեցին 'ի վերայ արքունա-
կան ձեռակերտին Արշակաւանայ,
և հարին զնա սրով սուսերի յառ-
նէ մինչեւ ցկին, բայց 'ի աղայոց
ստանդիացաց. քանզի դառնացեալք
էին իւրաքանչիւր 'ի վերայ ծառայ-
ից իւրոց և յանցաւորաց։ Զոր Թէ-
ոդէտ և վաղ գիտացեալ մեծին Ներ-
սեհի, ոչ յառաջ քան զկոտորէն
ժամանեաց հասանել. այլ 'ի կա-
տար գործոյն եգիտ բաժանեալ
զաղայս կոտորելոցն, զի վարեսցեն
'ի գերութիւն որպէս զհեռաւոր
թշնամեաց։ Զոր Թափեալ մեծին
Ներսեհի, հրամայեաց կրեալ որթովք
'ի գոմ մի, և գարմանս և սնուցօղս
նոցին կարգեալ. որք յետոյ աւա-
նացեալ, անուանեցան Որթք այ-
նորիկ աղադաւ։

ԻԸ. Առաքելոյն Տիգրանակերտի և Բնաբերդի փանդռան։

ԻՍԿ Շապուհ եկեալ'ի Տիգրանակերտ, դարձեալ աղխեցին ընդդիմանալ. և ելեալ'ի պարիսպն աղաղակէին. Գնա'ի մէնջ, Շապուհ, զի մի չարիս յերկրորդումն ընդ քեզ առաւել եւս քան զառաջինն անցուցանիցեմք պատերազմաւ։ Եւ նա պատասխանեաց. Ո՞վ քաջքդ'ի Հայոց, որք զանձինս արգելեալ փակեցէք ընդ Տիգրանակերտի պարսպովքդ, և արտաքս ձայն արկանէք սպառնալեաց, զի քաջ արանց է յարձակ դաշտի և յազատ տեղւոջ կռուել, և կանանց գործ է արգելուլ փակել զինքեանս յերկիւղէ առ հանդերձեալ կռիւսն։ Եւ զայս ասացեալ, դարձաւ առ գերեալ Յոյնսն զինաւորս, ասէ. Եթէ ձերով մարտիւ առիցս զայս քաղաք, զամենեսեան զձեզ արարիցս ազատս հանդերձ ընտանեօք ձերովք։ Եւ պարսկական զօրուն շուրջ զքաղաքաւն հրամայեաց ըն-

թանալ, և նեռիւք խոցոտել զ'ի վերայ պարսպին։

Եւ Յունացն ժամուցեալ մեծաւ բռնութեամբ յեցուցին 'ի պարիսպն զկոչեցեալ Էշն։ Եւ է այս գործի մեքենայից անուաւոր, յերկից երկից տրանց մղելով տարեալ, և 'ի ներքուստ կացնովք և սակրօք երկբերանովք և կոցաւոր մրճովք՝ փորել զհիմունսն։ Եւ նգախարիսար տարարեալ զայն, որ 'ի հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին. և հուր 'ի դրունսն և յամենայն կողմանսն վառեալ, և քարինք և նեռք և տէգք յարձակեալ լինէին, և խոցոտեալ մեռքն յապուշ դառնային։ Եւ 'ի ներքս մտեալ բոլոր զօրքն, և ձեռն պարսկական ոչ վաստակէր զբազմախողխող երկաթն սրեամբ արբուցանել, մինչեւ ապաժոյժ սպանելոցն լցեալ 'ի հիմունսն ծաւալէր։ Այլ յունականն ձեռն 'ի քթթել ական հրձիգ առնէր զամենայն փայտակերսան։ Եւ Ճապհոյ զմնացեալսն 'ի կոտորածէն գե-

րեալ, ջուէ 'ի Պարսս. և Հրեշտակս առ որ 'ի Հայս գունդք առաքեալ, անդայաղաս զՍիւնեացն հրամայէ առնել զտոհմ։

ԻԹ. Յաղագս պապերապին Արշակայ ընդ նախարարս իւր, և վարանդէի էր-ևալոյ Պապայ 'ի Բի-զանդիոն։

ԴԱՐՁԵԱԼ յարեաւ խռովութիւն Շապհոյ 'ի նոյն ազգաց, և խաղաղութիւնն 'ի Յոյնս շրջեցաւ. ըստ այնմ՝ թէ փոխարկեալ միմեանց փոխարինին. սոցա խաղաղութիւն 'ի նոցա խռովութեանն, և նոցա խաղաղութիւն 'ի սոցա խռովութեանն, որ վախճան միոյն՝ միւսոյն լինին սկզբունք։ Քանզի հիւանդացեալ Վաղենդիանու 'ի բերդին՝ որ կոչի Բերդիտիոն, վճարի 'ի կենցաղոյս, եղբօրն փոխանորդելով զտէրութիւնն։ Յետ բարեբախտագոյն Վաղեսի պատերազմաւ Գոթացն յաղթութեամբ դարձի, և նոյն հետայն առաքեալ զօրս 'ի Մեծագեաս և 'ի Հայս յաղագս տուե-

ըզ զօրուն յօգնականութիւն Շապ-
հոյ։

Բայց Արշակայ եկեալ վրացի
դնդաւ, ժողովէ զսակաւս և յիւր
մտերմաց, և տայ պատերազմ ընդ
նախարարսն ընդ այնոսիկ՝ խնդրել
զվրէժ ձեռակերտին իւրոյ Արշակ-
աւանու։ Սիսաբանեալ և նոցա ա-
ռաջնորդութեամբ Ներսեհի որդւոյ
Կամսարու, ընդդիմանան Արշա-
կայ պատերազմաւ։ Եւ հզօր մար-
տի եղեալ՝ բազումք յերկաքանչիւ-
րոց կողմանցն անկան. քանզի և
ոչք դիպեալ արանց, ոչ ոք զպար-
տութիւն յանձն առնոյր։ Եւ մինչ
դեռ նոքա յայսմ էին, հասանեն
և զօրքն կայսերական։ Ապա տե-
սեալ Արշակայ, թէ թշնամի են նո-
րա Շապուհ և Վաղէս և իւր նա-
խարարքն, տարակուսեալ յամե-
նեցունց՝ յղէ բազում անգամ ա-
ղաչելով զմեծն Ներսէս. խոստա-
նայր դառնալ յամենայն Ճանա-
պարհաց չարաց, և լինել ըստ կա-
մաց նորա, և ապաշխարել՝ ի քուրձ
և՝ ի մոխիր. միայն զի նա եկեսցէ,

և արասցէ խաղաղութիւն, և թա-
փեսցէ զնա 'ի ձեռաց հզօրացն Յու-
նաց։ Սապէս և 'ի նախարարացն
ստէպ ստէպ զմիմեանց զկնի գայ-
ին մաղթանք նորին ալաղաւ. նա
և եպիսկոպոսացն Ժողովեալ, պա-
ղատանս մատուցանէին, զի մի ան-
փոյթ զկորստենէ իւրոյ վիճակին
առնիցէ։

Ապա հաւանեալ մեծն Ներսէս
եկն 'ի մէջ նոցա, և արար խաղա-
ղութիւն, լսելով նմա թագաւո-
րին և նախարարացն, բայց 'ի նա-
հապետէն արծրունեաց Մերուժա-
նայ և 'ի նորին քեռառնէ Վահա-
նայ մամիկոնենէ, որք անլսող է-
ղեալ՝ ապստամբեալ գնացին առ
Շապուհ։ Իսկ այլ ամենայն նա-
խարարքն հաստատեցին ուխտ, զի
յայնմ հետէ թագաւորն վարեսցի
ուղղութեամբ, և նոքա ծառայես-
ցեն միամտութեամբ. և այս 'ի մէջ
նոցա։ Բայց և առ զօրսն Յունաց
երթեալ մեծին Ներսիսի, աղաչէր
մի ինչ աշխարհիս մեղանչել, այլ
առնուլ զհարկսն և զորդի Արշա-

կայ զՊասպ հանդերձ ամենայն նա-
խարարացն որդւովք պատանդս, և
դառնալ: Որում լսող եղեալ քաղցր
և մեծն Թէոդոս զօրավարն, դառ-
նայ առ կայսրն հանդերձ պատան-
դօքն, ընդ իւր տանելով զմեծն Ներ-
սէս Թղթով Արշակայ, որ ունէր
օրինակ զայս:

Թուղթ Արշակայ առ Վաղէս:

ԱՐՇԱԿ արքայ Հայոց մեծաց
և ամենայն նախարարաց արամեան
ազգին, տեառն մերում ինքնակա-
լի Վաղեսի Աւգոստոսի, և որդւոյ
քում Գրատիանոսի խնդալ:

Մի՛ դիցէ ինքնակալդ 'ի մտի, է-
թէ առ ատել զձեզ նշկահեցաք,
կամ իբրեւ զհզօրս ինչ զմեզ վար-
կանելով արձակեցաք գունդ հի-
նից յերկիրդ Յունաց. այլ մեծի
խռովութեանդ, որ 'ի ձերում մի-
ջի շարժեցաւ, գիտակ եղեալ, եր-
կուցեալ 'ի Շապհոյ, եթէ ոչ ոք
թափէ զմեզ 'ի ձեռաց նորա, օգ-
նեցաք նմա գոյզն գնդաւ: Այլ ոչ

եւ ինքն Աղշակ եկն ընդ նմա, ըզ-
միամտութիւն ընդ ձեզ պահելով-
ման որոյ աւերեալ գերեաց զաշ-
խարհս մեր, մինչեւ զոսկերս ան-
գամ հարցն բրեաց 'ի գերեզման-
նաց։ Եւ արդ հաւատացեալ ձեր՝
մեր յղէլոցս, զառաջին սէրն առ
զմե հաստատուն պահեցէք, և մեք
առ ձեզ զմտերիմն հաստուցուք ծա-
ռայութիւն։

Իսկ Վաղէս ոչ զթուզթն ընթեր-
ցեալ, և ոչ եռեռս զմեծն Ներսէս,
այլ բացէ 'ի բաց արտասահմանել
հրամայէ զնա, և զամենայն վտա-
ռանգիսն արոյ մատնել։

Լ. Յաղագս արտասահմանելոյ զՄեծն
Ներսէս, և արկանել պահել 'ի կղզին
անբնակ. և Ռէ ժրպէս կերակրեալ ևի-
նէին 'ի վերին խնամոցն։

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յայնմիկ էր
յաթոռ եպիսկոպոսութեանն Բիւ-
զանդիոյ հոգեմարտն Մակեդոն։
Եւ իբրեւ էլ հրաման յարքունուստ
աքսորել զմեծն Ներսէս, որպէս

զմի անդամ խաբող և դրժող արքայի, մատուցեալ ոմանց առ նա 'ի հերձուածոյն Արիոսի, ասեն. Եթէ դաւանեաս ընդ մեզ, թափէ զքեզ հայր մեր Մակեդոն: Որում ոչ հաւանեալ՝ աքսորեցաւ. և 'ի նաւալիւղն լինել ըստ խստաշունչ օդոյ ձմերանոյն, ընկեցեալ 'ի կղզի ինչ անապատ՝ ջարդեաց զնաւն. և նաւորդացն ոչ իշխեցեալ մակուկաւն նաւել, մնային տագնապեալ, ուտելով զարմատ անտառին: Այլ 'ի տեսչութեանցն Աստուծոյ կերակրեալ լինէին ամիսս ութ 'ի ձկանց, զոր ծովն ընկենոյր կենդանիս: Բայց Պապայ յանձն առեալ հանդերձ ամենայն պատանդաւն, թափեաց Մակեդոն:

ԼԱ. Կոստէն Ա-զգայ ընտրեալ, և յաջորդս վարուց Խոսրովայ եպիսկոպոսի:

Ի ՀԵՌԱՆԱԼ մեծին 'Ներսիսի՝ առեաց Արշակ ամենայն ուխտին, զոր եդ ընդ նախարարսն, և խընդ-

րեաց զքէն ձեռակերսին իւրոյ Ար-
շակաւանու։ Եւ կոտորեաց զբա-
զումն 'ի նախարարացն, մանաւանդ
զազգս կամնարակարաց բառնայր
'ի միջոյ, չարակնելով ադահեալ յա-
մուրն Արտագերս և 'ի քաղաք ոս-
տանի նոցա Երուանդաշատ։ Եւ
կոչեալ առ ինքն 'ի լքեալ արքու-
նիսն Արմաւիր իբր զազգական իւր՝
'ի պատճառս պատուոյ մեծարա-
նաց, միահաղոյն զարս և զկանայս
հանդերձ մանկամբք հրամայեաց կո-
տորել։ Եւ ոչ ոք 'ի նոցանէ ապրե-
ցաւ, բայց Սպանդարատ որդի Ար-
շաւրի. քանզի ունէր երկրորդ կին
արշակունի, որ և բնակեցաւ 'ի նո-
ցին ժառանգութեան 'ի կողմանս
Տարօնոյ և Հաշտենից, իբր սրը-
տունջ զհօրեղբօրէն իւրմէ եղեալ
զներսեհէ. որոյ աղագաւ ոչ 'ի կո-
տորմանն նոցա գիպաւ։ Այլ լուեալ
զբօթն, հանդերձ որդւովքն Շա-
ւարշաւ և Գազաւոնիւ և բոլոր
ընտանեօք գնաց փախստական 'ի
Յոյնս։

Բայց 'ի գնալն մեծին Ներսիսի

'ի Յոյնս՝ էր ձեռնադրեալ զսարկաւագն զԽաղ յեպիսկոպոսութիւն Բագրաւանդայ և աշարունեաց, և հաւատաց 'ի նա զամենայն գործ վերակացութեան աշխարհին մինչեւ ցժամանակ իւրոյ դարձին։ Այս Խաղ յամենայնի նմանեալ մեծին Ներսեսի, և առաւել եւս 'ի տեսչութիւն աղքատաց. որոյ շուրմարանքն աղբերացան սքանչելապէս ելբ առ Եղիայիւ և Եղիսէի. և 'ի յանդիմանել զարքայ՝ ահաւոր և սաստիկ էր և աներկիւղ։ Եւ ոչ եղեւ 'ի նմա գամագիւտ սատանայ, բայց վասն միոյ նուագի, զի էր պճնող առ հանդերձս և ձիասէր. զոր պարսաւեալ այպանէին փոխանակաբանել՝ որք 'ի նմանէ յանդիմանեալ լինէին։ Վասն որոյ թողեալ այնու հետեւ զպերճագոյն հանդերձան, խարազնազգեաց եղեալ՝ ելով շրջէր մինչեւ ցօր մահուան իւրոյ։

ԼԲ. ԵՒ ՀՐԱՄԱՅ ԱՐՇԱԿ ԹՈՐԼԵՐ ՂԵ-
ՐԱՆԵԼԻՆ ԽՍՊԴ Ե ԹՈՐԻՈԾԵԼ ՂԵՍ ԿԱՄԵՐ
ԱՄԻՍ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԵԱՆ ԻՒՐՈՅ ՅԱՆՈՍ-
ՆԱՅ :

ԵՒ եղեւ 'ի սասակեալ Արշակայ զազգն կամսարականաց, հրամայեաց զդիակունս նոցա քարշել ընկենուլ անթաղ՝ կերակուր լինել շանց. և ինքն որպէս մեծաւ յաղթութեամբ պսակեալ, 'ի բարեկենդանութեան կատարէր աւուրս, կուտել մթերել յԱրմաւիր զնոցայն հրամայելով զհամբարան : Զորոց պեղեալ երկուս խորս յոյժ քաջախորս և սաստկապէս լայնս, որ 'ի շինին Նախճաւանի, բերին սայլովք նոցին աւանին : Իսկ սայլորդացն տեսեալ ոսկերս մարդկան գազանակուր եղելոց՝ ցրուեալս առ եղերբ փոսոյն, հարցեալ ուսան՝ Իւրեանց լինել տերանց. հաւաքեալ 'ի սայլսն նեղքոյ եղեգանն, բերեալ թաղեցին 'ի նոյն խորս : Զոր զգացեալ Արշակայ, հրամայէ զսայլորդսն 'ի վերայ խորոյն կախել զփայտէ :

Բայց Խաղդայ ոչ պատահեալ յառաջնումն Նուագին, այսմ ժամանեալ հասանէ. և սկսաւ կրճատամբեալ զարքայ բանիւք յանդիմանութեան: Հրամայեաց Արշակ քարշել զնա և քարկոծել: Եւ քանզի էին նորա տայգերք գատերն 'ի մեծ նախարարութեանցն՝ 'ի կորովի և 'ի քաջ ազգէն ապահունեաց, սուսերս հանեալ կիսախողխող զքարշողն առնէին. և յափշտակեալ զԽաղդ 'ի ձեռաց նոցա, և յիւրեանցն դնացին գաւառս: Եւ Արշակայ ոչ 'ի հակառակս մտեալ՝ զօրէր. զի մի խռովութիւն ամենայն նախարարացն յուզեցի:

ԼԳ. Յաղագս Ռագաւորէլոյն Թէոդոսի մեծի, և ժողովոյն որ եղեւ Վասն հոգեմարտութեան:

ԲԱՅՑ Վաղեսի ըստ արժանի խորհրդոցն զյաւիտենական դեհենոյն ատէն բերելով զօրինակ, հրաւիրեալ եղեալ յԱնդրիանուպօլիս՝ ատակեցաւ. և առնու զԹադն Թէո-

դոս։ Սա քակեաց զմեհեանս կռոցն մինչեւ յատակս՝ զփակեալսն 'ի սըրբոյն Կոստանդիանոսէ, զանուանեալն արեգական և Ամրեմեայ և Ափրոդիտեայ 'ի Բիւզանդիոն. աւերեաց նոյնպէս զտաճարն Դամասկի, և արար եկեղեցի. նոյնպէս և զտաճարն Իլուշ քաղաքի զԼիբանոսի զմեծ և զհռչակաւոր զերեք քարեանն։

Սա դարձոյց զամենայն հարս սուրբս, որք յաղագս ուղղափառութեանն արտասահմանեալ էին 'ի մետաղս. ընդ որս և զմեծն Ներսէս ածեալ առ իւր 'ի Բիւզանդիոն, պահէ մեծաւ պատուով, մինչեւ Ճշմարտութեանն ստուգեցաւ հաւատ, որ յաղագս ամբարշտին Մակեդոնի հայհոյութեանցն. զի ոչ Տէր խոստովանէր զՀոգին սուրբ, և ոչ երկրպագելի, և ոչ փառաւորելի ընդ Հօր և ընդ Որդւոյ, այլ օտար յԱստուծոյ բնութեենէն, և ստացական և ծառայ և պաշտօնեայ, և աղդումն ինչ, և ոչ էութիւն անձնաւոր։ Եւ ժողո-

վեալ սուրբ հարքն 'ի Թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոն, Դամասկոս Հռովմայ, Նեքտարիոս Կոստանդնուպոլսի, Տիմոթէոս Աղեքսանդրի, Մելիտոս Անտիոքու, Կիւրղոս Երուսաղէմի, Գրիգորիոս Նիւսիայ, Գեղասիոս Կեսարու, Գրիգորիոս Նաձիանձու, Անփիլոքսիոս Իկոնիու, և այլ եպիսկոպոսք, միանգամայն հարեւր և յիսուն հարք, որք նզովեալ մերժեցին զՄակեդոն և զամենայն հոգէմարտան։

ԼԴ. Ամայ էրն Արշակայ առ Շապուհ, Խ անդամ լինել։

ԴԱՐՁԵԱԼ պարսպ առեալ Շապհոյ 'ի պատերազմացն, առաքէ 'ի վերայ Արշակայ զԱլանատզան ոմն պահլաւիկ՝ հզօր գնդաւ, որ էր աղգակից Արշակայ։ Յորմէ խոյս տուեալ Արշակայ, թափուր 'ի բազմաց մնայր նախարարաց. որոց ձեռն տուեալ նախարարքն յԱլանատզանն, կամաւ երթային առ Շապուհ, տաղտկացեալ յիւրեանց ար-

քայէն Արշակայ. և մեծարեալք
'ի նմանէ, դառնային յաշխարհս
մեր: Ուստի տարակուսեալ Արշա-
կայ, յղէ պատգամ առ Իշխան զո-
րուն Պարսից, եթէ Դու արիւն իմ
և հարազատութիւն, ընդէր այդ-
պիսեաւ վարես զիս ջերմութեամբ.
թէպէտ և ակամայ զգալուստ քո
գիտեմ, ոչ կարացեալ սայթաքել
զհրամանս Շապհոյ՝ գալ 'ի վերայ
քո ազգականիս: Այլ արդ թող-
ցայր ինձ զողել ուրեք վայրկեան
մի ժամանակի, մինչեւ ոգի առեալ՝
անցանել կարացից յերկիրն Յու-
նաց. և դու կալցես զաշխարհս, և
բազմաց յինէն հանդիպեացիս բա-
րութեանց, որպէս 'ի մտերիմ հա-
րազատէ:

Դարձուցանէ Աշանազանն այս-
պիսի պատասխանիս, և ասէ. թէ
դու ոչ խնայեցեր յազգայինն մեր
կամարականս, որ առաւել քան
զիս էին քո հարազատագոյնք՝ դենի
ձեր մատամբ և աշխարհաւ համա-
բնակաւ, զինարդ յինէն ակն ունի-
ցիս Ի քեզ խնայել. հեռացեալ գե-

նիւ և բնակութեամբ. և որոմ օրի-
նակաւ էս 'ի քոյն յուսալով բա-
ղիս, որ անյայտ է՝ թէ առից, զգը-
ուեալն յիմմէ թագաւորէն կորու-
սանիցեմ:

Ապա այնուհետեւ յոյժ նեղեալ
Արշակ, յոչ կամաց երթայ առ
Շապուհ, և 'ի պահեստի լինի 'ի
նմանէ. և բռնութեամբ հարկաւո-
րեալ գրէ, զի Փառանձեմ կին նո-
ցա եկեսցէ 'ի դուռն: Եւ Շապուհ
հրամայէ ամենայն մեծամեծացն,
զի ընդ Փառանձեմայ եկեսցեն:

ԼԵ. Յաղագս լուրեացն որ անցին ընդ
Հայս 'ի Շապհոյ, և մահ Արշակայ:

ԻԲՐԵՒ գիտացին նախապարքք
Հայոց, այնք՝ որ նախ քան զԱր-
շակ ձեռն տուեալ էին 'ի Շապուհ,
թէ և զնոցա կանայսն խնդրէ, որ-
պէս զայնոցիկ՝ ոչք առ Արշակայ
միամիտք էին, և զայն եւս տեսին՝
եթէ գնաց Ալանաստան, և գունդ
փոքր է՝ որ վասն այնր է եկեալ,
միաբանեալ հալածեցին զնոսա, և

իւրեանց առեալ զկանայս և զորդիս՝ փախեան յաշխարհն Յունաց։ Եւ ոչ դշխոյն Փառանձեմ գնաց 'ի կոչ առնն իւրոյ, այլ հանդերձ դանձիւք անկաւ յամուրն Արտագերից։ Լուր առնելով առ որդին իւր Պապ, յուսայր ապրել 'ի ձեռաց Շապհոյ։ Ընդ որ զչարեալ Շապուհ կապէ զոտս Արշակայ երկաթեղէն շղթայիւք, և տայ տանել յերկիրն Խուժաստանի յԱնուշն կոչեցեալ բերդ։ Եւ բազում զօրս գումարեալ 'ի ձեռն Մերուժանայ արծրունւոյ և Վահանայ մամիկոնոյ ուրացողաց զՔրիստոս, արձակէ յաշխարհս Հայոց։ որք եկեալ նստան շուրջ զբերդաւն Արտագերից։ Եւ թէպէտ ոչ ինչ կարէին առնել նմա վասն անմատչելի ամրութեանն, բայց բարկութիւնն Աստուծոյ էր 'ի վերայ Արշակայ։ մարդիկ ամրոցին ոչ անսացին մնալ համբաւոյն Պապայ, այլ անձնատուրք եղեն 'ի կամաց և 'ի բռնութենէ։ Զորս գերեալ հանդերձ դանձիւք և տիկնաւն Փառանձե-

մաւ, խաղացուցին 'ի յասորեստան. և անդ ընդ սայլացիս հանեալ՝ սատակեցին։

Ի նմին ժամու եհաս հրաման Ղապհոյ, զի քանդեալ աւերեսցեն զամրութիւն ամենայն քաղաքաց, և զՀրեայսն խաղացուսցեն 'ի գերութիւն, և զայն Հրեայսն՝ որ նոյն հրէութեան օրինօքն կային 'ի Վանն Տոսպայ, զոր ածեալ էր Բարզափրանայ ռըշտունեոյ յաւուրս Տիգրանայ. զորս բնակեցոյց Ղապուհ յԱպահան։ Գերեցին և զայն Հրեայսն՝ որք յԱրտաշատ և 'ի Վաղարշապատ, զորս ածեալ էր նոյն Տիգրանայ աղքայի, որ յաւուրս սրբոյն Գրիգորի և Տրդատայ հաւատացեալ էին 'ի Քրիստոս. ընդ որս և զՁուիթայ երէց Արտաշատու։ Յայնժամ մատուցեալ առ Ղապուհ Մերուժան և Վահան չարախօսէին զՁուիթայ երիցուէ Արտաշատու, եթէ յայն սակս էին ընդ գերութիւնն, զի խրատեսցէ զնոսա պինդ ունել զօրէնս քրիստոնէութեան։ Վասն որոյ Ղապուհ

հրամայեաց չարչարել զՀուիթայ, զի թողցէ զհաւատ քրիստոնէութեան. որում ոչ հաւանեալ, կատարեցաւ: Զայս ամենայն աղէտս թշուառութեանց լուեալ Արշակայ, սաւուղաբար արար ընդ անձին իւրում. որ թագաւորեաց ամս երեսուն:

ԼԶ. Անդ ընդ մեղ լուրէին՝ որ 'ի Մերուժանայ, և թագաւորէր Հայոց Պապայ:

ՅԵՏ մահուանն Արշակայ գումարեաց Շապուհ զօր բազում 'ի ձեռն Մերուժանայ, և արձակեաց 'ի Հայս, 'ի նա հաւատալով զաշխարհս: Եւ տուեալ նմա կին զքոյր իւր զՈրմզդուխտ, և հրովարտակս բազում շինիւ և դատակերտաց 'ի Պարսից աշխարհին, և խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւնն, միայն թէ զնախարարսն նուաճելով 'ի դեն մազդեզանց զաշխարհս դարձուցէ: Որոյ յանձն առեալ և եկեալ, և զբազումս 'ի

նախարարաց կանանց կալեալ՝ 'ի բերդս բերդս տայր պահել, զդարձ արանցն յուսալով։ Եւ զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել։ Զեպիսկոպոսս և զքահանայս՝ հարկաց պատճառաց կապեալ՝ յերկիրն Պարսից տայր տանել։ Եւ զորս մի անգամ գիրս գտանէր՝ այրէր, և հրաման տայր մի ուսանել զդպրութիւն յունարէն, այլ պարսիկ. և մի ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել. այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենեւին մի լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ. այլ ճշմարիտ՝ խափանել զքրիստոնէութեան ուսումն։ Զի յայնժամ գիր դպրութեան Հայոց չեւ եւս էր լեալ, և յունականաւն վարէին եկեղեցւոյ կարգք։

Որդ Խբրեւ լուաւ մեծն Ներսէս զչարիսն ամենայն, որ հասին 'ի վերայ Հայոց, և զմահն Արշակայ, աղաչեաց զինքնակալն Թէոդոս, խնդրելով 'ի նմանէ օգնականութիւն։ Եւ թագաւորեցուցանէ

զՊապ որդի Արշակայ. և ընդ նմա դումարեաց զօր բազում 'ի ձեռն քաջ ստրատելատին Տերենտիանոսի։ Եւ մեծին Դերսխի առեալ զամենայն նախարարսն, որք կամակից էին ընդ տէրութիւնն Պապայ և որք ոչ, և զապրեալ կամարականն Սպանդարատ, ասցա միաբանութեամբ ածէ զՊապ յաշխարհս Հայոց։ Եւ եկեալ գտանէն զամբարիշան Մերուժան պետացեալ կալեալ զերկիրս Հայոց. և հալածական արարեալ՝ յինքեանս թափէն զաշխարհս։ Բայց Մերուժան հրամայէ պայսակացն՝ զբերդից պարսպացն կախել զկանայսնախարարացն, մինչեւ մեռցին. և թողուլ նոյնպէս 'ի կախաղանին զդիակունսն, զի լուծեալ անկցին գէշ՝ կերակուր լինել թռչնոց։

ԼԻ. Յաղագս մեծի պատերազմին՝ որ եղև 'ի Զիրաւ, և սպասման ամբարձին Մերուժանայ։

ԱԶԴ արարեալ Մերուժանայ յերկիրն Խորասանայ առ Շապուհ զամենայն օգնականութիւն Թէոդոսի՝ զոր արար առ Պապ, ելանէ հրաման 'ի Շապհոյ՝ ամենայն զօրացս Պարսից երթալ ընդ Մերուժանայ 'ի Հայս 'ի պատերազմ։ Դոյնպէս ազդէն ինքնակալին Թէոդոսի Պապ և Տէրէնդ զՇապհոյ, թէ ամենայն զօրացն հրամայեաց ելանել 'ի վերայ մեր, բայց 'ի դրանկացն։ Ապա Աւգոստոսն Թէոդոս հրամայեաց Ադդէի կոմսին մեծի երթալ յօգնականութիւն Պապայ. առնուլ զամենայն զօրս Յունաց, ոչ զոք թողուլ՝ զոր ոչ առցէ. այլ և զհեռեւակս պահապանս քաղաքացն, զոք զմեռաքսեայսն ունէին զվիշապս։

Եւ խմբեցաւ պատերազմն 'ի դաշտին՝ որ կոչի Զիրաւ, և մատեան Ճակատ առ Ճակատ։ Եւ մանկունքն

քաջ նախարարացն Հայոց ինքնա-
կամ նահատակեալք, մինն 'ի մէջ
Ճակատուցն առաջնորդութեամբ
սպարապետին Իւրեանց Սմբատայ
սպանեալ, որդւոյ Բագարատայ, ոչ
յապգէն բագրատունեաց։ Եկին և
'ի զօրացն Պարսից համանիք նոցա,
և խաղացին 'ի մէջ Ճակատուցն. և
ցիր ընդ ցիր լինէր։ Եւ 'ի դառնալ
մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ
մերոցն զհետ նոցա, օրինակ
ինն որպէս փոթորիկ յանտառէ տե-
րեւաթափ, այնպէս երագ յերիվա-
րացն առեալ նիզակօք, դի ցուրտ
յերկիր ընկենուին, ոչ կարելով նո-
ցա յիւրեանց Ճակատն մոռանել։
Իսկ յորժամ պարսիկքն զմերն շըր-
ջէին, նոքա 'ի վահանափակն Յու-
նաց իբր յամուր քաղաք մոռանէին՝
առ ոչ ինչ ինասելոյ։ Քանզի այն-
պէս արար Գորգոնոս իշխան հե-
տեւակ զօրուն, իբր պարսպաւ պա-
տեաց վահանօք զՃակատն Պապայ։

Քանզի զօրքն Յունաց վառեալ
էին 'ի զէնս ոսկւոյ և արծաթոյ, և
երիվարքն նոցա նոյնպէս զարդու։

Եւ էր տեսանել իբրեւ զպարիսպ
ինչ, յորոց յոլովք 'ի ջղեայ և 'ի
կաշեայ պահպանակաց զդեսուն
զկարծրութեան վիմաց բերէին է-
ութեամբ. և 'ի վերայ նոցա անիսա-
լամ դէպք նշանք արձակեալք իբր
զսաղարթ ինչ հովանաւոր ծառոց:
Բայց զվիշապացն մանուածս ահա-
գին բերանաբացութեամբ ուռուց-
եալ 'ի փչմանէ օդոյն, ոչ ինչ ու-
րեք կարեմ նմանեցուցանել, այլ
միայն իբրեւ զլեառն ինչ ադամանդեայ խոնարհիլ 'ի ծով զբովանդակ ճակատն Յունաց 'ի պարսկական զօրան: Քանզի և զնոսա էր տեսանել իբրեւ զհզօր ինչ գետ առ 'ի կողմն 'ի լայն ծաւալեալ. արդարեւ զՄրոյ գոյն զրահազդեստացն բերէր տեսութիւն:

Արդ իբրեւ եռեա մեծն Ներսէս զայնն ամենայն, էլ նա 'ի կատարելերին Նպատայ. և ամբարձ զձեռս իւր յերկինս, անխոնարհելի պահելով 'ի խնդրուածս հանգոյն նախամարգարէին Մովսիսի, մինչեւ պարտեցաւ երկրորդն Ամալէկ:

Իսկ 'ի ծագել արեգականն ընդ-
դէմ մերոց զօրացն, 'ի պղնձապատ
վահանացն նշոյլք զերամբքն փայ-
լատակէին իբրեւ յամպոյ մեծէ, և 'ի
նոցանէ 'ի գուրս ոստէին 'ի մերոց
նախարարացն քաջ զրահաւորք՝ որ-
պէս փայլատականց ճառագայթք.
յորոց միայն 'ի տեսութենէն զան-
գիտեալ պարսկական գունդն, սա-
կաւ ինչ և մերն՝ վասն ոչ կարել
հայել ընդդէմ արեգականն ծագ-
ման: Իսկ 'ի բախելն զմիմեանս՝ ե-
ղեւ 'ի վերայ հովանի ամպոյ, և
հողմ սաստիկ 'ի մերոցն կուսէ ընդ-
դէմ պարսկականին փչեալ: Եւ 'ի
խառնակել մարտին՝ պատահէ կամ-
սարականն Սպանդարատ խմբի մե-
ծի, յորում էր քաջն Շէրգիր Ղե-
կաց արքայ, զգլուխ միջի գնդին
պնդութեամբ զտեղի ճակատուն
կալեալ: Եւ յարձակեալ Սպան-
դարատ, և հերձեալ զխումբն, որ-
պէս շանթահար յերկիր կործա-
նէր զքաջն, և զխումբն պատուտեալ՝
'ի փախուստ դարձուցանէր: Եւ
այսպէս 'ի վերին օգնականութե-

նէն զօրացեալ հասարակ զօրքն Յու-
նաց և Հայոց, գիտակամբք թշնա-
մեաց լցին զդաշտն ամենայն, և
զմնացորդսն ամենայն 'ի փախուստ
ընկեալ հալածեցին։ Ընդ որս և
զՈւռնայր Աղուանից արքայ, խո-
ցոտեալ 'ի Մուշեղայ որդւոյ Վա-
սակայ մամիկոնէնի, հանին 'ի պա-
տերազմէն։

Բայց ամբարշտին Մերուժանայ
վիրաւորեալ ձին, ոչ կարաց երա-
գել ընդ փախստեայսն. որում ա-
ճապարեալ հասանէ սպարապետն
Հայոց Սմբատ, և զորս ընդ նմայն
էին՝ կոտորէ. ձերբակալ առնէ ըզ-
վատշուէրն յեզերշամբին Կոգայով-
տի։ Եւ զմտաւ ածեալ, թէ գու-
ցէ թաքիցէ զնա մեծն Ներսէս, այ-
նորիկ աղագաւ ոչ ածէ 'ի բանակն.
այլ զտեղեաքն գտանէ պատրաստա-
կան առ 'ի կորուստ ամբարշտին զո-
մանս խորանաւորս հուր լուցեալ,
և շամփուր երկաթի 'ի միս խորո-
վեալ. զոր ջերուցեալ, կրկնեաց
քոլորեալ որպէս պսակ, և յոյժ ար-
տաշէկ արարեալ, ասէ. Պատկեմ

զքեզ, Մերուժան, քանզի 'ի ինդիր էիր թագաւորել Հայոց. և ինձ ասպետս պարտ է զքեզ պատկել ըստ սովորական իշխանութեան մոյ Հայրենեաց: Եւ մինչ դեռ տաք էր երրեւ զՀուր, եդ 'ի գլուխս Մերուժանայ, և այնպէս սատակեցաւ ջարն: Եւ յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապայնուա ՀՀեալ:

ԼԸ. ԵՐԷ ՀՐՊԷՍ ՊԱՊԱՅ ԴԷՂ ՄԱՀՈՒՐԷՈՒՆԷԱԼ ԱՐԷՈՅՆ ՆԵՐՍԷՍԻ՝ ԷԼՈՅԾ 'Ի ԿԷՆՑԱՂՈՅՍ:

ՅԵՏ սպառելոյ պատերազմացն և խաղաղանալոյ երկրիս, մեծն Ներսէս դնէր վկայութիւն 'ի մէջ արքային և նախարարացն՝ գնալ յամենայն Ճանապարհս արդարութեան, զի վկայեսցեն ըստ հաւատոց քրիստոնէութեան և գործքն. և զի արքայի մի հօր իւրում նմանել, անիրաւել և զլկել. այլ վրեսցի ուղղութեամբ, հայրաբար խնամով առ նախարարսն. և նոքա

մի եւս յաւելցին վտարանջել նշկա-
հելով զնա, այլ ծառայել միամ-
տութեամբ։ Յայնժամայրքայն Պապ
դարձոյց 'ի կամսարականն Սպան-
դարատ զամենայն ինչ՝ զոր յափըշ-
տակեալ էր հօր իւրոյ Արշակայ,
զդաւառն Շիրակայ և զաշարու-
նեաց, ոչ իբրեւ զանիրաւ զգա-
հութիւն հօր իւրոյ Արշակայ, այլ
որպէս պարգեւ ընդ վաստակոց
քաջին Սպանդարատայ, որ ապան
զՂեկաց արքայ։ Այլ և զայլոց նա-
խարարացն դարձոյց զզրկանս, և
յոյժ անընչասիրաբար ցուցանէր
զիւր ախորժական, և առատաբար
կայր։

Բայց զի ամենայն ախտիւ զաղ-
բատործ էր, և յանդիմանեալ կըշ-
տամբէր 'ի մեծէն Ներսեհէ, ընդ
ակամբ հայէր 'ի նա, խորհելով չա-
րիս. և ոչ իշխէր յինքնակալէն Թէո-
դոսէ յայտնի ինչ առնել նմա չա-
րիս, դեղ մահու դաղտնի արբու-
ցեալ արբոյն Ներսեհի՝ եւրոյծ 'ի կեն-
ցաղոյս. որ կալաւ զաթոռ եպիս-
կոպոսութեանն ամս երեսուն և

չորս։ Եւ փոխեալ յաշխարհէս Երանելին Ներսէս 'ի գաւառին Եկեղեաց, 'ի գեօղն՝ որ կոչի Խախ, բարձեալ զմարմին նորա ալեքային Պապայ՝ Թաղեաց 'ի Թիլն աւանին, զանխլաբար ունելով զերեզման։

ԼԹ. Յաղագս աՐՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ Սահակայ, և սպանմանն Պապայ 'ի Թէոդորոսէ։

ԱՊԱ սեսեալ Թագաւորին Պապայ ագացեալ զամենայն Հայս 'ի վերայ Երանելոյն Ներսիսի, հարկաւորեալ յուզեաց և Եգիտ զոմն յազգէ և 'ի ժառանգութենէ Աղբիանոսի, որում անուն Շահակ կոչիւր, ոչ հեռի 'ի գովութենէ. զոր կացոյց փոխանակ Ներսիսի՝ առանց մեծի ալքեպիսկոպոսին կեսարու. որ կալաւ զաթոռն ամս չորս։

Բայց Պապայ լուեալ՝ եթէ մեծն Թէոդոս էլ 'ի Բիւզանդիոյ 'ի Հռոմ կոյս, և մնեալ 'ի Թեսաղոնիկ հանդերձ ապայիւն, և յաղագս ինչաւնին եղեւ խռովութիւն ընդ նա և

ընդ քաղաքացիսն, և մարտ խուս-
վուելեան, և յաղթեալ ինքնակա-
լին՝ սատակեաց 'ի քաղաքացեացն
արս հնգետասան հազար։ Զայս
լսելով Պապայ, վարկուցեալ յեր-
կարել այսպիսւոյ խռովութեան,
արհամարհեալ նշկահեաց. և դեր-
գռեալ զնա կորստեանն իւրոյ, հա-
լածեաց զՏերէնտիանոս հանդերձ
զօրուն. և. սկսաւ պատրաստել 'ի
պատերազմ։ Եւ հասեալ հրաման 'ի
մեծէն Թէոդոսէ, ընդ կրունկն դար-
ձաւ քաջն Տերէնտիանոս։ Եւ ըստ
իւրում պատահման բախտին յան-
կարծակի անկեալ 'ի բանակն, զո-
մանս կոտորեալ սրով, և զոմանս փա-
խստեայս արարեալ. ուր սատակ-
պէս նահատակեալ քաջութեամբ
ընդդիմամարտ լինէր Գնէլ նահա-
պետ անձեւացեաց և սպարապետ
Պապայ արեւելեան զօրուն. զոր
յաղթողն Տերէնտիանոսի իւրովի
արարեալ սուսերաւ կիսակտուր ըզ-
գլուխ նորա, ընծեռնեաց զԹագա-
ւորն Պապ։ Եւ Պապայ յաղերս ա-
ղաչանաց անկեալ, զի մի մեռցի,

այլ յանդիման լինել արքայի. և քաջին Ցերէնախանոսի գթացեալ՝ շնորհեաց նմա զմաղթանան: Եւ երկաթեղէն կապանօք երթեալ առաջի մեծին Թէոդոսի, ըստ իւրում անզգամութեանն սակրով վճարի, թագաւորեալ ամս եւթն:

Խ. Յաղագս Խաֆաւորէլոյն Վարազդատայ, և կապանաց նորին:

ԲԱՅՑ Աւգոստոս բարեացապարան Թէոդոս, որ և մեծ, 'ի քանեերորդ ամին իւրում թագաւորեցոյց Հայոց փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն 'ի նմին տոհմէ արշակունեաց: Այս Վարազդատ էր տիրոք մանուկ, սրտեայ, անձնեայ, ուժեղ, լի ամենայն գործովք արութեան, և յոյժ կորովի նեռաձգութեամբ: Որ 'ի ժամանակի փախստականէն Շապհոյ գնացեալ 'ի դուռն կայսերն հաստատեցաւ, նախ 'ի Պիսաս զբռնամարտիկան յաղթելով, դարձեալ յԱրեգ քաղաքի եղբադացոց յօր հասարակի կոտորեաց ա-

ռեւծս, յորում փառս Ղոմպիայ խաղուն հանդիսի յամբշամարտիցն երեւի և յարդի։ Այլ որ առ ազգին ղանկուարտացն նորա ապուԹիւնք քաջուԹեան, համարձակիմ ասել հաւասար սրբոյն Տրդատայ. քանզի հինգ նահատակս 'ի Թշնամեացն ընդդէմ իւր յարձակեալ՝ 'ի վերայ իրերաց ոսկան սուսերաւ. և 'ի բերդ ինչ դիմեալ, 'ի վերայ պատուարին եւԹնեւտան այրնետիւք հարեալ՝ վերաւոր 'ի վայր հոսեաց միաՁանց զկնի, իբր 'ի սասիկ ինն մրրկէ վազահասուկ Թզենեաց։

Որ եկեալ ԹագաւորուԹեամբ յաշխարհս մեր 'ի յիսուն և հինգ ամին Ճատհոյ, առաջին մարտին պատահեաց աւազակաց ոմանց ասորւոց 'ի գԺուարս Դարանաղւոյ, և փախստեայս արարեալ՝ հետամուտ լինէր։ Իսկ նոցա անցեալ ընդ նեղուցս Եփրատայ կամրջին, ընկեցին զփոյան զկնի իւրեանց. այլ նորա հասեալ, վազեաց զԵփրատու առաւել քան զոչակոնացին Քիոնեայ վազն քան և երկուց կանգ-

նոց չափ։ Եւ անդ էր տեսանել նոր զոմն Աքիլլեւս ընդ Սկամանդրոս գետ վազելով։ Յորմէ զարհուրեալ աւազակացն, զէնընկէց լինելով 'ի ձեռն եկին։

Յաղագս որոյ արքեալ'ի մանկութեանն արուեստիւնս, առ այսոքիւք և 'ի թագաւորութեանն, ոչ հնազանդէր խրատու վերակացութեան զօրացն Յունաց։ Վասն որոյ առաքէ հրեշտակս առ Շապուհ, զի տացէ 'ի դատերաց իւրոց նմա կնութեան, և սա դարձուցէ առ նա զաշխարհս Հայոց։ Զոր զգացեալ զօրավարացն Յունաց, ազդ առնէն կայսեր։ Իսկ կայսրն Թէոդոս հրամայեաց զնա ունել, եթէ ոչ իւրովք կամօք երթիցէ 'ի կոչ ինքնակալին։ Վասն որոյ հարկեալ երթայ կամօք իւրովք, յուսացեալ 'ի սուտ հանել զԱրգուսատան։ Իսկ կայսրն և ոչ տեսութեան արժանի արար, այլ երկաթի կապանօք էտ տանել 'ի Թուլիս կղզի Ովկիանու, որ թագաւորեաց ամս չորս։

Բայց յերկրորդ ամի Վարազդա-

տայ եկաց եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն, 'ի նոյն ազգականութենէ Աղբիանու, ամս չորս։

ԽԱ. Թադաւորութիւն Արշակայ և Վաղարշակայ։

ԱՊԱ փոխանակ Վարազդատայ Թագաւորեցոյց Հայոց Թէոդոս մեծ զերկուս որդիսն Պապայ՝ զԱրշակ և զՎաղարշակ, այսպիսի ինչ խորհեցեալ՝ որպէս թէ ոչ միաբանեսցին երկոքին յապստամբութիւն։ Եւ անդէն պահելով զմայր մանկանցն, արձակէ զնոսա հանդերձ վերակացուօք յինքեանէ, արամբք հաւատարմօք և զօրու։ Որ եկին կալան զաշխարհս, և տիրեցին ամա արիաբար մարտիւք ընդ Պարսս։ Եւ առին իւրեանց կանայս, Արշակ՝ ըզդուստր Բաբկան Սիւնեաց նահապետի, և Վաղարշակ՝ զդուստր Սահակայ ասպետի, որ 'ի նմին ամի վախճանեցաւ։

Բայց յերկրորդ ամին Արշակայ եկաց յեպիսկոպոսապետութիւն

Հայոց Ասպուրակէս ամն հինգ, ազգական Շահակայ և Զաւէնայ։

Իսկ մեծն Թէոդոս Ելեալ 'ի պատերազմ, 'ի Միդուլանոն հիւանդացեալ մեռաւ, թողեալ զԹագաւորութիւնն որդւոց իւրոց, Արկադեայ զԲիւզանդեայն, և Ոնորեայ զՀռոմայն. որք ոչ գովելիք և արժանաւորք ժառանգութեան հայրենականացն գտան առաքինութեան։

ԽԲ. Յաղագս Բաժանելոյ Հայոց ընդ երկու 'ի յԵռն երկուց թագաւորացն արքայունէաց, 'ի ծառայութիւն երկուց աղգաց՝ Պարսից և Յունաց։

ԻՄԱՑԵԱԼ Շապհոյ՝ թէ թերուղիղ է Արկադ, խօսի ընդ նմա 'ի խաղաղութիւն. քանզի էր պարտեալ հարեալ 'ի հօրէ նորա մեծէն Թէոդոսէ։ Յանձն առնու և Արկադ առնել զհաշտութիւն, առաւել յիւրոց զօրագլխաց. զի Թէպէտ և յԱստուծոյ էր պարգեւեալ զյաղթութիւն յամս կենաց երա-

նելոյն Թէոդոսի, սակայն զօրա-
դլուխքն վաստակեալ՝ ձանձրացեալ
լինէին յաշխատութենէ հանապա-
զորդ պատերազմացն։ Վասն որոյ
հաւանեալ՝ կամաւ յանձն առին բա-
ժանել զՄիջագետս և զՀայոց աշ-
խարհակրկին սահմանադրութեամբ։
Վասն որոյ թողեալ Արշակայ ըղ-
բուն թագաւորութիւն հարց իւ-
րոց զԱյրարատ, և զամենայն մասն
բաժնին Պարսից, գնաց տիրել ա-
րեւմտեայ կողմանց աշխարհիս մե-
րոյ, որ 'ի մասն 'ի բաժնին Յունաց.
ոչ միայն մօրն աղաչաւ, որ էր 'ի
կայսերական քաղաքին, այլ լաւ
համարեալ նուազ կողմանն տիրել
և ծառայել քրիստոնեայ թագաւո-
րի, և ոչ յոլովից իշխել և մատնել
ընդ լծով հեթանոսաց։ Գնացին
զհետ նորա հանդերձ կանամբք և
որդւովք և նախարարութիւնք՝ որ
'ի բաժնի Շապհոյ, թողլով զիւրա-
քանչիւր արարս և զդեղս և զդաս-
տակերաս։

Ընդ որ զչարեալ Շապհոյ, դրէ
առ Արշակ, թէ ընդէր դրդուեցեր

զպատերազմ'ի մէջ իմ և կայսեր, ասնելով զնախարարութիւնս իմոյ բաժնիս։ Եւ պատասխանի լսէ յԱրշակայ, թէ վասն զի ոչ համբերէին ընդ պարսիկ առաջնորդաւ վարիլ, էկին զհետս իմ. և արդ եթէ հաւատաս ցիս զմասինդ քո իշխանութիւն, որպէս և կայսր զիւրոյս, պատրաստ եմ'ի պաշտել զքեզ՝ որպէս զկայսր. ապա թէ ոչ է հաճոյ քեզ այս, և իւրեանց կամաւ դարձցին նախարարքս, ոչ արդելում։ Զայս լուեալ Շապհոյ՝ թագաւորեցոյց Հայոց'ի վերայ բաժնի իւրոյ զԽոսրով ոմն'ի նմին ազգէն արշակունեաց. և առ նախարարս իւրոյ մասինն, որ էլեալ էին զհետս Արշակայ, գրեաց հրովարտակ՝ որ ունէր զայս։

Թուղթ Շապհոյ առ նախարարսն։

ԴԻՑԱԶԱՆՑ քաջ, Շապուհ արքայից արքայ, նախարարաց Հայոց որոց կալուած իշխանութեան յիմ բաժնին հատան, ողջոյն շատ շնորհեմ ձեզ։

թէպէտ և ձեր ոչ ապատարար արարեալ՝ թողէք զիւրաքանչիւր իշխանութիւնս, և մեզ ոչ ինչ նիստ էր 'ի ձէնջ, սակայն ըստ սիրաբար խնամոց գթացաք 'ի ձեզ և յաշխարհդ ձեր. զմտաւ ածեալ, եթէ ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել, և հովիւք առանց բարիոք վերակացուի, վասն որոյ թագաւորեցուցաք ձեզ զԽոսրով ոմն 'ի դէնէ ձերմէ, և յաղգէ բնիկ ձերոյ տէրութեան: Արդ դարձեալ ձեր յիւրաքանչիւր արարս խշխեցէք, որպէս և ցայժմ: Երդուեալ 'ի հուր և 'ի ջուր և 'ի փառս անմահից իմոց նախնեաց, զի առանց նենգութեան և պատրանաց արարաք զայդ, և անշրջելի պահեմք: Իսկ այնք որք ոչ լուիցեն հրամանաց մերոց, ըստուն նորա հանդերձ գիւղաք և դաստակերաքք հրամայեցաք ունել յարքունիս: Ողջերուք:

ԽԳ. Յաղագս քոխման նախարարացն Հայոց յԻերուսաղէմ ժառանգութեանց 'ի պաշտօն Երկրագուրացն։

ԻԲՐԵՒ լուան նախարարքն Հայոց, այնք՝ որք ունէին զիշխանութիւն 'ի գաւառս բաժնին Պարսից, թէ կացոյց Ղապուհ թագաւոր հաւատացեալ արշակունի, և զմուրհակ ուխտին տեսին, թողեալ զԱրշակ՝ դարձան 'ի բնակութիւնս իւրեանց, բայց յերից պատանեաց սնդակցաց արքայի և 'ի մօտաւոր մերձաւորաց, Դարա՝ որդի Բաբկայ տեառն Սիւնեաց, որ անէր էր Արշակայ, և Գազաւոն՝ որդի Սպանդարատայ՝ տեառն Շիրակայ և աշխարհունեաց, և Պերոզ յազգէն գարդմանացւոց, և 'ի նոսին յարեցեալք՝ Աստատ յազգէն գնունեաց, Կենան յազգէն ամատունեաց, Սուրայ յազգէն Մոկաց, Ռշտատմառաւէնեան, և այլք անյայտք ոմանք։ Վասն որոյ զժառանգութիւնս նոցա կալաւ Խոսրով յարքունիս հրամանաւ Ղտպհոյ, և ոչ եթող զկա-

լուսածս որդւոյ 'ի հայր, և ոչ էր
բոր յերբայր։

Բայց էին ոմանք և 'ի նախարա-
րացն, որք ունէին զիշխանութիւնս
իւրեանց 'ի բաժնին Յունաց առ
Արշակայ, որպէս Սահակ ասպետ,
որ էր լեալ աներ Վաղարշակայ՝ էր
բոր Արշակայ, և խնդրեցին գալ
առ Խոսրով. ընդ որում խեթի
հայէր Արշակ, հանապազ հրապուր-
եալ 'ի կնոջէն իւրմէ, որպէս թէ
զարդ արքունական ունել նմա՝ 'ի
փեսայէն իւրմէ մնացեալ։ Ապա
յայնժամ եղեւ քաջութիւն սուտ
ընմանէ յազգականաց իւրոց 'ի
Սպեր գաւառէ. վասն որոյ չարչա-
րեաց զնա Արշակ արքայ։ Եւ յայն-
մանէ խնդրէր Սահակ փախչել յԱր-
շակայ և անկանել առ Խոսրով. և
խորհրդակից նմին իրի գործակցեալ
լինէին Սուրէն խոռխոռունի և Վա-
հան առաւելեան, և Աշխադար
յազգէն գիմաքսեանից։ Բայց 'ի գը-
նալն նորա ոչ ժամանեցին նոքա,
խափանեալ 'ի զօրացն Արշակայ.
թաքուցեալ զօղեցին ընդ կեղծաւո-

բութեանն առաքաստիւ, սպասեալ դիպոյ աւուր։

ԽԴ. ԵՒ ՀՐԴԷՍ ՄԵԾՈՒԹԵՍՆ ԽՈՍՐՈՎ ՍԱՀԱԿ ԱՍԱԷՍ. Ի ՆԱՀԱՊԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՒՐԻՆ Ի ՅԵՂՈՒԼԱԿ ԱՂԳԻՆ ՎԱՆԱՆԴԱՅՈՅ։

ԲԱՅՑ Խոսրով մեծապէս ուրախ եղեւ ընդ դալն Սահակայ ասպետի, և սպարապետս զնա ի վերայ զօրացն իւրոց կարգեաց. և դարձոյց ի նա զկալուածս Հայրենիս, և այլ աւանս հանդերձ ագարակօք պարգեւեաց նմա յայնոցիկ ի ժառանգութիւնէ, որք ի բաժնոյն Պարսից առ Արշակայ մնացին։

Զայսու աւուրքք ոմանք ի յաղգէն վանանդացւոց ապստամբեցին ի Խոսրովայ. և ոչ յոք ապաւինեցան, այլ միայն ի մայրիս լերանց իւրեանց և յանծուկս Տայոց քարանց. յենուզակաբար արշաւանօք յիշխանութիւն երկոցունց թագաւորացն Հայոց, խառնէին զաշխարհս և անհանգիստս պահէին։ Յորոց վե-

ըայ ջոգաւ սպարապետն Խոսրովայ Սահակ ասպետ, և զբազումս 'ի նոցանէ սատակեաց, և զբազումս փախըստական արար 'ի կողմանս ջորրորդ Հայոց: Զի ոչ յերկիրն Խաղտեաց անկան՝ 'ի Յոյնս ապաւինելով, և ոչ առ Թագաւորն Արշակ անցին. այլ զաւազակս ոմանս, որ 'ի կողմանս ջորրորդ Հայոց էին՝ 'ի սահմանս Ասորւոց, դիմեցին ապաստան առնել: Քանզի վանանդացիք զաւազակութեան գործ մեծ ցանկութեամբ գործէին, և որպէս ուղիղ իրք ախորժելի Թուին նոցա: Զորոց ձիգ զհետ մտեալ Սահակայ, վարէ յերկար մինչեւ 'ի սահմանս Մանանալոյ:

ԽԵ. Հանդէրձ գանձիւն Աշխայ գան առ Խոսրով Սուրէն, Վահան և Աշխադար:

ՍՈՒՐԵՆԱՅ խոռխոռունւոյ և Վահանայ առաւելենի և Աշխադարայ գիմաքսեանի գաւեալ ժամ պատեհ, զի էր հանեալ զգանձան Ար-

շակայ յամրոցէն Հանուց՝ տանել յաշխարհն Ծովքաց. զոր յափշտակեալ, և կամեցեալ անցանել առ խորով, ոչ ժամանեցին։ Քանզի աճապարեալ Սամէլի մամիկոնեանի մտերմի Արշակայ, յոլովաձեռն գընդաւ զհետս մտեալ, փախստեայս արկանէ յամուր այրս 'ի գաւառին Մանանալոյ, յոր մուտ ոչ գտանէր, բայց 'ի կողմանէ գոյզն ելք էին առ 'ի Թաւալ. և առաջի գրաց այրին՝ սեպ էր ուղղորդ միապաղաղ. և 'ի վերուստ պաղանձաւքուաւոր, որ հայր յանդունդս խորաձորոյն. և որ ինչ զերծանի, յանհնարին ուղիս սատակութեան անկանի՝ անդադար հոլովմամբ գլորեալ, ոչ ուրեք լինել ոտնկոխ։ Վասն որոյ տարակուսեալ Սամէլ վարանէր առ անհնարութիւն տեղեացն։ Եւ ազդ արարեալ Արշակայ, հրամայեաց արկղ գործել երկաթակապ, և քաջ արանց 'ի նեղքս մտանել, և այնպէս շղթայատող կարիւք 'ի վերուստ 'ի վայր իջուցանել 'ի դուրս այրին։ Սակայն և ոչ այն ինչ փնտեաց.

քանզի յոյժ 'ի զատ պահէր ցիրդն։

Եւ մինչդեռ նոքա յայնմ էին, լինէր նոցն ըստ գիպուածոյ բախակ հասանել անդր տապեանն Սահակայ բովանդակ գնդաւն Խոսրովայ, որով հետամուտ յենդուզակացն էր։ Թողեալ զնոսա, գիմէ 'ի վերայ այնոցիկ՝ որք ընդ այրին մարանչէին, և հալածական արարեալ, հանէ զՍուրէն և զՎահան և զԱշխադար հանդերձ գանձիւքն. փոյթ ընդ փոյթ հասուցանէ առ Խոսրով։ Իսկ Խոսրով առեալ 'ի գանձուցն, հանէ և մատն Շապհոյ. և հրամանաւ նորա տայ նոցա գեղս և գաստակերտս ընտիրս և յարմարս՝ յայնոցիկ ժառանգութենէ, որք 'ի բաժնոյն Պարսից մնացին առ Արշակայ։ Եւ այս եղեւ սկիզբն պատերազմին Արշակայ և Խոսրովայ։

ԽԶ. Պատերազմաւ պարտեալ Արշակ 'ի Խոսրովայ՝ վախճանի հիւանդութեամբ։

ԹԷՊԷՏ և ոչ էրէն ձեռնտու Շապուհ և Արիկադ Խոսրովայ և Արշակայ, լինել զօրավիգ օգնականութեան՝ առ 'ի տալ ընդ միմեանս պատերազմ, սակայն և ոչ արգելին զնոսա։ Եւ սպառեալ պատգամաւորութեանն, ժողովեալ Արշակայ զզօրս իւր՝ խաղայ 'ի վերայ Խոսրովայ։ Գնաց և Խոսրով 'ի բանակէն իւրմէ առ ծովուն Գեղամայ, զոր Մուրան կոչէն, ընդ առաջ Արշակայ, զի մի 'ի սահմանս իւր իջցէ. և ոչ այնչափ ատակեաց աճապարել՝ մինչեւ եգիտ զԱրշակ իջեալ յիւր սահմանն, 'ի գաւառին Վանանդայ։ Եւ պատահէն միմեանց 'ի դաշտին՝ որ կոչի Երեւեալ, և տան պատերազմ ընդ միմեանս սաստիկ յոյժ։ Հարկանի զօրն Արշակայ, մեռանի և սպարապետն նորա Դարա սիւնի 'ի պատերազմին, և փախչիցեն ի Արշակ սակաւուք։

Եւ զՀետնորա մանալքաջին Սահակայ ասպետի, սպարապետին Խոսրովայ, վարէր սաստկապէս։ Որ այն օր ահագին նահատակութիւնս ցուցեալ Գազաւոնի՝ որդւոյ Սպանդարատայ, բազում անգամ դարձեալ յարձակմամբ՝ ցրուէ զՀետամուսն, և տայր պարապ ժամ գնալոյ Արշակայ։

Եւ դարձաւ Խոսրով'ի տեղի իւր, և գնաց Արշակ յԵկեղեց. և հիւանդացեալ անդ մաշարայական ախտիւք՝ ջերանի հիւծմամբ։ Թագաւորէ ամենայն Հայոց ամս հինգ, և կիսոցն Հայոց ամս երկուս և կէս։ Եւ այնուհետեւ ոչ եւս կացուցին Յոյնք 'ի բաժնի իւրեանց Թագաւոր, այլ առաջնորդէր նախարարացն այնր կողման քաջն Գազաւոն. և աշխարհին իւրեանց մասինն կացուցին Յոյնք կոմէս իշխանս։

Խէ. Յաղագս Երանելւոյն Մեսրոպայ։

ՏԵՍԵԱԼ թէ 'ի վերջ հասեալ է Թագաւորութիւնն Հայոց, և ըզ-

խռովութիւնն նիւթ իւրոյ համբե-
ռութեանն գտեալ Մեսրոպայ, որ
էր 'ի Հացեկաց Տարօնոյ, անեալ և
ուսեալ առ մեծին Ներսիսի, և յետ
ելից նորա յաշխարհէ՝ 'ի դրան ար-
քունի կարգեալ քարտուղար. սա
սիրեաց զմիակեցութեան զվարս.
որպէս ասաց ոմն, Ի նաւահանգիստ
փութայ նաւ խռովեալ, և անձն
ժուժկալ խնդրէ զանապատ, նոյն-
պէս և նորա փախուցեալ յաշխար-
հական զբաղմանց, և ընկեցեալ
յետս զմարմնական պատիւն, զհետ
ընթանայր երկնաւորին: Եւ էր-
թեալ 'ի գաւառն Գողթան բնա-
կէ, զմիայնակեցութեան վարս ասա-
ցեալ: Եւ որ 'ի նմա զօրեալ աղանդն
հեթանոսական, թաքուցեալ յա-
ւուրսն Տրդատայ մինչեւ ցայն ժա-
մանակս, և ապա յայտնեցաւ 'ի վատ-
թարել թագաւորութեանն սրշա-
կունեաց, զայն եբարձ օգնականու-
թեամբ իշխանի գաւառին, որում
անուն էր Շաբիթ: Ուր նշանք աս-
տուածայինք լինէին՝ որպէս առ սրբ-
բոյնն Գրիգորիս. հալածական լեալ

գէաք մարմնաւոր տեսլեամբ անկանէին 'ի կողմանս Մարաց։ Եւ ոչ ինչ յայնցանէ պակաս արարեալ գտանի և Սիւնեաց աշխարհին, օգնականութեամբ նորին Իշխանին, որ կոչէր Վաղինակ։

Եւ 'ի վարդապետել Երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վասանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր, զանխուլ 'ի ժողովրդոցն լինէր՝ յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ։ Վասն որոյ եդ 'ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս. և արկեալ զանձն 'ի ջանս, պէս պէս փորձիւք տաժանէր։

ԽԸ. Դարձ — Խոսրով նախարարին, որ էին — Արշակայ։

ՏԵՍԵԱԼ նախարարացն Հայոց, եթէ ոչ կացուցին Յոյնք 'ի վերայ նոցա թագաւոր, և գժուարին վարկուցեալ զանառաջնորդն լինել, խորհեցան կամաւ հնազանդել թա-

գաւառին Խոսրովու։ Նմին իրի գրեն առ նա Թուղթ օրինակ զայս։

Թուղթ նախարարացն առ Խոսրով։

ՍՏՐԱՏԵԼԱՏՆ Գազաւոն և ամենայն նախարարքք Հայոց մասինն Յունաց, տեառն մերում Խոսրովայ արքայի կողմանն Այրարատոյ խնդալ։

Ինքնին, տէր, գիտես զմտերմութիւն մեր առ յիշել Թագաւորին մերում Արշակայ, զոր մինչեւ ցօր վախճանին անշինջելի պահեցաք. և արդ խորհեալ եմք նոյնպէս ծառայել քեզ միամտութեամբ, եթէ հաստատեացես առ մեզ դաշամբք զերիսս զայսոսիկ։ Առաջին, չյիշել զյանցանս մեր, զոր պատերազմեցաք ընդ քեզ 'ի հարկէ և ոչ 'ի կամաց։ Երկրորդ, զի դարձուցես 'ի մեզ զամենայն ժառանգութիւնս մեր՝ որ 'ի մասինդ Պարսից, զոր հատէք յարքունիս։ Երրորդ, հնարել թափել զմեզ 'ի կայսերէ, զի մի վրդովեսցեն զբնակութիւնս մեր,

ողք ունիմք իշխանութիւն յայսմ բաժնի։ Եւ զայս պայման ուխտ դրեալ և խաչ հաստատեալ կնքեսցես. զորս տեսեալ՝ փութացուք 'ի ծառայութիւն ձեր։ Ողջ լեր տէր մեր։

Թուղթ Խոսրովու առ Նախարարան։

ՔԱՋ արանց Խոսրով Հայոց աղքայ, ստրատելատի Գաղաւոնի և ամենայն նախարարաց մերոց ողջոյն։

Շատ ուրախ լերուք, զի և մեք ողջ եմք, և ուրախացաք ընդ լուր ողջունի ձերոյ. և առաքեցաք ըստ խնդրոյ ձերոյ զայս պայման ուխտ։ Առաջին, չյիշել զյանցանս ձեր, զոր չունէաք առ յանցանս իսկ, այլ երախտաւորս զմիամտելն առ թագաւորին արշակունւոյ՝ զոր պաշտէիքն. զի և առ մեզ զնոյն յուսամք լինել։ Երկրորդ, դարձուցանել 'ի ձեզ զժառանգութիւնս ձեր, զոր ունիմք յաղքունիս. բայց 'ի յայնմանէ՝ զոր ումեք ումեք պարգեւեցաք, և ոչ շրջին պարգեւք

թագաւորաց առանց ինասու. մա-
նաւանդ զի 'ի դիւան հօրն մերոյ
տեառն Շապհոյ արքայից արքայի
եմուտ. այլ փոխանակ ընդ այնր և
յարքունուստ ընումք և զձերոյն
պակասութիւնն։ Երկրորդ, թա-
փեմք զձեզ 'ի գործակալացն Յու-
նաց, թէպէտ պատերազմաւ ընդ
կայսեր, թէպէտ խաղաղութեամբ։

Եւ զքեզ, Գազաւոն, արիւն իմ
և հարազատութիւն, ոչ ըստ վա-
ղընջուց ազգականութեանն, այլ
ըստ արդեանս՝ որ 'ի մօրէ քումմէ
Արշանուշայ արշակունւոյ, հանեալ
զքեզ 'ի հայրենեաց քոց կամսարա-
կանաց, և 'ի մայրենիս քո յիմն ա-
ռեալ ազգ, արշակունի անուամբ
պատուեցից։

Զայս տեսեալ Գազաւոնի, ընդ
հուպ դարձուցանէ զքնաւ նախա-
րարն առ Խոսրով, և բարեբաստիկ
եղեալ քաջալիաւութեամբ, հան-
դիպի ամենայն խնդրոցն և խոստ-
մանցն։ Բայց Սամելի մամիկոնեանի
յինքն ըմբռնեալ զթուղթն Խոս-
րովու և զպատճէն թղթոց նախա-

բարացն. զատուցեալ 'ի նոցանէ՝ գնաց առ կայսրն Արկադ։ Քանզի էր ստանեալ նորա զՀայր իւր Վարդան՝ յաղագս ուրացութեանն, և զմայր իւր Տաճատուրհի, երկնչելով 'ի Պարսից և 'ի քեռեաց իւրոց արծրունեաց, ոչ իշխէր զատչել 'ի Յունաց։ Իսկ Արկադայ բարի արարեալ նմա, հրամայէ զհաւատարիթզիթոցն հելլէն գրով 'ի գիւանն իւրում գնել, զի պահեսցին յիշատակք ազգաց ասպատամբողաց. որ կայ մինչեւ ցայսօր։

Խթ. Մի ապէպեալ Հայոց Խոսրովայ, և ոնել զաթոռ եպիսկոպոսապետութեանն Մեծին Սահակայ։

ԻԲՐԵԻ տիրեաց Խոսրով բոլոր ամենայն նախարարացն Հայոց՝ ուրում ցանկայրն, յղէ առ Արկադ և խնդրէ 'ի նմանէ հաւատալ յինքն զմասն Յունաց՝ որ 'ի Հայս, զոր չէին կալեալ՝ հարկեսցէն նմա անսխալ, որպէս նորուն գործակալացն։ Եւ կատարեալ Արկադայ 'ի միաբա-

նութենէ նախարարացն Հայոց, թէ միաբանութեամբ հանիցեն 'ի նմանէ և տացեն 'ի Պարսս զբաժինն զայն, կատարէ զնդիրս Խոսրովայ։

Յետ այսր վախճանեալ եպիսկոպոսապետն Ասպուրակէս, 'ի տեղի նորա յաջորդէ Խոսրով զԱհակ որդի մեծին Ներսեհի, որդւոյ Ա-թանագենի, որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանիսի, որդւոյ սրբոյն Գրիգորի։ Սա ամենայն առաքինութեանց հարցն նմանեալ, աղօթիցն մատամբ առաւելեաց։ Քանզի ստացաւ աշակերտս վաթսուն ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուդէից, տրք կրօնաւորք, խարազնազգեստք, երկաթապատք, բոկադնացք, որ յար ընդ նմա շրջէին. որովք մշանջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն, որպէս զայն՝ որ յանապատսն էին. և հոգայր զաշխարհս, որպէս զայն՝ որ յաշխարհի են։ Առ նա եկեալ Մեսրոպ յաղագս խնդրոյ նշանագրաց Հայոց, եգիտ զնա առաւել եւս փափագող այնմ. և յետ բազում ջանից և ոչ

ինչ օգտելոյ, դարձեալ յաղօթս ապաւինեալ, յԱստուծոյ խնդրելով։ Եւ մեկնեալ'ի միմեանց, գնաց Մեսրոպ'ի դաղարս իւր. և յանձն առեալ զխստամբերութիւն վարուց՝ Ճգնէին առաւել քան զառաւել։

Ծ. Կապոտն Խոսրովայ, և ֆոխաՆորդել զԼաՃն Վոտմշապհոյ Եղբօր Նորին։

ԲԱՅՑ Շապուհ էր ցասմամբ ընդ Խոսրովայ'ի բարեկամանալն Արկադեայ անձամբ, և յանհրաման կարգել յեպիսկոպոսութիւն զմեծն Սահակ. վասն որոյ յղեալ մեղադրութիւն՝ հանդերձ սպառնալեօք, ըմբոստացաւ Խոսրով, և խրոխտով վեսական պատասխանեաց, արձակեաց զպատգամաբերսն անարգանօք։ Եւ իսկոյն իսօսեցաւ ընդ Արկադայ, զի լուծեալ զհաշտութիւնն ընդ Շապհոյ՝ օգնեսցէ նմա զօրու, և սա դարձուսցէ առ նա զբոլոր աշխարհս։ Այլ

Շապուհ. 'ի հրապուրելոյ գուշակութեան նահապետացս մերոց, նոյն հետայն առաքէ զորդի իւր զԱրտաշիր զօրու մեծաւ 'ի Հայս։ Եւ 'ի հրաժարել Արկադայ՝ 'ի կուսակցելոյն Խոսրովայ, և ոչ զոք յօտար աղգաց գտեալ 'ի սատարութիւն, անկարացեալ ընդդիմանալ կամ խուսափել 'ի նմանէ, չոքաւ առ նա։

Եւ Արտաշիր ընկեցեալ զնա 'ի տերութենէն, փոխանակ կացուցանելով զՌամշապուհ եղբայր նորին, ոչ զմեծն Սահակ և ոչ զոք 'ի նախարարացն կարգելոցն Խոսրովայ եթող, այլ վրդովեաց 'ի պատուոյ իւրաքանչիւր. նա և հրամայեաց եւս ընդ Յոյնս զնոյն կարգ ունել։ Եւ թողեալ գունդ ստուար, ինքն 'ի Տիզբոն փութայր հասանել, 'ի ծերութենէ հօրն ակն ածելով. ընդ իւր ունելով զԽոսրով դնել յԱնուշն կոչեցեալ բերդի. որոյ թագաւորեալ ամն հինգ։ Ընդ նմա տարաւ զԳազաւոն, կասկածեալ յառնն քաջութենէ. և ըզ-

տուն նորա հրամայէ ունել յար-
քունիս, նոյնպէս և զեղբօր նորա
Շաւարշայ, և զՊարգեւայ ամ-
տունեաց: Քանզի նոքա երկոքեանն
հանդերձ զենուորօք իւրեանց եւ թն
հարիւրով նկատեալ որսացան զա-
ջողութիւն ժամու 'ի Հանապարհի
կարաւանին՝ զերծուցանել զարքայն
իւրեանց Խոսրով, և ոչ աջողեցան
'ի պարաւանդելոյ ոսկեցնորա 'ի շըղ-
թայս: Եւ հզօր մարտի եղելոյ՝ սպա-
նաւ Շաւարշ և Մանուել որդի
Պարգեւայ, և բազումք ընդ նոսա.
իսկ Պարգեւ 'ի կալանս ըմբռնեալ,
ածաւ առաջի Արտաշրի. և տիկ-
տեսակ գործեալ ուռուցմամբ, հրա-
մայեաց դնել յանդիման Խոսրովայ
հանապազ:

ԾԱ. ԵՐԹ ՌԵԾԻՆ ՍԱՀԱԿԱՅ 'Ի ՏԻՈ-
ԲՈՆ, ԵՒ ԴԱՐՁ ՌԵԾԱՐԱՆՈՎ ԵՒ ԴԱՐ-
ԳԷՆՈՎ:

ՍՈՒՐԲՔ ոմանք երեւելիք առա-
ջինք 'ի նախահարցն և 'ի վերադի-
տաց աշխարհիս, լուսաւորութեան

պատճառք, որդէծնութեամբ ի-
ջեալ 'ի մեծն Սահակ, դադարումն
եղեւ ուստերաց նորա, ունելով
դուստր մի Սահականոյշ կոչեցեալ,
որ տուաւ յամուսնութիւն Համա-
զասպայ մամիկոնեանի։ Եւ 'ի մեռա-
նելն քաջ ոստիկանին Հայոց Սա-
հակայ ասպետի՝ 'ի տեղի նորա զնա
ազատէր կարգել Խոսրովայ արքայի,
և զկնի կապանաց՝ եղբօր նորա
Վռամշապհոյ։ Այլ սա հրաժա-
րէր առանց արքայից արքայի առ-
նել զայս. յիշելով, թէ սակս այս-
պիսի իրաց կրեաց վիշտս եղբայր նո-
րին Խոսրով։ Վասն որոյ առեալ 'ի
սմանէ թուղթս, 'ի թախանձելոյ
գաւառին՝ ինքնին ջոգաւ առ Արտա-
շիր Պարսից արքայ, որ յետ եւ-
թանասուն ամի թագաւորութեան
հօրն՝ կալաւ զտէրութիւնն ամս
չորս։

Եւ մեծարի 'ի նմանէ յոյժ. նախ
վասն քաջատոհմիկ ազգին պահլաւ-
կաց, դարձեալ և զի առաջի ան-
հաւատից արդոյ և պատուական
ցուցանէ Աստուած զծառայս իւր։

Որոյ զքնաւն կատարեալ ինդիրս, նախ վասն փեռայի նորա Համազասպայ, դարձեալ և վասն մնացելոցն մեղուցեալ նմա ազգացն կամաբական և ամատուն, որ սուզեալ ղօղեալ էին յանյայտ տեղիս. վասն որոյ մաղթեաց գթալ, իբր յաստուածային հրամանէ՝ ոչ բառնալ որդւոց զյանցանս հարց. մանաւանդ զի և հարք ոչք մեղանն, նոքին սակս այնր և մեռան: Որոց մնացելոցն պարգեւեալ զկեանն, հրամայեաց զտուն երկաքանչիւրոցն զկալեալսն յարքունիս՝ դարձուցանել 'ի նոսա. բայց միայն 'ի գահ հայրենի ոչ հաստատել, այլ 'ի խոնարհքան զբազումս մատուցեալ նախարարս, 'ի կարգ կրտսերագունից պատրաստել: Իսկ զազգն Համազասպայ, որ է տոհմ մամիկոնեան, 'ի վերս մատուցանել, զի կարգեացին ունել զՀինգերորդ գահ նախարարացն Հայոց. և 'ի գիւանն իւրում գրել:

Զի զերկուս զայս այսպէս պահէին սովորաբար. զի յորժամ 'ներս

տէր արքայ նոր, նոյն ժամայն փո-
խէին զդրամ գտեալ 'ի գանձս ար-
քունի, զնորայն տպաւորեալ պատ-
կեր. և գիր գիւանին՝ յայլ փո-
խեալ նորա անուամբ, սուղ ինչ զա-
նազանեալ, ոչ բառնալով զհինն:
Իսկ եթէ յամիցէ 'ի տէրութեանն
ամն բազումն, և արասցէ աշխար-
հագիր նոր, թողուին զայն որ 'ի
հնոյն փոխեցաւ, զի միայն 'ի նո-
րոյն վերագրեսցի անուն: Արդ Ար-
տաշիր ոչ ժամանէ 'ի կարճութենէ
աւուրցն այլ առնել աշխարհագիր.
յայնմ՝ որ յառաջնոցն փոխեաց,
իւր անուամբն հրամայեաց գրել
զայդ ամենայն, և տալ գահոյ և պա-
տուոյ՝ հանդերձ իշխանութեամբ
գիւղից և դաստակերտաց Հայա-
զատպայ, որում ցանկայրն տպարա-
պետութեան Հայոց, հրովարտակ
առ Վռամշապուհ մեր թագաւոր
գրեալ զայս:

Թուղթ Արքաշրի առ Վռամշապուհ։

ՄԱԶԴԵԶԱՆՑ քաջ, Արտաշիր արքայից արքայ, առ Եղբայր Վռամշապուհ Թագաւոր Հայոց ողջոյն շատ։

Ընկալայ զգրեալս քո, որ ինչ վասն Եպիսկոպոսիս Սահակայ, և յիշեցի զերախտիս նախնեաց դոցա, որք էին նահապետք սուրբնեան Պահլաւոյ, և կամաւ յանձն առին զտէրութիւն իմոյ նախնւոյն և համանուանն Արտաշիրի. և այնչափ սիրեալ զնա քան զիւրեանց ազգայինսն, մինչ զի ոչ շատացան միայն 'ի Պարսից աշխարհիս մարտին ելընդ նոսա, այլ և 'ի ձերդ եկեալ նորին աղագաւ, ապանին զխոտրով զքո նախնին. և զտոյժս ապանութեանն իւրեանց հատուցին մահուամբ։ Իսկ որդի ապանողին Գրիգոր, զկեանս և զթագաւորութիւն կորուսեալ հիւանդութեամբ Տրդատայ, վերսին ետ իւրով բժշկութեամբ. և առաւել առ ձեզ եղեւ երախտաւոր։ Վասն որոյ զոր-

գիտցեալդ դորա զՀամազասպ կա-
ցուցեա 'ի վերայ զօրացդ ապարա-
ղեա՝ մեր հրամանաւ, և ազգի դո-
րա տացեա զգահ հինգերորդ՝ պա-
տուոյ նախարարացդ. և զգեազս և
զդատակերաս, զոր տուեալ է նախ-
նեացն քոց հարց դորա, կալցին դո-
.քա: Սապէս և զտունս ինատակա-
ցաց ազգացդ, զոր կալաք յարքու-
նիս, թողցես 'ի քաց՝ աներկիւղա-
բար ժառանգելնոցին մնացորդաց.
բայց գահուց հայրենականաց պա
տուոյ մի արասցես արժանի. զի և
մեք 'ի մերում գիւանի հրամայե-
ցաք գրել: Ողջ լեր:

Բայց յորժամ եկն մեծն Սա-
հակ և զամենայն պարգեւեալսն
Արտաշիր հատատուեաց, մեռաւ
արքայն պարսից Արտաշիր, և վո-
խանակ նորա թագաւորեաց Վռամ,
որ և Կրմանն կոչեցաւ, ամս տասն:
Եւ զնոյն բարեկամութիւն կալաւ
ընդ աշխարհս Հայոց և ընդ թագա-
ւորին մերոյ Վռամշապհոյ և ընդ
մեծին Սահակայ. և էր խաղաղու-
թիւն 'ի մէջ Վռամայ և Արկադեայ:

Եւ Վռամշապուհ ունէր զաշխարհս մեր, և ծառայէր երկոցունց թագաւորացն՝ տալով զհարկս, զմասինն Պարսից՝ Վռամայ, և զմասինն Յունաց՝ Արկադեայ:

ԾԲ. Յաղագս դանիէլեան նշանագրութեանն:

ՅԱՅՆՄ ժամանակի հիւանդացեալ Արկադ, և շարժմանց ահագնից և հրընկեցութիւն եղեալ'ի Բիւզանդիոն, որ յաղագս մեծին Յովհաննու, շփոթեալ լինէր թագաւորութիւնն Յունաց. և զօրքն ընդ միմեանս պատերազմէին և ընդ Պարսս: Վասն որոյ Վռամ հրամայեաց Վռամշապհոյ մեր թագաւորին ելանել'ի Միջագետս, զի խաղաղացուցեալ կարգեսցէ զնոսա, և համար երկաքանչիւրոցն հատցէ գործակալացն: Եւ ելեալ նորա և կարգեալ զայս ամենայն, ոչ փոքր ինչ կրէ աշխատութիւն յաղագս քարտուղարի. զի մինչեւ գնաց Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք

'ի Ճարտարաց գոտանէր անդ 'ի դրպ-
ռաց, քանզի պարսկականաւն վա-
ռէին գրով։ Վասն որոյ մատուցեալ
առ արքային քահանայի որուն՝ Հա-
բէլ անուն կոչեցեալ, խոստանայր
հայկականացս լեզուաց առնել նշա-
նագիր, յարմարեալ 'ի Դանիէլէ
եպիսկոպոսէ՝ յիւրմէ մերձաւորէ։
Զորով անփոյթ արարեալ արքայ-
ին, և ելեալ 'ի Հայս, գոտանէ ժո-
ղովեալ առ մեծն Սահակ և Մես-
ռոպ զամենայն եպիսկոպոսունս՝ հո-
գալ զգիւտ դպրութեան Հայոց,
զոր զգացուցին արքային, և նա
պատմեաց զասացեալսն վանական-
ին։ Զոր իբրեւ լուան, թախան-
ձէին զնա՝ փոյթ զայնպիսեացն առ-
նել պիտոյից։

Վասն որոյ յաշխարհէս մերոյ ա-
ռաքեաց հրեշտակութեամբ զայր մի
պատուական և հաւատարիմ իւր,
խագունի ազգաւ՝ Վահրիճ անուն,
յոյժ փափագողնորին գործոյ, առ
Հաբէլն այն։ Զոր առեալ, և երթ-
եալ նովաւ հանդերձ քաջ հմտաց-
եալ 'ի Դանիէլէ, կարգեալ ըստ

ձեւոյ օրինակի յունականին զվա-
ղընչուց գտեալ նշանագիր տառից,
եկեալ եռուն ցմեծն Սահակ և Մես-
ropպ։ Որոց ուսեալ, և թեւածե-
լով ընդ նոսա տղայոց զամս սակաւս,
տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել
բաւական այնու նշանագրաց ստոյգ
հոլովել զհեգենայ բառից հայկա-
կանաց հագնեբգաբար՝ մուրացա-
ծոյին այնուիկ գծագրութեամբ։

ԾԳ. Յաղագս Մեսրոպեան նշանագրաց
'ի վերնոյն պատելոց ընդհաց։

ԶԿՆԻ այսորիկ ինքնին Մեսրոպ
ելեալ 'ի Մելջագետս՝ հանդերձ ա-
շակերտաւք առ նոյն Դանիել, և ոչ
աւելի ինչ գտեալ քան զառաջինն,
անցանէ և յԵդեսիայ առ Պղատոն
ոմն Ճարտարապետն հեթանոս՝ ի-
խան գիւանին։ Եւ նորա խնդրու-
թեամբ ընկալեալ, և զոր ինչ մի ան-
գամ 'ի միտ առնոյր բան հայերէն
յինքն առեալ, և շատ ջանացեալ
և ոչ օգտեալ, զոգիատութիւն խոս-
տովանեաց հանիսարն։ Եւ զայլ ոմն

ասելով յոյժ հասու, վարդապետ իւր եղեալ յառաջագոյն, և ապա առեալ զՀարտարացն գրեան 'ի նոյն գիւանէն Եդեսեայ, և գնացեալ քրիստոնէութեան հաւատաց. որոյ անուն Եպիփանոս. զոր խնդրեալ դոցեա ցուցանել զփափաքդ-քո։

Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն 'ի Բաբիլոնէ եպիսկոպոսէ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէ 'ի Սամոս դիմէ. քանզի Եպիփանու վՀարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռոփանոս, հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեամբ, որ 'ի Սամոս էր միայնացեալ։ Առ սա երթեալ Մեսրոպայ, և յայտմ եւս անշահ մնացեալ, յաղօթս ապաւինի. և տեսանէ ոչ 'ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ 'ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով 'ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի. զի որպէս 'ի ձեան վերջք գծին կուտեալ ունէր քարն։ Եւ ոչ միայն երեւութացաւ, այլ և հանգամանք

ամենայնին որպէս յամեան ինչ 'ի միտս նորա հաւաքեցաւ : Եւ յաղուցեալ յաղօթիցն , եատեղծ զնշանագիրս մեր՝ հանդերձ Հռոփանոսիւ կերպաձեւեալ զգիրն Մեսրոպայ առ. ձեռն պատրաստ . փոխատրելով զՀայերէն ազգութեան ըստ անսայթաքութեան սիւղտբայից հելլենացւոց : Եւ խսկոյն 'ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց , բովանդակ զքսան և երկու յայտնիսա և զնոր Կտակս յեղուալ 'ի հայ բան , նա և աշակերտք նորա Յոհան Եկեղեցային և Յովսէփ պատնեցի . միանգամայն և զարուեստս գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն :

ԾԴ . Յաղագս դպրութեան Հայոց , Վրաց և Աղուանից :

ՎԱԽՃԱՆԵԱԼ Արկադայ , փոխանակ Թագաւորէ Նորին որդի , որ կոչեցաւն Թէոդոս փոքր . և զնոյն քարեկամութիւն կալաւ ընդ մե-

ռում աշխարհիս, և ընդ արքային մերում Վռամշապհոյ. բայց զմասն իւր նմա ոչ հաւատաց, այլ ինքեան գործակալաք կալաւ, և խաղաղութիւն արար ընդ Յազկերտի արքայի Պարսից։ Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, և բերեալ զնշանագիր մերոյ լեզուիս, և հրամանաւ Վռամշապհոյ և մեծին Սահակայ՝ ժողովեալ մանկունս ընտրեալս, ուշեղս և քաջասունս, փափկաձայնս և երկարոգիս, և դպրոցս կարգեաց յամենայն գաւառս, և ուսոյց զբնաւ կողմանս բաժնոյն Պարսից՝ բայց 'ի Յունաց մասէն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան՝ վիճակեալ յաթոռն Կեսարու, վարել յունական դպրութեամբ և ոչ ասորւով։

Իսկ Մեսրոպայ երթեալ յաշխարհն Վրաց, առնէ և նոցա նշանագիրս տուեցեալսն 'ի վերուստ շընորհաւն, հանդերձ ջաղայիւ ոմամբ թարգմանաւ հելլէն և հայ լեզուի. ձեռնտու լինելոյ արքայի նոցա Բակրոյ, և եպիսկոպոսին

Մովսիսի։ Եւ ընտրեալ մանկունս, և յերկուս բաժանեալ դասս, և վարդապետս թողուն նոցա յաշակերտաց իւրոց զՏէր խորձենացի, և զՄուշէ տարօնեցի։

Եւ ինքն յԱղուանս ելեալ առ Արսաղէն թագաւոր նոցա և առ եպիսկոպոսապետն Երեմիայ. որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա, եառն մանկունս ընտիրս։ Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր թարգման, զոր անգամ դալ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց տէր՝ 'ի ձեռն Ընանիայի եպիսկոպոսի իւրոյ. որովք սահեղծ զնշանագիրս կոկորդախօս աղխաղուր խժական խեցբեկագունին այնորիկ գարգարացեալ լեզուին։ Եւ վերակացու թողեալ զաշակերտս իւր զՅովհաննէս, միանգամայն և քահանայս կացուցեալ գրանն ալքուն, ինքն դառնայ 'ի Հայս. և գլատանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յատուրսն՝ յոչ լինելոյ յուսի։ Քանզի նախ 'ի Մեբուժանայ այրեալ լինէին ընթա-

նուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ 'ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չասային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել գպրութիւն ումեք յիւրեանց մասինն, այլ միայն ասային։

ԾԵ. Կրկին Բագաւորեն Հայոց Խոսրովայ, Ի յետ նորա Շապհոյ պարսկի։

ՎՌԱՄՇԱՊՀՈՅ Թագաւորեալ ամս քսան և մի՝ մեռանի, Թողլով որդի տասնամեայ՝ անուն Արտաշէս։ Յայնմ ժամանակի երթեալ մեծին Սահակայ 'ի դուռն արքային Պարսից Յազկերտի՝ խընդրել զկապեալն Խոսրով, որ զկնի մահուանն Արտաշրի՝ լուծեալ պահեցաւ արձակ յԱնուշն կոչեցեալ բերդի յաւուրս Վռամայ։ Եւ Յազկերտի հաւանեալ՝ կատարէ զհայցուածն, տալով նմա զսէրուԹիւնն՝ արձակեաց 'ի Հայս։ Սա խնդրեաց զՀրահատ որդի Գաղաւոնի, որ յետ հօրն նորա մահուան՝ հանեալ յանչիշելի ամրոցէն, անդր

եւս քան զսաղաստան էր գումարեալ. զոր ոչ ժամանեաց տեսանել Խոսրով մի եւեթ 'ի կրկնումն թագաւորեալ ամ:

Յետ որոյ Յազկերտ ոչ եւս 'ի նոցանէ, այլ զՇապուհ զորդի իւր թագաւորեցուցեալ Հայոց, հնարս դառնութեան խորհելով՝ իբր թէ այնպէս հանապազ առ նմա նախարարքն յանդգնեցին խօսիւք, տուրեւառիւք, խրախճանութեամբ և զբօսանօք որսոց, այլ և եկամուտ հարազատութեամբ մերձաւորեցին ինամութեամբ. զի մարթ լինի զնոսա և 'ի դէն մազդեզանց սաղապետցուցանել, որով ամենեւիմբ զատչեցին 'ի Յունաց. ոչ գիտելով անմիտն, թէ Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց. թէպէտ առ ժամայն աջողեցաւ: Քանզի մեռեալ Համազասպայ, և 'ի սպի մեծի եղեալ Սահակայ, ոչ ոք 'ի միաբանութիւն հաւաքեաց զգունդս Հայոց. վասն որոյ դիւրամուտ եղեւ յաշխարհս Շապուհ, ընդ իւր ածելով զՀրահատ և զամենայն վասպուրականն.

սակայն ոչ կարաց հաՃել զմիտս նախարարացն, սմենեցուն սատ-
ցեալ զնա. և ոչ արքայօրէն մեծա-
րէին զնա յորս կամ 'ի խաղու։

Էր երբեմն զՀեռ երամակաց ցը-
ուուց յանդգնագոյնս արշաւեալ
ընդ խորտաբորսան և 'ի վիմուտ տե-
ղիս. յորմէ կասել սկսաւ Շապուհ։
Իսկ Աստմայ մոկացւոյ եպերեալ
զնա՝ ասէ. Գնա գնա, աստուածոր-
դիդ Պարսից, թէ այր իցես։ Եւ
նա ասէ. Դու երթիջիր, զի 'ի քա-
ջինս դիւաց է շահատակեալ։ Դար-
ձեալ յայլում ժամու դիպեցաւ 'ի
շամբս կինջս որսալ հրով, և Շապ-
հոյ ոչ համարձակեալ 'ի թաւուն
քաջարշաւ լինել, մինչեւ շրջա-
պատէր հուրն. և նորա զՀայե-
ցուածն յերկուսաբաժանեալ, այլ
անդր բերեալ լինէր երիվարաւն։
Միւսանգամ ասէ Աստմ. Աս-
տուածորդիդ Պարսից, ահա հայր
քո և աստուած, ընդէր զանգի-
ատես։ Իսկ Շապուհ ասէ. Թողեալ
զկատակելդ՝ յանցանել ընդ հուրդ
դարձո զքեզ, որ և ես զկնի քո.

քանզի յառաջէնն՝ ձիս իմ խրատչի։ Յայնժամ այպանեաց զնա Աստուծոյ՝ ասելով. Միթէ և այդ քարի՞նք ի ցեն՝ զի ես յառաջեցից. և արդ է թէ դու զմոկացիս կոչես դիւաղդիս, ես զսատանեանսդ կոչեմ կնամարդիս։ Եւ մարակեալ զերիվարն ի բերեալ ընդ հովիտս ծաղկանց անցանէր ընդ հուրն՝ զերծուցանելով զՀապուհ։ Եւ յետ այնր գիտացեալ՝ եթէ նա լուռ ոչ լինի, անցեալ գնայ 'ի Մոկաց աշխարհն։

Այլ երբեմն 'ի մականական խաղուն երկիցս պատահեաց Շապուհ պայ արծրունեոյ զգնդակն հանել 'ի Հապհոյ։ Եւ նորա ածեալ նմա մականաւն՝ ասէ. Ծանիր զքեզ։ Իսկ նորա պատասխանեալ, թէ Այո, ասէ, Ճանաչեմ և զիս արքայորդի 'ի սերմանէ Սանասարայ. և ունիմ իշխանութիւն ընդ երեսս քո զբարձն արքայի համբուրել՝ որպէս և անուանակոչեցեալս եմ։ Եւ զայս ասացեալ յոյժ քամահաբար, 'ի ձիարձակարանէն արփայագնաց լինէր։

Դարձեալ երբեմն 'ի խնջոյսն ու-
բախութեան խոսրով գարդմանա-
ցի 'ի գինւոջ զեղխեալ առաջի Ճապ-
հոյ, զորէն սեղեխի առփեցելոյ ըղ-
հեռ ջնարահար քաջամատն կնոջ
կրթէր։ Ընդ որ ցասուցեալ Ճապ-
հոյ, հրամայէ ունել զնա և 'ի դահ-
լճին պահել. այլ նա 'ի վաղակա-
ւորն հաստատեալ զաջն, ալէս գու-
նակ Տրդատայ բագրատունւոյ, յիւր
ոունն անցեալ գնայր, և ոչ ոք 'ի
սպասաւորացն արքունի համարձա-
կեալ արկանել 'ի նա ձեռն, յառա-
ջագոյն գիտելով զփորձ առնն։ Եւ
զայս պատմել մեզ՝ քոյդ հարկաւո-
րեաց խնդիր։

Ծ.Զ. Որ ինչ զնի գնալոյն Ճապհոյ
'ի Հայոց, և անիշխանութեանն յեր-
նարա։

ԶԲԱՌԵԱՄ անարգաբար թա-
գաւորեալ Ճապհոյ, հասանէ նմա
համբաւ հիւանդութեան հօրն, և
գնայ փութանակի, իւրում տեղա-
կալին հրամայելով զօրագլխի՝ ու-
նել զմեծամեծս Հայոց, և տանել

'ի Պարսս։ Իբրեւ եղեւ հասանել Շապհոյ 'ի Տիսբոն, մեռաւ Հայրն նորա Յազկերտ, թագաւորեալ ամս մեռատան։ Ի նմին աւուր և նա անդէն 'ի գրանէ մարդկանն նենգեալ՝ սատակեցաւ։ Իսկ 'ի ձեռն քաջին և բարեբախտին Ներսիսի Ճիճրակացւոյ զօրագլուխ եղելոյ ժողովեալ նախարարացն Հայոց հանդերձ զօրքիւրեանց, տան ընդ գնդին Պարսից պատերազմ. հարկանեն զչօրսն, և սպանանէ Ապրսամ սպանդուն զզօրագլուխն. և ինքեանք ցըրուեալք տիրագլուխք անձնապահապեաք յամենայն լերինս և յամուրս շրջէին. յորում համօրէն վանանդացիք երեւեցան նահատակեալ քաջութեամբ։ Ուստի ալմըկաւ և բազում խռովութեամբ մընացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս, աւերեալ ամայանայր. վասն որոյ պակասեալ լինէին հարկք արքունի, և հատեալ ճանապարհք ռամկաց, և ամենայն բարեկարգութիւն վրդովեալ ապականէր։

Ընդ նոյն աւուրս լինէր թագաւորեալ Պարսից Վռամ Երկրորդ, և զքէն վրիժուց ինդրեաց 'ի մերմէ աշխարհէս. խաղաղութիւն առնելով ընդ Յոյնս՝ ոչ 'ի բաժին նոցա հպի։

Ծէ. Աստուծոյ Մէնրոպայ 'ի Բիւզանդիոն, և պատճէն նղլոց հնգից։

ԻՍԿ իբրեւ եռեաս մեծն Սահակ զայս ամենայն չարիս 'ի մասինն Պարսից, գնաց նա զկողմամբք արեւմըտից մերոյ աշխարհիս 'ի բաժին մասինն Յունաց, և ոչ ըստ արժանեաց իւրոց եղեւ ընկալեալ. վասն որոյ յղէ զՄեսրոպ և զՎարդան թոռն իւր 'ի Բիւզանդիոն առ կայսրն Թէոդոս թղթով, որ ունէր զայս։

Թուղթ Սահակայ առ Թէոդոս։

ԽԱՂԱՂԱՍԻՐԻ կայսեր տեառն իմում Աւգոստոս Թէոդոսի՝ Սահակ Հայոց եպիսկոպոս 'ի Տէր ինդալ։

Գիտեմ, զի համբաւնեղութեանս

մերոյ հասեալ է 'ի նեղոյ լսողու-
թիւն ինքնակալիդ. ասկս որոյ յու-
սալով 'ի գթածութիւն բարերա-
րութեանդ քոյ, գիմեալ ապաւի-
նեցայ յոտս ձեր. և ոչ հանդիպե-
ցայ ընդունելութեան յիմաստ վի-
ճակիս 'ի հրամանէ վերակացուացս
ոգոյ. այնչափ առեցեալ զմեզ, մին-
չեւ զնշանագիրս անգամ ոչ ընկա-
լան, զորս եբեր նոյն այր՝ զոր առա-
քեցի առ ձեր բարերարութիւնդ,
բաղում անգամ ճգնեալ զորս յԱ-
ստուծոյ աշխարհին։ Արդ հաճոյ
թուեսցի տերութեանդ ձերում՝ ոչ
անիշխան առնել զմեզ 'ի մերում
վիճակիս, և հրամայել ընդունել
զմեզ և զվարդապետութիւնս մեր։
Ողջ լեր։

Գրեր և առ եպիսկոպոսն Թագա-
ւորեալ քաղաքին զայս ինչ։

Թուղթ Սահակայ առ Աթոռիկոս։

ՍԱՀԱԿ եպիսկոպոս Հայոց, վար-
դապետս մեր Աստիկոս եպիսկոպոս
աշխարհամուտ գրանդ, օրհնու-
թեամբ ողջոյն։

Յուսացեալ 'ի ձեր սրբութիւնդ առաքելի զուսուցող մերոյ աշխարհս Մեսրոպ, և զթոռն իմ Վարդան, որպէս զի 'ի լսելիս 'ի դոցանէ զաղէտս նեղութեան մերոյ, բարեխօսեալ առ մեծի Թագաւորիդ՝ օգնեսցեն մեզ, որպէս արդարեւ եղբայր սիրելի։ Ողջ լեր։

Գրէ և առ Անատոլիոս զօրավար զայս ինչ։

Թուղթ Սահակայ առ Անատոլիոս։

ՍԱՀԱԿ եպիսկոպոս Հայոց, քաջի զօրավարի Անատոլեայ խնդալ։

Շնորհ ունիմ Աստուծոյ յաղագս զքեզ պատրաստել մեզ յապաւինութիւն. վասն որոյ զգացուցանեմ՝ զի 'ի հայթայթանս մերոյ նեղութեանս առաքելի զուսուցանողդ մեր զՄեսրոպ և զթոռն իմ Վարդան 'ի դուռն ազքունի. և աղաչեմ զքո քաջութիւնդ ձեռնտու լինել ճանապարհիդ։ Ողջ լեր։

Զայս ասեալ Անատոլեայ, միանգամայն և զլուր առաքինութեանն Մեսրոպայ յիշեալ, որ յառաջա-

գոյն հնչեցեալ էր զնմանէ, ոչ փոքր արար նոցա ընդունելութիւն, մինչեւ 'ի ձեռն փոփոխ ընթացից գըրով զգացուցանել կայսերն։ Առնու հրաման՝ արժանապէս առաքել փութով։ Վասն որոյ արգելեալ 'ի քաղաքին Մելիտինէ զբազմութիւն աշակերտաց, զոր ընդ ինքեան ածեալ հանդերձ գլխաւորաւն նոցա Ղեւոնդիւ, առ եպիսկոպոսին Ակակայ թողու։ Եւ իւր առեալ զՄեսրոպ և զՎարդան՝ տայ ցեպիսկոպոսն Դերջանու ցԳնիթ, և բարեփառութեամբ զնոսա յուղարկէ։ Որով մտին 'ի Բիւզանդիոն, և յանդիման եղեալ մեծի թագաւորին, առին զոր յուսային և զոր ոչն յուսային. և դարձան հանդերձ թղթով այսպիսեաւ։

Թուղթ Թէոդոսի առ Սահակ։

ԻՆՔՆԱԿԱԼ Թէոդոս Աւգուստոս և կայսր հռովմայեցւոց, մեծի Սահակայ եպիսկոպոսի խնդալ։

Հրամայեալ մեր տեսանել ըզթուղթս, վերահասու եղաք գրե-

լոցս առ 'ի քէն, և մեղադրեցաք յոյժ. զի ամենայն արտիւ միտեցար զՀետ հեթանոս թագաւորի, և մեզ և ոչ թղթով բաւականացար ծանօթանալ: Եւ առաւել յայսմ մեղադիր եմք, զի արհամարհեալ զՀարտարօքս, որ 'ի մերում քաղաքիս, յԱսորեաց ոմանց խնդրէիր զիմաստից գիւտս: Վասն որոյ հաճեալ էաք ընդ մերոյ ծառայիցդ արհամարհել զայդպիսի ուսմամբդ. բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրոպ, թէ կատարումն արուեստիդ 'ի շնորհաց վերնոյն եղեւ, գրեցաք՝ զի ամենայն փութով ուսցին, և զքեզ պատուով ընկալցին՝ որպէս զարդարեւ վարդապետ իւրեանց, հանգոյն արքեպիսկոպոսին Կեսարու. և դարմանք և ծախք յարքունուստ եղիցին: Եւ հրամայեցաք քաղաք շինել յաշխարհիդ Հայոց՝ յապաւինութիւն ձեզ և մերոց զօրաց: Եւ վասն քո արարաք սարաստեղատ զՎարդան զորդի որդիացելոյ քո, և յառաջին վարդապետան գրեցաք զՄեսրոպ: Ողջ լեր:

Գրեաց և մեծ եպիսկոպոսն Ատ-
տիկոս զայս ինչ։

Թուղթ Ապիկէայ առ Սահակ։

ԱՏՏԻԿՈՍ ինքնագլուխ եպիս-
կոպոս Կոստանդնուպոլսի, երջանիկ
սիրելւոյ և աթոռակցի՝ Սահակայ
եպիսկոպոսի Հայոց 'ի Տէր խնդալ։

Բազում գոհութիւն Աստուծոյ
մատուցանեմք յաղագս քո բարե-
համբաւութեանդ 'ի մէջ այդպիսի
բարբարոս ազգի. այլ ազատ 'ի մե-
ղադրանաց ոչ թողումք, որ ոչ կան-
խաւ յիշատակեցեր զսիրելութիւն
Գրիգորի և Ներսիսի երանելեաց
քոց հարց։ Եւ առաւել ընդ այս
զարմանամք, եթէ զնոսդ թողեր
զաղբեւրն եկեղեցւոյ զՀայր մեր
սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն
տիեզերական մայրաքաղաքիս, այլ
սովաւ և ամենայն քրիստոնեայք և
ընդհանուր աշխարհ 'ի նմանէ վար-
դապետեալ ուսանի. ուստի և Ռա-
կի բերան կոչեցին զնա։ Եւ մեր
զանց զնովաւ արարեալ կամեցայք
'ի սահմանական ջրոց զվիսիրադ ծա-

բաւոյն յայտնեցուցանել. մինչեւ ա-
մենակալին տեսեալ զնոսին աշխա-
տութիւնն, ըստ սեաց 'ի ձեզ զշնորհս
Հոգւոյն, ընդ որ այժմ ուրախ եմք:
Իսկ արդ հրամանաւ ինքնակալին
Աւգոստոսի տուեալ լիցի քեզ ի-
խանութիւն վարդապետել զկողմնդ
մեր. և ազանդոյդ բոլորիտոնաց՝
կամ հաւանել, և կամ հալածել
'ի քումմէ վիճակէդ: Եւ զառա-
քեալս 'ի քէն զՄեսրոպ ձեռնադ-
րեցաք լինել եկղեսիասդիկոս:

ԾԸ. Վասն զարէ-Մպէայս մեր վարդա-
պետիս, և խաղաղանալոյ Բոլորոտն, և
Բագաւորելոյ Արծրունի.

ԵԿԵԱՆ Մեսրոպայ և Վարդա-
նայ սարսաւելասի՝ գալին զզօրավարն
Ամատոլ հուպ 'ի մերս եկեալ սահ-
ման. որոյ ընկալեալ զհրամանն ար-
քունի, առաւել յոխորտաբար և
քաջալերեալ ձեռնարկութեամբ ըն-
դարձն 'ի կատարումն աւարտեաց:
Քանզի ի՛շխանք և գլխաւորք և որք
մի ոմեգամ յայտնեալք էին 'ի կողմանն,

'ի մի վայր եկեալ հասանէին հան-
գերձ ամենայն քահանայական աղ-
գաւն ինքնակամ, իբր յաստուած-
առաք ձայնէ հրաւիրեալ. զոր
անյապաղաբար սկսեալ ուսուցա-
նել, երագապէս վարդապետեցին
զկողմն արեւմտեայն, որպէս զա-
րեւելեայն:

Յայնժամ գային հասանէին 'ի
բազում նախարարացն կոչնականք
զմեծէն Սահակայ, զի 'ի մէջ նոցա
անցեալ՝ 'ի միաբանութիւն հաւա-
քեսցէ զամենեսեան: Քանզի գի-
տացեալ արքային Պարսից Վռամայ,
եթէ առանց նախարարացն Հայոց
ոչ մարթի ունել զաշխարհն, հաշ-
տութիւն խօսեցեալ 'ի ձեռն Սմբա-
տայ ասպետի: Վասն որոյ թողու
զՄեսրոպ 'ի վերայ վարդապետու-
թեան կողմանն արեւմտից, և առ
նմա զթոռունսն իւր զՀմայեակ և
զՀամազասպեան զեղբարսն Վար-
դանայ ստրատելատի: Հրամայէ քին-
նել զժանդագործ բորբորիտոնսն, և
եթէ ոչ հեզութեամբ և ոչ սասաիս
գայցեն յուղղութիւն, չարչարանօք

հալածէլ. զի թշնամանք 'ի թշնամանաց վրէժ առնուցուն, և խայտառակեսցի իրաւացի մահուամբ անիրաւ մահ հոգւոց։ Եւ ինքն եկեալ անցանէ յայրարատեան գաւառն, կուտեալ զամենայն նախարարազունսն, առաքէ զՍմբատ ասպետ և զՎարդան սպարապետ ընթանալ ի դուռն արքային Պարսից։

Եւ նորա հաստատեալ զհաշտութիւնն, մուրհակ մուրացման յանցանաց կնքէ, ըստ խնդրոյ նոցա թագաւոր կացուցանելով զԱրտաշէս որդի Վռամշապհոյ. և փոխեալ զանունն, Արտաշիր կոչելով, զաշխարհս Հայոց 'ի նա հաւատաց առանց պարսիկ վերակացուի. որ տիրեաց ամս վեց։

ԾԹ. Շինուած կարնոյ քաղաքին, որ կոչեցաւ Թէոդոսիոս։

ԱՆԱՏՈԼԵԱՑ զօրավարի ընկալեալ զհրամանն արքունի, եկեալ յաշխարհս մեր և շրջեալ ընդ բա-

զում կողմանս մեր, հաճի 'ի դա-
ւառին Կարնոյ Խրբեւ 'ի միջոցի շի-
նել զքաղաքն արգաւանդաւոր, շա-
տաջուր և բերրի. Խրբ միջոց վար-
կուցեալ զվայրան, ոչ կարի 'ի բա-
ցեայ 'ի տեղեացն, ուր Եփրատայ
մասինն ինչ բղխեն աղբեւրք ականց,
և հանդարտ գնացիւք յառաջա-
ցեալ ծովանան մօրաբար երեւու-
թիւք. յորում անբաւութիւնք ձը-
կանց և զանազան հաւուց ճարա-
կաւորաց, յորոց 'ի ձուոց միայն կե-
րակրեալ լինէին բնակիչքն։ Եւ զե-
զերբ մօրին շամիք և բազմութիւն
եղեգանց. և դաշտքն ունին զթանձ-
րութիւն խոտոց և զքաջաբերութ-
թիւն սերմանաւոր պտղոց։ Եւ լե-
ռինքն լի են երէսովք կճղակաբաշ-
խիւք և որոճայնովք. նա և զանա-
ռուն պաճարս բազմացուցանեն, մե-
ծահատակս, քաջամարտինս և յոյժ
ցուցանեն համակեալս 'ի դիրու-
թեան։

Եւ առ ատորոտով մի գեղեցկա-
նիստ լերինն գտեալ բազում աղ-
բեւրս ականակիտս և մանուանս բղ-

խեալ, անդ եաեղադրեաց զքաղաքն. զորով շրջափակեաց խոր փոսիւ, անդնդալիր հասատաեաց զհիմունս պատուարին. և 'ի վերայ բարձրաբերձ աշտարակս ահագին շինեաց, յորոց զառաջինն Թէոդոս անուանեաց 'ի պատիւ Թէոդոսի: Եւ 'ի նմանէ և անդր շինեաց աշտարակս ժայռաւորս խրբեւ գնաւացուռնս, և առանցս գոգաւոր խորշիւք՝ ոչք ընդդէմ հային լերինն: Սապէս և ընդդէմ դաշտին հիւսիսոյ. իսկ ընդդէմ արեւելից և արեւմտից կանգնեաց աշտարակս բոլորաձեւս: Եւ 'ի մէջքաղաքին 'ի բարձրաւանդակ վայրի մթերանոցս բազմապատիկս շինեաց, և Աւգոստոն անուանեաց 'ի պատիւ Աւգոստոսի: Եւ այլ ջուրս ընդ յոլով տեղիս ածեալ մատոյց անյայտ գնացիւք: Եւ ելից ղինու և պահասան գնդիւք ղքաղաքն, և անուանեաց Թէոդուպոլիս, զի յիշատակաւ քաղաքին անմահ լիցի անունն: Եւ 'ի վերայ ջերմն բղխեալ աղբերացն՝ յարկս 'ի վիմատաշ քարանց շինեաց:

Կ. Կրկին առեփարանիչ Լինել Մեսրոպայ, և երբ թարգմանչացն 'ի Բիզանդիոն։

Մեսրոպայ կացեալ յանապատ և 'ի հովանաւոր տեղիսն, որ Շաղգոմքն անուանին, բովանդակեաց զվարդապետութիւնս առաջին առելոց խմբիցն։ Քանզի ոչ որպէս արուեստ ուսուցանէր, այլ իբրեւ զհոգի առաքելաբար աշակերտելոցն տայր։ Յետ որոյ թողեալ վերակացուս յիւրոց աշակերտելոցն 'ի նմին տեղւոջ, զՂեւոնդ և զԵնովք 'ի Սպեր, իսկ 'ի Դերջան՝ զնոցին եպիսկոպոսն զԳնիւթ, և յԵկեղեաց՝ զԴանան, ինքն եկեալ յԱյրարատ, անցանէ յառաջնոյ բնակութեան գաւառն Գողթն։

Քանզի մնացեալ արմատ գաւառնութեան հեթանոսական աղանդոյն՝ 'ի ժամանակի անիշխանութեանն 'ի վեր երեւեալ՝ 'ի բազումս տարածեցաւ։ Զորս բնաբարձ ա-

բարեալ երանելւոյն հանդերձ օգ-
նականութեամբ հօրաբարոյին Գը-
տայ, որդւոյ Շաբիթայ, իշխանի
գաւառին, տեղեկանայր եւս, է-
թէ չարեաց վարդապետացն նախա-
գոյնք 'ի բաղատականն էն կողմանս:
Որ երթեալ զբազում յուղղութիւն
ածէ, և զսակաւս անդարձս յիշ-
խանութիւն հոնաց հալածականս
առնէ: Հաւատալով զվարդապե-
տութիւն կողմանցն այնոցիկ եպիս-
կոպոսի, որում Մուշէն կոչէին,
ինքն գառնայ զԳարդմանայ ձորոնն.
զի և 'ի նմա լուսաւ լինել յընկերաց
նոցին աղանդոյն: Զորս գտեալ,
ածէ և զնոսա 'ի գիտութիւն ճըշ-
մարտութեան, հանդերձ վերսին
ուղղութեամբ իշխանին Գարդմա-
նայ, որում անուն էր Խուրս:
Հրաւիրի անդէն 'ի բդեշխէն գու-
գարացւոց Աշուշայէ՝ յաղագս նո-
ցին գործոյ գալ յիւր իշխանու-
թիւնն 'ի գաւառն Տաշրայ. ուր
երթեալ՝ լաւագոյնս վարդապե-
տեաց, և հաստատագոյնս քան զա-
մենայն աշակերտեալսն. առ որով

ժամանակաւ Արքիլ ոմն էր կա-
ցեալ թագաւոր Վրաց։

Ապա էկեալ և առեալ Մեսրո-
պայ և մեծին Սահակայ զնոյն ա-
շակերտս, զՅովսէփ և մեւս ընկեր
նմին 'ի Կողբ գեղջէ, որում անուն
Եղնիկ կոչիւր, առաքէն 'ի Միջա-
գետս 'ի քաղաքն Եդեսիոյ. զի որ
միանգամ գոցն անդ գիրք սաա-
ցեալ նոցին արբոյ հարցն առաջնոց,
թարգմանեալ 'ի մեր լեզուս բերցէն
փութով. զի յետ այնր 'ի Բիւզան-
դիոն առաքեսցէն 'ինոյն գործ։ Որոց
ընկալեալ զհրապուրական թուղթս
սուտակատպասաց ոմանց, իբր թէ
պատրաստին մեծն Սահակ և Մես-
ropպ զայլս առաքել 'ի Բիւզանդիոն,
վասն որոյ առանց հրամանի վարդա-
պետացն իւրեանց՝ նոյն ընդ նոյն
չուեալ գնացին 'ի Բիւզանդիոն,
նախանձաւոր բարեաց եղեալ ուս-
մանց. և քաջ վարժեալ հելլէն
դպրութեամբ, ձեռնարկեցին 'ի
թարգմանել և 'ի գրել։ Եւ ընդ
նոսա նախանձեալ ընկերաց իւ-
րեանց աշակերտակցաց, որոց ա-

նուանքն Ղեւոնդ և Կորիւն կարդային, յիւրեանց կամաց եղին առնոսա 'ի Բիւզանդիոն։ Ապա եղանեն անդր Յովհան և Արձան, զորս կանխագոյն առաքեալ էր մեծին Սահակայ և Մեսրոպայ. որոց յուլաբար ուղեւորեալ, և ծուլաբար դեղերեալք պատաղեցան 'ի Կեսարիայ։ Որոց ընդունելութիւն ամենեցուն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոսն բիւզանդացւոց։

ԿԱ. Յաղագս ժողովոյն Եփեսոսի, որ վասն ամբարշտին Նեստորի եղեւ։

ԸՆԴ այն ժամանակս եկաց յաթոռ եպիսկոպոսութեան բիւզանդացւոց անարժանաբար յաջորդեալ ամբարիշտն Նեստոր. և հրէա կան իմացմանց հետեւեալ, հայհոյեաց զամենասուրբ կոյսն Մարդածին լինել և ոչ աստուածածին։ Քանզի ծնեալն 'ի նմանէ առեալ սկիզբն, այլ որդի ասէր չնորհօք 'ի Մարիամայ, և այլ որդի 'ի Հօրէ

յառաջ. որպէս զի լինել երկուս որդիս, որով երրորդութիւնն չորրորդութիւն լինի: Վասն որոյ ժողովեալ սրբոց հարցն յԱսիա 'ի ծովահայեացն Եփեսոս գրաւորական վերծանութեամբ, Կեղեստինոս Հռոմայ, Կիւրղոս Աղէքսանդրի, Յոբնալիոս Երուսաղէմի, Յովհաննէս Անտիոքայ, Մեմնոն Եփեսոսի, Պաւղոս Եմեսու, Թէոդոտիոս Անկիւրիայ, և այլ բազում, համանդամայն երկերիւր հարք, նզովեալ զՆեստոր՝ խոստովանեցին մի որդի Աստուծոյ զտէր մեր Յիսուս Քրիստոս, և աստուածածին զամենասուրբ կոյսն Մարիամ:

Եւ վասն զի ոչ հանդիպեցան յայնմ ժողովի մեծն Սահակ և Մեսրոպ, գրեն առ նոսա Կիւրեղ աղէքսանդրացի և Պրոկղոս Կոստանդնուպօլսի և Ակակ Մելտինոյ եպիսկոպոսք, զգուշացուցանելով զնոսա. քանզի լուան, եթէ ոմանք 'ի չարափառացն աշակերտացն առեալ զգիրսն Թէոդորոսի մամուեստացւոյ, զվարդապետին 'Նեստորի

և զաշակերտին Թէոդորի, գնացին յաշխարհն Հայոց։ Ապա եկեալ թարգմանիչքն մեր՝ զորոց անուանքն յիշատակեցաք յառաջագոյն, գտին զմեծն Սահակ և զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ, և մատուցին զԹուղթն և զկանոնս ժողովոյն Եփեսոսի՝ վեց սահմանեալ կանոնաւ գլխով, և զատոյգ օրինակս գրոց։

Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ, դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն, փութանակի հանդերձնոքօք վերըստին յօրինեալ նորոգմամբ։ Բայց քանզի անգէտք էին մերում աշխարհի, 'ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղէքսանդրիայ՝ 'ի լեզու պանծալի, 'ի ատոյգ յօգտանալ ճեմարանին վերաբանութեան։

ԿԲ. Ի Վարդապետն, յինքն և 'ի Ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երինային վարդու։

ՅԱՐԱՀԵՏԵԻՈՂՔ խմաստասիրացն և վերահայեցողք չափաբերապէս մակագրութեանց՝ զատեղս 'ի լուանոյ ասեն ընձուիլ, և զլուսինն արեգակամբ ուռճացեալ, և զբոլոր արեգակինն յարփայինն երկնէ. հիկէն արփւոյն հեղեալ զծագումն յերկաքանչիւր գօտիսն, և զանցնիւր գօտիքն 'ի ձեռն արեգականն ընձուին՝ ըստ դասի, ըստ բերման, ըստ ժամանակի։ Օրինակ իմն, այսպէս և մեք յաւէտախաղաց շընորհիւ ցոլացեալ յիմանալի Ճառագայթից հոգեւոր հարցն, ըստ հարաւային մասանցն պարայածեալք, յեղեսացւոցն հասանէաք քաղաք. թեթեւակի ընդ խորս գիւանին նաւեալ, անցաք 'ի սուրբ տեղիսն երկրպագել, և մնալ վայրկեան 'ի պալատանացւոց հրահանգս։

Եւ այնպիսով ապաստանեմիւ մինաք ՅՆԳԻՊՏՈՍ, յաշխարհն համ-

բաւատեղէ, յանչափից հրաժարեալ
'ի ցրտոյ և 'ի տօթոյ, 'ի հեղեղաց և
յերաշտից, 'ի գերեցկութեն մասին
երկրի զգերն ունելով, ամենազան
պաղուք առլցեալ, և անձեռա-
գործ պարսպեալ նեղոսիւ։ Որ ոչ
պահպանութիւն միայն, այլ և կե-
բակուր նմա բաւական մատուցա-
նել բնաւորեաց, և յինքենէ ա-
ռոգմամբ տէր գոլ՝ պատահել ջո-
րութեան և խոնաւոյ՝ առ երկրին
գործաւորութիւն. և զանեղան 'ի
նմա գլուրածել 'ի գետոյն բերիւք,
հանդիսաւակ կղզւոյ առատագիւտս
առնէ, շուրջ պարունակելով և ընդ
ամենայն հոսելով, տրոհմամբ եր-
կոտասանից վտակաց։ Յորում բա-
րեյարմար մեծն Աղեքսանդրիայ է
շինեալ քաղաք բարեժամանակ 'ի
մէջ ծովուն և ձեռագործ լճի կա-
ռուցեալ. յորոց օգոյն քաղցրա-
խառնութիւն փչեցեալ, որ 'ի լճէն
բերանք արձակին 'ի ծովն, և որք 'ի
ծովէքն մնալոյ՝ որ էլանեն առէպ
առէպ աղոիք օգոյ՝ անօգուտք այն
որ 'ի ծովէն, և թանձունք որ 'ի

լանէն. որոց խառնուածն առողջագոյն զհատատատութիւն կենաց գործէ։

Սորա առաջին այժմ ոչ անցեալ նասի Պղոտենիոս հնգակատար գաղթամբն՝ զանապատ աշխարհ պատելով, այլ Մարկոս աւեատրանական քարոզութեամբն. և ոչ վիշապազին դիւցազնակաց գերեզմանք, այլ սրբոցն վայելչանան վկայարանք։ Եւ ոչ 'ի քսան և հինգն Տուբի՝ տօնի աղճատանք, զբեռնաբարձս պատկելով դրատոս, և պաշտօն տանել լորտուաց, և աթերաց առնել բաշխումն, այլ 'ի մեատատներորդի նորին Տուբի՝ յայտնութեան Տեառն կատարի տօն. զյաղթող նահատակն գովել, և օտարաց առնել ընդունելութիւն և յաղքատս տուրս։ Եւ ոչ զոհել չար դիւին Սարապեայ, այլ զՔրիստոսի զարիւնն մատուցանել պատարագ. և ոչ խնդրել հրաման պատասխանուոյ 'ի սանդարամետապետէն Պրոդէիադայ, այլ ուսանել զջրութիւնս պէս պէս իմաստից 'ի

նոր Պղատոնէն, յինն ասեմ վար-
դապետէ, որում ոչ արժան գտայ ա-
շակերտ. և ոչ անկատար վարժմամբ
յանգեալ արուեստից ինքնացայ։

Նաեւ Յելլադայ կամելով, յԻ-
տալիա բռնութեամբ անկաք հողմոց. և ողջունեալ 'ի հանդիստ սրբոյն Պետրոսի և Պաւղոսի, ոչ բաղում 'ի հռովմայեցւոցն կացեալ քաղաքի, անցանելով ընդ Եղլադայ յԱտտիկէ, սակաւ ինչ մնացաք յԱթէնս։ Եւ 'ի կատարման ձմերայնոյն՝ դէմ եդեալ 'ի Բիւզանդիոն էլանել, փափաքելով մերոց հայրենեացն։

ԿԳ. Յաղագս լոր Դիոնոսիանոսի հայոց 'ի խորհուրդ կրօպէան անչանց։

ԲԱՅՑ Թագաւորն Հայոց Արտաշիր անհուն սկսաւ ողողանել յանառակ ցանկութիւնս, մինչեւ ատելանալ 'ի նմանէ ամենայն նախարարացն։ Որոց եկեալ առ մեծն Սահակ, զբողոք բարձին՝ հրաւիրելով և զնա յօգնականութիւն ին-

քեանց, չարաչաստել առ արքային Պարսից, և 'ի բաց ընկենուլ զԹագաւորն Իւրեանց, և պարսիկ ածել ունող աշխարհիս։ Այլ նա ասէ. Ոչ առ սուտս ունիմ զձեզ. իմ իսկ լուեալէ զայդպիսի աղէտս ամօթալեաց, և բազում անգամ յանդիմանեալ, ուրացաւ։ Եւ արդ պարտէ փոքր մի տանել ԹերուԹեան առնն, մինչեւ զելս իրացն խորհել մարԹասցուք կայսերքն Յունաց Թէոդոսիւ, և ոչ անօրինաց մատնել 'ի ծաղր և յայպանումն։

Եւ նոքա ոչ կամէին, այլ Ջանային համախորհուրդ զնա Իւրեանց առնել։ Այլ նա ասէ. Ինձ քաւ լեցի մատնելգայլոց զիմ մոլորեալոչխար, և ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն, այլ գահավէժ առնել։ Զի Թէ էր հաւատացեալ Թագաւորի առաջի, փուԹայի և ոչ յասպաղէի, յուսալով զկանգնումն գլորելոյն. այլ հեԹանոսաց՝ յառաւել կործանումն, ոչ առնում յանձն, ըստ այնմ՝ Թէ մի մատներ գաղանաց զանձն խոստովանող քեզ։

քանզի դրոշմեալ է աւազանաւն, թէպէտ և անառակ է. պոռնիկ է, այլ քրիստոնեայ է. գիտացեալ է մարմնով, այլ ոչ անհաւատ հոգւով. զեղխ է վարուք, այլ ոչ կրակապաշտ. տկար է 'ի կանայս, այլ ոչ ծառայէ տարերց: Եւ զիարդ լինիցի այդ, փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ գազանի, որոյ առողջութիւնն է մեզ պատուհաս:

Իսկ նախարարացն զմտաւ ածեալ, իբր թէ խաբկանօք ելցէ գործն՝ յապաղելգնոսա, զի զթագաւորն պատրաստեցուսցէ, ասէն ամենեքեան. Վասն զի ոչ համակամեցար մեզ՝ չթագաւորել նմա, արդ և մեք կամեցուք և քեզ չքահանայանալ մեզ: Եւ միաբանեալ ամենեքին, անցին առ արքայն պարսից Վռամ, հանդերձ Սուրմակաւ ոմամբ արծկէացի փառամոլ երիցու, չարախօսեալ զարքայէն իւրեանց զԱրտաշիր, և զմեծէն Սահակայ զՅունովք գրեալ խորհրդո

ԿԴ. Յաղագս Բառնալոյ Ներգործութեան Հայոց ինքեանց կամաւ, և անարգելոյ առնելոյ էպիսկոպոսապետութեան :

ՅԱՅՆԺԱՄ արքային Պարսից Վռամայ կոչեցեալ'ի գուռն զԹագաւորն Հայոց զԱրտաշիր, և զմեծն Սահակ, և խնդրէին 'ի նմանէ ամբաստանել զԱրտաշիր. և նա հրաժարէր բնաւ ասել ինչ ջար կամ բարի : Ապա հրամայէ հայպետապետին Արեաց, որ է սուրէնեան Պահլաւ, զի հաւանեցուցէ զնա իրատուս սիրելութեան՝ որպէս զազգային : Եւ նորա անկեալ'ի բանս հրապուրանաց, ասելով. Զի արիւն իմ ես և հարազատութիւն, զբարին քո խոկալ ասեմ. եթէ միայն այժմ միաբանեացիս ընդ նախարարացդ, մեծարեալ լինիցիս յարքայէն Պարսից, և զԹոռն քո Վարդան կարգեսցէ 'ի վերայ Հայոց զուգահաւասար Թագաւորին և համապատիւ : Այլ նա ոչ առնոյր յանձն, ասելով. Զիարդ վասն անափառութեան և իշխանա-

սիրութեան չարաբանիցեմ զընկեր. կամ ընդէր ձեր այդպիսի յօժարութիւն, ընկենուլ զԱրտաշիր. զի ես զնորա ապստամբութեան ինչ խորհուրդ ոչ գիտեմ. ապա եթէ վասն անառակ ինչ վարուց, զոր նոքա ամբաստանեն, պատուոյ արժանի է 'ի ձէնջ՝ ըստ ձերումն մաքրասէր օրինացդ, թէպէտ ըստ մերումն դատապարտի. բայց սակայն յինէն ոչ ինչ էք լսելոց ամենեւին:

Ապա զայրացեալ Վռամայ, 'ի մեծի հրապարակին արարեալ քընութիւն, և ոչ գնելով ունկն Արտաշրի, յօժարութեամբ լսէր չարախօսացն, առաւել եւս յոյժ աղաղակութեան բանիցն Սուրմակայ: Քանզի զաթոռ եպիսկոպոսապետութեանն էր նմա նախարարացն խոստացեալ, թշնամանասիրացն և ոսոխասիրացն, վասն որոյ ինքնասիրութեամբ պատրաստեաց զլեզուն իւր սուսեր սատակիչ. մինչեւ հրամայեաց Վռամ առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշրէ, և անդէն

արդելու զնա, և զամենայն ինչս ազգի նորա ունել յաղքունիս. նոյն-պէս և զմեծն Սահակ, և զտուն կաթողիկոսական ունել յաղքունիս, և տալ նորա փոխանակ յաթոռ եպիսկոպոսապետութեանն Հայոց զՍուրմակն զայն: Եւ մեծապարգեւ զնախարարսն արձակեալ պարսիկ մարզպանաւ, որում անուն էր Վէհ-մինրաշապուհ:

Բայց Սուրմակայ ոչ աւելի տեւեալքան զմի ամ, 'ի նոցին նախարարացն հալածեցաւ յաթոռոյն. որ ապա զիւրոյ գաւառին զբզնունեաց զեպիսկոպոսութիւնն 'ի Պարսից ալքայէն եդիտ ունել ազգաւ: Իսկ նախարարքն մեր խնդրէին 'ի Վռամայ այլ աթոռակալ. և էառ նոցա զԲրքիշոյ ոմն ասորի: Սա էկեալ վասնթար ընկերակցաք, ածեալ ընդ ինքեան և կանայս անկալուչս, անժուժաբար և աւելորդաք և յափրշտակութեամբ վախճանեցելոցն վիճակաց վարեալ ամս երիս. որում տանել ոչ կարացեալ նախարարացն, դարձեալ ապաչէն զՎռամ փոխել

զնա, և տալ զայլ ոք ըստ կրօնից նոցա. և կխսցն 'ի նոցանէ զմեծն Սահակ խնդրեալ:

ԿԷ. Ուրյախոհ 'ի Պարսից մեծէն Սահայ հանդերձ Շմ-էլա- տնոտա-ղա-:

ՈՐՊԷՍ առացաք, յերկուս բաժանեալ նախարարքն Հայոց, յերկաքանչիւրոցն առաքեցին խնդրել աթոռակալ յարքայէն Պարսից. Վաչէ արծրունեացն էր և Հմայեակ Աշոցայ տէր, զոր ոք և արքայ կամեցի. իսկ Մանէճ ապահունեաց տէր և Սպանդարատ արշարունեաց տէր, զմեծն Սահակ. նա և զօրավարին Յունաց Անատոլեայ 'ի Կարնոյ զՀաւուկ 'ի Կուկայաւճոյ. զի եթէ ոչ իցէ նմա հաճոյ ունել յիւրում բաժնին, տացէ զնա մասին Յունաց: Յղեցին և բազմութիւնք եպիսկոպոսացն հանդերձ երանելւաւն Մեսրոպաւ և բովանդակ ուխտիւ եկեղեցւոյն մաղթանս ըզքահանայն Տիրուկ, զորդի Մով-

սիական 'ի Զարիշատէ Վանանդայ։ Վանորոյ հաւանեալ Ղամայ, զեր կաքանչիւրոցն կատարեաց զինդիր, տուեալ յաթոռ եպիսկոպոսապետութեանն զայլ ոմն Ասորի, Շմուէլ անուն, զի լիցի ընդդիմակիր մեծին Սահակայ և հակառակաթոռ. և գործ նմա զատուցեալ՝ զընկերել մարզպանին, կալ 'ի վերայ բաշխիչ հարկաց խնդրեցելոց և գատաստանաց և այլ աշխարհական կարգաց։ Եւ զմեծն Սահակ արձակեալ, թողու 'ի նա սակաւ գեղս 'ի նորին տանէ, զի նստցի յինքեան, միայն իշխանութիւն ունելով վարդապետութեան սովորական կրօնիցն, և ձեռնադրութեան զայնոցիկ՝ զորոց և Շմուէլն յանձն առնուցու։

Բայց յարձակելն յանդիման իւր արարեալ 'ի բազմակոյտ առենին, ասէ. Երդմնեցուցանեմ զքեզ 'ի քոյին հաւատ՝ միամիտ կալ 'ի ծառայութեան մերում, և ոչ խորհել իրս ապստամբութեան՝ պատրել 'ի մոլար հաւատակցութիւնն Յունաց, և լինել կորստեան պատճառ Հայոց

աշխարհին 'ի մէջ, փոխեալ զբարե-
բար անուն մեր 'ի չարաբար։ Յայն-
ժամ կանգուն կացեալ մեծին Սա-
հակայ, պարկեշտ և նազելի զինքն
կազմեալ 'ի բեմբասացութեան ձե-
ւի, համեստ հայեցուածովք, հա-
մեստագոյն եւս ձայնիւ սկսաւ ճա-
ռել զերախտիս ծառայութեանն,
և զապերախտան 'ի նոցանէ լինել.
ընդ նմին և զկեղծաւոր քաղցրա-
բանութիւնն նոցա յանդիմանելով,
և զդառնութիւն խորհրդոց և ըղ-
գործս չարաչարս. յարելով 'ի նո-
սին զընդդիմաբանել անմիտ հայ-
հոյութեանցն արտաճառեցելոց,
զոր ասաց մոլար հաւատակցու-
թիւն. և զնոցայն խայտառակելով
պաշտամունս, կատարեաց 'ի հրա-
շալի ատուածաբանութիւն ըստ
հանդուրժելոյ հեթանոսական լսե-
լեաց, և ոչ զբովանդակ բանին ըղ-
պայծառութիւն անհաւատիցն ար-
կանել առաջի յայտանումն, որպէս
զմարգարիտ 'ի խոզից կոխումն. այլ
այնչափ կայծակնաճաճանչեցու-
ցեալ, որով զգազաղացան մոգուցն

լեզուք. և հիացեալ պակեաւ ինքնին Թագաւորն, և ամենայն բազմութիւն հրապարակին անձնագեղացն Պարսից՝ յակՃիռս կալով ականջել. մինչեւ հրամայեաց Վռամ արծաթ բազում տալ նմա՝ իբր քաջաբանի և ուժգնասրտի առն համարձակախօսողի առաջի այնքանոյ Թագաւորի։

Այլ նորա ոչ առեալ, ասէ ցհամ ազգին իւր ցՍուրէնն Պահլաւ. Արծաթ նորա նմա լիցի. բայց դու հաւանեցուսցես զնա՝ տալ ինձ զերկուս զայս միայն. զգահ նախարարացն Հայոց, որպէս կարգեալ է յԱրտաշրէ և վարեցան մինչեւ ցայժմ, նորին օրինակաւ հրամայեսցէ և առ յաստոյ, զի մարդպանք պարսիկք մի կարասցեն ծանուցումն տակս այնր առնելով ինչ գերազանցօրէն փոփոխել ըստ կամաց իւրեանց։ Եւ մեւս, զի դարձուսցէ զտուն ազգականին իմոյ և քո, ըստ մանկանն Դաղաւոնի զորդւոյն Հրահատոյ, թէ և ոչ յիւրում էառեալ, զարշակունին յաչաղելով անուն,

գէթ 'ի կարգ ընկէցեալ՝ ընդ այլ նախարարսն Թուէացի, յորում առլաջ ինքն կամէցի, որպէս համազն նորա կամարարքանն և կամ զամաուենին Թափեալ 'ի հարցն պատուոյ և յառաջամասին գահէ 'ի ստորնակային, և կամ գրեթէ որպէս զարքունի գործակալութիւն նմա հաւատացէ և նորուն զաւակաց համանմանակի ընդանուԹեամբ, մինչեւ Աստուած քաղցրացցի դարձուցանել 'ի կարգ հայրենի ընդ ձեռն որոյ և է Թագաւորի։ Արդ ջանացիս դու Թովէլով զօրէն համարակեր Թովչի։

Այնմ լսող եղեալ Վռամայ, հրամայէ զամենայն կատարել. և դարձեալ հատատեալով զԹոռն նորա զՎարդան ատրատելատն 'ի տէրութիւն իւրոյ ազգին մամիկոնեանց, արձակէ 'ի Հայս։

Բայց Թէ ասիցէ ոք, պարտ է մեզ զատացեալն մեծին Սահակայ 'ի Պարսից հրապարակախօսութեանն գրել, գիտացէ՝ զի ոչ յումեքէ 'ի լսելիս մեր հասեալ է բովանդակն

ՀՀմարտութեամբ, և ոչ մեք 'ի պատ-
մութեանս հիւսել հաւանիմք։ Զի
և ես այր եմ ծերացեալ և հիւան-
դոտ և անպարապ 'ի թարգմանու-
թեանց, և զերագոյն միայն խոկա-
ցի, ոչ ինչ մաքրագունից պարա-
պեալ բանից, զի և քո կամքդ կա-
տարեսցին, և ես Հոլոպրեցայց 'ի
քոց հարկեցուցանող բանից և ա-
ղաչանաց. մարդ զքեզ վարկանե-
լով կարեկցութեամբ մեզ հաւասա-
րեալ, և ոչ, որպէս քերթողքն ա-
սեն, մերձաւորակք և մտասերք
գոլ և նոյնասերմանք աստուածոց
իշխանք։

ԿԶ. Գործ Շմուէլի անարգան հոմ-
իշխանին Մեծին Սահակայ։

ԵԿԵԱՆ Շմուէլի, կալաւ զա-
թոռ եպիսկոպոսապետութեանն,
հետեւեալ վարուցն Բրքիշոյի, և
առաւել ևս ագահութեանն մա-
սամբ. զի նա զվախճանեալ եպիս-
կոպոսացն յափշտակեաց զվիճակ,
այլ սա և զկենդանեացն. քանզի
փոխանորդ մեռելոցն ոչ տայ թոյլ

մեծին Սահակայ ձեռնադրել, և զկենդանեացն դոյզն ինչ պատճառս գտեալ խափանման հարկաց արքունի, հալածական առնէր, յինքն կորզելով զամենեցուն տունս։ Վասն որոյ առեցեալ 'ի բնաւ եպիսկոպոսացն՝ արհամարհեալ լինէր. զի թէ բիւրապատիկ ջարիս 'ի նմանէ կրէին, ոչ երբէք տեսանէին զնա, բայց 'ի Սուրմակայն յայնմանէ, զորոյ և մեծացոյց իսկ զվիճակն. արքունի հրամանաւ հանեալ 'ի բազմաց՝ նմա հաւասայր։ Ընդ որ նախանձեալ և այլ եպիսկոպոսաց՝ ժպրհեցան զնոյն առնել, խնդրելով 'ի Պարսից արքայէն օգնականութեամբ իւրաքանչիւր իշխանաց։

Այլ մեծն Սահակ ոչ ինչ կասեաց զհոգեւոր կաթնն դիւեցուցանել մանկանց եկեղեցւոյ հանդերձ Մեսրոպաւ, զոր թողեալ խարըսխեաց յեկեղեցւոջն կաթուղիկէ, որ 'ի Վաղարշապատ քաղաքի, ինքն կալով 'ի Բագրեւանդ գաւառի, 'ի տեղւոջն՝ ուր ծագեաց յերկնուստ լոյսն 'ի մկրտել սրբոյն Գրիգորի

զՏրդատ արքայ և զբոլոր Հայս։
Բայց Շմուէլ կէցեալ ամս հինգ, մեռանի 'ի մերում աշխարհիս։ Յայնժամ ժողովեալ 'ի միասին ամենայն նախարարացն, ջոգան առ մեծն Սահակ, և զմեղանս յանձն առեալ՝ աղաչէին զնա դարձեալ ունել զաթոռն։ խոստանային 'ի Պարսից արքայէն հաստատել զնա, մուրհակ ամենեցուն կնքեալ՝ ազգաւ տալ թոռանց նորա զնոյն իշխանութիւն։ Այլ նա ոչ առնոյր յանձն։ և 'ի բազում թախանձելոյ նոցա հարկաւորեալ՝ պատմեաց զտեսիլն, զոր յառաջ քան զբազում ժամանակս երեւութացաւ նմա 'ի քուն ապագայիցն յայտնութիւնք։ Զոր լուեալ նախարարացն, և գիտացեալ՝ թէ յաստուածային հրամանէ դադարեաց յաղէ նորա քահանայապետութիւնն, յարտասուս հարեալ, աւաղելով զինքեանս՝ ըստ աւետարանին բանի, թէ հարկ է դալ գայթակղութեանն, բայց վայ այնոցիկ՝ ընդ որս ձեռն գայցէ գայթակղութիւնն, թոյլ եառն նմա։

ԿԷ. ՓՈԽՈՒՄ ՅԱՇԽԱՐՀԷ ՄԵԾԻՆ ՍԱՀԱԿԱՅ Ի ՄԷՍՐՈՊԱՅ ԵՐԱՆԵԼՈՅ։

ԶՔՍԱՆ և զմի ամ Թագաւորեալ Պարսից Վռամ երկրորդ՝ մեռանի, Թողլով զտէրութիւնն որդւոյ իւրում Յազկերտի։ Որոյ մոռացեալ զհաշտութիւնն, իսկ և իսկ ընդ Թագաւորեալն գիմէ 'ի վերայ զօրացն Յունաց, որք առ Մծբին. հրամայելով գնդին Արտաստականի 'ի մեր աշխարհս եկանել. որք եկեալ անկարդապէս բանակեցան հուպ առ բագնացն աւանի։

Յայնժամ մեծին Սահակայ հասեալ հիւանդութիւն մահու, և առեալաշակերտացն՝ տարան 'ի գեւղն որ կոչի Բլուր. որպէս Թէ 'ի վայր և ընդանեգոյն և զերծ տեղի մատուցեալ 'ի զօրացն Պարսից կոտորողաց զնոսա։ Ուր ե հաս վախճան, կեցեալ եպիսկոպոսապետութեամբն ամս յիսուն և մի. սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ Խոսրովայ Հայոց արքայի, մինչեւ ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի եղելոյ Պարսից Թա-

գաւորի, յելս ամենայն Նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեանն։ Որ մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակեթող. պատուեաց զպատկերն, պատկառեաց 'ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանսն, և այսքան կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակասութիւն իրիք մասն 'ի ծերութենէն եղանիլ, և ոչ յախտից առընդունել։ Զորմէ պարտ էր մեզ հրաշափառագունիւ անցանելբանիւ ըստ արժանի հօրն դրուատից, այլ զի մի յերկարութիւն ճառիցս լիցի ձանձրութիւն ընթերցողաց, այլում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողցուք՝ արտաքոյ այսց գրոց, ուր սկզբանն հրաւիրեցաք առնել թելադրութիւն։

Բայց զպատուական մարմին նորա բարձեալ սարկաւագապետին նորին Երեմիայի՝ հանդերձ աշակերտակցօք և տիկնաւն մամիկոնէնից, նորին նուաւ, որում անուն էր Դաւրիկ, կին Վարդանայ ստրատելատի, տարեալ հանդուցին յիւրեանց գեւղն յԱշտիշատ, որ է 'ի

գաւառին Տարօն։ Եւ ցրուեալ ա-
շակերտաց նորա կրօնաւորաց սպու-
դէից 'ի գաւառս իւրաքանչիւր, վա-
նորայս շինեցին՝ ժողովեալ եղբարս։

Եւ զկնի վեց ամսոց անցելոյ, յե-
ռեքսասանն Մեհեկանի, և երա-
նելին Մեսրոպ փոխեցաւ յաշխարհէ
'ի Վաղարշապատ քաղաքի. գե-
ղեցեալ քան զամենայն, որք
զայնու ժամանակաւ էին առաքի-
նիք։ Քանզի ամբարտաւանութիւն
և մարդահաճութիւն 'ի նորա վարս
տեղի գտանել երբէք ոչ կարացին.
այլ հեզ և լաւակամ և բարեխոր-
հուրդ գոլով, և երկնայնոցն զար-
դարեալ սովորութեամբք զինքն բո-
լորից ցուցանէր։ Վասն զի դոյր
տեսլեամբ հրեշտակական, մտօք
ծննդական, բանիւք պայծառ, գոր-
ծովք ժուժկալ, մարմնով արտա-
փայլեալ, սրտաբուք անձառ, խոր-
հրդակցութեամբ մեծ, հաւատով
ուղիղ, յուսով համբերող, սիրով
անկեղծաւոր, ուսուցանելով ան-
ձանձրոյթ։

Այլ վասն զի զբոլոր ուղղու-

թիւնս նորա ոչ բաւական եմ ա-
սել, 'ի հանդիսաս նորա նշխարացն
դարձուցից զբանս։ Որպէս լուայ 'ի
բազմաց և 'ի հաւատարիմ արանց,
եթէ եկաց լոյս շողապէս ընդ աղօս
նշան խաչի 'ի վերայ տանն, ուր ե-
րանելին զհոգին աւանդեաց. ոչ
փոյթ ընդ փոյթ լեալ՝ էանց ծա-
գումն, կամ սակաւուց տեսանե-
լի, այլ ամենայն բազմութեանն,
մինչ յոլովից մկրտել յանհաւա-
տից։ Յայնժամ լեալ աղմուկ շփո-
թի յամբոխութեանն, բաժանեալ
յերիս գունդս, վասն հանգուցա-
նելոյն զպարկեշան զայն մարմին և
նախ քան զմահն կրթեալ 'ի մեռե-
լութիւն։ Կէսքն ասէին տանել 'ի
բնագաւառն իւր 'ի Տարօն, և ո-
մանք 'ի նախ աշակերտեալն Գողթն,
և այլքն անդէն 'ի Վաղարշապատ
քաղաքի 'ի սրբոցն դիրս։ Բայց
յաղթեալ քաջն Վահան ամատու-
նի, զի էր զօրաւոր հաւատովք և
Ճոխութեամբ մարմնաւորաւ. վասն
զի 'ի ժամանակին յայնմիկ 'ի նա
էր հաւատացեալ Պարսից զհազա-

բատեառութիւն Հայոց աշխարհիս. որոյ քարձեալ՝ տարաւ զնա արժանի յուղարկմամբ յիւր գեւղն Օշական։ Եւ նոյն տեսիլ լուսեղէն խաչին 'ի վերայ երթեալ դադարացն՝ յանդիման ամենայն ժողովրդեանն, մինչեւ 'ի հանգիստ զնա փոխեցին Վահան և Թաթիկ նորին արբանեակք. և ապա նշանն անհրեւոյթ լինէր։ Իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն եռեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտ Յովսէփ քահանայ 'ի Վայոց ձորոյ, 'ի Խոզոցիմ գեղջէ։

ԿԸ. ՈՂԲԱՄ վասն Բառնալոյ Ռաֆաելեանն Հայոց յաղթեն արշակունեաց, և Եպիսկոպոսապետութեանն 'ի Պանէ սրբոյն Գրիգորի։

ՈՂԲԱՄ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր և քահանայ, խորհրդական և ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն, դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն։

Ողորմիմ քեզ, եկեղեցի հայաստանեայց, խրթնացեալ 'ի բարեզարդութենէ բեմքին, 'ի քաջէն զրկեալ հովուէ և հովուակցէ։ Ոչ եւս տեսանեմ զբանաւոր քո հօտ 'ի վայրի դալարուոջ և առ ջուրս հանգստեան տածեալս, և ոչ 'ի փարախս հաւաքեալ՝ զգուշանալով

'ի գայլոց, այլ յլուեալս անապա-
տաց և գահավիժութեանց:

Երանի՜ առաջնոյ և երկրորդի փո-
փոխմանն. զի էր ինչ ժամանակ հե-
ռանալոյ փեսային և փեսաւիրին,
և հարանդ համբերեցեր՝ ողջախո-
հութեամբ զամուսնութիւն պահե-
լով, որպէս ոմն նախ քան զմեզ ի-
մաստասիրեաց: Դարձեալ մինչ էր-
բեմն ոմն սիղեխաբար յանդգնեալ
յարձակեցաւ յանարատ առագաս-
տիդ, և հարանդ ոչ աղտեղացար.
թէպէտ և բռնութիւնն զփեսայն 'ի
բաց վարեաց, որդւոց բարձրացելոց
անարգելով զծնողն, համայն և խոր-
թոցն ըստ արժանեացն զօտար հայրն
և զեկամուտ յօրայն: Սակայն դու և
ոչ յայնմ զքեզ ամայի բոլորիցն ցու-
ցեր, զանդրէն քոյոյն յուսալով
դարձ հովուակցաւն. ոչ որպէս տայ-
գերբ, այլ իբր նոյնազաւակ զու-
գահարբ զմանկունսն փայփայեցեր:
Իսկ յերրորդ հեռանալս ոչ է ակն-
կալութիւն դարձի, լուծեալ 'ի մար-
մնոյս ընկերաւն և գործակցաւն:

Ընդ Քրիստոսի լաւ է նոցա բնա-

կել, և յաբրահամեանն հանդչել դոգս, և զհրեշտակացն տեսանել պարաւորութիւնս: Բայց անհոգոյ դու այրութեամբդ, և եղկելութիւնք մեք՝ որ զկիցաք 'ի հայրենի վերակացութեանէն: Զի ոչ որպէս 'ի հնումն ժողովուրդն այն, այլ առաւել մեր է թշուառութիւն: Վասն զի Մովսէս բարձեալ լինի, և Յեսու ոչ յաջորդէ՝ առաջնորդել յերկիրն աւետեաց: Ռոբովամ մերժեցաւ յիւրմէ ժողովրդենէն, և փոխանորդեաց որդին Նաբատայ. և զայրն Աստուծոյ ծախեաց ոչ առեւծ, այլ կատարումն ժամանակի: Եղիայ համբարձաւ, և Եղիսէէ ոչ մնաց կրկին հոգւով օծանել զՅեհու. այլ և Ազայէլ հրաւիրեցաւ 'ի կոտորել զԻսրայէլ: Ի գերութիւն վարեցաւ Սեդեկիայ, և Զօրաբաբէլ ոչ ուրեք է, որ նորոգէ զպատուութիւնն: Անախոքոս բռնադատէ թողուլ զօրէնս հայրենիս, և Մատաթիայ ոչ ընդդիմակայէ. պատերազմ զմեզ շուրջ պատեաց, և Մակաբէ ոչփրկէ: Այժմ մարտք 'իներ

քուստ և արհաւիրք արտաքուստ. արհաւիրք 'ի հեթանոսաց և մարտք 'ի հերձուածողաց, և խորհրդա-կանն չէ 'ի միջի՝ որ խրատէր և յարմարէր 'ի պատերազմ:

Ուստ զրկանացն, աւաղ թշուառական պատմութեանս. որպէս զսխատս հանդուրժելոյ բերել, զնորդ զմիտս իմ և զլեզուս պնդեցեալ, և հատուցեալ զբանս հարցն՝ փոխանակ ծննդեանն և անդեանն: Քանզի ծնան զիս իւրեանց վարդապետութեամբն և անուցին, առ այլս առաքելով ածեցուցանել: Եւ մինչ նոքա զմերն յուսայնն դարձ, և պատուաստիրել իմով ամենիմաստ աղուեսաբար և կատարելագոյն յարմարութեամբս, համայն և մեք փութապէս դիմեալք 'ի Բիւզանդիոյ, յուսայաք հարանեաց պարել՝ անվեհեր երագութեամբ կրթեալք, և առագաստի ասել երգս, որդ փոխանակ խրախճանութեանն 'ի վերայ գերեզմանի ողբս ասելով՝ ողորմելի հառաչեմ. ուր և ոչ տեսութեանն ժամանեցի աչաց նոցա

կափուցմանց, և լսել զվերջին բարբառն և զօրհնութիւն։

Այսպիսեաւ անձկաւ հեղձամղձուկ եղեալ՝ վասնզիմ կարօտութեամբ մերոյ հօրն։ Ո՞ւր է քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիղս և ահաւորութիւն առ թեւրս, ո՞ւր զուարթ շրթանցն ժպտումն առ բարի աշակերտացն հանդիպումն, ո՞ւր խնդամիտ սիրտն ընդունող արբանեկաց, ո՞ւր երկայն ճանապարհաց յոյս հեշտացուցիչ, աշխատութեանցն հանգուցօղ։ Կորեաւ ժողովրդն, թագաւնաւահանգիստն, ելիք օգնականն, լռեաց ձայնն յորդորեցուցիչ։

Ո՞վ այսուհետեւ զմերս յարդեսցէ զուսումն, ո՞վ ուրախասցի ընդառաջադիմութիւն աշակերտիս, ո՞վ զհայրականն բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորդւոյս։ Ո՞վ կարկեսցէ ըղձանդգնութիւնն ընդդէմ առողջ վարդապետութեանն հակառակ յարուցելոցն, որք ամենայն բանիւք քակտեալք և քայքայեալք՝ յոլով

փոփոխեն վարդապետս և բազում դիրս, որպէս ասաց ոմն 'ի հարց. առ ամենայն բան նմանապէս գժուարին, և չար օրինակ գրեն զայն անձանց՝ զծիծաղելն զմեք և զարհամարհելն իբրեւ զանհաստատանովք, և որ ոչ ինչ սլխատանացու ունիցի արուեստս: Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ ասատելով, և զմեզ սփոփեսցէ գովելով, և չափ դնէ բանի և լռութեան:

Զմտաւ զայսոսիկ ածելով, հառաջումն յիս 'ի նեղքս ընթանայ և արտօսր, և կամեցուցանէ բարբառել բան տխրական և սգաւոր: Եւ ոչ գիտեմ, եթէ զիարդ յարմարեցից զողբերգութիւնս, և կամ զո՞վ արտասուեցից: Զհէքն իմ մանուկ և թագաւոր, զխորհրդակցութեամբ վատթար՝ ազգաւ 'ի բաց ընկեցիկն, և նախ քան զմահ մեռելութիւն անփառութեամբ՝ յաթոռոցն 'ի վայր կործանեալ, եթէ զիս ինքն, զի վերացաւ 'ի գլխոյս փարթամացուցիչ պսակն գեղեցիկ և կենցաղագուտ: Զհայրն իմ և զքահանայա-

պէտ, զմիտան վաեմացեալս, որ էր թայր տանէր կատարեալ բան, որով վարէրն և յարմարէր, և զերեանակս 'ի բուռն առեալ՝ ուղղէր զդէմն, և սանձահարէր զլեզուս օտարաձայնս, եթէ զնս թափուր 'ի Հոգւոյն մնացեալս խանդից և ցանկանեալ: Զծնողն իմ աղբեր վարդապետական, զարդարութեանն առոգող, և հեղեղաւ զամբարշտութիւն արտասահմանելով, եթէ զնս երաշտացեալ և թարշամեալ պատքութեամբ արբուցմանց խրատու: Զաշխարհիս էկեալ աղէտս, եթէ զապագայիցն ակնկալութիւն:

Ո՞վ մեզ յայտնիկ Ճառակցէ հաւասարելով տրտմութեանս, և օգնեսցէ ախտակցելով ասիցս, կամ յարձանս փորագրել: Զարթիր, Երեմիա, զարթիր և ողբա հանդերձ մարգարէութեամբ որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս եմք. գուշակեա զյառնել հովուաց ոգիտաց, որպէս երբեմն Զաքարիաս յԽորայեղին:

Վարդապետք տխմարք և ընդ-
ինքնահաճք, անձամբ առեալ պա-
տիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ,
արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով,
ոսկեսէրք, նախանձոտք, թողեալ
զհեզութիւն, յորում Աստուած
բնակէ, և գայլք եղեալ՝ զխրատանց
հօտս գիշատելով։

Կրօնաւորք կեղծաւորք, անձնա-
ցոյցք, անապիառք, պատուասէրք
քան թէ աստուածասէրք։

Վիճակաւորք հպարտք, դատա-
սայք, զրաբանք, ծոյլք, ատելիք
արուեստից և վարդապետական բա-
նից, սիրողք վաճառաց և կատակ-
երգութեանց։

Աշակերտք հեղգ առ ուսումն և
փոյթ առ 'ի վարդապետել, որք նախ
քան զտեսութիւնն աստուածա-
բանք։

Ժողովրդականք վէսք, ստահակք,
մեծախօսք, անվաստակք, այրե-
ցողք, վնասակարք, փախչողք 'ի
ժառանգութենէ։

Զօրականք անիրաւք, ստապարծք,
զինասէացք, պղերգք, հեշտասէրք,

անժուժկալք, կողոպտիչք, համբարձիք աւազակաց։

Իշխանք ապստամբք, գողոսկիցք գողոց, կծելիք, կծծիք, ժլատք, ագահք, յափշտակողք, աշխարհաւերիք, աղաւեղասէրք, ծառայիցն համամիտք։

Դատաւորք ամարդիք, սուտք, խաբողք, կաշառառուք, անընտրողք իրաւանց, անհաստատք, հակառակողք։ Եւ բարձումն առ հասարակ յամենեցունց սիրոյ և ամենեցուն։

Եւ ապա յանդիմանութիւն այսոցիկ զինչ, եթէ ոչ անտես առնել Աստուծոյ, և տարերց փոփոխել զբնութիւն։ Գարունն երաշտացեալ, ամառն անձրեւայոյզ, աշունն ձմեռնացեալ, ձմեռն սաստկասառոյց, մրրկալից, յերկարացեալ. հողմք բքարարք, խորշակաբերք, ախտահաւակք. ամպք հրընկէցք, կարկտածուք. անձրեւք անժամանակք և անպիտանք. օդք դառնաշունչք, եղեմնարկուք. ջրոցն առաւելուն անօգուտ և նուա-

զէլն անհնարաւոր. Երկրի անբերրութիւնք պտղոց և անաճելութիւնք կենդանեաց, այլ և սատանմունք և դղրդմունք։ Եւ ի վերայ այսր ամենայնի խառնութիւն յամենայն կողմանց, ըստ այնմ՝ թէ չիք խաղաղութիւն ամբարշտաց։

Զի թագաւորքք սիրեալք խիստք և չարաչարք, բեռինս բառնալով ծանուցեալս և դժուարակիրս, հրամանս տալով անտանելիս. վերակացուք անհարթարարք, անողորմք. սիրելիք դաւաճանեալք և թշնամիք զօրացեալք. հաւատ վաճառեալ ընդ սնոտի կենցաղոյս։ Հէնք էկեալ անհատք և յոլովից կողմանց, գերփուման տանց և յափշտակութիւն ստացուածոց, կապումն գըլխաւորաց և բանտք յայտնեաց, յօտարութիւն վտարումն ազատաց և անթիւ նեղութիւնք ռամկաց, առումն քաղաքաց և քանդումն ամրոցաց, աւերումն աւանաց և հըրդեհումն շինուածոց, սովք անբաւք և հիւանդութիւնք և մահք բազմօրինակք. ստուածպաշտու-

թիւն մոռացեալ. և ակնկալութիւն գեհենի։

Յորմէ պահեցէ զմեզ Քրիստոս Աստուած, և զամենեսեան՝ ոյք երկրպագեն նմա ճշմարտութեամբ. և նմա փառք յամենայն եղակացուցս. ամէն։

ԱՒԱՐՏԵՑԱՆ ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ ՑԱՆԿ ԵԼԱՆԵԼՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ։

Rizzard. dis. 556 *Bozza inci.*

ԱՅԼ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

Է. Ջ. ՏՈՂ.

13. 6. Բաղրատունոյ խնդրեալ:
22. 22. Համարեալ 'ի փառս:
25. 13. զառ 'ի դիցն ոմանց:
35. 1. * Քայաղ:
— 7. * Արամաւսեայ կամ * Արամնսեայ:
— 15. * Կեփաղիմն կամ * Կեփաղիմոս:
38. 14. և ջրհեղեղին յիշատակաւ:
45. 19. 'ի մէնջ ածել:
46. 3. զԱրշակ մեծ ... ապստամբեալ ասեն ... և թագաւորել:
55. 15. քաջընթաց խակ:
57. 5. հրոսակի ամբոխոյն Բէլայ ցիր և յանդուգն արձակմամբ:
— 8. խակ Բէլ հեզ և հանդարտ:
61. 14. * որ գնուն:
62. 8. և առ սատրոսով:
— 14. Երիտասարդուհիք:

71. 5. յերզերումն հանել :
74. 1. * Պռոտոն Արմենեան :
75. 25. 'ի գուսնականէն կամ 'ի գուսականէն :
77. 22. և յոչ հաւանել կամ և 'ի չհաւանելոյ :
85. 11. և որ ինչ 'ի նմա. Ինչ 'ի նմայն է :
— 15. զորոյ պարսպեալ :
— 17. և գԺոխելանիս :
87. 21. բարեկամաց և հոմանեաց :
96: 8. Վատաակար. այսոդէս ամենայն օրինակք :
101. 22. 'ի մերոյ թագաւորութենէն կամ 'ի մերոց թագաւորաց :
108. 12. գիւցազանցեալք :
124. 5. պաշտատականս կամ պաշտատկանս տայ :
125. 2. Սաթինիկ :
— 3. զարտախոյր խաւարան և զոչ հաւարծի :
— 22. ըստ իմ քաջաց քաջքն կամ ըստ քաջացն ազգք քաջք :
126. 25. և աչկոյքն :
129. 17. պատկանաւոր, վասն ոչ :

135. 15. չարչարանս, որ ոչ։
151. 16. և որ ինչ որք յետ։
154. 14. * Արշական, որ. Ռէրէ-
Արշակ այն որ։
157. 21. և առ ընթեր։
162. 7. ինչանէ 'ի տեղիս։
166. 20. շաղկապեալ կամ նշկահեալ։
175. 1. արգւոյ պատիւ լինել կամ
արգւոյ և պատիւ ունել։
181. 10. * զԿիւրոս. Ե գնի։
— 21. * լիբէացւոց. յաճախ։
182. 9. վերականգնելով նախնի։
183. 19. * զԿիւրոս։
— 22. * Կրիդմեայ։
184. 18. * զլիբէական։
185. 22. * Թեւտիայ հարցուն։
188. 7. * Արշականայ։
189. 3. և զԱթանաս։
190. 12. յԱնին Թորդան։
191. 21. * 'ի Մեսաղայ։
194. 16. * Կարսիոս, Ե գնի։
195. 5. ոչ զիւրն կարծելով քեռ-
որդի։
196. 2. Արշեղն։
— 8. զԱրշեղ. Ե գնի։
199. 15. տակառապետն զՆերով

գէս արտաքս քան զպա-
րիսան ելանել պատրէր։

200. 19. * Բենդիգեայ կամ * Բենդե-
գեայ։

201. 2. * զԲենդեգիոս կամ * զԸ-
Բենդիգոս. և զնոսի։

— 18. զՇըմշատ. և զնոսի։

— 23. * զՍովխիայ։

203. 6. Թագաւորացն քան զայլս։

205. 17. Եղբայր Տիգրանայ։

206. 2. Արշաւիր մանկան ազգայոյ
յոյժ փոքրիկան։

207. 24. ընդէր պարտիմք։

233. 21. յիրեարս գալ։

239. 21. յորս, նեաղ ուրուք։

240. 17. * զՄոնոտոմբոս կամ * զՄե-
նոտորոս։

245. 15. զորով պատառեալ։

248. 22. գարուանդաք։

249. 14. աշալրջոցն։

252. 22. յորդագոյն ասայր։

253. 1. և որչափ շատ ասայր, շատ
եւս առելի լինէր։

— 23. աւելի քան զերեքհարիւր։

255. 14. 'Ի վերայ այսպիսեաց։

256. 11. զառելի Ճամբարուն։

258. 15. արդեալ ունել։
260. 17. արքայի, հանդերձ յաւել-
մամբ իւրոց գանձուցն։
261. 8. Ուղիւմոզ կամ Ոզիւմոզ
քուրմ Հանէոյ։
267. 2. բայց զվերջինսն։
269. 18. ոգւոցն, և գերեզեցկութեան։
270. 21. Արտուազ կամ Արդոզ կոչի։
281. 18. Ճանապարհորդութիւնք
այսինքն կամուրջք, և ոչ
գործիք ձկնորսաց։
285. 3. գուսանք կամ գուսանս։
288. 14. յոր խնդրէր հեծանել։
290. 24. պչրանօք և պռաստելաւ կամ
պռաստելով։
291. 8. փեսաեալ զհոպպիս։
— 20. էր, գէր ձեռամբ։
292. 2. տրփաւորի։
— 10. * զՊենոպայ կամ * զնպե-
նեսպայ կամ * զԸնպէնէով-
պայ։
295. 7. զձենից կամ զձենաց։
— 13. անհաւասարութիւնն կամ
անհաւասարութիւնն։
— 21. գիտեմք զվերջինսն։
296. 12. ցուցանել կամ անցուցանել։

298. 17. կացուցանեն :
300. 6. պաշտաման որ. գոնէ պաշտաման ոչ որ :
304. 16. Արշակ :
— 18. Արտաշէզ :
315. 10. հանեն զնա առ եղերբ :
317. 3. * Պերմելիանեայ :
— 6. * Պերմելիանոս :
318. 10. հակամիտեալ :
324. 9. * պեղեսէպոնդացւոց :
— 10. * Հեփեստեայ :
— 14. * զԿրաւսոս :
334. 19. զԵղանանն կամ զԵղանն ... կանգնեաց զնիզակն 'ի վերայ յոքնական :
342. 13. Թաւալգլոր կամ Թաւագլոր :
— 21. Ճահ գիսեցուցանէ :
— 23. և յանԹ աչակոզմանն :
353. 17. * ԳլաԹիւռայ կամ * Գլափիւլայ :
355. 19. զգազանամարան խալալ կացն :
364. 6. գտեալ զնա :
367. 15. զսրտախատուԹիւն :
371. 22. ասեմ՝ ԹէՀ և ոչք :

381. — Յորինակին, որ դեպն ունի
ղպանկս գլխոց, 'ի կոպարա-
ծին կայ և գլուխ այսպիսի.
Տաղք չափաւ յինք և 'ի
Սահակ բագրատունի. որ
ցայժմ ոչ ուրեք երևին:
385. 10. ուր էին կամ էր:
395. 15. բաւական վարկուցեալ:
— 20. մակեդոնացին Աղեքսանդր:
397. 26. 'ի վիմամուտ:
399. 5. ուր ինքնակամ:
400. 19. Ճակատ կամ Ճակատս տու-
եալ:
411. 15. Մաղդեզաց. և այլ ուր:
413. 15. պատանդս առեալ:
415. 14. վտաւանիքս կամ վատանիքս:
418. 6. յատուկ առանձնակաց:
419. 7. վասն յաշտակալութեան:
420. 4. և 'ի հանդարտութիւն ըզ-
թագաւորն շրջեալ:
424. 11. զպուրակացիսր ջրով:
428. 22. գումար կամ գումարտակ:
435. 21. * գնդացն կամ գոթացն:
445. 8. 'ի Լուզ քաղաքի:
446. 8. * Կանձիանու կամ * Ընձի-
անձու:

447. 11. Թողեաց կամ Թողաց կամ Թուլաց ինձ զոլկել:
453. 14. պայկաց՝ կամ պայականաց՝:
456. 18. զՔրագոյն:
457. 7. 'ի փայլատականց:
467. 4. * Միղուդանոն կամ * Միղուդանոն կամ * Միալուդանոն:
476. 1. ցիրգն կամ ցիլքն:
478. 12. մաշարացական:
481. 12. անշրջելի պահեցաք:
486. 18. խրոխտամբ վէտական:
487. 7. աղգաց եկեղեց 'ի սատարութիւն:
494. 17. խաղաղացուցել կարասցէ:
496. 17. Պղատոս ոմն Ճարտասան:
497. 9. յԻրաքոսէ Եպիսկոպոսէ:
— 23. 'ի վերայ վիմի, զի որպէս:
499. 11. քաջուսունս կամ քաջուսումն կամ քաջակունս:
— 15. բայց Յունաց մասն կամ բայց Յունաց մասնէն:
503. 7. 'ի վիմամուտ:
504. 13. 'ի մական խաղուն երկիթս:
509. 17. 'ի հայթայթս կամ հայթաթանս:

516. 9. մուրաբար կամ մուրաբեր :
524. 7. 'ի լուսոյ ասեն :
— 9. զբոլոր արեգականն :
— 11. յիւրաքանչիւր :
526. 5. Պղոսեենիոս :
531. 21. Թշնամասիրացն և ոխասիրացն :
533. 17. 'ի Կուկայ Առձոյ կամ Առհոյ :
535. 26. դաղաղացան :
537. 15. Համոզակ Թուլչի :
549. 19. 'ի Բիւզանդիոն :
552. 7. 'ի Հոգւոյն ուսանելոց եալ խանդից և անկեալ :
553. 22. արբեցողք :
554. 1. Համաբարոյք :
— 22. ախտահաւաքք :

ՑԱՆԿՔ ԱՆՈՒԱՆՑ

Աբգար, Աբգարէս, Աբգարիոս 179. 205. 211-234. 236-239. 241. 305.
Աբգիու 225.
Աբեղէն 165.
Աբեղէնք 284.
Աբեղոյ 283.
Աբէլ արդար 26. 371.
Աբէլ նախարար 164.
Աբիմելէք 93.
Աբիւդենոս 24. 34. 35. 169.
Աբրաամ, Աբրահամ 30-32. 34. 37. 91. 92. 153. 303.
Ագաբոս 237.
Ագաթանգեղոս 301. 302. 317. 326. 329. 338. 348.
Ագռաս 92.
Ադամ 24. 26. 27.
Ադդէ կոմն 454.
Ադդէ հայրապետ 226. 234. 236.
Ադրամել 106.
Ադրիանոս 277. 282. 283.
Ադրիանուպոլիս 444.

Աղայէլ 548.
Աղատ գէտ 204. 396.
Աղարիայ 208.
Ամանագինէս 410. 416. 485.
Ամենաս 183. 189. 408.
Ամենացիք 368.
Ամէնք 294. 527.
Ամդահակ. տես Աշդահակ և Բիւ-
րատպ.
Ամդանական 123.
Ամանաոզան 446-448.
Ամանաց դրունք 348.
Ամանք 261. 263-266. 269. 270. 280.
348.
Ամիւաս գէտ 184. 185.
Ամկի 272.
Ամուրեան 245. 246. 254. 259.
Ակակ 510. 522.
Ակէացիք 173.
Ակռազանիս 95.
Ահմատան 297.
Աղբիանոս 461. 466.
Աղէքսանդր հրեայ 190. 192.
Աղէքսանդր մակեդոնացի 49. 127.
151-153. 169. 181. 184. 355. 383.
395.

Աղէքսանդր որդի Հերովդի 210.
Աղէքսանդրացի 356. 522.
Աղէքսանդրացիք 317.
Աղէքսանդրիայ դշխոյ 190.
Աղէքսանդրիայ քաղաք 17. 357. 446. 522. 523. 525. 526.
Աղէքսանդրոս Աղէքսանդրիոյ Եպիսկոպոս 357.
Աղէքսանդրոս Կոստանդնուպոլսի Եպիսկոպոս 357.
Աղթամար 409.
Աղիովիա 202. 285. 288. 289. 422. 423. 425.
Աղձնիք 105. 219. 388.
Աղովրոս 24.
Աղուանք 120. 168. 204. 339. 340. 342. 387. 392. 402. 458. 498. 500.
Աղաագոս 94.
Աղցք 431.
Ամաղէկ 456.
Ամասիա քաղաք 353.
Ամասիայ Նահապետ 33. 35. 64. 65.
Ամատունի 398. 413. 488. 490. 537.
Ամատունիք 279. 321. 338. 344. 391. 297. 471.
Ամարաս 287.

Ամինտէս 94.
Ամպակ 96.
Ամրամ 92.
Այրարատ 53. 55. 78. 80. 203. 285. 297. 321. 421. 422. 468. 481. 518.
Այրարատեան 102. 515.
Անակ 302. 314-316. 334. 365.
Անան 220. 223.
Անանիա եպիսկոպոս 500.
Անանիանք 177.
Անանուն 233-236.
Անատոլ, Անատոլիոս. 509. 513. 515-517. 533.
Անարիք 429.
Անդեղ տուն 105. 106. 170.
Անդիպատրոս 195.
Անդրէաս Առաքեալ 222.
Անեքիս 32. 35.
Անի 183. 189. 244. 261. 273. 300. 321. 399. 431.
Անծիա 409.
Անկիւրիա 522.
Անձաւացիք, Անձեւացիք 173. 289. 462.
Անիշելի ամրոց. տես Անուշ բերդ.
Անոյշ 122-124. 126.

Անուշ բերդ 449. 487. 501.
Անուշաւան 95. 97. 98.
Անտիգոնեանք 199.
Անտիգոնոս գեմեարեան 154.
Անտիգոնոս արիստաբուղեանց 197. 202.
Անտիոք սիւնի 426. 428.
Անտիոք քաղաք 209. 357. 446. 522.
Անտիոքացիք 210.
Անտիոքոս Ա. Սաւտէր 152.
Անտիոքոս Բ. Թեւոս 46. 153.
Անտիոքոս Դ. Եպիփան 548.
Անտիոքոս Զ. սիդիացի 154. 155. 304.
Անտիոքոս յոյն զօրավար 390-392.
Անտոն. տես Անտոնինոս:
Անտոն որդի Սեւերեայ 318.
Անտոնինոս 200-204.
Անտոնինոս. տես Տիտոս Անտոնինոս.
Անփայտ 162.
Անփիւղոքսիոս 446.
Աշարունիք. տես Արշարունիք.
Աշդահակ 103. 110-126. 167. 251. 261. 287.
Աշխադար դիմաքսեան 472. 474-476.

Աշխատաքար հայր Աշխէնի 335.
Աշխէն 335.
Աշոտ 293.
Աշոց 169. 334. 533.
Աշոցան 323.
Աշուշայ 519.
Աշտիշատ 182. 410. 542.
Աշտիշատեղիք 189. տես և Աշտիշատ.
Ապահունիք 171. 219. 444. 533.
Ապողոն 181. 182. 262.
Ապրսամ 192.
Ապրսամ սպանդունի 506.
Առաքիոս 94.
Առակք Սողոմոնի 498.
Առան 168.
Առաւան 127.
Առաւատին 153.
Առաւելեան 472. 474.
Առաւենեան 172. 471.
Առաւենեանք 127.
Առբերանի 202. 285. 288. 289. 422. 423.
Առիոս 36.
Առմամիթռէոս 94.
Առնակ 96.
Առուելեանք կամ Առուելէնք 280.

Ասիկիս 103.
Ասիա, Ասիայ 46. 155. 181. 184. 522.
Ասիական 73.
Ասիացիք 154.
Ասորեստան 43. 71-73. 87. 89. 100. 105. 106. 157. 173. 250. 272. 301. 309-311. 315. 335. 349. 391. 392. 450.
Ասորեստանեայք 16. 20. 46. 69. 71. 82. 98. 101. 129. 130. 244. 272. 283.
Ասորեստանի 160.
Ասորի 34. 47. 50. 89. 244. 300. 499-501. 532 534.
Ասորիք, ազգ 67. 72. 196. 197. 205. 209. 211. 282. 307. 508. 511.
Ասորիք, աշխարհ 46. 154. 191-193. 195. 201. 219. 276. 294. 474.
Ասուդ 189.
Ասպահան 450.
Ասպիոն 410.
Ասպուրակէս 467. 484.
Ասպիկ 40.
Աքանազեան 102.
Աստատ 471.
Աստմ 503. 504.
Աստիկէ 527.

Ատիկոս 508. 512.
Ատրպատական 46. 157. 167. 203. 250. 315. 391. 541.
Արագած 63. 253. 420. 431.
Արամ 30. 31. 33-35. 67-72. 74. 76. 125.
Արամազդ 126. 273. 346. 408.
Արամազնեայք 44.
Արամայիս 33. 35. 63. 64.
Արամանեակ. տես Արմենակ.
Արամեանք 369.
Արամենակ. տես Արմենակ.
Արայ 33-35. 37. 76-80. 91. 95. 97.
Արայ արայեան 95. 97.
Արատտ 63.
Արարատ. տես Այրարատ.
Արբակ 85.
Արբէլ 32. 34. 35.
Արբոկ Հենբակուր 330.
Արբուն 96.
Արգամ 251-254. 358. 367-369.
Արգամոզան 106.
Արգաւան 124. 125. 269. տես և Արգամ.
Արգիսցի 324.
Արեբանոս 235.

Արեգ քաղաք 463.
Արեա 218. 219.
Արէս 396.
Արիանոսք 359.
Արիոզական 337.
Արիոս աղէքսանդրացի 356-359. 440.
Արիոս քաղդէացի 94.
Արիստաբուղոս 191.
Արիստակէս 149. 328. տես Ուրստակէս.
Արիստոն 282-284.
Արիք 119. 216. 250. 279. 314. 330. 338. 429. 530.
Արծկէացի 529.
Արծրունի 218. 239. 449. 504.
Արծրունիք 105. 106. 165. 236. 484. 533.
Արկադ, Արկադիոս 467. 477. 484. 486. 487. 493. 494. 498.
Արձան 521.
Արձիլ 520.
Արձն 173.
Արմանեակ. տես Արմենակ.
Արմաւիր 63-65. 67. 70. 97. 158. 173. 182. 193. 245-247. 262. 263. 322. 441. 443.

Արմենակ, Արմենեակ 33. 35. 52. 53. 58. 60-63. 97.
Արմէն 67.
Արմենիք 67.
Արմոդ 127.
Արշակ Ա. Պարթեւաց 153. 279. 303.
Արշակ Ա. Հայոց 175-179.
Արշակ Բ. Պարթեւաց 46. 47. 49. 127. 151. 152. 154-158. 217. 304.
Արշակ Բ. Հայոց 404. 413-453. 460.
Արշակ Գ. Պարթեւաց. տես Արշանակ.
Արշակ Գ. Հայոց 466-478. 480. 481.
Արշակ Դ. Պարթեւաց 271. 306.
Արշական 180. 304.
Արշակաւան 430-432. 436. 441.
Արշակունի 240. 257. 335. 365. 388. 471. 482. 483. 536.
Արշակունիք 152. 156. 176. 203. 240. 249. 288. 294. 297. 304. 320. 321. 384. 422. 463. 467. 469. 479. 546.
Արշամ 205-211. 224.
Արշական, որ և Արշակ Գ. Պարթեւաց 188. 304.
Արշանոյշ 483.

Արշարունիք 360. 442. 460. 471. 533. տես և Երասխաձոր.
Արշաւիր տրքայ Պարսից 206. 211. 213-216. 304. 306.
Արշաւիր կամսարական 360. 402. 441.
Արշէզ, Արտաշէզ 196. 198. 205. 304.
Արջամ. տես Արշամ.
Արտավազէն 500.
Արտագերս 441. 449.
Արտազ 233. 269. 270. 315. 316. տես և Շաւարշան.
Արտազեան 271.
Արտաշամայ 180.
Արտաշատ 124. 261. 262. 263. 267. 270. 286. 322. 396. 450. 523.
Արտաշէս Ա. Պարթեւաց 154. 303.
Արտաշէս Ա. Հայոց 66. 164. 175. 177. 179-188.
Արտաշէս Բ. Պարթեւաց 214-218. 220. 231. 232. 239. 304-306. 309.
Արտաշէս Բ. Հայոց 124. 240-243. 250-288. 322. 359.
Արտաշէս Գ. Պարթեւաց 271. 306.
Արտաշէս Գ. Հայոց. տես Արտաշիր.

Արտաշէս եղբայր Տիգրանայ Բ. 205.
Արտաշէս որդի Տիգրանայ Բ. 405.
Արտաշիր սասանեան Ա. 278. 301. 302. 306. 308-315. 319-323. 325. 329. 330. 344. 350. 492.
Արտաշիր Բ. 487-493. 501. 536.
Արտաշիր, Արտաշէս Գ. Հայոց 501. 513. 515. 527-531.
Արտաշիրական 322.
Արտաւազդ Ա. 202-205.
Արտաւազդ Բ. 124. 266-269. 273-277. 285-287. 289. 301.
Արտաւազդ մանդակունի 320. 323. 333. 334. 343. 391.
Արտաւան 299. 301. 306. 309. 310.
Արտեմիս 181-183. 189. 262. 284. 445.
Արտիթէս 326.
Արտիմէդ 297.
Արփաքսաթ 31.
Արքեղայոս ազգապետ Հրէից 213.
Արքեղայոս վերակացու Ջորրորդ Հայոց 363.
Աւգոստիոն 517.
Աւգոստոս 211. 213.
Աւովդ 93.
Աւրեղիանոս 319.

Ափշադար 239.
Ափրիկանոս 178.
Ափրիկեցիք 92.
Ափրոդիտէ 183. 445.
Աքիլլեւս, Աքիլլեւս 130. 152. 415. 465.
Բաբ Հայկազն 126.
Բաբ որդի Բէլայ 32. 35.
Բաբելոն, Բաբելոնն 53. 55. 60. 102. 152-154. 157. 184. 230.
Բաբիլացիք 103.
Բաբիլոն. տես Բաբելոն.
Բաբիլոս 497.
Բաբիկ 466. 471.
Բագադիա 293.
Բագամ 127.
Բագայաւինչ, որ և Բագաւինչ 189.
Բագարան 246. 247. 259. 260. 262. 322.
Բագարան մեւս 259. 260.
Բագարատ Շամբայ 156. 157. 163. 173. 177. 293.
Բագարատ սպարապետ 335. 344. 391. 392. 397. 398. 455.
Բագաւան, որ և Բագուան 322. տես և Բագնայ աւան.

Բագնաց աւան 277. 300. տես և Բագաւան.
Բագուան. տես Բագաւան.
Բագրատունի 104. 156. 239. 241.
Բագրատունիք 104. 189. 205. 224. 236. 241. 290. 292. 455.
Բագրաւանդ, Բագրեւանդ 300. 442. 539.
Բաղ 61.
Բաղմաւէպ 24.
Բաղուկ 96.
Բաթնիքաղ 214.
Բակուր արքայ Վրաց 499.
Բակուր բդեշխ Աղձնեաց 388. 392. 393.
Բակուր նահապետ Սիւնեաց 291. 292.
Բակուրակերտ 283.
Բակարիացիք 39. 43.
Բահլ, Բահլ 153. 304. 312. 314.
Բաղասական 519.
Բաղոտուէս 94.
Բայբերդ 241. 244.
Բանան 41.
Բասեան, Բասէն 162. 170. 274. 296. 297.

Բասիլիոս 353.
Բասիլք , Բասիղք 280. 298. 342.
Բաստ 242.
Բարակ 93.
Բարդածան 299. 300.
Բարդուղիմէոս Առաքեալ 235.
Բարզափրան 196-200. 206. 450.
Բարշամ 72.
Բարշամին 190. տես և Բարշամ.
Բարսումայ 307. 308.
Բարքոբայ 282.
Բեթքուբին 220.
Բելքոս 94. 96.
Բենդիդիոս 200. 201.
Բենիամին 500.
Բերգիտիոն 435.
Բզնունական 385.
Բզնունեան 171.
Բզնունիք 61. 288. 532.
Բել 30. 34-36. 44. 52-59. 70. 214.
Բիկէնտ 356.
Բիտան 356.
Բիւզանդացիք 521.
Բիւզանդիոն 354. 405. 410. 411. 416. 419. 435. 439. 445. 446. 461. 467. 494. 507. 510. 518. 520. 521. 527. 549.

Բիւթանեացիք 356.
Բիւթանիայ 413.
Բիւռիոս, Բիւռոս 17. 24.
Բիւռոսեան 38.
Բիւռացիք 187.
Բիւրասպ, Բիւրասպի 131-136.
Բիւրատ 239. 241. 292.
Բլուր 541.
Բղդոխ 330.
Բուդնան 213.
Բուլղար 177.
Բուլկար 162.
Բուրդար 326.
Բուրզ 312. 350.
Բլքիշոյ 532. 538.
Գաբաղ 164.
Գաբելէն 165.
Գաբիանոս 193. 194
Գագ 389.
Գաղաւոն որդի Սպանդարատայ 441. 471. 478. 481-483. 487. 501.
Գաղաւոն որդի Հրահատայ 536.
Գալիլեա 202.
Գալլոս 313.
Գաղատացի 391.
Գաղատացիք 154. 210.

Գալէոս 94.
Գալիլիուս 354.
Գամեր, որ և Գամիր 33. 52. 67.
Գամիրք 326.
Գայլատու 290.
Գառնի 66. 358. 360.
Գառնիկ Թուն Գեղամայ 66. 164. 180.
Գառնիկ Հգնաւոր 364.
Գարգարացիք 168. 342. 500.
Գարդման 519.
Գարդմանացի 505.
Գարդմանացիք 168. 471.
Գարջոյլ 399.
Գեդէոն 93.
Գեղ լեառն 65.
Գեղամ 33. 35. 64. 65-67. 157. 164. 180.
Գեղամայ ծով 65. 253. 477.
Գեղամի 67.
Գեղասիոս 446.
Գեղաքունի 65. 179.
Գեղմանց լեառն 271.
Գերեզմանք 59.
Գերմանացիք 212.
Գերմանիկոս 213.

Գին գեռ 286.
Գին նահապետ գնունեաց 165.
Գինդ 418.
Գիսակ 255. 259.
Գիտ 519.
Գլաւիւռայ 352.
Գղակ 96.
Գնէլ անձեւացի 462.
Գնէլ գնունի 424.
Գնէլ եղբօրորդի Արշակայ Բ. 419-425. 428.
Գնէլ տակառապետ 197-200.
Գնթունիք 93. 164. 207.
Գնիւթ 510. 518.
Գնունիք 105. 106. 165. 187, 471.
Գոթոնիէլ 93.
Գողթն 123. 124. 261. 272. 286. 479. 518. 544.
Գողթնեցիք 173.
Գողիաթ 398.
Գոմեր. տես Գամեր.
Գոռակ 96.
Գորգի 41.
Գորգոնոս 455.
Գուգարացիք 189. 391. 519.
Գուրթք 325. 435.

Գուշար 157. 168. 169. 323.
Գրատիանոս 438.
Գրիգոր Լուսաւորիչ 213. 214. 217. 306. 314. 316. 326-329. 334. 346. 357. 359. 361-368. 384. 386. 406. 410. 416. 450. 479. 485. 492. 512. 539. 546.
Գրիգոր հայրապետաւանդաբանին 358.
Գրիգոր, Գրիգորիոս սաստուանդաբան 358. 446.
Գրիգորիոս Նիւսեայ 446.
Գրիգորիս 385-387.
Դաժգոյնք 123.
Դամասիոս 446.
Դամասկոս 191. 209. 445.
Դանան 518.
Դանիէլ Եպիսկոպոս 495. 496.
Դանիէլ քահանայ 405. 406. 423.
Դանիէլեան Նշանագիրք 494-496.
Դանուբ 319.
Դատ 164. 180.
Դատաքէ 288.
Դարա 471. 477.
Դարանաղի 362. 464.
Դարեհ Ա. վշապասլեանց 187. 210.
Դարեհ Գ. Կոդոման 169. 181. 184. 355.

Դարեհ Պարթեւ 240. 242. 258. 260. 306.
Դաւթեան 398.
Դաւիթ աներ Լուսաւորչին 327.
Դաւիթ զրուցաբան 42.
Դաւիթ մարդարէ 93.
Դեկիոս, Դեկոս 313. 317.
Դեմեար, Դեմեարիոս Նիկանովր 154.
Դեռկիւղոս 95.
Դերջան 510. 518.
Դէովկիս 103.
Դըմբաւընդ 132.
Դիմաքսեան 259. 474.
Դիմաքսեանք 472.
Դիոդոր 383.
Դիոկղեսիանոս 317. 326. 333. 336. 337.
Դիոնիսոս 190.
Դիոնիսոս. տես Պտղոմէոս.
Դիոս 183. 189.
Դիպինոս 182.
Դիւցընկէց 40.
Դոմեա, Դոմեսիանոս 274. 275.
Դուին 396.
Դուռն, դրունք Ալանաց, Կաս-

բից, Ճորայ. տես Ալանաց դրունք, և զայլն.
Դատրիկ 542.
Դրասխանակերտ 359.
Դրուասպ 290.
Եբեր 32.
Եբրայական 388.
Եբրայեցի 105.
Եբրայեցիք 23. 92. 104. 352. 368.
Եգերացիք 160.
Եգիպտացիք 17. 20. 25. 44. 45. 183. 202. 275. 276.
Եգիպտոս 34. 193. 202. 205. 237. 311. 524.
Եգիւպտացիք. տես Եգիպտացիք.
Եգեսացիք 223. 524.
Եգեսիայ 178. 179. 213. 214. 218. 224. 226. 233. 234. 236. 240. 244. 318. 358. 496. 497. 520.
Եդոմայեցիք 199.
Եղեկիա 105.
Եղնիկ 520.
Եթովպացի, Եթովպիացի 34. 96. 128. 130. 353.
Եթովպացիք 187.
Եղեւթերոյպոլիս 220.

Ելէսպոնտոս 186.
Ելլադայ 183. 187. 527.
Ելլադացիք 463.
Ելլենացիք. տես Հելլենացիք.
Եկբատան 349. 351.
Եկեղեաց, Եկեղեց 284. 290. 363. 385. 461. 478. 518.
Եկեղեցային 498.
Եկէփասատէ 179.
Եղիազար. տես Խոռոհբուտ.
Եղիազարանք 177.
Եղիական պատերազմ. տես Խլիական.
Եղիայ 442. 548.
Եղիանան 334.
Եղիսէ, Եղիսէէ 385. 442. 548.
Եղոքն 93.
Եմես 522.
Եմրան 303.
Ենանոս 206-209.
Ենովս 26.
Ենովք աշակերտ Մեսրոպայ 518.
Ենովք նահապետ 28.
Եպիփան վանահայր 418.
Եպիփանոս Կիպրացի 41.
Եպիփանոս հռետոր 497.

Եսեբիոն 93.
Եստիկէ 184.
Երախնաւոր 289.
Երակլէս. տես Հերակլէս.
Երանեակ 290.
Երասխ 63. 65. 158. 168. 245. 262. 268. 297.
Երասխաձոր 369. տես և Արշարունիք.
Երեմիա, Երեմիասմարգարէ 102.552.
Երեմիայ եպիսկոպոսապետ Աղուանից 500.
Երեմիայ սարկաւագապետ մեծին Սահակայ 542.
Երեւելի գաշտ 477.
Երիզայ 189. 284.
Երնքով 192.
Երուազ 240. 247. 259. 260.
Երուանդ Ա. 103. 297.
Երուանդ Բ. 179. 240-257. 259. 260. 262, 360.
Երուանդակերտ, Մարմէտ 248. 256.
Երուանդայ քաղաք, Երուանդաշատ 256. 259. 262. 263. 360.
Երուանդաշատ, Երուանդայ քաղաք 245. 441.

Երուանդավան 256.
Երուսաղեմացիք 221.
Երուսաղէմ 105. 194. 197-202. 220. 222. 230. 237. 238. 283. 352. 357. 522.
Եւագարոս 184.
Եւթոզ Եդեսիայ Եպիսկոպոս 358.
Եւթաղեոս Եղբայր Սոփեայ դայեկի Լուսաւորչին 327.
Եւպաղմոս 95.
Եւսեբիոս Կեսարացի 179.
Եւստաթիոս 357.
Եւրոպիա, Եւրոպէ 155. 589.
Եփեսոս 521-523.
Եփեսոսոս 44. 45. 183. 189.
Եփթայի 93.
Եփրատ 193-195. 201. 214. 325. 326. 404. 464. 516.
Եփրեմ 418.
Եքսիպոն 198.
Զամաս, Զամէս 91. 98.
Զարասպ 70.
Զարդմանոս 271.
Զարեհ Հայկազն 127.
Զարեհ որդի Արտաշիսի Բ. 273. 276.
Զարեհաւանեան 172.

Զարեհաւանք 127.
Զարիշատ Աղիովտի 425.
Զարիշատ Վանանդայ 534.
Զարմայր 96. 128. 130.
Զարուանդ 43.
Զարուհի 119.
Զաւան 95.
Զաւէն 466. 467.
Զաքարիա որդի Բարաքէայ 371.
Զաքարիաս մարգարէ 552.
Զէբսիպոն 355.
Զուիթայ 450. 451.
Զուրայ. տես Զօրայ.
Զրադաշտ 39. 87. 88.
Զրուան 39. 40. 43. 50.
Զփառոս 94.
Զօրաբաբէլ 548.
Զօրայ գնիթունի 207.
Զօրայ ռըշտունի 407. 409.
Էմլեայ 283.
Ընձակ 96.
Ըռըշտունի, Ըռըշտունիք. տես Ռըշտունի, Ռըշտունիք.
Թադէոս Առաքեալ 224-226. 233. 315. 316. 361.
Թաղիք 545.

Թակլատ 52.
Թարաթայ 214.
Թարայ 32.
Թարսիս 92.
Թեբէ 184.
Թեսաղոնիկ 461.
Թեսեղացիք 186.
Թերսիտէս 415.
Թեւոս. տես Անտիոքոս Բ.
Թէոդոս մեծ 419. 438. 444. 445. 452. 454. 460. 461. 468.
Թէոդոս փոքր 498. 507. 510. 517. 528.
Թէոդոսիոս 522.
Թէոդոր վարդապետ մամուեստացւոյն 523.
Թէոդորոս մամուեստացի 522.
Թէոդուպոլիս 515-517.
Թիլ 189. 363. 385. 461.
Թինեւս 95.
Թիտալիայ 46.
Թիրաս 33. 52. 67.
Թովլայ 93.
Թորգոմ 33. 52. 54. 67.
Թորգան 190. 364. 402. 406.
Թովմաս, Թոմաս Առաքեալ 223. 224.

Թուղնա 465.
Թրակացիք 212. 355.
Թրակէ 186. 326.
Թոնոս Կոնկոդեռոս 92. 100.
Ժողով Նիկիոյ 356. Կոստանդնու-
պոլսի 444. Եփեսոսի 521.
Իլուզ 445.
Իկոնիոն 446.
Ինչիական պատերազմ 128. 129.
Ինաքոս 408.
Իսահակ 92. 303.
Իսրայէլ, Իսրայէլ 41. 386. 548. 552.
Իվերիացիք 169.
Խոալիա 527.
Լակեդեմոնացիք 186.
Լեռնականք 263.
Լիբանոս 445.
Լիբիացիք 169.
Լիբիէ 155.
Լիկիանոս 325. 326. 352-354.
Լուդական 184.
Լուդացիք. Լիդէացիք 181. 183.
185. 186.
Լուսանիա 218.
Լուսաւորիչ 213. 306. 316. 327. տես
և Գրիգոր.

Խաղ 417. 440. 442-444.
Խաղունի 495.
Խաղնիք 296. 298.
Խախ 461.
Խաղաղիք 158. 320. 474.
Խառան 237. 318.
Խաքան 350. 351. 357.
Խողոցիմ 545.
Խոշակունիք 123.
Խոռ 61. 164.
Խոռխոռունի 472. 474.
Խոռխոռունիք 61. 399.
Խոռոհբուա 307.
Խոսրան, Խոսրէն 218. 239.
Խոսրով Ա. 280. 299. 301. 302. 309-323. 492.
Խոսրով Բ. 336. 388-390. 392-401.
Խոսրով Գ. 469-489. 501. 502. 541.
Խոսրով գարգմանեցի 505.
Խոսրովիդուխտ 321. 333. 338. 360.
Խորասան 454.
Խորէնացի 13.
Խորմէնացի 500.
Խուժաստան 449.
Խուրս 519.
Խրամ 123.

Ծաղկաց լեառն 424.
Ծննդոց անտառ 347.
Ծոբ 169.
Ծովդէացիք 168.
Ծովիք 171. 341. 363. 389. 397. 398. 405. 475.
Կադմեայն 167.
Կադմեանք 157.
Կադմոս 53. 55. 58. 60. 73.
Կահաթ 92.
Կամադրոս 185.
Կամբիւսէս 187.
Կամնար 349-351. 359. 360. 436.
Կամնարական 453. 457. 460. 490. 537.
Կամնարականք 214. 217. 249. 313. 441. 443. 447. 483.
Կայնան 28. 31. 33.
Կայպակ 96.
Կանգարիք 169.
Կապադովկացիք 73. 120. 317. 327.
Կապան Ճորայ կամ Ձորայ. տես Ճորայ դուռն.
Կառինոս 325.
Կասբիական ծով 387.
Կասբից դրունք 348.
Կասրք 271. 348.

Կասիոս 194. 214.
Կասինայ. տես Մար Աբաս.
Կարդոս 80.
Կարենան 313.
Կարենանք 214.
Կարենեան 217.
Կարենեանք 315.
Կարէն, Կարրն, Կարն 216. 217. 304. 305. 309. 310. 312. 350.
Կարին 417. 515. 516. 533.
Կարն. տես Կարէն.
Կարնոյ մարդ 417.
Կարնոյ քաղաք 515-517.
Կարոս 325.
Կաւկաս 46. 161. 169. 177. 204. 273. 396. 431.
Կեղեսոնոս 522.
Կենան 471.
Կենտորոս Պիւռիդայ 134.
Կեսար 195. 200.
Կեսարացի 179.
Կեսարացիք 323. 334.
Կեսարիա, Կեսարիայ 71. 73. 74. 194. 195. 206. 251. 274. 275. 317. 326. 229. 333. 410. 316. 446. 461. 499. 511. 521.

Կերասոս 324.
Կեփալիոն 35. 89.
Կիլիկեցի 391.
Կիլիկեցիք, Կիլիկեցիք 363. 391. 392. 403.
Կիպրացիք 41.
Կիլիկիայ 320. 404.
Կիկլադայ կղզիք 319.
Կիմոնոս 319.
Կիրեղ, Կիրիղ. տես Կիրղոս.
Կիրղոս Աղեքսանդրիոյ եպիսկոպոս 522.
Կիրղոս Երուսաղէմի եպիսկոպոս 403. 446.
Կիրոս 107. 110. 111. 126. 183. 189.
Կղարջք 348.
Կղաւդիոս Ա. 237.
Կղաւդիոս Բ. 319.
Կղեսուր 173.
Կղէոպատր. տես Կղէոպատրայ.
Կղէոպատրայ Պտղոմայիդ 190. 202.
Կղէոպատրայ, Կղէոպատրեայ Թուրն առաջնոյն 202. 204. 205.
Կղնոսոստրատոս 324.
Կոդայովիա 423. 458.
Կող 161. 177.

Կողբ գաւառ 169.
Կողբ գեւղ 520.
Կողնիայ 158.
Կոմշ. տես Կոշմ.
Կոնկոզեռոս, Կոնկոզիռոս 92. 100.
Կոշմ, որ և Կոմշ 216. 304.
Կոռնակ Հայկազն 103.
Կոռնակ սպարապետ 325.
Կոստանդ. տես Կոստաս.
Կոստանդիա 41.
Կոստանդիանոս 335. 336-338. 349. 352-357. 389. 401. 445.
Կոստանդին. տես Կոստանդիանոս.
Կոստանդնուպոլիս 352. 355. 357. 446. 512. 522. տես և Բիւզանդիոն.
Կոստանդոս 389. 390. 395. 401-403.
Կոստաս, Կոստանդ 336.
Կորդուացիք 173.
Կորդուք 72. 237. 315.
Կորդրիք 272. տես և Տմորիք.
Կորիւն 521.
Կորճայք 295.
Կուաշ 420. 421. 423.
Կուկայառիճ 533.
Կունդ 126.
Կուր 168. 263. 298.

Կռոնոս 44.
Կրասոս 194.
Կրետացի 182.
Կրիտէ 77. 88.
Կրիւսոս 181. 183-187.
Կրման 493.
Կուաքս 103.
Հաբէլ քահանայ 495.
Հագամակերա 165.
Համազասպ 489-493. 502.
Համազասպեան 514.
Հայ 179. 431. 498. 499.
Հայաստան 342.
Հայաստանեայք 15. 21. 67. 400.
Հայերէն 156. 496. 498.
Հայկ 33. 35. 44. 51-60. 67. 70. 104. 125. 156. 160. 166. 170-172.
Հայկազն 111. 121. 146. 323.
Հայկազնեան 114.
Հայկազունք 98. 126. 295. 297.
Հայկակ Ա. 95. 96. 106. 170.
Հայկակ Բ. 103.
Հայկական 73. 167. 495. 496.
Հայկաշէն 54.
Հայոց ձոր 59.
Հայր Լիշեան. մարդպետ 167. 409.

Հայք, ազգ 14. 67. 69. 78. 79. 86. 88. 120. 128. 155. 157. 176. 179-181. 188. 191. 194. 195. 199-202. 204-206. 211. 219. 233. 235. 244. 251. 252. 254. 257. 261. 264. 271. 275. 278. 288. 293. 296. 298. 299. 319-321. 339. 367. 388. 392. 397-400. 407. 416. 419. 427. 432. 448. 449. 452. 453. 455. 458. 461. 463. 466. 467. 471. 473. 478. 480. 485. 495. 498. 502. 506. 515. 523. 527. 530. 533. 534. 540. 545. 546.
Հայք, աշխարհ 38. 39. 42. 60. 74. 81. 86-89. 93. 122. 127. 171. 183. 188. 209. 211. 233. 271. 321. 329. 331. 334. 338. 363. 401. 416. 419. 431. 435. 451. 454. 474. 484. 487. 501.
Հայք դատաստանք 59.
Հանի. տես Անի.
Հաշտեանք 175. 176. 203. 237. 288. 289. 389. 422. 441.
Հարմայ 33. 35. 65. 67.
Հարք 54. 60. 61.
Հացեաց դրախտ 406.
Հացեկք 479.
Հաւական 95.
Հաւենունիք 165.

Հաւուկ 533.
Հելլենական 186.
Հելլենացի 299. 498.
Հելլենացիք 18. 20. 96. 130.
Հելլէն 49. 497. 499.
Հեղենայ, Հեղինէ մայր Կոստանդիանոսի 336. 352.
Հեղի 93.
Հեղինէ. տես Հեղենայ.
Հեղինէ տիկին Աբգարու 236-238.
Հեշայ 393.
Հեր 241.
Հերակլէս 127. 169. 170. 181. 182. 189.
Հերոդոտոս 155.
Հերովդէս Ագրիպաս 205.
Հերովդէս մեծ 195. 197-202. 207-213. 394.
Հերովդէս Չորրորդապետ 218. 219.
Հերովդիադայ 219.
Հեփեստոս. տես Եփեստոս.
Հիւպոլիտոսայ 178.
Հիւրկանեանք 200.
Հիւրկանոս 192. 196-200. 205-208.
Հիփիտոս 324.
Հմայեակ աշոցան 533.

Հմայեակ մամիկոնեան 514.
Հնարակերտ 168. 169.
Հնդիկք 89. 314. 337. 357.
Հոմերոս 129.
Հոյ 96.
Հոնք 343. 519.
Հովիւք 45.
Հռիփսիմեանք 344. 362.
Հռոդացի 324.
Հռոմ. տես Հռովմ.
Հռոմայեցիք. տես Հռովմայեցիք.
Հռովմ 182. 193. 199. 200. 209. 213. 275. 325. 336-338. 352-356. 446. 461. 467. 522.
Հռովմայեցիք 153. 191. 193. 194. 196. 197. 200-202. 204-206. 211. 213. 218. 226. 228. 229. 244. 259. 261. 266. 274-276. 282. 288. 293. 299. 307. 310. 312. 313. 325. 327. 349. 354. 355. 414. 415. 510. 527.
Հռովմէ. տես Հռովմ.
Հռոփանոս 497. 498.
Հրազդան 67. 180.
Հրահատ 501. 502. 536.
Հրանտ 96.
Հրաչեայ 103.

Հրեայ 224. 279.
Հրեայք 104. 105. 156. 163. 173. 190. 193. 196. 197. 206. 213. 222. 225. 227. 229. 230. 232. 262. 279. 282. 283. 297. 385. 450.
Հրէական 521.
Հրէաստան 192. 200. 202. 206. 207. 209.
Հրուդէն 131. 132.
Հօրոյ 96.
Ձիրաւ 454.
Ձիւնական 166.
Ձոր 169.
Ղաբդոն 93.
Ղազիկայ 158.
Ղակոնացի 464.
Ղամբաուխս 94.
Ղամէք 29.
Ղամպաուխուէս 94.
Ղանկուարտք 464.
Ղապիթեայք 292.
Ղաւոսթենիս 95.
Ղէկք 457. 460.
Ղերուբնայ 239.
Ղեւի 92.
Ղեւոնդ աշակերտ Մեսրոպայ 510. 518. 521.

Ղեւոնդ, Ղեւոնդիոս հայրապետ Կեսարիոյ 358.
Ղուկրացիք 187.
Ղուկաս աւետարանիչ 211.
Ղուկիանոս 294.
Ղուզիոս կամ Ղուզոս 191.
Ճանիւս 320.
Ճենազն 338.
Ճենազնեայ 339.
Ճենբակուր 330.
Ճենք 330-332.
Ճիճրակացի 506.
Ճորայ դուռն, կապան 298. 402. տես և Ալանաց, Կասբից դրուն.
Ճուաշ 167.
Մադէս 68. 69.
Մազդեզն 411. 429. 451. 492. 502.
Մաթուսաղայ 28.
Մաժակ. տես Մաժաք.
Մաժան 267. 273. 276. 277. 300.
Մաժաք 74. 158. 160. 188. 191. 192. 194. 195.
Մակաբէ 190. 548.
Մակարիոս 357.
Մակեդոն 439. 440. 445. 446.
Մակեդոնական 154.

Մակեդոնացի 127. 129. 184. 355. 395.
Մակեդոնացիք 46. 152-154. 156-158. 160. 303.
Մախազ. տես Մաղխազ.
Մաղաղիէլ 28.
Մաղխազ, Մախազ 164. 399.
Մաղխազան 241.
Մամգուն 330-332. 338-341.
Մամգունեան 341.
Մամիդոս 94.
Մամիկոնեայք 329.
Մամիկոնեան 421. 437. 458. 475. 489. 490.
Մամիկոնեանք 537. 542.
Մամիկոնի 449.
Մամիղոս 94.
Մամուեստացի 522.
ՄանաՀիՀր 344. 391-394. 407.
Մանանալի 474. 475.
Մանաւազ 61.
Մանաւազեան 61. 171. 385.
Մանդակունի 320. 333. 343.
Մանդակունիք 172. 323.
Մանդու 268.
Մանեթոս 184.

Մանեայ այրք 361. 362.
Մանէ, Մանեայ 362.
ՄանէՀ 533.
Մանովայ 205.
Մանուեանք 280.
Մանուէ 279.
Մանուէլ 488.
Մաշտոց 179. տես և Մեսրոպ.
Մառինոս 219.
Մասանդան 199.
Մասիս 65. 125. 260. 262. 270. 286. 425. 430.
Մասքաղէոս 94.
Մասքուլթք 187. 348.
Մատաթիայ 548.
Մար 98. 99. 243. 256.
Մար Իշխան Ծոփայց 389.
Մար Աբաս Կատինայ 47. 49. 50. 75. 89. 178.
Մարակերտ 124.
Մարանդ 283.
Մարապարտացի 119.
Մարաց մարդ 256.
Մարայիք 167.
Մարիամ աստուածածին 521. 522.
Մարիամ կին Լուսաւորչին 327. 328.

Մար Իբաս. տես Մար Աբաս.
Մար Իհաբ 219.
Մարիսացիք 200.
Մարիսկեաց կամ Մարսիկեան 337.
Մարկիոնացիք 300.
Մարկոս աւետարանիչ 526.
Մարկոս եպիսկոպոս 283.
Մարկոս միայնաւոր 326.
Մարմէտ 256. տես Երուանդակերտ.
Մարք, ազգ 87. 100. 102. 107. 110. 111. 124. 126. 167. 210. 243. 255. 258. 291. 480.
Մարք, աշխարհ 116. 283.
Մաքսիմիանոս եպիսկոպոս 521.
Մաքսիմիանոս կայսր 317. 336.
Մաքսիմինայ 335-337.
Մեդացի 99.
Մեդացիք 69. 120.
Մեդք 39.
Մելիտինէ, Մելտինէ 510. 522.
Մելիտոս 446.
Մեծամոր 262.
Մեծրայիմ 34. տես Մեսրայիմ.
Մեհեկան 543.
Մեհենդակ 409.

Մեմնոն 522.
Մեսաղինայ 190.
Մեսարայիմ, Մեսարիմ 32-34. 44.
Մեսրոպ, Մեսրովպ 478-480. 485. 486. 494-500. 507-514. 518-523. 533. 539. 543. 545.
Մեսրոպեան 496.
Մեսեղոս 191.
Մերոդ 52.
Մերուժան 437. 449-459. 500.
Մէջերկրայք, Մէջերկրեայք. տես Մէջերկրայք.
Միանդակ 172.
Միդուլանոն 467.
Միթռէոս 94.
Միհր 412.
Միհրան 344-348. 391. 392. 397. 399.
Միհրդատ բդեշխ Վրաց 180. 188. 191-193. 252.
Միհրդատ նախարար Դարեհի 169. 181.
Միհրդատ որդի բդեշխին 192-195.
Մինոտավրոս 240.
Միջագետք 190. 203. 204. 206. 209. 213. 219. 237. 242. 244. 251. 255. 282. 318. 391. 404. 435. 468. 494. 496. 520.

Մինչերկրայք , Մինչերկրեայք 46. 188. 191. 210. 294. 389.
Մծբին 46. 50. 162. 175. 176. 178. 214. 238. 358. 429. 541.
Մծխիթայ 344.
Մշակ կողմնապետ 73. 74.
Մոգպաշտք 260.
Մոկացի 173. 503.
Մոկացիք 504.
Մոկք 471. 504.
Մոմիխիւեան 403.
Մովսէս եպիսկոպոս Վրաց 500.
Մովսէս խորենացի 13. 523-527. 538. 549.
Մովսէս մարգարէ 37. 38. 44. 92. 364. 393. 456. 548.
Մովսիսիկ 533.
Մորփիւղիկեայ 158-160.
Մուշեղ 458.
Մուշէ եպիսկոպոս Գողթան 519.
Մուշէ տարօնեցի 500.
Մուրացան 167. 251. 253. 254. 268.
Մուրս 477.
Մուրց 297.
Մռուղ 400.

Մոդակիս 102.
Յաբեթ 33. 34. 39. 48. 52. 67.
Յագուոնան 326.
Յազկերտ Ա. 499-502. 506.
Յազկերտ Բ. 541.
Յակոբ նահապետ 92.
Յակոբ, Յակովբ Մծբնայ 358. 392-394.
Յայիր 93.
Յապետոսթէ 39. 50. 51.
Յարեդ 28.
Յեսու 92. 548.
Յէսու 548.
Յիսուս Քրիստոս 212. 221. 222. 224. 225. 229. 232. 522.
Յոբ 22.
Յոբիանոս 307. 411.
Յոբնազիոս 522.
Յոհան եկեղեցային 498.
Յոհան Պարսից եպիսկոպոս 358.
Յոհաննէս եղբօրորդի Մակաբեայ 190.
Յոյն 16-18. 47. 49. 50. 183. 244. 293. 300. 307. 452. 500. 501.
Յոյնք, ազգ 16-18. 21. 36. 41. 42. 67. 107. 178. 188. 211. 289. 295.

307. 318-321. 399. 401. 403. 414. 416. 417. 427. 429. 431. 433. 435. 437. 438. 449. 452. 454-456. 458. 467. 474. 478. 487. 494. 502. 507. 534. 541.

Յոյնք, աշխարհ 275. 307. 413. 441. 442.

Յոստոս 205.

Յովհան 521.

Յովհաննէս Եպիսկոպոս Անտիոքայ 522.

Յովհաննէս Մկրտիչ 219. 384.

Յովհաննէս Ոսկի բերան 494. 512.

Յովնաթան 500.

Յովսէպոս 26. 178. 192. 212. 237.

Յովսէփ Եղբօրորդի Հերովդի. տես Յուսիփ.

Յովսէփ 'ի Վայոյ Ձորոյ 545.

Յովսէփ Նահապետ 45.

Յովսէփ պաղնացի 498. 520.

Յուդա Մակաբէ 190.

Յուլիանոս Պառաւատոս, այս ինքն ուրացող 307. 308. 403-408. 411.

Յունական 15. 16. 74. 132. 383. 392. 395. 413. 434. 452. 496. 499.

Յունարէն 452.

Յուսակ 96.

Յուսիկ 401. 402. 405-407. 409. 410. 416. 485.
Յուսիփ 211. 212.
Յուինոմէ 325.
Նաբաատ 548.
Նաբոգ 214.
Նաբուգոդոնոսոր 101. 103-105. 169.
ՆաբրուԹ. տես ՆեբրովԹ.
Նաղինիկ 291.
ՆախՃաւան, Նախջաւան 123. 167. 268. 443.
ՆաՃիանՃ 446.
Նաւասարդ 301. 542.
Նաքովը 32.
ՆեբրովԹ, ՆեբրուԹ 32. 34. 44. 133. 134. տես և ԲԷԼ.
Նեղոս 525.
Նեսաոր 521. 522.
Ներուաս 275.
Ներսեհ արքայ ասորեստանի 230. 231.
Ներսեհ արքայ Պարսից 357. 400.
Ներսեհ կամսարական 436. 441.
Ներսեհ հայկազն 127.
Ներսէս գիմաքսեան 259.
Ներսէս ՃիՃրակացի 506.

Ներսէս մեծ 410. 416-420. 425. 428. 432. 436-442. 445. 453. 456. 458-461. 479. 485. 512.
Նէքտանեբոս 183. 184. 187.
Նէքտարիոս 446.
Նիկանովը Սելեւկիոս 152.
Նիկիայ 356. 358. 362.
Նիկիացիք 358.
Նիկոմաքոս 328.
Նիկոմիդայ 336.
Նիկոմիդացիք 354.
Նինոս 30-32. 34. 36. 37. 69. 70. 75. 77. 88. 99.
Նինուայ 32. 87. 88. 91.
Նինուէ 46. 49. 69. 70. 77. 81. 87-89. 100. 231.
Նիոբէ 90.
Նիւսիա 446.
Նիւքար Մադէս 68. 69.
Նոմեռիանոս 325. 326.
Նոյ 24. 29. 30. 33. 37.
Նոր Հռոմ 355. տես Կոստանդնուպոլիս.
Նոր քաղաք 296. 298. տես և Վաղարշապատ.
Նորայր 96.

Նուարդ 97.
Նունէ 344-348. 362.
Նպատ 456.
Շաբիթ 479. 519.
Շահակ 461. 467.
Շահապիվան 424.
Շալգոմք 518.
Շալիտայ 418.
Շամբաթ 104. 105.
Շամբայ Բագարատ. տես Բագարատ.
Շամբատ 293.
Շամիրամ 35. 76-91. 95. 97. 98.
Շամիրամայ քաղաք 83-87. 174. 200.
Շամշադրամ 219.
Շամշատ, Շամշաթ 140. 201.
Շապուհ Ա. 307. 322. 329. 330. 338. 339. 344. 349-352. 357.
Շապուհ Բ. ողմզդեան 392. 397. 399-402. 411-415. 426-431. 433-438. 446-454. 463-465. 467-471. 476. 477. 483. 486. 487. 489.
Շապուհ որդի Յազկերտի Ա. 501-506.
Շարայ 63. 64- 157. 162. 168.
Շարաշան 173.

Ճարուր 125.
Ճաւասպ 504.
Ճաւարշ կամսարական 441. 448.
Ճաւարշ Հայկազն 96.
Ճաւարշան, Ճաւարշական 233. 270. տես և Արտազ.
Ճերգիր 457.
Ճիրակ 64. 359. 460. 471.
Ճմաւոն Եղբայր Մակաբէի 190.
Ճմուէլ 533. 534. 538. 540.
Ճրեշ 297.
Ոդիսեւս 292.
Ոզոմ 242.
Ոլիմպոս 40.
Ոլոմպիադա մայր Աղէքսանդրի 152.
Ոլոմպիոդորոս 36. 42. 316.
Ողական 339.
Ողոմպիա 464.
Ոլոմպիադայ կին Արշակայ Բ. 420. 426.
Ոնորիոս 467.
Ոսկիոզայ 123.
Ոստան 122. 166. 441.
Ոսայ. տես Օսայ.
Ոսն Արագածու 63. 420. 431.
Ուրդունի 61. 170. 385.

Որթք 432.
Որմզդական 322.
Որմզդուխտ 451.
Որմիզդ ալքայ 357. 388. 395.
Որոգինէս 317.
Ովկիանոս 73. 182. 465.
Ուղիւպ 261.
Ուղտու ակունք 272.
Ուռհայ 178.
Ուռնայր 458.
Ուտէացիք 168. 251. 252. 315.
ՀԸրմէս 290.
ՀՈրայ դուռն, կապան. տես ՃՈ-
ՐԱՅ.
Պակարոս 197. 201.
Պահլաւ 216. 217. 302. 305. 309. 312.
314. 315. 360. 364. 492. 530. 536.
Պահլաւիկ 311. 327. 446.
Պահլաւիկք 304. 310. 360. 489.
Պահլաւք 304.
Պաղատին. տես Պաղեատինէ.
Պաղեատինացիք 190. 196. 207. 219.
227. 275. 276. 294. 524.
Պաղեատինէ 46. 188. 196. 282. 403.
Պաղեփատոս 307.

Պաղնացի 498.
Պաճոյճ 103.
Պայապիս Քաղէայ 71. 73.
Պանիաս 94.
Պապ արքայ 425. 426. 435. 438. 440. 449. 451. 453-463. 466.
Պապ որդի Յուսկան 410.
Պառաւատոս. տես Յուլիանոս.
Պասիփայէ 240.
Պապքամ 105. 106. 170.
Պատիժահար 271.
Պատրիացիք 218.
Պարգեւ 488.
Պարէտ 95.
Պարթեւ 46. 156. 168. 186. 311. 360. 364.
Պարթեւազունք 314.
Պարթեւական 303.
Պարթեւք, ազգ 46. 66. 101. 152. 153. 279. 301. 303. 306. 307. 310.
Պարթեւք, աշխարհ 154.
Պարխար 160.
Պարոյր 98-100. 103.
Պարսիկ 290. 322. 452. 469. 501. 515. 528. 532. 536.
Պարսիկք 67. 393. 408. 455.

Պարսկական 414. 433. 434. 456. 457. 495.
Պարսկային 111.
Պարսք, ազգ 16. 21. 101. 126. 131. 166. 180. 201. 206. 212. 214. 215. 221. 231. 235. 250. 258. 261. 271. 275. 276. 278. 282. 301. 307. 310. 313. 319. 325. 329. 334. 337. 344. 349. 358. 395. 399-404. 414. 429. 431. 451. 454. 466. 467. 485. 489. 494. 506. 507. 536. 541.
Պարսք, աշխարհ 218. 260. 261. 276. 283. 334. 335. 349. 411. 435. 506. 533.
Պաւղոս Առաքեալ 368. 527.
Պաւղոս եպիսկոպոս Եմեսու 522.
Պեղոպոնէսացիք 524.
Պետրոս Առաքեալ 527.
Պետրոս եպիսկոպոս աղէքսանդրացւոց 317.
Պերդէ 195.
Պերիթոս 292.
Պերճ 96.
Պերոզ ալքայ 288. 293. 294. 306.
Պերոզ գարդմանայի 471.
Պերոզ իշխան 231.

Պէրոզամատ 308. 313. 350.
Պէնեէլոպէ 292.
Պիդասոս 288.
Պիղատոս 192. 218. 228. 230.
Պիսաս 463.
Պիւթիայ 185.
Պիւռիդայ 134.
Պղատոն 527.
Պղատոն այլ 496.
Պղատոնական 128. 133.
Պղոտենիոս 526.
Պոլիկրատէս 184.
Պոմպէոս, Պոմպիոս 191-194.
Պոնդացի 192.
Պոնդացիք, Պոնտացիք 157. 160. 176. 177. 210. 244. 320. 353.
Պոնդոս, Պոնտոս 46. 73. 158. 169. 171. 179. 181. 192. 311. 320.
Պորփիւր 307.
Պռիամոս 96. 130.
Պռիդիածիս 95.
Պռոբոս 321. 324.
Պռոմիթէոս 45.
Պտղոմայիդ Կղէոպատրայ 190. 202.
Պտղոմայիդ քաղաք 190.
Պտղոմեանք 17.

Պտղոմէոս աշխարհագիր 124.
Պտղոմէոս Աւլէտ 193.
Պտղոմէոս Դիոնիսոս 202.
Պտղոմէոս Եղբայրասէր 16.
Պրոդէիադ կամ Պրոդէիաս 526.
Պրոկղոս 522.
Ջաղայ 499.
Ջաւախք 169.
Ջուղայ 123.
Ռագաւ 32.
Ռաս 408.
Ռաստատհուն 308.
Ռափայիմք 41.
Ռիստոմ, որ և Ռոստոմ 471.
Ռիշտունի 206. 450.
Ռիշտունիք 173. 196. 197. 344. 391.
Ռիստակէս 328. 358. 359. 361-363. 385.
Ռոբովամ 548.
Ռոդանոս 419.
Ռոստոն առաւէնեան. տես Ռիստոմ.
Ռոստոմ Սագճիկ 170.
Ռոփի 294.
Ռոփեան 294.
Սագաստան 502.

Սագ Ղիկ 170.
Սաթինիկ 125. 261. 265. 266. 270. 280.
Սահակ. տես Ղահակ.
Սահակ սպարապետ 466. 472. 473-478. 489.
Սահակ բագրատունի 13.
Սահակ մեծ 485-489. 492. 493. 495. 496. 499-502. 507-515. 520-523. 527-542.
Սահականոյշ 489.
Սաղամուրթ 409.
Սաղայ 31. 32.
Սամէլ 475. 483.
Սամոս 497.
Սամուէլ 93. 426.
Սամսոն նահապետ ամատունեաց 279.
Սամսոն, Սամփսոն 93. 170.
Սանասար 106. 173. 504.
Սանատրուկ արքայ 226. 233. 236-241. 243. 250. 258.
Սանատրուկ իշխան 386-388. 392. 397.
Սանդուխտ 234. 239.
Սանոտ 239.
Սառայ 303.
Սասան 278. 301. 306. 308. 309. 329.

Սասանեանք 504.
Սարապիս 526.
Սարդանապալոս. Սարդանապալ-
ղոս, Սարդանապալլոս 50. 92. 95.
98-100.
Սարթենիկ. տես Սարթինիկ.
Սարիայ 208.
Սաւուղ 93. 426. 451.
Սաւտէր. տես Անտիոքոս Ա.
Սափատիայ 208.
Սեբաստացիք 329.
Սեդեկիայ 412. 548.
Սելեւկիոս Նիկանորը 152.
Սղբեստրոս 337. 357.
Սեմ 31. 33. 39. 41-43. 45.
Սենեքարիմ, Սենեքերիմ 105. 106.
160. 165.
Սենեքիայ 207.
Սորակտիոն 338.
Սերուք 32.
Սեւերիոս, Սեւերոս 318. 335.
Սեփծուղ 166.
Սէթ 26.
Սիբիլլայ բիւռոսեան 39.
Սիդիացի. տես Անտիոքոս Զ.
Սիդոն 204.

Սիղոն 200. 201.
Սիմ. տես Սեմ.
Սիմ լեառն 43. 106. 173. 316. 339.
Սիմոնէն Առաքեալ 231. 232. 235.
Սինոպ 179. 244.
Սիսակ 65. 66.
Սիսական աշխարհ 66.
Սիսական, Սիսակեան 167. 168. 173.
Սիսակեանք 73. 157.
Սիրաթ 52.
Սիրիպինդէս. տես Արշակ Բ. Պարթեւաց.
Սիւնի 413. 477.
Սիւնիք 66. 179. 291. 421. 428. 435. 466. 471. 480. 500.
Սիւնիք փոքր 387.
Սլաք 172.
Սլկունիք 172. 321. 338-341. 418.
Սկամանդրոս 465.
Սկայորդի 96. 98. 103. 106.
Սկասադէս 94.
Սկաւրոս 191.
Սկիւթացիք 187.
Սկիւղիս 182.
Սղկունիք. տես Սլկունիք.
Սղուկ 338-341.

Սմբատ բիւրատեան 241-244. 250-265. 269-275. 277. 290. 292. 293.
Սմբատ Հայր Բագարատայ 335.
Սմբատ որդի Բագարատայ 455. 458. 514. 515.
Սմբատանոյշ 241.
Սմբատաւան 241.
Սմբատուհի, Սմբատուրհի 241. 290.
Սոկրատ 368.
Սոհունդ 283.
Սողոմոն 386.
Սողոն 186.
Սոսարմոս 94.
Սովխոս 201. 202.
Սուսարիս 94.
Սուր 95.
Սուրայ 471.
Սուրենական 365.
Սուրենանք 214.
Սուրենեան 217. 309. 315. 492. 530.
Սուրէն խորխորունի 472. 474-476.
Սուրէն Պարթեւ 216. 217. 304. 305. 311. 536.
Սուրհատ 298.
Սուրմակ 529. 532. 539.
Սոփի 326.

Սպանդարատ, որդի Արշաւիրի կամ՝ սարականի 441. 453. 457. 460. 471. 478.
Սպանդարատ այլ 533.
Սպանդունի 506.
Սպանդունիք 165.
Սպանիացիք 154. 229.
Սպառեթոս 94.
Սպեր 241. 292. 472. 518.
Սպուդեայք 485. 543.
Սոահրացի 306.
Սորգ 219.
Սրատիգին 355.
Սփռատէս 95.
Սօս 97.
Վազարիա 293.
Վահագն 126. 172. 182.
Վահան ամատունի սպարապետ 344. 391. 396-399. 413.
Վահան ամատունի հազարապետ 544.
Վահան առաւելեան 472. 474-476.
Վահան արքանեակ Մեսրոպայ 545.
Վահան մամիկոնեան 437. 449. 450.
Վահէ 127.
Վահունիք 127. 172. 182. 189.

Վահրիճ 495 .
Վաղարշ Հայոց 296-298 . 301 .
Վաղարշ Պարսից 296 . 306 . 318 .
Վաղարշակ Ա. 46-48 . 50 . 66 . 127 . 128. 151. 155-176. 217. 281. 304. 322.
Վաղարշակ Բ. 466 . 472 .
Վաղարշապատ 297 . 359 . 397 . 432 . 450 . 539 . 543 . 544 .
Վաղարշաւան 297 .
Վաղենտիանոս աղանդապետ 299 .
Վաղենտիանոս , Վաղենդիանոս կայսր 414 . 419 . 435 .
Վաղերիանոս 313 . 319 .
Վաղէգեսոս 294 . տես Պերոզ .
Վաղէս 415 . 435-439 . 444 .
Վաղինակ Սիւնեաց Իշխան 480 .
Վաղինակ սիւնի սպարապետ 413 . 426 .
Վայկուն 191 .
Վայկունիք 191 .
Վայոց Ձոր 545 .
Վան Հայկազն 127 .
Վան Տոսպայ 450 .
Վանանդ 162 . 477 . 534 .
Վանանդացիք 473 . 474 . 506 .
Վաշտակ 95 .

Վաչէ 533 .
Վասակ զինակիր Արշակայ Բ . 427 . 428 .
Վասակ Մամիկոնեան 458 .
Վասակ Սիւնեաց տէր 500 .
Վասպուրական 290 .
Վասնեան դաշտ 387 .
Վարազ 293 .
Վարազդատ 463-466 .
Վարաժ , Վարժ 66 . 164 . 180 .
Վարաժնունի 67 . 180 .
Վարբակէս , Վարբակիս 98 . 99 . 102 . 103 .
Վարդան զինակիր Արշակայ Բ . 421-428 .
Վարդան Մամիկոնեան հայր Սամելի 484 .
Վարդան Մամիկոնեան սորատելաս 507 . 509-511 . 513-515 . 530 . 537 . 542 .
Վարդգէս 297 .
Վարդգէսի աւան 193 . 297 .
Վարժ . տես Վարաժ .
Վեհմիհրշապուհ 532 .
Վեհսաճան 312 .
Վեսպիանոս 244 . 283 .
Վերիացիք , որ և Իվերիացիք 169 . 181 .

Վ. Երիսոսփորայ 235 .
Վ. Զերկ Խաքան 350 . 351 . 357 .
Վ. Իշատաղունք 124 . 261 . 287 .
Վ. Իրք 120 . 127 . 166 . 181 . 195 . 204 . 251 . 254 . 263 . 273 . 344-348 . 362 . 391 . 431 . 498 . 499 . 520 .
Վ. Զենդուր Բուղկար 162 .
Վ. Ճեանք կամ Վ. Ճէնք 295 .
Վ. Նասեպ Սուրհապ 298 .
Վ. Շուասպեանք 210 .
Վ. ունդ 162 .
Վ. ռամ Ա. Կրման 493 . 494 , 501 .
Վ. ռամ Բ. 507 . 514 . 515 . 529-537 . 541 .
Վ. ռամշապուհ 487 . 489 . 491 . 495 . 499 . 501 . 515 .
Վ. ստասկար 96 .
Վ. ստանջունք 123 .
Վ. ցացի 436 .
Վ. ՐԹանէս 328 . 363 . 384 . 388-390 . 394 . 399 . 402 . 416 . 485 .
Վ. ՐՈՅՐ 273 .
Տակիտոս 319 . 320 .
Տաճատ 323 . 334 .
Տաճատուրհի 484 .
Տաճկաստան 325 .

Տամբաու 123 .
Տայք 160 . 473 .
Տաշիր 169 . 519 .
Տատեօնք 290 .
Տարբան 43 .
Տարսոն 320 .
Տարօն 43 . 175 . 182 . 316 . 339 . 385 . 410 . 441 . 479 . 523 . 542 . 544 .
Տարօնեցի 500 .
Տաւրացիք 255 .
Տաւրոս 173 . 363 .
Տեւատամոս 94 . 96 . 128 . 129 .
Տեւտէոս 95 .
Տէր 500 .
Տէրէնդ , Տէրէնտիանոս 453 . 454 . 462 . 463 .
Տիբեր , Տիբերիոս 213 . 226 . 228 . 229 .
Տիգրան Ա . 103 . 105 . 107-126 . 434 .
Տիգրան Բ . 180 . 188-202 . 204-206 . 251 . 297 . 450 .
Տիգրան Գ . 293–296 . 300 .
Տիգրանակերտ 122 . 428 . 429 . 433 .
Տիգրանակերտեայք 429 . 530 .
Տիգրանուհի 110 . 115 . 117-119 . 121 . 122 .

Տիգրիս 173 .
Տիզբոն , Տիսբոն 307 . 335 . 487 . 488 . 506 .
Տիմոթէոս Եպիսկոպոս Աղէքսանդրիոյ 446 .
Տիմոն 210 .
Տիսբոն . տես Տիզբոն .
Տիտան 39 . 50 .
Տիտանեան 57-59 . 73 .
Տիտանեանք 72 .
Տիտանք 40 . 41 .
Տիտոս Անտոնինոս 205 . 293 . 299 . 300 .
Տիտոս Յոսատոս 205 .
Տիտոս Վեսպասիանոս 244 . 283 .
Տիրան Հայկազն 126 .
Տիրան Ա . 273 . 274 . 276 . 277 . 285 . 287-293 .
Տիրան Բ . 400-413 . 420 . 421 . 423 . 425 .
Տիրիթ 405 . 420-428 .
Տիրուէկ 533 .
Տիւրոս 204 .
Տմորիք 272 . 407 . տես և Կորդրիք .
Տոսպ 450 .
Տորք 170 .

Տուբ 526 .
Տուբիա 224 .
Տուհաց գաւառ 297 .
Տուր 259 .
Տրայիանոս 276 . 277 .
Տրդատ ալքայ 61 . 151 . 249 . 280 . 301 . 318 . 320. 322. 324 . 326 . 328. 332. 372. 383-390 . 450 . 464 . 479 . 492. 540 .
Տրդատ բագրատունի 290-292 . 505 .
Տրդատ որդի Տիրանայ Բ . 404 . 419-421 .
Տրունիք 259 .
Ռուփոս 282 .
Յոլակ 64 .
Յոլակերտ 65 .
Յրոնք 43 .
Փալեկ 32 .
Փայտակարան 386-388 . 392 .
Փառախտա 65 .
Փառանձեմ 421 . 426 . 448 . 449 .
Փառնաս 95 .
Փառնեբսեհ 409 . 410 .
Փառնուաս 103 .
Փառոխ 64 .
Փասայէլ, Փասայելոս, Փասայելոս 197-199 .

Փարաւոն 393 ·
Փարման 254 ·
Փաւոս 103 ·
Փեղնցի 282 ·
Փերմելիանոս 317 ·
Փերուր 212 ·
Փիլէմոն 307 ·
Փիլիպպոս Առաքեալ 222 ·
Փիլիպպոս կայսր 310 · 313 ·
Փիլիպպոս մակեդոնացի 152 ·
Փիլիպպոս Հորդորդապետ 218 ·
Փիւնիկեցիք 219 ·
Փիւնիկէ 497 ·
Փղեգոնիոս 186 ·
Փղոռիանոս 319 · 320 ·
Փոկէացիք 187 ·
Փորոն Կոստանդնուպոլսի 356 ·
Փռատինիս 95 ·
Փռաւորտիս 103 ·
Փռիւգիայ 157 · 158 · 319 ·
Փրկիչն 102 · 211 · 219-224 ·
Քաղդէական 89 · 134 ·
Քաղդէացի 36 · 47 ·
Քաղդէացիք 16 · 20 · 36 · 49 · 50 · 92 ·
101 ·
Քաղէայ 71 · 73 ·

Քամ 32-34 . 39 . 41 . 44 . 45 .
Քայլ 32 . 35 .
Քանանացի 93 .
Քանանացիք 92 . 157 . 164 .
Քանանիգաս 93 .
Քասախ , Քասաղ 193 . 297 .
Քարձամ 273 .
Քաւդեայք 308 .
Քեռուբական 153 .
Քեռուբայ 303 .
Քիմիւռոն 124 .
Քիոնիս 464 .
Քուշ 32 . 44 .
Քուշանք 153 . 302 . 303 . 311 . 313 . 314 .
Քսէքսէր 94 .
Քսէրքսէս 187 .
Քսիսութրոս 25 . 38 . 39 . 42 .
Քրիստոնէայք 229 . 283 .
Քրիստոս 212 . 219 . 221 . 227 . 230 . 385 . 522 . տես և Յիսուս .
Օդէ 238 ,
Օշական 397 . 399 . 545 .
Օտայ , որ և Ոտայ 321 . 333 . 338 .

ՎԵՐՋ

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

120.
8 R.
15 R.